Միջնադարյան քարտեզների մեծամասնությունը T-O տեսակի քարտեզներ են: Սրանք կոչվում են T-O տեսակի, քանի որ O տառը ներկայացնում է երկրագունդը կամ երկրի սկավառակը, իսկ նրա մեջ տեղադրված T տառը երկրի տարածքը բաժանում է հին աշխարհում ճանաչված երեք մայրցամաքների՝ Եվրոպա, Ասիա և Աֆրիկա: Այս քարտեզներում T տառի ուղղահայաց մասը ներկայացնում է Միջերկրական ծովը, վերի ձախ թևը Դոն գետն է, որը համարվում էր Ասիայի և Եվրոպայի սահմանը, իսկ աջ թևը Նեղոս գետն է, որն Ասիան բաժանում էր Աֆրիկայից: Բացառություն են կազմում իսլամական քարտեզները, որոնք այս բաժանումները չունեն, ինչպես նաև աշխարհը եղանակային գոտիների բաժանող քարտեզները, որոնք պարզ, առանց մանրամասերի քարտեզներ են: Եկեղեցին և կրոնական հայրերը համաձայն էին քարտեզների T-O տեսակին, քանի որ դրա T տառը կարելի էր նմանեցնել խաչի, իսկ երեք ցամաքամասերը համընկնում էին Նոյի երեք որդիների կողմից բնակեցված աշխարհամասերին, Սեմն՝ Ասիայում, Քամն՝ Աֆրիկայում, իսկ Հաբեթը՝ Եվրոպայում:

Մեր կարծիքով այս տեսակի քարտեզների T-O անվանումը սխալ է և ավելի ճիշտ կլիներ սրանց անվանել O-T քարտեզներ, քանի որ առաջին հերթին պետք է նշվի սկավառակը, ապա նոր այն բաժանվի երեք մասի: Նաև նկատենք, որ T-O անվանումը համառոտն է “Orbis Terrarum” լատիներեն տերմինին, որը բառացիորեն նշանակում է «Երկրա-գունդ»: Այս պարագայում էլ ավելի ճիշտ կլիներ, որ սկզբնատառերի տեղերը փոխվեին և քարտեզների այս տեսակը կոչվեր O-T, քանի որ այս երկու լատիներեն բառերի առաջին տառերը հենց այս հերթականությամբ են գրվում:

Ներկա աշխատության նպատակն է դիտարկել Կովկասյանի լեռներից հարավ գտնվող երկրների տեղը և նրանց պատկերելու կերպը Եվրոպայի, Արևմտյան Ասիայի և իսլամական միջնադարյան քարտեզների մեջ կամ աշխարհագրական աշխատություններում: Այսօր այդ տարածաշրջանում առկա են Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը, սակայն միջին դարերում պատկերն էապես տարբեր էր և, բացի այդ, այս երկրներից երկուսն ունեին տարբեր անվանումներ: Այսօրվա Ադրբեջանի Հանրապետության գրաված տարածքը կոչվում էր Կովկասյան Ալբանիա, հայերենով՝ Աղվանք, իսկ Վրաստանի Հանրապետության մոտավոր տարածքը զբաղեցնում էին Կողքիսը (Կոլխիդան, որի այլ անվանումներն են Լազիկա, Աբասգիա, վրացերենով՝ էգրիսի, Աբխազեթի և Իմերեթի)[1], Վիրքը (Իբերիան, վրացերենով Քարթլի)[2] և Մեգրելիան, որոնք 11-12-րդ դարերում միանալով կազմեցին Վրաստանը: Միայն Հայաստանն է, որ նույն անունով էր ճանաչված: Սրանք բոլորն էլ հին թագավորություններ էին, որոնք դարձել էին քրիստոնյա, Հայաստանը 301-ին, Կողքիսը և Վիրք-Քարթլին 319-334-ին իսկ Աղվանքը չորրորդից հինգերորդ դարերում:[3] Միջնադարում այս տարածքը հաճախ ասպատակում էին պարսիկները, բյուզանդացիները, խազարները, սելջուկները և թաթարները, փոփոխության ենթարկելով նրանց սահմաններն ու ժողովրդագրական պատկերը: Այդ ժամանակներում էր, որ Աղվանքը որպես ինքնուրույն պետություն անհետացավ, Վրաստանը միավորվեց իսկ Հայաստանի սահմանները հեղհեղուկ վիճակում էին: Այս երկրները երբեմն անկախ էին, երբեմն էլ կրում էին հարևան մեծ պետությունների լուծը: Նույն ժամանակաշրջանում Արաքսի հարավային ափին կար Մարաստանի ու Պարթևաստանի հյուսիս արևմտյան նահանգը, Ատրպատականը: Այսպիսով, երբ տեքստում հիշվում է Ադրբեջան, Ատրպատական կամ Ատրոպատեն անվանումը, նկատի է առնվում այսօրվա Պարսկաստանի Ատրպատական նահանգը, իսկ Ադրբեջանի Հանրապետության տարածքը միջնադարյան ժամանակներում մեր գրքում անվանված է այդ ժամանակնորին բնութագրական «Աղվանք» անունով: Այլ մանրամասնությունների համար տես Առաջին գլխի վերջին պարբերությունները:

Այս գրքի վերնագրի ընտրությունն ինքնին խնդիրներ առաջացրեց: Առաջին հերթին պետք էր մի վերնագիր, որը ճշգրիտ կերպով նշեր աշխարհագրական այս տարածքը: Երբ խոսում ենք ալպիական երկրների մասին, գիտենք որ դրանք այն երկրներն են, որտեղ գտնվում են Ալպերը, այսինքն Շվեյցարիան, Ավստրիան և Իտալիայի հյուսիսը: Նման փաստարկներ կարելի է բերել ուրիշ լեռնային տարածաշրջանների համար, բայց երբ գալիս ենք Կովկասին, ապա դրա մեկնաբանումը դառնում է առածգական, քանի որ դրա վրա ազդում են շրջանի քաղաքական ու տնտեսական լծակները: Առաջին հերթին պետք է պարզել Կովկասյան լեռների ու տարածաշրջանի սահմանները: Կովկասյան լեռները կամ լեռնաշղթան Սև ծովի հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևելք՝ Կասպից ծովի արևմուտքը ձգվող լեռնաշղթան է, իսկ Կովկասյան տարածաշրջանը Սև, Ազովի և Կասպից ծովերի միջև ընկած պարանոցն է, որի սահմանը հյուսիսում Հարավային Ռուսաստանն է, իսկ հարավում՝ Պարսկաստանն ու Թուրքիայի սահմանը: Այսպիսով, Հարավային Կովկաս անվանումը տրվում է այդ տարածքի հարավային մասում գտնվող երկրներին, որոնք այսօր կազմված են Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի, ինչպես նաև անկախություն հռչակած Աբխազիայի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններից: Քանի որ «Հարավային Կովկաս» կոչված տարածաշրջանի հարավային եզրերն են Թուրքիայի ու Իրանի քաղաքական սահմանները, ապա այստեղ արդեն կարելի է տեսնել քաղաքական իրավիճակի ազդեցությունը աշխարհագրական անվանման վրա: Այս երեք հարավկովկասյան երկրներից

[1] Suny, Ronald Grigor – *The Making of the Georgian Nation.* London, I. B. Tauris, 1989, էջ 3-4:

[2] Անդ, էջ 3:

[3] Անդ, էջ 21:

Աբխազյան և Վրաստանը զբաղեցնում են Կովկասյան լեռների հարավում գտնվող մի զգալի տարածք, իսկ Ադրբեջանը, տեղադրված է նույն լեռնաշղթայի հարավ-արևելյան ծայրամասում: Բայց այս շրջանում առկա է մի այլ Ադրբեջան, իրականում Պարսկաստանի հյուսիս-արևմտյան Ատրպատական նահանգը, որն իր հյուսիսային հարևանից անվամբ ու պատմությունով ավելի քան 2000 տարի ավելի տարեց է: Քանի որ սա Պարսկաստանի մի նահանգ է և գտնվում է Հարավային Կովկաս անվանված տարածքի պայմանականորեն որոշված սահմաններից դուրս, ապա այս երկրամասը հարավկովկասյան տարածաշրջանի մեջ չի ներառվում: Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունները, որոնք գտնվում են Վրաստանի ու Ադրբեջանի Հանրապետություններից դեպի հարավ, բայց Պարսկաստանից հյուսիս, ըստ նույն պայմանավորվածության կարող են համարվել հարավկովկասյան երկրներ, բայց այդ դեպքում աշխարհագրական ի՞նչ տարածաշրջանի մեջ է մտնում միջնադարյա՛ն Հայաստանը, որի սահմանները գտնվում էին շատ ավելի հարավ ու արևմուտք, քան այսօրվա Հայաստանի Հանրապետության սահմանները, գրավելով ավելի քան տասն անգամ մեծ տարածք, ինչ այսօրվա Հայաստանի Հանրապետությանն է բաժին մնացել:

Երբեմն որոշ շրջանների ու աշխարհամասերի տրվում են նորանոր հորինված անուններ, որոնք դրանց բոլորովին անհամապատասխան են ու սխալ: Մեկ այսպիսի անվանում Փոքր Կովկասն է, որը երևան եկավ քսաներորդ դարում: Սա, իբր մի լեռնաշղթա է, որը գտնվում է Կովկասյան լեռների հարավ-արևմուտքում գտնվող Կուր և Ռիոն (Փասիս) գետերի հովտի հարավում: Լեռնաշղթան սկսում է Սև ծովի հարավ-արևելքից և աղեղնաձև ձգվելով տարածվում է Վրաստանով, Հայաստանի հյուսիսով ու հասնում մինչև Ադրբեջանի արևմուտքը: Բայց այս անվանումը որտեղի՞ց է եկել: Քարտեզներում մինչև 19-րդ դարի կեսերն այս անունը գոյություն չուներ և Կովկասի լեռներին քաջածանոթ գերմանացի հանքաբան Հերման Վիլհելմ Աբիխի (1806-1886 թթ.) 1843 թվականի Կովկասի լեռների քարտեզում այս անվանումը գոյություն չունի:[4] Սրա փոխարեն նույն տարածաշրջանում առկա են ավելի քան քսան փոքր լեռնաշղթաներ, որոնցից են Գուրիայի, Իմերեթիայի, Թրիաթելիի, Սոմխեթի (Վիրահայոց), Լոռվա և այլ լեռնաշղթաներ: Նույնիսկ մինչև 1901 թվականը պատրաստված Լինչի և Օզվալդի քարտեզներում այս անվանումը բացակա է:[5] Տարածաշրջանը գրավող և վերը նշված այս փոքր լեռնաշղթաները միմյանցից շատ հեռու չեն բայց ամբողջովին առանձնացած են և անհնար է դրանց միասնական «լեռնաշղթա» անվանումը տալ: Թերևս ինչ որ մեկը քսաներորդ դարում որոշել է տալ այս անվանումը, և ժամանակի ընթացքում անունը դարձել է ընդունված մի տերմին: Իսկ «Կովկաս» անունը լսողն առաջին հերթին պատկերացնում է հսկայական և ձյունածածկ լեռների մի շարան, քանի որ դա է տարածաշրջանի կարևորագույն դիմագիծը: Այսուհետև այս հատորում երբ նշվում է միմիայն «Կովկաս» անվանումը, ապա դա նշանակում է Կովկասյան լեռնաշղթան:

Մեկ ուրիշ տարածաշրջանային սխալ անվանում է «Անատոլիան»: Այս անվանումը բյուզանդացիները տվել են իրենց արևելյան նահանգին, որն ընդգրկում էր Փոքր Ասիա թերակղզին: Կոստանդնուպոլսից արևելք նայելիս նրանք տեսնում էին մինչև Ասիա ձգվող մի հսկայական ցամաքամաս, որին նրանք կոչեցին «Արևելք» (հունարեն՝ Aἰ·ÙÔÎfi – Անատոլիա): Այս տերմինն սկսվեց օգտագործվել հինգերորդ դարի Բյուզանդիայում, բայց քարտեզների մեջ նույնը երևան եկավ միայն 14-15 դարերից սկսյալ, նշվելով որպես Փոքր Ասիային զուգահեռ, նրան հոմանիշ մի անվանում: Սրա սահմանները նշում են երեք ծովերը, Եգեյանը, Սևը և Միջերկրականը, իսկ արևելքում սահմանն է Կիլիկիայից արևելք՝ Մալաթիայով անցնող միջօրեականը, որը գտնվում է Հայաստանից արևմուտք: Օսմանյան կայսրության անկումից հետո, 1923-ից սկսյալ Մուստաֆա Քեմալ փաշան՝ «Աթաթյուրքը» Անատոլիա, կամ թրքերենով «Անադոլու» անվանումը տվեց ամբողջ Ասիական Թուրքիայի տարածքին, հակառակ նրան, որ Անատոլիան Թուրքիայի տարածքի միայն 60 առ հարյուրն է կազմում:

Ի վերջո, ինչպե՞ս կոչել Կովկասյան լեռնաշղթայի հարավում, Պարսկաստանից հյուսիս-արևմուտք և Փոքր Ասիայից արևելք գտնվող աշխարհամասը: Լավագույնը, կարծում ենք գրքիս անվանումն է, որը կարող է շատ գրավիչ չլինել, բայց ամեն դեպքում «Կովկասից հարավ երկրները» վերնագիրը փոխանցում է այն աշխարհագրական պատգամը, որ Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը, ինչպես նաև Աբխազիան ու Լեռնային Ղարաբաղը ներառող այս տարածաշրջանը կարող է Կովկասի հարավից սկսելով, շարունակվել ու տարածվել մինչև Միջագետք, Կապադովկիա ու Անատոլիայի արևելքը, իսկ երեք երկրների անուններն ավելացնելն արդեն իսկ նշում է տարածքի աշխարհագրական սահմանափակումը:

Հավելյալ պետք է նշել, որ արևմտյան միջնադարյան քարտեզներից շատերը քրիստոնեական հենք ունեին և Հայաստանը, որպես քրիստոնեությունն ընդունած առաջին պետությունը, ինչպես նաև Արևելքում գտնվող ամենահեռավոր քրիստոնյա ժողովուրդը, մշտապես ներառվում էր արևմտյան քաղաքակրթությունների «ընտանիքի» մեջ: Նույնը կարելի է ասել նաև Կողքիսի, Վիրք-Քարթլիի և Աղվանքի մասին, որոնք Հայաստանից հետո ընդունեցին քրիստոնեությունը որպես պետական կրոն: Ընդհանրապես, արևմտյան միջնադարյան քարտեզներում, որպես կանոն, նշվում էին հիմնականում քրիստոնյա երկրներն ու տարածաշրջանները, իսկ դրանցից դուրս միայն մի քանի երկրներ (այդ թվում Մարաստանը, Պարսկաստանը, Արաբիան և Հնդկաստանը) էին արժանանում քարտեզներում տեղ գտնելու «պատվին»: Հայաստանն Արևմուտքին ներկայացնող մեկ ուրիշ գործոն էր հայ վաճառականների ներկայությունը Վենետիկում, Ռավեննայում, Ջենովայում, Ամստերդամում և Եվրոպայի այլ քաղաքներում. սկսած վաղ միջնադարից նրանք էին, որ առևտրական կապեր էին ստեղծում քրիստոնյա Արևմուտքի և ոչ-քրիստոնյա արևելյան երկրների միջև:

---

[4] Abich H. W. – *Über die geologische Natur des armenischen Hochlandes.* Dorpat, 1843. Ծալված քարտեզ:

[5] Գալչյան Ռ, *Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ*, Երևան, 2005, էջ 249-251:

Քրիստոնեության գործոնի հետ առնչվող ևս մի նկատառում: Վերջին տարիներին աշխարհագրագետների, պատմաբանների, մշակութաբանների շրջանակներում հաճախ քննարկվում է այն հարցը, որ Աստվածաշնչում հիշատակվող Արարատների և Նոյյան տապանի Հայաստանին կապակցումը երևան է եկել միայն խաչակիրների արշավանքների ընթացքում կամ դրանցից հետո, այն էլ Կիլիկիայի և Հայաստանի շրջաններից խաչակիրների բերած տեղեկությունների հիման վրա: Հատորիս մեջ վերատպված են երկու աշխարհացույց քարտեզ՝ Պատ. 22 և Պատ. 56, մեկը պատրաստված եվրոպական մայրցամաքում, մյուսը՝ Անգլիայում: Երկու ձեռագրերն էլ պատրաստված են 1050 թվականին կամ դրանից մի քանի տարվա տարբերությամբ, ամենայն դեպս, 1095 թվականի խաչակիրների առաջին արշավանքից շուրջ 40-45 տարի առաջ, և երկուսում էլ կարելի է տեսնել, որ Հայաստանի շրջանում տեղադրված են զույգ գագաթներով Արարատն ու վրան նստած Նոյյան տապանը:

Ներկա գրքի քարտեզների դիտարկումը կօգնի պարզաբանելու միջնադարյան շրջանին առնչվող վերոհիշյալ հարցերն ու խնդիրները:

Ստորև բերում ենք մի քանի նկատառումներ այս աշխատության մեջ կիրառված նյութերի մատուցման ու ներկայացման վերաբերյալ:

1. Երբ վերլուծվում է որևէ քարտեզ, նախընտրությունը տրվում է Կովկասյան լեռներից հարավ գտնվող շրջանին և տարածքին: Մյուս շրջաններն ավելի մակերեսային են քննարկվում:
2. Այսպես կոչված «միջնադարյան» շրջանը տարբեր մշակույթներում և քաղաքակրթական ավանդույթներում կարող է լինել շատ առածգական: Արևմուտքում «միջնադար» ասելով ավելի հաճախ պատկերացվում է Հռոմեական կայսրության անկումից մինչև Բյուզանդիայի անկման շրջանը, այսինքն՝ չորրորդ դարից մինչև տասնհինգերորդ դարակեսը: Այլ դեպքերում միջնադարը ներառում է յոթերորդ դարից մինչև Ամերիկայի հայտնագործումը՝ 1492 թ. ընկած ժամանակահատվածը: Ներկա աշխատության մեջ միջնադար ենք կոչել 300 թվականից մինչև տասնչորսերորդ դարի կեսը, երբ սկսեցին ընդհանրանալ պորտոլան կամ ծովային քարտեզները: Սա կազմում է շուրջ 1000 տարվա մի ժամանակահատված:
3. Պարսկական և արաբական քարտեզներում նշված տեղանունների ձայնավորների կոշտ հնչյունները ցուցադրելու համար տեքստի անգլերեն տարբերակում գործածել ենք տառի վերը դրված գծիկ:
4. Արդի տեղանունները միջնադարյան տեղանունների հետ չշփոթելու համար գրքերի, քարտեզների և դրանց բնագրերի մեջ առկա տեղանունների անվանումները նշված են շեղագիր: Նույնն է արված նաև բնագրում եղած տեքստերի ուղղակի թարգմանությունների համար, ուր բացակա է բնագիրը:
5. Արդի հայերենում տեղանունների թարգմանությունները հաճախ ճշգրիտ չեն արտացոլում դրանց մայրենի լեզվով հնչողությունը, ինչի պատճառը, թերևս, դրանց ռուսերենից թարգմանված լինելն է: Հաշվի առնելով այդ հանգամանքը, հեղինակը որոշ դեպքերում անվանումները թարգմանել է ոչ թե հետևելով առ այսօր գոյատևող ավանդույթին, այլ աշխատելով պահպանել նրանց մայրենի լեզվով հնչողությունը:
6. Քարտեզների չափի, բնօրինակի և կրկնօրինակի թվականի, աղբյուրի և գտնվելու վայրի մասին տե՛ս անգլերեն բնագրում քարտեզի բացատրության վերջում տրված տեղեկությունները:
7. Հայերեն տեքստը պետք է ընթերցել դիմելով գրքի անգլերեն բնագրի քարտեզների պատկերներին:
8. Տեքստում ուղղանկյուն փակագծերի մեջ նշվածները հեղինակի պարզաբանումներն են, որոնք բնագրերի մեջ չկան:

Ըստ մեր ունեցած տեղեկությունների, մինչև այսօր որևէ աշխատություն, որը քննարկում և մեկնաբանում է Կովկասյան տարածաշրջանի երկրների առկայությունը միջնադարյան քարտեզներում, չի հրատարակվել և այս հատորն այդ շարքում առաջինը լինելով քննարկում է կարևորագույն միջնադարյան քարտեզների մեջ արտացոլված Կովկասի հարավում գտնվող տարածքը:

Ռուբեն Գալչյան
Լոնդոն/Երևան, 2007

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԸ

Ամենահին իրերը, որոնց կարելի է տալ քարտեզ անվանումը, մեզ են հասել մ.թ.ա. երրորդ հազարամյակից: Սրանց թվում կան քանդակներ, որոնք պատկերում են հողամասերի և տեղամասերի սահմաններ, սակայն առաջինը, որ մեզ է հասել բավարար վիճակում և որը կարելի է անվանել իրական աշխարհացույց քարտեզ, բաբելոնյան կավե մի սալիկ է, պատրաստված մեր թվականությունից առաջ վեցերորդ դարում:[6] Հին հունական կամ հռոմեական հնագույն աղբյուրներից մեզ ժառանգություն է հասել մեծ քանակով աշխարհագրական գրականություն (սկսած նախքան մեր թվականությունը), որտեղ կան հիշատակումներ քարտեզների և քարտեզագրության մասին, բայց սրանց մեջ որևէ փաստաթուղթ, որին կարելի լինի քարտեզ անվանել, գոյություն չունի: Հին քարտեզագրության գագաթնակետն էր Կլավդիոս Պտղոմեոսը (90-168 թթ.), որի «Աշխարհագրություն» աշխատանքը Արևմուտքում օգտագործվում էր նույնիսկ մինչև 17-րդ դարի վերջերը: Իր տեքստերի մեջ Պտղոմեոսը խոսում է քարտեզագրության մասին ու նշում քարտեզներ, բայց իր պատրաստած քարտեզները, եթե նույնիսկ ժամանակին գոյություն ունեցել են, մեզ չեն հասել և հնագույն պտղոմեոսյան քարտեզը որ մեզ է հասել, պատրաստված է 12-րդ կամ 13-րդ դարերի ընթացքում: Պետք է նշել, որ արևմուտքը Պտղոմեոսի աշխատանքներին անծանոթ էր մինչև 13-14–րդ դարերը, երբ նրա ձեռագրերի պատճենները Կոստանդնուպոլսից տեղափոխվելով սկսեցին երևան գալ եվրոպական մշակույթի կենտրոններում:

Վաղ միջնադարյան քարտեզները պարզ կառուցվածք ու տեսք ունեին և պարունակում էին շատ քիչ տեղեկություն: Սրանք աստիճանաբար զարգացան ու դարձան ավելի արդիական ու լի տեղագրական, կրոնական ու առասպելների վերաբերյալ տեղեկություններով: Չնայած նրան, որ ուշ միջնադարում արդեն իսկ գոյություն ունեին հատկապես Միջերկրականի պորտոլան, այսինքն՝ ծովային ճշգրիտ քարտեզներ, բայց գրականության և քարտեզագրության մեջ դեռևս մինչև տասնհինգերորդ դարը զուգահեռաբար շարունակվում էր ավանդական T-O տեսակի քարտեզների գործածությունը (տես Պատ. 21, 23, 26, 31, 58, 60 և ուրիշներ): Սա թերևս բացատրվում է այն հանգամանքով, որ T-O տեսակի քարտեզները թե՛ քարտեզը պատրաստողի և թե՛ կարդացողի համար հարազատ ու ծանոթ ձև ունեին, ինչը նաև շաղկապում էր նրանց՝ իրենց մշակութային ու հոգևոր ավանդույթների հետ: Նման ուղղություն կարելի է տեսնել ճապոնական քարտեզագրության մեջ, ուր սկսած 14-րդ դարից կրոնական քարտեզներն իրենց կենտրոնում ունեին Հնդկաստանը՝ որպես Բուդդայի ծննդավայր: Այս քարտեզները պարունակում էին մանրակրկիտ տեղեկություններ Հնդկաստանի մասին, գրեթե ամբողջովին մոռացության տալով այլ երկրամասերն ու վայրերը, մինչդեռ սկսած 16-րդ դարից Ճապոնիայում կային արևմտյան աշխարհագրագետների ատլասների և քարտեզների բազմաթիվ նմուշներ:[7] Դրանով հանդերձ, ավանդական Հնդկաստանի վրա կենտրոնացած քարտեզները Ճապոնիայում գերիշխում էին մինչև 19-րդ դարի կեսերը:

Արևմուտքում միջնադարյան կոչվող շրջանի քարտեզները պատրաստվում էին յուրահատուկ նպատակի ծառայելու համար, հետևաբար չեն կարող համարվել որպես ընդհանուր քարտեզներ, քանի որ սրանք նշում ու շեշտում են միմիայն այն տեղեկությունները, որոնց կարիքն ուներ տվյալ քարտեզի գործածողը: Սրանց մեջ կարող էին լինել քաղաքի կամ որևէ շինության հատակագիծ, տեղամասային կամ կրոնական քարտեզներ, ինչպես նաև այլ նպատակների համար պատրաստված քարտեզներ: Եթե հաշվի չառնենք Պտղոմեոսի քարտեզները, ապա միջնադարյան քարտեզների մեջ մեծամասնություն էին կազմում աշխարհացույց քարտեզները, որոնք պատկերում էին ամբողջ աշխարհը: Աշխարհացույցները միակ քարտեզատեսակն էին, որոնք պատրաստվում էին սկսած հին հունական ու հռոմեական ժամանակներից ընդհուպ մինչև տասներորդ դարը, երբ իսլամական քարտեզագրությունը որդեգրեց (հավանաբար Պտղոմեոսից) քարտեզներում երկրամասեր ցուցադրելու համակարգը, դրանք դարձնելով ավելի ճշգրիտ և մանրակրկիտ:

Այս աշխատության հաջորդ գլուխներում քննարկվում են միջնադարյան ընդհանուր և հատկապես Հայաստանի տարածքին վերաբերող ռեգիոնալ քարտեզներ, մինչդեռ ավելի փոքր չափանիշի, ինչպես նաև երկրամասերի պլաններն ու քարտեզներն այստեղ ներառված չեն: Դիտարկված քարտեզները մեծ մասամբ պատրաստված են հիմք ունենալով Սուրբ Գրքի ու կղերական իշխող սկզբունքները, քան թե լուրջ գիտական ու աշխարհագրական տեսություններ ու տեղեկություններ: Այսպիսով կարելի է ասել, որ Արևմուտքում միջնադարյան աշխարհագրությունն ու քարտեզագրությունն ունեն քրիստոնեական ծագում և նրանց գաղափարախոսությունը կրոնական է: Այս քարտեզները ժամանակին օգտագործվում էին քրիստոնեության գաղափարներն ու տեսակետները տարածելու և ամրապնդելու համար, միաժամանակ իրենց մեջ պարունակելով ժողովրդական ավանդություններից ու առասպելներից վերցված նյութեր: Բացառություն են կազմում իսլամական քարտեզները, որոնք պատրաստված են իսլամական երկրներն ու շրջանները պատկերելու համար և չեն պարունակում առասպելական կամ կրոնական բնույթի տեղեկություններ:

Վաղ քրիստոնեական դարաշրջանում և անգամ քրիստոնեության պաշտոնականացումից հետո, աշխարհագրությունն ու քարտեզագրությունը որպես առանձին գիտություն չէին ընկալվում և, որպես կանոն, ներառվում էին

[6] Գալչյան, Ռ., նշված աշխ., էջ 64:

[7] Օրտելիուսի ատլասները Ճապոնիա էին բերվել 16-րդ դարի վերջերում:

պատմական կամ կղերական աշխատությունների մեջ: Արևմտյան Եվրոպայում այս ավանդույթը շարունակվեց մինչև ուշ միջնադար, երբ պատմության դասագրքերը դեռևս պարունակում էին տոնացույցերի հաշվարկման աղյուսակներ, և գլուխներ աշխարհագրության, բնագիտության և նույնիսկ առասպելների վերաբերյալ: Սրանցից որոշները պարունակում էին աշխարհացույց քարտեզներ, որոնք, իհարկե, շատ պարզ կառուցվածք ունեին և խստորեն հետևում էին եկեղեցու հայրերի և ղեկավարների տված ուղղություններին, որոնք միշտ չէր որ միանման էին ու հետապնդում էին համանման նպատակներ:

Գրեթե նույնը կարելի է ասել առկա հայերեն ձեռագրերի մասին: Մեզ հասած աշխարհագրական միակ լուրջ ուսումնասիրությունը Անանիա Շիրակացու (որոշների կարծիքով՝ Մովսես Խորենացու) «Աշխարհացույց»-ն է, որը գրվել և փոփոխվել է հինգերորդից մինչև յոթերորդ դարերը:[8] Հայերեն բազմաթիվ ձեռագրերում կան նյութեր երկնային մարմինների ու աստղաբաշխության վերաբերյալ, բայց աշխարհագրական բնույթի նյութերն այնքան էլ շատ չեն: Թերևս բացառություն են կազմում Մղոնաչափերը, որոնք քաղաքների միջև եղած հեռավորությունների ցուցակներ են, հաճախ մի քանի էջանոց: Սրանք առկա են մի շարք ձեռագրերում և կարծում ենք, որ եթե այս նյութերը մանրակրկիտ քննարկման և հետազոտման ենթարկվեն, ապա հնարավոր է, որ արդյունքում երևան գա մի նոր Պևտինգերյան աղյուսականման քարտեզ:[9]

Դժբախտաբար մեզ հասած վրացերեն ձեռագրերի մեջ չկան աշխարհագրական նյութ ունեցողները, իսկ աղվանական աղբյուրներից համարյա ոչ մի փաստաթուղթ մեզ չի հասել: Աղվանական այբուբենը, որն ըստ Կորյունի ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը, դեռևս ամբողջապես բացահայտված չէ, և 2003 թվականին Սինա լեռան Ս. Եկատերինայի մենաստանում գտնված պատառիկներն այս այբուբենի նորագույն նմուշներից են, որոնց վերծանման աշխատանքները դեռ շարունակվում են:[10]

Միջնադարյան գիտնականներն ու ուսուցիչները, որպես հիմնական աղբյուրներ, հաճախ օգտվում էին իրենցից մի քանի դար առաջ շարադրված ու կարևոր համարվող նյութերից և ձեռագրերից: Այս ավանդույթը շարունակվեց նույնիսկ մինչև 13-14-րդ դարերը: Միջնադարում լայնորեն օգտագործվող ձեռագրերից մի քանիսի ծագումը հասնում էր նախաքրիստոնեական ժամանակներին, բայց քանի որ դրանք ընդհանրացած էին ու շարունակաբար օգտագործվում էին, ապա կարող են, մեր կարծիքով, համարվել միջնադարյան գրականության մեջ ներգրավված և նրա բաղկացուցիչ մասերից: Ներկա աշխատության մեջ կան մի քանի նման ձեռագրեր, որոնք շարունակական օգտագործման մեջ էին մինչև 13-րդ և 14-րդ դարերը:

Որոշ միջնադարյան հեղինակներ, ինչպես օրինակ Մակրոբիոսը (ծաղկել է շուրջ 400 թ.), վերցնելով Ստրաբոնի և Պտղոմեոսի աշխատությունները, դրանք զարգացրել է ու հավերժացրել: Մեկ ուրիշը՝ Գայոս Յուլիոս Սոլինոսը (ծաղկել է երրորդ դարի վերջերում), գրել է բնագիտական մի աշխատություն՝ *Collectanea rerum memorabilium* («Հետաքրքրաշարժ հավաքածու», կամ «Աշխարհի հրաշալիքները»), որը պարունակում է բացատրություններ երևակայական և արտառոց էակների ու մարդկանց մասին: Այս ձեռագիրը, որը մասամբ հիմնված է Պլինիոս Ավագի (23-79 թթ.) «Բնագիտության» և Պոմպոնիոս Մելայի (ծաղկել է շուրջ 43 թ.) աշխարհագրական աշխատությունների վրա, ժամանակին շատ ընդհանրացած էր և օգտագործվում էր մինչև ուշ միջնադար:

Վաղ միջնադարում, երբ դեռ Եվրոպան նոր էր քրիստոնեություն ընդունում, կղերական առաջնորդները երկրի գնդածև տեսությանը բացեիբաց հակառակ չէին արտահայտվում, բայց քանի որ այդ տեսությունը նախաքրիստոնեական ծագում ուներ, ապա որոշ կղերականներ աստիճանաբար սկսեցին այն հերքել և առաջարկել, որ այն կարիք ունի վերանայման, որպեսզի համընկնի եկեղեցու ցուցմունքերին ու դոգմաներին, և որ բոլոր նման տեսությունները պետք է եկեղեցու դիտանկյունից մեկ անգամ ևս մանրամասն քննարկվեն: Եկեղեցու որոշ հայրեր, ինչպիսին էին Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Ս. Հովհաննես Խրիսոստոմը կամ Ոսկեբերանը (347, Անտիոք - 407 թթ.) և Հիպոնի եպիսկոպոս Ս. Օգոստինոսը (354-430 թթ.) սկսեցին երկրի գնդածևության տեսությանը հակառակվել, քանի որ դա համարվում էր հեթանոսական և ոչ քրիստոնեական:[11] Վերջում Ալեքսանդրիացի Կոզմա «Հնդկաչուն» էր, որ պաշտոնապես հերքեց գնդածևության տեսությունը և, ըստ իրեն, փաստեց, որ երկիրը քառանկյունի տափարակ տարածք է՝ համաձայն Աստծո կողմից Մովսեսին տրված պատգամների և ունի վրանակերպ երկնակամար: Կոզման իր կյանքի սկզբնական շրջանում որպես առևտրական ճամփորդել էր շատ վայրեր, ներառյալ Հնդկաստան, որի պատճառով էլ նրան տրվել էր «Հնդկաչու» մականունը: Նա հետագայում դարձավ կուսակրոն ու շարադրեց իր հանրահայտ *Քրիստոնեական տեղագրություն* հատորը: Այսպիսով, վեցերորդ դարից սկսած աշխարհագրությունն ու քարտեզագրությունը «քրիստոնեացվեցին» և սկսեցին ենթարկվել Սուրբ Գրքի շարադրանքներին ու տեսություններին կամ, ավելի ճիշտ կլինի ասել, նրանք սկսեցին ամեն ինչում հետևել կղերական առաջնորդների քաղաքականությանն ու քմահաճույքներին, ինչպես նաև նրանց կողմից շարադրված սահմանափակումներին և օրենքներին: Այսուհանդերձ, վեցերորդ դարի մի քանի համեմատաբար լուսամիտ կղերական առաջնորդներ, օրինակ Ալեքսանդրիայի Հովհաննես Ֆիլոպոնոսը (490-570 թթ.), որը շատ հարգված փիլիսոփա և աստվածաբան էր, դեռևս հավատում էին գնդածև երկրի ու երկրակենտրոն տիեզերքի տեսություններին:

Կոզմայի տեսությունները արմատական և կատեգորիկ կերպով հակասում էին մինչ այդ ընդունված բոլոր տեսություններին այն աստիճան, որ նույնիսկ Սևիլիայի Իզիդոր եպիսկոպոսը (560, Կարթագեն - 636 թթ.) դրանցից մի քանիսին հակառակ էր արտահայտվում: Կոզմայի տեսությունները տեղ են գտել նրա *Քրիստոնեական տեղագրություն* հատորում, որից մի քանի մեջբերումներ կան ներկա աշխատության Կոզմային վերաբերող մասում (Գլուխ 2,

[8] Տե՛ս սույն աշխատության Գլուխ 3, Մաս 5:

[9] Գալչյան, Ռ., նշված աշխ., էջ 21 և 69:

[10] Կորյուն, *Վարք Մաշտոցի*, Երևան, 1981. էջ 116-119:

[11] Հիպոնը գտնվում էր Նումիդիայում, այժմյան Ալժիրի Աննաբա քաղաքի մոտակայքում:

Մաս 5): Նրա անունը հիշվում է նույնիսկ հայերեն *Աշխարհացոյցի* ձեռագրերում:

Մինչև միջնադարի կեսերը եկեղեցական հայրերը, հետևելով միևնույն դոգմաներին, վերահսկում էին, որպեսզի քարտեզագետն իր աշխատանքի մեջ հետևի կրոնական սահմանները նշող ցուցումներին ու օրենքներին: Քարտեզագետը որոշված սահմանների մեջ ազատ էր ցանկացած կերպով ներկայացնել իր քարտեզը՝ դրա վրա պատկերելով ծովերն ու ցամաքներն ըստ եղած տեղեկությունների: Ինչպես ասվեց, այս քարտեզները սկզբնական շրջանում պարզ էին ու անպաճույճ բայց աստիճանաբար լցվեցին զարդարանքով ու պատկերներով, որոնք մեծ մասամբ վերցված էին առասպելներից ու ավանդական աղբյուրներից, ինչպիսին են, օրինակ, Պլինիոսը, Սալլուստիոսը և ուրիշները:

Ըստ նախաքրիստոնեական տեսությունների, շրջանաձև կամ գնդաձև աշխարհը բաժանված է երեք մայրցամաքների՝ Ասիա, Եվրոպա և Աֆրիկա (Լիբիա), իսկ տարածքի մնացորդը ծածկված է աղի և դառը ջրերով: Ըստ որոշ քարտեզագետների, աշխարհը նաև բաժանված է եղանակի գոտիների, որոնք երկրագնդի վրա արևելք-արևմուտք ուղղությամբ բաժանված, օղակային տեսքով գոտիներ են: Վերոհիշյալ պատկերացումներին հետևելով, միջնադարյան քարտեզները կարելի է բաժանել երեք հիմնական տեսակների:

1. Եռամաս, որտեղ աշխարհը բաժանվում է երեք մայրցամաքների: Այս տեսակն ինքը բաժանվում է մի քանի ճյուղերի՝ պարզ, սխեմայական և բարդ: Այս քարտեզներն ամենաընդհանրացած տեսակն են և կոչվում են T-O քարտեզներ: Հայերենում սրանց համար երբեմն գործածվում է «Սաղմոսային քարտեզ» անվանումը:
2. Եղանակային գոտիների բաժանված քարտեզներ, որոնցից են Մակրոբիոսի և իսլամական քարտեզների մեծամասնությունը:
3. Քառամաս բաժանում ունեցող քարտեզներ, ուր առաջին տեսակի քարտեզին ավելացված է չորրորդ, հարավային անմարդաբնակ մի մայրցամաք ևս: Սրանցից ամենահներն են Պոմպոնիոս Մելայի քարտեզները, որոնց նաև հետևել է Բեատուսը 8-րդ դարի Իսպանիայում:

Աշխարհի եռամասության մասին առաջին հիշատակումներից մեկը պատկանում է հռոմեացի զորավար Սալլուստիոսին (86-34 թթ. մ.թ.ա.), որն ասում էր, թե աշխարհը բաժանված է երեք մայրցամաքների, որոնք են Ասիան, Եվրոպան և Աֆրիկան: Ինչպես նշվեց, քարտեզների այս տեսակն ընդհանրացված էր և կիրառվում էր վաղ միջնադարից մինչև երկրորդ հազարամյակ:

Աշխարհը եղանակային գոտիների բաժանելը նույնպես ունի բավականին հին ծագում: Այս գոտիների, կամ զոնաների մասին խոսվում է հին հունական գրականության մեջ դեռ մ.թ.ա. երրորդ դարում: Արիստոտելը (384-322 թթ. մ.թ.ա.) բնակելի աշխարհը բաժանել էր հինգ գոտու:[12] Հետագայում էրատոսթենեսը (275-194 թթ. մ.թ.ա.), Մարինուս Տյուրոսացին (շուրջ 70-130 թթ.), Ալեքսանդրիացի Կլավդիոս Պտղոմեոսը (90-168 թթ.) և ուրիշները նույնպես ընդունեցին երկրագնդի եղանակային գոտիների բաժանումը: Պոսեյդոնիոսը (135-50 թթ. մ.թ.ա.) այն կարծիքի էր, որ եթե գոտիների բաժանումը կատարվում է ըստ եղանակների, ապա պետք է բնակելի աշխարհը բաժանել ոչ թե հինգ, այլ յոթ գոտու, մի տեսություն, որը որդեգրեցին իսլամական աշխարհագրագետները:

Աշխարհի եղանակային գոտիների մասին գրել է նաև հռոմեացի բանաստեղծ և գրող Պուբլիոս Վերգիլիոս Մարոն (70-19 թթ. մ.թ.ա.), որը ճանաչված է պարզապես որպես Վերգիլիոս: Նա իր աշխատություններից մեկի մեջ նշում է:[13]

> *Երկինքը բաժանված է հինգ գոտու, որոնցից մեկը շիկացած է այրող արևի տակ և կիզվում է նրա կրակով: Աշխարհի երկու ծայրամասի գոտիներն աջ ու ձախ փռված են մթության մեջ և ծածկված են սառույցով և մթագնող փոթորիկներով: Սրանց միջև, Աստծո ողորմածությամբ, գտնվում է տկար մահկանացուներիս շնորհված գոտին: Մեր երկրագունդը զառիվեր բարձրանում է մինչև Սկյութների երկիրը, ապա զառիվայր իջնում մինչև Լիբիայի հարավը:[14] Մեկ բևեռը գտնվում է մեր գլխի վերը, իսկ մյուսը ծգվում է մեր ոտքերի տակ, մինչև սև Սթիքս:[15]*

Եղանակային այս գոտիները լավագույն կերպով բացատրել և ցուցադրել է հռոմեացի փիլիսոփա և քերականագետ Ամբրոզիոս Թեոդոսիոս Մակրոբիոսը (ծաղկել է 398-423 թթ.), ում տեսությունները հիմնված էին Պոսեյդոնիոս Ապամեացու (135-50 թթ. մ.թ.ա.) *Կոսմոգրաֆիա* երկի, ինչպես նաև էրատոսթենեսի աշխատանքների վրա: Մակրոբիոսի ձեռագրերը բազմաթիվ անգամներ ընդօրինակվել են և դրանց պատճենները օգտագործվում էին մինչև ուշ միջնադար: Ավելի մանրամասն տես սույն աշխատության Երկրորդ գլուխ, Մաս 2:

Մակրոբիոսի բացատրած եղանակային գոտիները զուգահեռ գծերով բաժանված աշխարհամասեր են՝ շարված հյուսիսից հարավ, որոնք անվանվում են Հյուսիսային սառուցյալ, Հյուսիսային բարեխառն, Կենտրոնական ցամաք կամ կիզյալ – Հարավային բարեխառն և Հարավային սառուցյալ գոտիներ: Ըստ այս տեսության, միակ բնակելի գոտին Հյուսիսային բարեխառն գոտին է: Կենտրոնական՝ Կիզյալ գոտին (ըստ Աշխարհացույցի՝ *զայրեցեալ* գոտի) այնքան տաք է ու չոր, որ ոչ մի արարած չի կարող այնտեղից անցնելով հասնել Հարավային բարեխառն գոտի: Ըստ հին ավանդությունների, Հարավային բարեխառն գոտում ապրում են մարդակերպ արարածներ՝ Անտիպոդներ կամ հակոտնյաներ, որոնց ոտքերը դեպի հետ էին շրջված:[16] Սակայն այս ավանդությունը հակասություններ է առաջացնում Սուրբ Գրքի շարադրանքների հետ, ըստ որի բոլոր մարդկային ցեղերը սերված են Ադամից ու Եվայից, և եթե Աստծո արարածները անկարող են անցնել Կենտրոնական կիզյալ գոտուց, ապա ինչպե՞ս բացատրել այնտեղ առկա և բնակվող որևէ այլ մարդակերպ արարածների, ներառյալ Անտիպոդների գոյությունը:

---

[12] Aristotle, *Meteorologica*. With an English translation by H. D. P. Lee. (Loeb Classical Library; 397) Book II, Ch.5, Cambridge, Mass., 1987, էջ 179-183:

[13] Virgil, with an English translation by H. Rushton Fairclough. (Loeb Classical Library). London, 1916, էջ 97:

[14] Աշխարհամաս Սև ծովի հյուսիսում և հյուսիս-արևելքում, ներառյալ հյուսիսային Կովկասը:

[15] Գետ՝ հին հունական դիցաբանության մեջ, որը հանդիսանում է բնակված և անդրշիրիմյան աշխարհի սահմանը:

Իսլամական քարտեզագրության մեջ եղանակի գոտիների բաժանումը շատ ընդհանրացած է: Այս գոտիների քանակը հաճախ ավելացված է ու աշխարհի բնակելի Հյուսիսային Բարեխառն գոտին ինքը բաժանված է յոթ ենթագոտու, որոնք կոչվում են կլիմաներ (արաբերենով՝ էղլիմ): Սրանք հարավում սկսվում են Եթովպիայից՝ Առաջին կլիմա, և հյուսիսում հասնում մինչև Սիբիր՝ Յոթերորդ կլիմա: Այս մասին մանրամասն տեղեկությունների համար տես Իդրիսիի (1099-1166 թթ.), Ղազվինիի (1203-1283 թթ.), Իբն Սաիդի և Մոսթոուֆիի քարտեզները ներկա աշխատության Երրորդ Գլխի, 5-ից մինչև 8-րդ մասերում:

Աշխարհի քառամաս բաժանումն առաջին անգամ արձանագրվել է Պոմպոնիոս Մելայի կողմից մեր թվականության առաջին դարում, երբ առկա եռամաս տեսությանը նա ավելացրեց Աֆրիկայի հարավում գտնվող մի չորրորդ աշխարհամաս, որը կարելի է համարել Անտարկտիկան: Այս նույն մայրցամաքը, որը Անտիպոդների բնակավայրն էր համարվում, կարելի է տեսնել նաև Մակրոբիոսի գոտիների բաժանված քարտեզներում: Սրանք նաև երևում են ավելի ուշ, տասներորդ դարում Բեատուս Լիբենացու *Ապոկալիպսիս* աշխատության մեջ, որտեղ նրան տրվում է «Չորրորդ» և «Անծանոթ» ցամաքամաս անվանումները:

Միջնադարում քարտեզները մեծ մասամբ պատրաստվում էին կղերականների ձեռքով և անպայման պետք էր համընկնեին Սուրբ Գրքի փիլիսոփայության հետ: Չորրորդ դարում Ս. Օգոստինոսը աշխարհի պատմությունը բաժանեց վեց ժամանակաշրջանի: Առաջինը Նոյի ու Ջրհեղեղի շրջանն էր, իսկ վերջինը՝ Քրիստոսի գալուստից մինչև այսօր, որը դեռևս շարունակվում է: Այս ժամանակներից հետո պատրաստված բազմաթիվ քարտեզներ ցուցադրում են այս վեց ժամանաշրջաններին պատկանող կարևոր դեպքեր և «իրադարձություններ», ինչպիսիք են Երկրային Դրախտը, Դրախտի չորս գետերը, Հայաստանի Արարատ լեռը՝ ուր իջավ Նոյյան տապանը, Բաբելոնը, Բաբելոնի աշտարակը, Աբրահամի ծննդավայր Քաղդեան և Երուսաղեմը:

Ներկա աշխատությունը որոշակի սահմանները պահպանելու համար պարտավորված ենք եղել անել որոշ ընտրություններ և բացառումներ: Այս հապավումները միայն գործնական նպատակի են ծառայում, քանի որ այդ նյութերից ամեն մեկը կարող է մի ամբողջական աշխատության թեմա դառնալ: Բացառված նյութերի մեջ են հետևյալները.

1. Պտղոմեոսի բոլոր աշխատությունները:
2. Բոլոր նավավարական, կամ այսպես կոչված «պորտոլան» ծովային քարտեզները:
3. Հռոմեական հանրահայտ ճանապարհների քարտեզը, այսպես կոչված Պևտինգերյան քարտեզը:
4. «Աշխարհացույց» կոչվող հայերեն կարևորագույն աշխարհագրական ձեռագիրը և նրա տարբերակները, որը, ոմանց կարծիքով, Մովսես Խորենացու գրչին է պատկանում, իսկ ուրիշների կարծիքով՝ Անանիա Շիրակացու:

Ինչպես ակնհայտ է գրքի վերնագրից, ընտրել ենք միջնադարյան շրջանի կարևորագույն քարտեզները և դրանց մեջ հետազոտել Հայաստանին, Կողքիսին, Վիրքին ու Աղվանքին տրված տեղն ու կարևորությունը: Սակայն սա չի նշանակում, որ միջնադարյան քարտեզագրության մեջ վերոհիշյալ երկրները միայն ա՛յս քարտեզներում են պատկերված: Պարզապես կարիք կար ինչ-որ ընտրություն անել, որպեսզի աշխատանքը սահմանափակվի: Մյուս կողմից, գրքում տեղ են գտել Կոզման ու նրա տեսությունները, որոնց մեջ բացակայում է Հայաստանի, Կողքիսի, Վիրքի, Աղվանքի կամ որևէ այլ երկրի անուն կամ տեղեկություն, բայց Կոզմայի ազդեցությունը միջնադարյան մտածելակերպի և քարտեզագրության մեջ այնքան նշանակալի է, որ այստեղ քննարկված միջնադարյան դասական քարտեզների շարքին նրան անդրադառնալը համարում ենք կարևոր:

Աշխատությունն ընդգրկում է միջնադարյան քարտեզների նմուշներ, որոնք մեծ մասամբ եզակի գործեր են, բայց մի քանիսից ունենք բազմաթիվ նմուշներ, որոնք հետագայում մեզ են հասել հիմնականում տպագրված տարբերակներով: Որոշ ձեռագիր քարտեզներից այստեղ բերված են մի քանի օրինակ, քանի որ գրիչներն ու ընդօրինակողներն ամեն մեկն աշխատելով ըստ իր ճաշակի և նախընտրությունների՝ նույն քարտեզի մի քանի իրար հաջորդող պատճենները դարձրել են բնօրինակից շատ տարբեր, երբեմն նույնիսկ անճանաչելիության աստիճան փոփոխված: Այս տարբերությունները կարելի է նաև վերագրել այն բանին, որ պատճենները հաճախ պատրաստվել են դարերի տարբերությամբ, որոնց ընթացքում քարտեզները ներկայացնելու կերպը, գծելու և գրելու համար կիրառված ձևերն ու միջոցները, ինչպես նաև աշխարհագրական տեղեկությունները փոփոխվել են, զարգացել ու լրացվել: Սա կարելի է տեսնել հերթական ընդօրինակությունների, հատկապես ձեռագրերում եղած զարդանկարների ու քարտեզների մեջ, որոնք հաճախ ներկայացնում են նաև գծագրողի ճաշակն ու երևակայությունը:

Հատորի մեջ քննարկված քարտեզների բնագրերը կարևոր տեղ ունեն միջազգային քարտեզագրության մեջ: Այստեղ դրանք ներկայացված ու քննարկված են իրենց բնագրերի ստեղծման հերթականությամբ, իսկ իսլամական քարտեզները համախմբված են ներկա աշխատության երրորդ գլխում, որտեղ պահպանված է նույն հերթականությունը: Չորրորդ գլխում շարունակվում է տասներորդ դարից հետո պատրաստված քարտեզների քննարկումը: Երբ մեկ քարտեզից գոյություն ունեն մի քանի կարևոր ձեռագիր ընդօրինակումներ, քննարկման համար հաճախ ընտրել ենք մեկը, ըստ քարտեզի կարևորության, երբեմն էլ՝ հիմնվելով քարտեզի պարունակության ու ներկայացման կերպի վրա, քննարկել ենք մի քանի նմուշներ նույն քարտեզի տարբեր ընդօրինակումներից:

Մինչև տասնչորսերորդ դարը միջնադարյան քարտեզների ճնշող մեծամասնության մեջ երկրների ու տարածաշրջանների սահմանները գծված չեն: Երկրները, շրջաններն ու քաղաքները ցուցադրված են միմիայն իրենց անունների առկայությամբ: Եթե հաշվի չառնենք Պտղոմեոսյան քարտեզները, որոնք իրականում վերագծված են 13-ից 16-րդ դարերում, հիմնվելով նրա *Աշխարհագրության* տեքստերին, ապա բացառություններից երկուսն են Ալբիի

[16] Սրանք մարդանման էակներ են, որոնց ոտքերը պտտված են հակառակ ուղղությամբ: Պոմպոնիոս Մելան սրանց անվանում է "Antichtones", հակոտնյաներ: Mela, Pomponius, Pomponius Mela's description of the world / [translated with an introduction by] F.E. Romer, Ann Arbor, Mich., 1998, 1.3.

(Պատ. 14) և Քոթթոնյան (Պատ. 56) քարտեզները: Սահմանների առկայությունը քարտեզների մեջ սկսվում է ընդհանրանալ միմիայն 14-15 դարերից հետո:

Երբ նշվում է, որ քարտեզները դասավորված են թվականի հերթականությամբ, պետք է նկատի ունենալ, որ դա քարտեզի ստեղծվելու կամ բնօրինակը պատրաստելու թվականն է: Այսինքն, հերթականությունը պայմանավորված է քարտեզի հեղինակի ապրած և ստեղծագործած դարաշրջանով: Հայտնի է, որ հին քարտեզներից շատ քչերի բնօրինակներն են մեզ հասել, հետևաբար աշխատությունում պարտադիր ներկայացված են քարտեզներից հետագայում գծված ընդօրինակումները: Այնպես որ, չնայած քարտեզների բնօրինակները հերթականությամբ են տրված, բայց գրքում տեղ գտած քարտեզների ընդօրինակելու թվականները հաճախ տարբեր են: Այս իմաստով բնութագրական են Իսթախրիի քարտեզները, որոնց առաջին օրինակը պատրաստվել է 950-ական թվականներին, ուստի և նրա քարտեզները թվագրվում են տասներորդ դարով, մինդեռ աշխատությունում տեղ գտած քարտեզները ընդօրինակվել են 1173, 1271, 1325 և նույնիսկ 1836 թվականներին:

Այս հատորի մեջ քննարկված որոշ քարտեզներ պատկերված ու բացատրված են մեր նախորդ աշխատության մեջ, բայց այս հատորում նույն քարտեզները, խուսափելով հանդերձ կրկնողություններից, քննարկված են շատ ավելի մանրամասն, հավելյալ դիտողություններ են արված դրանց ներկայացման ձևի, մանրամասների, գրվածքների ու տեղագրության վերաբերյալ:[17]

Նույնիսկ այսօրվա զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների պայմաններում հաճախ մեր ունեցած քարտեզները, որոնց մենք մեկընդմեջ դիմում ենք, կարող են արդիական քաղաքական, ադմինիստրատիվ, անգամ աշխարհագրական իրավիճակն արտացոլող ճշգրիտ քարտեզներ չլինել: Այսպես, օրինակ, քաղաքների քարտեզները կարող են չունենալ նշումներ նոր փողոցների, առավել ևս փողոցների նոր անվանումների մասին, իսկ աշխարհացույց քարտեզները կարող են չարտացոլել երկրների անունների ու սահմանների վերջին փոփոխությունները: Միջնադարում տեղեկություններ ու նորություններ փոխանցելը երկարատև ու բարդ գործընթաց էր, և նոր հայտնագործությունները հաճախ քարտեզագետներին էին հասնում երկարատև ուշացումով: Դրան ավելացնելով այն, որ քարտեզ պատրաստելը բավականին ժամանակ և նյութական միջոցներ պահանջող գործողություն էր, դյուրին է հասկանալ թե ինչու հայտնագործումները և նոր տեղեկություններն ընդհանրապես քարտեզների վրա այնքան էլ արագ երևան չէին գալիս: Այս իսկ պատճառով հնարավոր է, որ հատկապես վաղ միջնադարյան քարտեզների մեջ պատկերվածը ոչ ամբողջովին է համապատասխանում տեղեկատվության այդ ժամանակահատվածի իրական մակարդակին, և դրանցում պատկերված աշխարհը կարող է լինել շատ ավելի վաղ իրավիճակի կամ ժամանակային կտրվածքի արտացոլում, քան քարտեզի պատրաստելու թվականը: Ինչ վերաբերում է արևմտյան քարտեզներին, ապա դրանց վրա նորություններ ավելացնելը պետք է համընկներ նաև եկեղեցու թելադրանքներին, ինչը մեկ այլ պատճառ էր ու խոչընդոտ գոհանալու եղածով և խուսափելու դժվար ընդունելի նորություններ ներմուծելուց: Այս բոլոր պակասություններով հանդերձ չպետք է մոռանալ, որ միջնադարյան քարտեզները ներկայացնում են իրենց ստեղծման ժամանակի աշխարհագրական, տնտեսական, կրոնական, քաղաքական և պատմական մտածելակերպը և նման բնույթի տեղեկատվությունը միջին դարերից մեզ հասցնելու լավագույն միջոցներից են:

Միջնադարյան քարտեզները նայելիս պետք է գիտակցել, որ հատկապես այդ ժամանակներում աշխարհագրական ճշգրիտ տեղեկությունների և կոորդինատների բացակայության պատճառով հաճախ նույն տեղանունը տարբեր քարտեզներում նշվում է տարբեր վայրերում: Այդպիսի տեղադրումները մերօրյա ընթերցողին կարող են անսպասելի և նույնիսկ զարմանալի թվալ, բայց փաստն այն է, որ տեղանունների տեղադրման շփոթը շարունակվեց ընդհուպ մինչև նույնիսկ 18-րդ դար, և նույնիսկ այդ ժամանակ միայն Եվրոպայի և կից տարածաշրջանների քարտեզներն էին որ, այսպես ասած, «վստահելի» էին, մինչդեռ մյուս աշխարհամասերի քարտեզները դեռևս շարունակվում էին մնալ միմիայն մոտավոր:

Պարզ T-O տեսակի քարտեզների մեջ միջնադարյան քարտեզագիրը հաճախ նույնիսկ չի էլ աշխատում երկրներն ու քաղաքները նշել իրենց իրական վայրերում, այլ պարզապես դրանք բաժանում է ըստ մայրցամաքների կամ եղանակային գոտիների և տեղանունները ցուցակի ձևով շարում համապատասխան մայրցամաքներում ու գոտիներում (տե՛ս Պատկերներ 24, 26, 53 և 68):

Երբեմն էլ տարածաշրջանների, երկրների ու քաղաքների տեղադրումները քարտեզագրի անտեղյակության պատճառով դառնում են փոփոխական, օրինակ Կովկասյան ու Տավրոսյան լեռների տեղադրումը կարելի է տեսնել Կասպից ծովի հարավ-արևելքում (Հերոնիմոս, Պատ. 11 և էբսթորֆ Պատ. 70) կամ դրա հարավում (Բեատուս, Պատ. 31):

Այս աշխատության մեջ պատկերված քարտեզները քննարկելով կարելի է եզրակացնել, որ քաղաքների, երկրների ու աշխարհագրական անունների տեղադրումները լավագույն դեպքում հաճախ մոտավոր են, հետևաբար քարտեզին նայելիս պետք է ուշադրությունն ավելի կենտրոնացնել տեղանունների առկայությանը, քան թե դրանց ճշգրիտ տեղադրմանը: Գալով անվանումներին, սրանք էլ հաճախ շփոթ են ստեղծում, քանի որ նույն վայրի անունը կարող է տարբեր քարտեզներում նշվել շատ տարբեր ձևերով: Այս առումով լավ օրինակ է Դարյալի կիրճը, որը գտնվում է Կովկասյան լեռների համարյա մեջտեղում:

Դարյալի կիրճին ու Կովկասյան կամ Դերբենդի դարպասին տրված տարբեր անվանումները կարելի է տեսնել ներքևի աղյուսակի մեջ: Այս երկու անցքերը գտնվում են Կովկասյան լեռներում: Առաջինը՝ Դարյալի կիրճը մի նեղ անցք է Կովկասյան լեռների մեջտեղում, որը միացնում է Կովկասյան լեռների հարավը հյուսիսին, անցնելով Կազբեկ լեռան մոտակայքով: Սրա երկու կողմերից վեր են խոյանում ուղղահայաց ապառաժներ: Կիրճը գտնվում է Վրացական ռազմական ճանապարհի վրա, որը Թբիլիսիից գնում է դեպի Վլադիկավկազ: Արաբները և պարսիկները սրան տվել են «Ալանաց դուռ» անվանումը:[18] Մյուսը անցքը Կասպից կամ Դերբենդի դարպասը կամ անցքն է, որը գտնվում է Կովկասյան լեռների արևելյան ծայրամասում,

[17] Գալչյան, Ռ., նշված աշխ., էջ 42-63:

որտեղ, Դերբենդ ծովափնյա քաղաքի մոտ լեռնաշղթան իջնում հասնում է հարթավայրին: Արաբներն ու պարսիկները այս անցքին տվել են «Բաբ-ուլ-աբուաբ» անվանումը, որը բառացիորեն նշանակում է «Դարպասների դարպասը»: Այս անցքը միջնադարում նաև ճանաչված էր որպես «Կասպից դարպաս», «Ալեքսանդրի դարպաս», «Երկաթյա դարպաս», հայերենով «Ճորա դուռ» կամ «Ճորա պահակ», որն ըստ լեգենդի կառուցել է Ալեքսանդր Մակեդոնացին՝ փակելու հյուսիսային վայրագ ցեղերի ճանապարհը դեպի քաղաքակիրթ աշխարհ: Սակայն «Ալեքսանդրի դարպաս» և «Երկաթյա դարպաս» անվանումներն իրականում պատկանում են մյուս անցքին, Դարյալի կիրճին:[19]

Ներքոբերյալ աղյուսակում կարելի է տեսնել այս խառնաշփոթ անվանումների մեկ մասը.

Հեղինակ կամ քարտեզագետ, (աշխատությունն ու գլուխը)	Կովկասյան լեռնաշղթայի մեջտեղի անցումը	Կասպից ծովի ափերին գտնվող անցումը
Ստրաբոն (Geographia, Book 11, 12.1)	Կասպից դարպաս	
Պլինիոս Ավագ (Natural History, Book VI, 30)	Կովկասյան անցք[20]	
Պոմպոնիոս Մելա (Description of the World, Book I, 81)	Հայկական դարպաս	Կասպից դարպաս
Պտղոմեոս (Geographia, Book 5, Chapter VII and XII)	Աղվանքի անցք	Սարմատական անցք
Ըստ արաբների ու պարսիկների (Encyclopaedia of Islam Vol. I, pp.835/7)	Բաբ-ուլ-Ալան (Ալանաց դուռ կամ դարպաս) կամ Կովկասյան դարպաս	Բաբ-ուլ-աբուաբ (Դարպասների դարպասը) նաև Դերբենդի անցք կամ Երկաթե դարպաս
Օրոսիոս (Seven books of History against the Pagans, Book 1, 2.40)	Հայկական դարպաս, ըստ գրքի տեքստի	
Աշխարհացոյց (5-7 դ. Ս. Ղազար, Վենետիկ, Ձեռ. No.1245, էջ 41/42)	Ալանաց դուռն և Կծեքեն, էջ 41, (տեղն անորոշ է)	Պարիսպ Դարբանդա և Պահակ Ճորա, (էջ 42)
Աշխարհացոյց (5-7 դ, Մատենադարան, Երևան Ձեռ. No. 582, էջ 177ա)	Ալանաց դուռն և Ծիծեն (տեղն անորոշ է)	Պարիսպ Դարբանդա
Չամչեան, Մ., Պատմութիւն Հայոց, Վենետիկ (1786, հատոր 3, ցանկ)		Երկաթի դուռն, Դուռն Դերբենդա, Ալանաց դուռն, Ճորա դուռն
Սուրբ Հերոնիմոսի աշխարհացոյց (Պատ. 11)	Կասպից դարպաս[21]	
Օրոսիոսի աշխարհացոյց (Պատ. 13)	Կասպից անցք, (ըստ վերագծված քարտեզի) (տես տողատակի ծանոթագրություն 21)	
Իզիդորի աշխարհացոյց (Պատ. 22)	Կասպից դարպաս (տես տողատակի ծանոթագրություն 21)	
Ռավեննացու վերագծված աշխարհացոյց (Պատ. 27)	Կասպից դարպաս (տես տողատակի ծանոթագրություն 21)	
Սաուլիի աշխարհացոյց (Պատ. 58)	Կասպից դարպաս (տես տողատակի ծանոթագրություն 21)	
Վերչելլի աշխարհացոյց (Պատ. 67)	Ալեքսանդրի դարպաս (որն ընդհանրապես տրվում է Կասպից դարպասին)	
Էբսթորֆի աշխարհացոյց (Պատ. 70)	Կասպից դարպաս (տես տողատակի ծանոթագրություն 21)	
Բարհեբրեոս (Պատ. 76)		Երկաթե դարպաս (նաև տես տողատակի ծանոթագրություն 33)
Հերեֆորդի աշխարհացոյց (Պատ. 77)	Կասպից դարպաս (տես տողատակի ծանոթագրություն 21)	
Վեսքոնթե աշխարհացոյց (Պատ. 79)		Երկաթե դարպաս

[18] Ալաններն իրանական ցեղեր էին, որոնք բնակվում էին Կովկասի հյուսիսում, ուր կարելի էր հասնել Դարյալի կիրճով:

[19] Pseudo–Callisthenes, *The History of Alexander the Great, being the Syriac version of the Pseudo–Callisthenes.* Edited from five manuscripts, with an English translation and notes by Ernest A. Wallis Budge. Cambridge, The University Press, 1889, էջ 130-163.

[20] Ըստ Պլինիուս Ավագի, շատերը սխալմամբ սրան անվանում են Կասպից դարպաս. Տե՛ս Pliny the Elder, *Natural History*. With an English translation by H. Rackham (Loeb Classical Library). Cambridge, Mass., 1999. Book VI, էջ 359.

[21] Ըստ Անդերսոնի, այս անվանումը միջնադարում հաճախ գործածվում էր Դարյալի կիրճի համար: Anderson*Alexander's Gate, Gog and Magog,* նշված աշխ., 1932, էջ. vii, 16-25.

Հնագույն և միջնադարյան տարբեր պատմիչներ ու քարտեզագիրներ այս անցքերը և դարպասը բացատրում ու ցույց են տալիս տարբեր տեղերում և տարբեր անուններով: Միջնադարում ընդհանրացած սխալ էր Կասպից դարպասը ցույց տալ Կովկասյան լեռների մեջտեղում, որտեղ իրականում գտնվում է Դարյալի կիրճը, իսկ սրան տալ «Կասպից դարպաս» անվանումը, որն իրականում գտնվում է Կասպից ծովի ափի մոտ, Դերբենդ քաղաքի շրջանում:

Ինչպես կարելի է տեսնել, քարտեզների մեծամասնության մեջ Կովկասյան լեռների մեջտեղում եղած անցքը սխալմամբ անվանվում է Կասպից դարպաս, որն իրականում Ալանաց Դուռը կամ Կովկասյան դարպասն է: Այս անցքն ապագայում վերանվանվեց Դարյալի կիրճ:

Եվրոպական միջնադարյան քարտեզներում Կովկասից հարավ և Հայաստանին հարակից պատկերվող տարածաշրջանները, ի հավելումն Բյուզանդական կայսրության բազմաթիվ շրջանների, ներառում են մինչքրիստոնեական աշխարհի մի քանի կայսրություններ, ինչպիսիք են Ասորեստանը, Բաբելոնը, Փյունիկիան և Մարաստանն ու Պարթևաստանը (Պարսկաստանը): Այս հզոր կայսրություններից և թագավորություններից տարածաշրջանում այսօր ներկա են միայն Հայաստանն ու Պարսկաստանը, մինչդեռ մյուս գերուժերը վաղուց ի վեր անհետացել են և այլևս տեղ չունեն արդիական աշխարհի քարտեզներում: Գալով Կովկասյան լեռներց հարավ գտնվող երկրներին՝ Կողքիս-Իմերեթիանը, Վիրք-Քարթլիը, Մեգրելիան ու Կախեթը 11-12-րդ դարերում միանալով դարձան Վրաստանը (տե՛ս հաջորդ պարբերությունը), Աղվանքը որպես պետություն անհետացավ 9-11-րդ դարերի ընթացքում և նրա տարածքը բաժանվեց տարբեր խանությունների ու նահանգների, ինչպիսիք են Դաղստանը, Դերբենդը, Շիրվանը, Շամխորը, Թալիշը և այլն, ուր հաստատվեցին տարբեր եկվոր ցեղախմբեր և աստիճանաբար իրենց մեջ ներծուլեցին Աղվանքի բնիկ քրիստոնյա ժողովրդին:[22] Այս ծուլումը շարունակվեց նաև 17-րդ դարի ընթացքում տարածաշրջանում իշխող ռուսական ու պարսկական պետությունների լուծի ներքո: 1918 թվականին այս շրջաններից մի քանիսը միանալով կազմեցին Ադրբեջանի Առաջին Հանրապետությունը, որի անվանումը 1922-ին ամրապնդվեց որպես Խորհրդային Միության հանրապետություններից մեկը: Ամբողջ այս ընթացքում Արաքսի հարավային ափի պարսկական Ատրպատական (պարսկերենով՝ Ազերբայջան) նահանգը պահպանելով իր ինքնությունը մինչև այսօր մնացել է որպես Պարսկաստանի նահանգներից մեկը: Կենտրոնական Ասիայից եկող ցեղախմբերը դեռ այս տարածաշրջանները չէին գրավել և այդ պատճառով էլ մինչև 13-րդ դար քարտեզներում թրքական ցեղերի անվանումները չեն նշվում: Անկախ այն հանգամանքից, որ միջնադարի ընթացքում Հայաստանը եղել է անկախ, կամ ընկել հարևան հզոր կայսրությունների գերիշխանության տակ, նրա անունը մշտապես ներկա է եղել այդ ժամանակաշրջանի քարտեզներում, որպես երկիր կամ տարածաշրջան: Հայաստանի անընդմեջ առկայությունը աշխարհի և, հատկապես, տարածաշրջանի քարտեզներում սկսվել է մեր թվականությունից վեց դար առաջ և շարունակվում է մինչ մեր օրերը:[23]

Երբ 11-12-րդ դարերում Կողքիս-Աբխազիա-Իմերեթիան, Վիրք-Քարթլիը, Կախեթն ու Մեգրելիան իրար միանալով ստեղծեցին մի նոր թագավորություն, լատինական լեզուներով երկիրը կոչվեց Georgia (անգլերենով՝ Ջորջիա, ֆրանսերենով՝ Ժեորժի, գերմաներենով Գեորգիեն և այլն), որը նրա պարսկերեն անվան՝ «Գյուրջիստանի» ուղղակի տառադարձումն է: Հայերենով նույն երկրին շարունակվեց տրվել նրա բաղկացուցիչ երկրամասերից ամենակարևորի, Վիրք-Քարթլիի անունը, որն իր Մցխեթ թագավորանիստ քաղաքով հանդերձ գտնվում էր Հայաստանից ուղղակի հյուսիս և այսպիսով երկրի անվանումը դարձավ Վիրք կամ Վրաստան:

Երբեմն էլ նշվում է որ Հայաստանը, Վրաստանը (Կողքիս-Աբխազիան ու Վիրքը) և Ադրբեջանը (Աղվանքը) գտնվում են Անդրկովկասում կամ Հարավային Կովկասում, որոնցից առաջինը սխալ է, իսկ երկրորդը՝ պայմանական: Անդրկովկաս անվանումը ռուս գերիշխողները տվել են Հայաստանին, Վրաստանին, Դաղստանին, Շիրվանին ու այլ շրջաններին, որը բառացիորեն նշանակում է Կովկասի մյուս կողմը: Այս բառը որևէ աշխարհագրական շրջանի համար ճշգրիտ անվանում չէ, քանի որ եթե քարտեզին նայենք Ռուսաստանի կողմից՝ ապա սրանք գտնվում են «Անդրկովկասում», այսինքն Կովկասյան լեռների մյուս կողմում, իսկ եթե նույն քարտեզին նայենք հարավից, ապա Անդրկովկասում կլինի հենց ինքը՝ Ռուսաստանը:

Նույն նյութի շուրջ կարևոր է նշել, որ Հայաստանի աշխարհագրական տեղանքին հաճախ տրվում են սխալ անվանումներ: Օրինակ «Արևելյան Անատոլիա» եզրաբառը, որը տրվում է Հայաստանին ամբողջովին սխալ է: «Արևելյան Անատոլիա» բառացիորեն նշանակում է «արևելյան արևելք» (տես Նախաբանը): Հարավային Կովկասի երկրներից Հայաստանը տեղադրվում է Հայկական բարձրավանդակ կամ Հայկական լեռնաշխարհ կոչվող աշխարհագրական տարածաշրջանում, որի սահմաններն են Պոնտական լեռները, այսպես կոչվող Փոքր Կովկասը, Ուրմիա լճի արևմուտքը հասնող Զագրոսյան լեռները և Վանա լճի հարավի Արևելյան լեռները կամ Հայկական Տավրոսը, շուրջ 400,000 քառ. կիլոմետր ունեցող մի տարածք: «Հայկական լեռնաշխարհ» անվանումն առաջին անգամ տվել է գերմանացի հանքաբան Հերման Վիլհելմ Աբիխը, որն աշխատում էր Սանկտ Պետերբուրգում և հետազոտական ճամփորդություններ է կատարել Կովկասում, Հայաստանում և Անատոլիայից արևելք գտնվող տարածքում, իսկ 1845 թվականին նույնիսկ բարձրացել է Արարատը լեռը:[24] Կարելի է ասել, որ Պատմական Հայաստանը սկսում է Հարավային Կովկասից և տարածվում

[22] Գալչյան, Ռ., նշված աշխ. էջ 11, 12, 198, 208, 242-245:

[23] Գալչյան, Ռ., նշված աշխ. էջ 16 և 64:

[24] Abich H. W. *Über die geologische Natur des armenischen Hochlandes*. Dorpat, 1843, էջ 13:

հարավ-արևմուտք, գրավելով Հայկական բարձրավանդակի կամ լեռնաշխարհի տարածքը, և այդպիսով, հնարավոր է հիմնավորել, որ Հայաստանը տեղադրված է Անատոլիայից դեպի արևելք գտնվող տարածաշրջանում և ոչ թե «Արևելյան Անատոլիայում»:[25] Գալով Վրաստանին (միջնադարյան Վիրքին ու Կողքիսին), ինչպես նաև Ադրբեջանի Հանրապետությանը (միջնադարյան Աղվանքին), սրանց կարելի է իրապես անվանել հարավկովկասյան երկրներ, քանի որ նույնիսկ այդ դարերում էլ նրանք տեղադրված են եղել «Հարավային Կովկաս» ընդունված աշխարհագրական տեղանվան սահմանների մեջ:

Վերը նշված բոլոր խնդիրներով ու պակասություններով հանդերձ պետք է ասել, որ այս քարտեզները հսկայական դեր ունեն մեզ փոխանցելու մեր նախնիների միջնադարյան ժամանակներում ունեցած տեղեկություններն ու գիտելիքները, այսպիսով օժանդակելու մեզ ավելի լավ հասկանալ նրանց մտածելակերպն ու գործելակերպը:

[25] Գալչյան, Ռ., նշված աշխ. էջ 10, 11, 46 և 50, նաև Ոսկանյան, Ա. Մ., *Հայկական լեռնաշխարհի, ֆիզիկա-աշխարհագրական համառոտ ակնարկ*, Երևան, 1976, էջ 5,6:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐ (Չորրորդից մինչև իններորդ դարեր)

Աշխատության այս գլխում քննարկված են վաղ միջնադարի քարտեզները, որոնք հիմնականում միայն աշխարհացույց քարտեզներ են: Այստեղ տեղ է տրված նաև Սալլուստիոսին (86-34 թթ. մ.թ.ա.)՝ անտիկ շրջանի մի պատմաբանի և նրա քարտեզներին, քանի որ նրա գրքերն արևմտյան աշխարհում գործ էին ածվում մինչև տասներորդ դարն ու դեռ ավելի ուշ: Ինչպես արդեն նշվեց, վաղ միջնադարյան քարտեզները սկզբնական շրջանում հիմնված էին հին հունական աղբյուրների վրա, բայց աստիճանաբար սրանք էլ՝ գիտության մյուս ճյուղերի նման, անցան եկեղեցու և կղերականների գերիշխանության տակ և պարտավորված էին հետևել կրոնական դոգմաներին ու կղերականների թելադրանքներին:

Պարզ T-O տեսակի քարտեզներում ընդհանրապես կան շատ քիչ երկրների անուններ, այն էլ միայն Արևմուտքում ճանաչված երկրներինը: Եթե այս տեսակի քարտեզներում նշված են Կովկասյան լեռների հարավում գտնվող երկրները, ապա դա, որպես կանոն, սահմանափակվում է Հայաստանով, իսկ մյուս երկրների անվանումները երևում են միայն ավելի զարդարուն և մանրամասն քարտեզներում:

Վաղ միջնադարյան քարտեզների կարևոր և լավագույն նմուշներից մի քանիսը պատկերված և քննարկված են ստորև:

1 – ՍԱԼԼՈՒՍՏԻՈՍ

Գայոս Կրիսպոս Սալլուստիոսը (86-34 թթ. մ.թ.ա.) հռոմեացի սենատոր և պատմաբան էր, որը Հուլիոս Կեսարի հետ անհամաձայնություն ունենալու պատճառով ուղարկվեց Աֆրիկա, որպես հյուսիս-արևմտյան շրջանի՝ Նումիդիայի կուսակալ: Մի քանի տարի այդ պաշտոնը վարելուց հետո արդեն բավականին հարստացած նա վերադարձավ Հռոմ: Աֆրիկայում գտնված ժամանակամիջոցում նա ճնշեց մի քանի ապստամբություններ և պատերազմեց հարևան երկրների զորավարների դեմ, որոնց մասին նա գրել է իր պատմական շարադրությունների մեջ:

Նրա ամենահայտնի աշխատությունները (ամփոփված մեկ հատորի մեջ) վերաբերում են Կատիլինի դավադրությանն ու Հռոմի և Յուգուրթայի միջև մղված պատերազմին: Այս աշխատությունները մինչև տասնմեկերորդ դար՝ համարյա մեկ հազարամյակ, ընդօրինակվում ու գործածվում էին որպես պատմության դասագիրք: Իր *Յուգուրթական պատերազմը* երկի մեջ Սալլուստոսը Աֆրիկայի մասին տալիս է աշխարհագրական, տեղագրական, ժողովրդագրական բնույթի տեղեկություններ, տվյալներ կլիմայի և բնության մասին: Այստեղ նա ներկայացնում է, թե ինչպես Հերակլես զորավարի հայկական վարձկան զորքերը հաստատվեցին Հյուսիսային Աֆրիկայում և, խառնվելով տեղական լիբիական ցեղախմբերին, սերեցին այսօրվա հյուսիս-աֆրիկյան ցեղերին: Գրքի մի հատվածի թարգմանությունը բերվում է ստորև:[26]

> *Երկրագնդի բաժանումների մասին շատերն Աֆրիկան նշում են որպես երկրագնդի երրորդ մասը, մի քանիսը դա համարում են Եվրոպայի մասը և, այսպիսով, աշխարհը բաժանում են երկու մասի: Աֆրիկայի արևմուտքումն է նեղուցը, որը մեր ծովը [Միջերկրականը] բաժանում է օվկիանոսից, արևելքում նա մի լայնատարած և թեք հարթավայրով հասնում է մինչև Քաթաբաթմոս լեռները: Ծովը շատ անհանգիստ է ու առանց հարմար նավահանգիստների, հողը բերրի է ու հարմար եգիպտացորեն աճեցնելու և անասունների արածելու համար, բայց աննպաստ է ծառերի համար: Անձրևաջրի և աղբյուրների պակաս կա: Տեղացիներն առողջ են, արագաշարժ և հոգնության դեմ դիմացկուն: Սրանցից շատերը մահանում են մեծ տարիքում, բացի նրանցից, որոնք սրի են քաշվում կամ գազանների կեր դառնում, իսկ հիվանդությունները քչերին են տանում: Այստեղ կան բազմաթիվ թունավոր կենդանիներ:*
>
> *Սկզբնական շրջանում Աֆրիկան բնակեցված էր գեթուլիացիներով և լիբիացիներով, որոնք կոպիտ ու հետամնաց ցեղեր էին, ուտում էին որսի հում միս և խոտեր, ինչպես և իրենց եղջերավոր անասուններին: Սրանք չէին հպատակվում որևէ օրենքի, սովորության և նույնիսկ իշխանավորի, այլ թափառում էին առանց մշտական բնակավայրի՝ գիշերներն անցկացնելով այնտեղ, ուր որ հասնում էին: Երբ, ըստ աֆրիկացիների, Հերակլեսը մահացավ Իսպանիայում, նրա վարձկան զորքերը, որոնք բաղկացած էին տարբեր ազգություններից, կորցրեցին իրենց զորավարին:[27] Նրա թափուր տեղը գրավելու համար շատերը սկսեցին պայքարել և պատճառ դարձան զորքի արագ ցրվելուն: Զորքի բաղկացուցիչ ուժերից մարերը, պարսիկներն ու հայերը՝ նավարկելով Աֆրիկա, գրավեցին այստեղի ծովափնյա շրջաններն ու հաստատվեցին այնտեղ:*

[26] Sallust, *Conspiracy of Catiline and the Jugurthine War*. Literally translated with explanatory notes by John Selby Watson. New York, 1879. Էլեկտրոնային օրինակը վերցված համակայքից:

[27] Հերակլեսն Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներից մեկն էր:

Մարերը և հայերը միացան լիբիացիների հետ, որոնք նույնպես բնակվում էին ծովափնյա շրջաններում, կառուցեցին քաղաքներ և սերտ հարաբերություններ հաստատեցին իրենցից նեղուցով բաժանված Իսպանիայի հետ: Իսկ գետուլիացիները դրանց հարավային, արևակողմ շրջաններում էին բնակվում, կենտրոնական անապատներից ոչ հեռու: Լիբիացիները «մարերի» անունն իրենց անտաշ լեզվով աստիճանաբար աղավաղելով դարձրին «մավրեր»:

Սալլուստիոսից մեզ հասած որոշ ձեռագրեր պարունակում են պարզ T-O տեսակի քարտեզներ, որոնք վերաբերում են նրա *Յուգուրթական պատերազմը* երկին: Այս քարտեզներից շատերը Հյուսիսային Աֆրիկայում նշում են հայերի, մարերի և պարսիկների անունները, որոնք հաստատվել էին այդտեղ: Այս քարտեզները կարելի է համարել որպես միջնադարի նույնատեսակ քարտեզների նախատիպեր:

Հետաքրքիր է, որ ըստ լեզվաբանների, բասկերի լեզվում կան շատ հայերեն բառեր և արմատներ, որոնց առկայությունը այդ լեզվի մեջ դժվար է բացատրել: Թերևս լեզվաբանները պետք է հետազոտեն Սալլուստիոսի հիշատակած այս ավանդությունը, որ իբր թե հայերը Իսպանիայից անցնելով հաստատվել են Աֆրիկայում: Արդյոք հնարավոր չէ՞, որ նրանց մեկ մասն անցնելով հյուսիս՝ հաստատված լինեն Բասկերի երկրում:

Ինչպես հիշվեց վերը, Սալլուստիոսի ձեռագրերը բազմաթիվ անգամներ ընդօրինակվել ու հաճախ օգտագործվել են միջնադարում և մեզ հասել մի քանի տասնյակ օրինակներով: Այս օրինակներից շատերի մեջ կան պարզ T-O քարտեզներ, որոնք ցուցադրում են մայրցամաքները, իսկ որոշ քարտեզներ նշում են նաև երկրների ու ցեղախմբերի անուններ: Քանի որ Սալլուստիոսի երկը վերաբերում է Հյուսիսային Աֆրիկային, նրա քարտեզներում այս աշխարհամասը ուշադրության կենտրոնում է: Այդ նկատելի է նաև սույն աշխատության մեջ վերատպված նրա քարտեզներում, որոնք վերցված են Սալլուստիոսի բնագրի 13-րդ և 14-րդ դարերում պատրաստված պատճեններից և որոնք մինչև այդ դարաշրջանը գործածվում էին որպես պատմության դասագրքեր:

Պատ. 1 – Այս պարզ տեսակի T-O քարտեզը Սալլուստիոսի ամենահին ձեռագրերից է: Այն պատկանում է 9-րդ կամ 10-րդ դարերին, գծված է մագաղաթի վրա և պատճենահանված է Լայպցիգի համալսարանում գտնվող Սալլուստիոսի երկերի ձեռագրից: Այս քարտեզը հազվագյուտներից է, որը պարզ լինելով հանդերձ՝ ունի մի քանի քաղաք պատկերող գծագրեր: Ինչպես բոլոր T-O տեսակի քարտեզները, այս քարտեզը ևս ուղղորդված է արևելքը դեպի վեր:

Քարտեզում պատկերված *Ասիայի* շրջանում նշված են միայն չորս անուն, որոնցից են *Տանայիս* գետը (Դոնը), *Ասիան*, *Ֆենիցիան* (Փյունիկիա) և *Նիլոսը* (Նեղոս): Եվրոպայի տարածքում ընդհանրապես չկան տեղանուններ բացի *Հռոմը* պատկերող մի ամրոցից, որը վկայում է Հռոմի կարևորությունը նույնանուն կայսրության մեջ:

Քանի որ Սալլուստոսը աֆրիկյան Նումիդիայի տիրակալն էր, ապա բնական է, որ քարտեզն ավելի կարևորություն է տալիս այդ տարածաշրջանի տեղանուններին: *Աֆրիկայում* նշված են 24 տեղանուններ, որոնց մեջ են *Հարրան* և *Կարթագո* (Կարթագեն) քաղաքները, ինչպես նաև երկու այլ քաղաք: Նշված են տարբեր նահանգների, գետերի ու ցեղերի անուններ: Ներքևից կենտրոնական շարքի չորրորդ տողում, *Ատլաս* լեռների մոտակայքում, նշված է «*մարեր – հայեր*», որը վկայում է հայերի ու մարերի հաստատվելն այս աշխարհամասում:

Պատ. 2 – Այս քարտեզը հայտնի է որպես «*Գոթիե դը Շաթիյոնի աշխարհացույցը*»: Քարտեզը ներառված է նույն հեղինակի «*Դե Ալեքսանդրեիս*» կամ «Ալեքսանդրեիդոս» երկում, որն Ալեքսանդր Մակեդոնացու հաղթանակների մասին գրված էպիկական պոեմ է: Հեղինակը ծնվել է Ֆրանսիայում 1135 թվականին և մահացել Ֆրանսիայի Ամիեն քաղաքում 1201-ին: Ձեռագրում առկա է քարտեզ, որը Սալլուստիոսի T-O տեսակի մի քարտեզ է և պարունակում է պոեմի մեջ եղած տեղանուններից մի քանիսը: Քարտեզի ներկայացվող պատկերը վերցված է Օքսֆորդի Բոդլեյան գրադարանի օրինակից:

Քարտեզը՝ T-O տեսակի լինելով հանդերձ, հարավում և հյուսիսում ունի երկու զույգ ուղղահայաց գծեր, որոնք աշխարհի տարածքը բաժանում են երեք եղանակային գոտիների: Երկու ծայրամասային գոտիները ներկայացնում են սառուցյալ շրջանները, իսկ կետնրոնական մասը աշխարհի բնակելի տարածքն է, որն ինքն ունի T-O քարտեզի տեսք:

Շրջանի չորս կողմերից դուրս եկած թևերը նշում են չորս աշխարհագրական ուղղությունները, իսկ արտաքին շրջանում նշված են 12 հիմնական հողմերի անունները: *Տանայիս* և *Նեղոս* գետերը T տառի թևերն են, իսկ ուղղահայաց գծիկը *Միջերկրական ծովն* է: Այս երեքը միմյանցից առանձնացնում են մայրցամաքները: Եվրոպայում նշված աշխարհագրական անուններն են *Դանուբը*, *Հունգարիան*, *Գերմանիան*, *Իտալիան* և *Հռոմը*, Միջերկրականի արևմտյան ծայրամասի եռանկյունին ունի *Կալպե* մակագրությունը, որը Ջիբրալթարի լատիներեն անվանումն է: Ասիայի տարածքում տեղանունները բաժանված են երկու սյունակի: Ձախակողմյան սյունակը սկսվում է *Արմենիա* – Հայաստան մակագրությամբ, ապա շարունակվում *Բյութանիա*, *Փռյուգիա*, *Գաղատիա*, *Լյուդիա*, *Բոեսիա*, *Պամփյուլիա* և *Նիկեա* տեղանունների թվարկմամբ: Աջ սյունակն սկսվում է *Դրախտով* և ապա շարունակվում *Հնդկաստան*, *Պարթևաստան*, *Մարաստան*, *Ասորեստան*, *Պարսկաստան*, *Միջագետք*, *Քաղդեա*, *Արաբիա*, *Սիրիա*, *Պաղեստին*, *Անտիոք*, *Ասկալոն*, *Սամարիա*, *Ասիա*, *Հուդա*, *Երուսաղեմ*, *Գալիլեա* տեղանուններով, իսկ Ասիայի հարավում նշված են *Եգիպտոսը*, *Ալեքսանդրիան* և *Բաբելոնը*:

Աֆրիկայում նշված են մի շարք երկրներ ու ցեղախմբեր: Միջերկրականի ափին, մասնավորապես նշված են *լիբիացիները*, *մարերը* և *հայերը*. որոնցից վերջին երկուսը՝ ըստ Սալլուստիոսի, Հերակլեսի մահվանից հետո հաստատվել էին Հյուսիսային Աֆրիկայում:

Քարտեզի երկու կողմում գրված տեքստը հիշատակում է Նոյի շառավիղների ցրվելու ուղղությունները: Նման շրջանաձև քարտեզներ առկա են նաև Մատենադարանի հայերեն ձեռագրերում, որոնք նշում են Նոյի շառավիղների ցրվելն ու 12 հիմնական հողմերի անունները, ներառյալ նրանց բերած եղանակների հատկությունները (տես Պատ. 3 և 4):

Պատ. 3 – Այս բոլորակը վերցված է Երևանի Մատենադարանում պահպանվող 1589 թվականին ընդօրինակված հայերեն համար 1770 ձեռագրից: Բոլորակը կենտրոնում ունենալով Տապանակ Ուխտին (Ark of the Covenant), ցուցադրում է Իսրայելի ցեղերի ու նրանց շառավիղների ցրված ուղղությունները դեպի աշխարհի չորս կողմերը: Շրջանի չորս կողմերից դուրս եկած թևերը ներկայացնում են չորս աշխարհագրական կողմերը, իսկ կենտրոնումն է Տապանակը, որտեղից տարբեր ուղղություններով ցրվում են ցեղախմբերը:

Պատ. 4 – Այս հողմնացույց բոլորակը չի կարող քարտեզ համարվել, բայց քանի որ նմանություններ ունի Պատ. 2-ում եղած Գոթիե դը Շաթիյոնի քարտեզում նշված հողմերի ուղղություններին, ապա թերևս հարմար է այստեղ ներկայացնել նաև դրա հայերեն տարբերակը: Պատկերը վերցված է Մատենադարանի համար համար 1130 ձեռագրի թերթ 121-ից: Ձեռագիրը 15–րդ դարի մի հավաքածու է:

Բոլորակն ուղղորդված է վերև արևելքով: Այս բոլորակում աշխարհագրական ուղղությունները տրված են արտաքին երկու շրջանների միջև, իսկ 12 հիմնական հողմերի անունները՝ կենտրոնական շրջանի ու երկրորդ շրջանի միջև, շառավիղային գծերի վրա, ուր նաև ավելացված են հողմերի հատկություններն ու դրանց բերած եղանակները, որոնք են.

Արևելքից դեպի հյուսիս.

1. *Ապելօդ – բարեխառն արև և անձրև*:
2. *Կիկ[ի]աս – Չոր է և ցամաքացուցիչ*:
3. *Վօռիաս – Նեղէ զամպս և կապէ զանձրևս*:

Հյուսիսից դեպի արևմուտք.

4. *Ապարք – Տիաս սառն է ցուրտ է կարկուտ բերէ*:
5. *Թրասկիաս – Սառն է զձիւն*:
6. *Արգեստէս – Կազմէ զամպս*:

Արևմուտքից դեպի հարավ.

7. *Զեփիւռք – Շարժէ ի ծաղիկ*:
8. *Ղեփս – Անձրևաբեր*:
9. *Դիւանօտոս – Սառն մառախուղ, մէգ և վրդովումք յամպս*:

Հարավից դեպի արևելք.

10. *Նօտոս – Սառն է որոտ և փայլակն և անձրև խիստ*:
11. *Եւրօնօտոս – Հալէ զպաղս*:
12. *Եւրոս – Գէջ և տաղատարափ բերէ*:

Պատ. 5 – Այս քարտեզը Լուկանի *Ֆարսալիա* կոչվող ձեռագրից է, որտեղ բացատրված է Պոմպեոսի և Հուլիոս Կեսարի միջև մղված պատերազմը: Լուկանն ապրում էր մեր թվականության առաջին դարում և Սալլուստիոսի նման նա էլ այն կարծիքի էր, որ Ասիան ամենամեծ մայրցամաքն է որ Աֆրիկան ու Եվրոպան կարելի է համատեղել և համարել երկրորդ մայրցամաքը: Լուկանի *Ֆարսալիան* (որը շատերի մոտ ճանաչված է «Քաղաքական պատերազմ» անունով), գրվել է 61-65 թվականներին, նկարագրված պատերազմի ավարտից մոտ մեկ դար հետո: Այս էջը քաղված է Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում եղած Լուկանի ձեռագրի 14-րդ դարի ընդօրինակումից:

Ձեռագրի այս օրինակը պարունակում է քարտեզներ: Էջի վերևում պատկերվածը T-O տեսակի սալլուստիոսյան մի քարտեզ է, որն ուղղորդված է վերը դեպի արևելք և ունի մայրցամաքները բաժանող Միջերկրական ծովն ու երկու գետերը, *Նեղոսն* ու *Տանայիսը*: Գետերի անունները նշված են նրանցից ներքև, իսկ ջրային տարածքի ձախ թևի մեջ գրված է *Փիսոն* (Գանգես), իսկ աջինի մեջ՝ *Ֆիռ-ֆիռ*: Երկու գետեր Տանայիսից ու Նեղոսից շեղակի դուրս գալով, նրանց միացնում են շրջապատի օվկիանոսին: Սրանցից մեկի մոտ պատկերված է մի ամրոցակերպ քաղաք, որը մակագրված է *Երուսաղեմ* (կիսով չափ ջնջված), իսկ մյուս շեղակի գետի մոտ մակագրված է *Եգիպտոս*, որին կից քառանկյունին մակագրված է *Կարմիր ծով:* Բոլորակի վերի հատվածում, այսինքն՝ արևելքում, կարելի է տեսնել մի քանի մակագրություններ, որոնցից են *Ասիա*, *Հնդկաստան* և *Մայոռ* (մեծ): Եվրոպայի տարածքում նշված են *Եվրոպա*, *Հիսպանիա* և *Հռոմ:*

Քարտեզի Աֆրիկայի հատվածում կան ավելի մեծ թվով մակագրություններ, ինչպես նաև առկա են երկրներն ու շրջանները բաժանող սահմանագծերը: Հռոմի դիմաց, Միջերկրականի մյուս ափին պատկերված է *Կարթագենը*, իսկ նրա վերը՝ *Փյունիկիան*: Կարթագենի արևմուտքում նշված են Հյուսիս-արևմտյան Աֆրիկայում բնակվող ցեղերի ու ժողովուրդների անունները, որոնք են *Նումիդիացիները*, *լիբիացիները*, *հայերը* և *մարերը*, իսկ դրանցից հարավ երևում է *պարսիկներ* մակագրությունը, ընդ որում, ցեղերից ամեն մեկը շրջափակված է ուղիղ գծված սահմաններով: Ըստ Սալլուստիոսի, այս այն ազգերն ու ցեղախմբերն են, որոնցից սերում են այսօրվա հյուսիս-աֆրիկյան ժողովուրդները:

Նկատելի է, որ որոշ տեղանուններին վերաբերող մակագրություններ, ինչպիսին են, օրինակ, *Միջերկրականը*, *Տանայիսը* և *Նեղոսը*, ավելացված են տարբեր ձեռքով և հավանաբար ավելի ուշ, որով գրիչն աշխատել է եղած կոպիտ սխալները մասամբ ճշտել:

Թերթի ներքևում եղած բոլորակը Լուկանի պարզ աշխարհացույց քարտեզն է, որը միայն նշում է երեք մայրցամաքները և նրանց բաժանող ծովն ու գետերը՝ *Միջերկրական ծով*, *Տանայիս* և *Նեղոս* անուններով: Քարտեզի արևմտյան ծայրամասում՝ Միջերկրականի ելակետում, նշված է *Գադես* (Կադիս) իսպանական նավահանգիստը: Ուրիշ տեղանուններ չեն նշված:

Պատ. 6 – Այս քարտեզը Սալլուստիոսի ձեռագրի 14-րդ դարի օրինակից է, որը գտնվում է Վենետիկի Մարչիանա գրադարանում: Այստեղ ներկայացված են Երկրի բոլորակի ընդունված եռամաս բաժանումը, իսկ քարտեզը ուղղորդված է արևելքով վերև: Եվրոպայի տարածքում մակագրությունները սահմանափակվում են ցամաքամասի և *Իտալիայի* ու *Իսպանիայի* անուններով: Ասիայում, բացի ցամաքամասի անվանումից, կա *Նեղոս* գետի, ինչպես նաև *Եգիպտոսի* ու *Կարմիր ծովի* անվանումները, իսկ բարձրադիր աշտարակը մակագրված է *Jrslm* (այսինքն՝ Երուսաղեմ):

Ցամաքամասերը բաժանող ջրային տարածքներից Միջերկրական ծովն անվանում չունի: Ձախում մակագրությունը նշում է *Տանայիս*, իսկ կենտրոնում ու աջում մակագրված են *Միդոն* և *Սիրտես* (վերջինը՝ երկու անգամ): Նեղոս գետը, որը պետք է լինի T տառի աջակողմյան թևը, նրան է միանում աջ ծայրամասում, ուղղահայաց մի գծով: Սրա հարավի երկրամասը կրում է *Exusta*, այսինքն «կիզյալ» մակագրությունը, որը նշում է հարավային կիզյալ շրջանը: Բոլորակին շրջապատող ջրային տարածքն անվանված է *Mare Oceanum*, Օվկիանոս ծով:

Աֆրիկայում պատկերն ամբողջովին տարբեր է: Այստեղ կան 15 տեղանուններ, որոնցից են *Փյունիկիան*, *Կարթագենը*, *Եթովպիան*, *Նումիդիան* և այլն, որտեղ նաև նշված են *Կատաբաթմոնի լեռները*: Քարտեզում Աֆրիկայի արևմուտքում (ներքևի մասում) մակագրված են երեք ժողովուրդների՝ *հայերի*, *մարերի և պարսիկների* անվանումները: Սրանք էին որ, ըստ Սալլուստիոսի, հաստատվելով Հյուսիսային Աֆրիկայում, այսօր համարվում են այդտեղ բնակվող ժողովուրդների նախահայրերը:

Բոլորակի ներքևի ծայրամասում, ուր Միջերկրականը միանում է աշխարհը շրջապատող օվկիանոսին, նեղուցի երկու կողմերում առանձնացված են երկու տարածքներ, որոնց մեջ գլխիվայր մակագրված է *Gades*, որը ներկա Իսպանիայի Կադիս նավահանգիստն է: Սրա տակում պատկերված խաչը նշում է քարտեզի քրիստոնեական ծագումն ու ուղղորդվածությունը:

2 – ՄԱԿՐՈԲԻՈՍ

Հռոմեացի փիլիսոփա և գրող Ամբրոզիոս Թեոդոսիոս Մակրոբիոսը (ծաղկել է 398-423 թթ.), որը նույնպես գնդաձև երկրի և դրա եղանակային գոտիների բաժանված լինելու տեսության հետևորդներից էր, հայտնի է իր *Սատուռնալիա* աշխատանքով: Այս ձեռագիրը պարփակում է նրա *«Սկիպիոնի երազի լուսաբանումն ըստ Կիկերոնի»* (կամ, ավելի համառոտ՝ « Սկիպիոնի երազը») երկը, որը ժամանակին շատ հանրածանոթ էր ու սիրված: Մակրոբիոսի գրվածքների հիմքում դրված են էրատոսթենեսի, Վերգիլիոսի և ուրիշների աշխատանքները, որոնք նույնպես եղանակային գոտիների բաժանման կողմնակիցներից էին:

Պուբլիոս Կոռնելիոս Սկիպիոն Ավագը (235-183 թթ. մ.թ.ա., ճանաչված որպես Աֆրիկացի) և իր թոռը՝ նույն անունները կրող Սկիպիոն Կրտսերը (185-129 թթ. մ.թ.ա.) հռոմեացի զինվորականներ ու դիվանագետներ էին, որոնք երկուսն էլ պատերազմել էին Կարթագենի դեմ: Սկիպիոն Կրտսերը դրա վերջնական պաշարման ու կործանման գլխավոր դերակատարն էր եղել: Նրա տեսած երազում, մեծ հայրը՝ Սկիպիոն Ավագը, նրան բարձրացնում, տանում է երկինք ու այնտեղից երկրագնդին դիտելով բացատրում.

> *Տե՛ս, տարբեր եղանակների գոտիները շերտավորում են երկրագունդը: Սրանցից երկու միմյանցից ամենահեռուներին, որոնք երկրագնդի հակառակ բևեռներում են գտնվում, տրվել է սառնամանիք և ցուրտ եղանակ, մինչդեռ կենտրոնական գոտին կիզված է արեգակի տաքից: Այս բևեռային և կենտրոնական գոտիների միջև գտնվող երկու գոտիներն են, որոնք բնակելի են..... Եթե նայես քո՝ հյուսիսային գոտում, կնկատես թե սա ինչքան փոքր է համեմատած երկրագնդի ամբողջությանը: Քո գրաված տարածքը, քո հսկա կայսրությունը հավասար է մի փոքր կղզու, հարավից հյուսիս շատ նեղ և արևելքից արևմուտք մի քիչ ավելի լայն, շրջապատված ծովով, որը ճանաչված է որպես Ատլանտյանը:*[28]

Եռամաս T-O քարտեզներից հետո, աշխարհը հինգ գոտիների բաժանած քարտեզները ժամանակին ամենատարածվածներն էին: Ինչպես նշվեց նախաբանում, ըստ այս տեսության գնդաձև աշխարհը բաժանվում էր հինգ եղանակային գոտիների, որոնցից էին երկու սառը, երկու բարեխառն և մեկ կենտրոնական տաք և կիզյալ գոտիները: Մակրոբիոսի բացատրած Հյուսիսային բարեխառն գոտում գտնվող ցամաքամասերը, որոնք միակ բնակելի աշխարհամասն էին համարվում, ակնառու նմանություն ունեն Պտղոմեոսի բացատրած ցամաքներին, ներառյալ նրանց շուրջ և միջև եղած ծովերն ու այլ աշխարհագրական մանրամասնությունները:

Մակրոբիոսը հավատացած էր, որ երկրագնդի վրա ցամաքամասերը պետք է բաժանված լինեն այնպես, որ պահպանեն գնդի հավասարակշռությունը: Այսպես, օրինակ հյուսիսային կիսագնդում եղած ցամաքների դիմաց, որպես հակակշիռ, հարավային կիսագնդում պետք է լինեն հավասար տարածքի և կշռի ցամաքամասեր, և եթե հյուսիսում գտնվում են Եվրոպան, Ասիան և Աֆրիկան՝ ապա հարավային կիսագնդում պետք է լինի հավասար մեծության մի ցամաքամաս, որպեսզի սրանց հավասարակշռությունը պահպանվի: Այս երևակայական ցամաքամասը պատկերված է Մակրոբիոսի բոլոր քարտեզներում: Բայց այս ցամաքամասը և իր հավանական բնակիչները, որոնք, ըստ ավանդության, անտիպոդներն (հակոտնյաներն, տե՛ս տողատակի ծանոթագրություն 16) էին, առաջացնում է ստրատեգիական մի խնդիր: Այս երկրամասը, որը բնակեցված աշխարհից անջատված է անասելի տոթ, փոթորկոտ ու անանցանելի մի կիզյալ գոտիով, ինչպե՞ս է կարող ունենալ որևէ բնակիչ, եթե սրանք էլ՝ ըստ Սուրբ Գրքի, պետք է մյուսների նման սերված լինեն Ադամից ու Եվայից: Այս խնդրի «լուծումը» գտավ Կոզման, որը հերքելով երկրի գնդաձևությունն ու եղանակային գոտիների առկայությունը, վերջնականորեն «հաստատեց», որ ըստ Սուրբ Գրքի աշխարհը տափարակ է ու քառանկյունի և կազմված է միայն բնակելի շրջանից ու դրան շրջապատող օվկիանոսից: (Տե՛ս սույն աշխատության Գլուխ 2, Մաս 5)*:*

Մակրոբիոսի հարավային ցամաքամասը շատ նման է Պոմպոնիոս Մելայի նկարագրածին, որը նա նշում է առաջին դարում շարադրված իր *Դե Քորոգրաֆիա*[29] աշխատության մեջ: Մակրոբիոսը համարձակորեն ասում է, որ ինչպես հյուսիսային ու հարավային կիսագնդերը պետք է լինեն հավասարակշռված, նույն բերումով էլ մեզ ծանոթ արևելյան ու անծանոթ՝ արևմտյան կիսագնդերում եղած ցամաքամասերն պետք է լինեն հավասարակշռված: Նրա այս տեսությունը իրականացավ, երբ նրանից մեկ հազարամյակ հետո հայտնաբերվեց Ամերիկան իր հյուսիսային ու հարավային բաժանումներով:

[28] Macrobius, Ambrosius Aurelius Theodosius. *Commentary on the Dream of Scipio*. Translated with an introduction and notes by William Harris Stahl. New York, 1952.

Միայն հարավային անծանոթ ցամաքամասը չէ, որ ընդհանուր է Պոմպոնիոսի և Մակրոբիոսի աշխատություններում: *Դե Քորոգրաֆիայի* մեջ Պոմպոնիոսն էլ խոսում է հինգ եղանակային գոտիների և Հյուսիսային բարեխառն գոտու մասին, որը միակ բնակեցված գոտին է և պարունակում է մեր ճանաչած Եվրոպա, Ասիա և Աֆրիկա մայրցամաքները:[30] Սրանք ևս ամբողջովին համընկնում են Մակրոբիոսի տեսություններին:

Մակրոբիոսի աշխարհում հյուսիսային գոտին Սառուցյալ ծովն է, որը սառույցով ծածկված մի անբնակելի տարածք է: Դրա հարավում է գտնվում Հյուսիսային բարեխառն գոտին: Հետո գալիս է Կենտրոնական կիզյալ գոտին, ուր կան փոթորկոտ ծովեր և մի անասելի տոթ ցամաքամաս: Այստեղի ծովն ալեկոծ է ու լի հակադիր ուղղություններով պտտվող հոսանքներով, որոնց բախումից առաջանում են մակընթացություններն ու տեղատվությունները: Այս գոտին այնքան տաք է և վտանգավոր, որ անհնար է այնտեղի ցամաքամասում բնակվելը կամ նույնիսկ դրանով անց կենալը: Այս գոտու հարավում է գտնվում Հարավային բարեխառն գոտին, որտեղ ապրում են Անտիպոդները, հակոտնյաները, իսկ դրանից հետո գալիս է Հարավային սառուցյալ «Անծանոթ» գոտին, որը հյուսիսայինի պես սառցակալած է ու անբնակելի:

Մակրոբիոսի աշխատությունները ունեին լայն տարածում և շատ սիրված էին, այդ պատճառով էլ դրանք բազմիցս ընդօրինակվել են, հատկապես իննից մինչև տասնհինգերորդ դարերում: Նրա ձեռագրերից մեզ են հասել բազմաթիվ ընդօրինակումներ, որոնցից 150-ի մեջ կան քարտեզներ: Այս քարտեզներում երկրագունդը բաժանված է հինգ գոտիների և հավելյալ, Հյուսիսային բարեխառն գոտում հաճախ գծված են ցամաքամասերը և դրանք վրա ավելացված են որոշ տեղանուններ, որոնցից են Կասպից ծովը և Կարմիր կամ Հնդիկների ծովը: Նրա քարտեզներից մի քանիսը պարունակում են նաև որոշ քաղաքների անուններ, որոնցից են Բաբելոնը, Երուսաղեմը և Ալեքսանդրիան: 16-րդ դարից հետո նույն քարտեզները սկսեցին երևան գալ տպագիր գրքերում, որոնց մեջ արդեն կան մայրցամաքների անվանումները, ինչպես նաև որոշ երկրների անունները, որոնցից են Բրիտանիան, Իտալիան, Իսպանիան, Գաղղիան, Հայաստանը, Պարթևաստանը և Հնդկաստանը: Աֆրիկայի տարածքում հաճախ նշվում են Եթովպիան ու Կարմիր ծովը:

Հետաքրքրական է, որ ընդհանրապես միջնադարյան քարտեզագրության մեջ բոլոր աշխարհացույց բոլորակներն ուղղորդված են արևելքը դեպի վեր, մինչդեռ Մակրոբիոսի բոլոր քարտեզները ուղղորդված են հյուսիսը դեպի վեր, ինչը հավանաբար Պոմպոնիոսի ու հին հունական քարտեզագրության ազդեցությունն է, որը նաև գործածում է Պտղոմեոսը:

Մակրոբիոսի ժամանակ եկեղեցին հատուկ ուշադրություն չէր դարձնում ընդհանրացած գնդաձև աշխարհի տեսությանը, և դրա միակ հակասությունը եկեղեցու հետ առաջանում էր հարավային ու հյուսիսային կիսագնդերը բաժանող գոտու շուրջ, որն իբր թե անանցանելի էր և որից նույնիսկ չէին կարող անցնել Նոյի սերունդները, հետևաբար այս գոտին չէր կարող բնակեցված լինել նույնիսկ Անտիպոդներով: Ինչպես հիշվեց վերը, այս տեսությանը խիստ հակառակեց Կոզման (Տե՛ս սույն Գլխի 5-րդ մասը):

Հաջորդ էջերում վերատպված են Մակրոբիոսի տպագիր քարտեզներից երկու օրինակ: Դրանցից զատ կան նաև Երևանի Մատենադարանի ձեռագրերից մեկի միջից արտատպված երկու աշխարհացույց բոլորակներ, որոնք հիմնված են Մակրոբիոսի քարտեզների և նրա առաջադրած եղանակային գոտիների վրա:

Պատ. 7 – Սա Մակրոբիոսին բնորոշ 1518 թվականին հրատարակված մի տպագիր քարտեզ է, որտեղ երկրագունդը բաժանված է հինգ եղանակային գոտիների: Քարտեզն ուղղորդված է հյուսիսով վեր, որտեղ գտնվում է Հյուսիսային սառուցյալ գոտին: Դրա ներքևում Հյուսիսային բարեխառն գոտին է, որը ներկայացնում է բնակելի աշխարհի ամբողջական տարածքը: Աֆրիկայի մեկ մասը հասնում է մինչև Կենտրոնական կիզյալ գոտի, որտեղ բնակվելն անհնար է: Այս շրջանի մեծ մասը զբաղեցնում է կենտրոնական օվկիանոսը, որի հակադիր ուղղություններով պտտվող հոսանքներն իրար բախվելով պատճառ են դառնում ծովերի մակընթացություններին ու տեղատվություններին:

Այս գոտուց հարավ գտնվում է Հարավային բարեխառն գոտին, որն իբր բնակեցված է «Անտիպոդներով» կամ «հակոտնյաներով» (տես տողատակի ծանոթագրություն 16): Մակրոբիոսն այս գոտին անվանում է «Մեզ անծանոթ», ակնարկելով որ այդտեղ բնակվող արարածները մեզ անծանոթ են ու թերևս Ադամից ու Եվայից չեն սերված: Պետք է հիշել սակայն, որ Մակրոբիոսը համարվում էր հեթանոս և նրա քարտեզները կրոնական որևէ դիրքորոշում և կապ չունեին:

Քարտեզում Հյուսիսային բարեխառն գոտու մեջ պատկերված են մայրցամաքներ Ասիան, Եվրոպան ու Աֆրիկան, առանց անվանումները նշելու: Երկրներից անվանված են *Բրիտանիան*, *Իսպանիան*, *Անապատ Եթովպիան*, *Հայաստանը* և *Հնդկաստանը*, իսկ ծովերից՝ միայն *Կարմիր ծովը*:

Պատ. 8 – Այս քարտեզը վերցված է Բադիոսի 1515 թվականին Փարիզում հրատարակած «Սկիպիոնի երազը» երկից: Որոշ առումով սա տարօրինակ քարտեզ է, քանի որ վերևումն ունենալով հյուսիսը, արևելքի և արևմուտքի տեղերը փոխված են այնպես, որ Հնդկաստանը ձախում է, իսկ Բրիտանիան՝ աջում:

Այստեղ նշված երկրներն են *Բրիտանիան*, *Թիլեն* (Իսլանդիա), *Իսպանիան*, *Իտալիան*, *Հայաստանը*, *Պարթևաստանը* և *Հնդկաստանը*: Քարտեզում նշված Ռիփեյան լեռներին (*Ripheimontes*) տարբեր բացատրություններ են տրվում: Սրանք կարող են լինել Կարպատյան լեռները, Վալդայ բլուրները (որոնք գտնվում են Բելառուսի հյուսիսում, Սանկտ Պետերբուրգի հարավ-արևելքում), կամ էլ նույնիսկ Ուրալյան լեռները:

Պատ. 9 – Այս բոլորակը Մակրոբիոսի քարտեզի հիման վրա պատրաստված հայերեն քարտեզ է, վերցված Պետրուս Ապպիանոսի (1495-1557 թթ.) *Կոսմոգրաֆիա* աշխատության 1621 թվականի հայերեն թարգմանությունից, որը պահպանվում է Երևանի Մատենադարանում (ձեռագիր համար 1780, թերթ 308):

[29] Քորոգրաֆիան սահմանները քարտեզի վրա տեղադրելու արվեստն է:

[30] Mela, *De Chorographia,* Section 1.3.

Ձեռագիրը պարունակում է տարբեր աղյուսակներ ու քարտեզներ, որոնցից մեկը՝ երկրագունդը հինգ եղանակային գոտիների բաժանած այս քարտեզն է: Քարտեզում կա հասարակածը ցուցադրող հավելյալ մեկ գիծ, որն անցնում է քարտեզի կենտրոնով և որին կարելի է շփոթել որպես վեցերորդ գոտի: Այս քարտեզը, հակառակ Մակրոբիոսի մյուս քարտեզներին, շուռ է տրված և ուղղորդված է հարավը դեպի վեր: Ալիքաձև գծված ծիրը պարունակում է կենդանակերպերի (Zodiac) անվանումները: Սկսած հարավից (վերից), գոտիների անվանումներն են Ծայրահեղ, Հարավային բարեխառն, Կենտրոնական կիզյալ, Հյուսիսային բարեխառն և Ջյունապատ գոտիներ: Երկրագնդի վրա բացակայում են ցամաքները կամ ծովերը և ծովափերը սահմանող որևէ տեղադրական նշաններ ու գծեր:

Պատ. 10 – Սա մեկ ուրիշ քարտեզ է, վերցված նույն Պատկեր 9-ի ձեռագիր թարգմանությունից: Այստեղ էլ երկրագունդը բաժանված է հինգ հիմնական գոտիների և, ինչպես միշտ հանդիպում է Մակրոբիոսի մոտ, ուղղորդված է հյուսիսը դեպի վեր:

Քարտեզում Հյուսիսային բարեխառն գոտին, որը պարունակում է բնակելի աշխարհամասերը, ցուցադրված է լայնացված և բաժանված 9 նեղ ենթագոտիների: Սա նման է իսլամական և հունական «Կլիմիատա» ենթաբաժանումներին, որտեղ բնակելի գոտին բաժանված է յոթ ենթագոտիների, մինչդեռ այստեղ բևեռի մոտ դրան ավելացվել է երկու գոտի ևս, դրանց ընդհանուր թիվը դարձնելով ինն: Այս ենթագոտիներն անվանված են նրանց պարունակած կարևոր քաղաքների կամ աշխարհագրական անուններով: Ենթագոտիներն անվանված են հետևյալ հերթականությամբ. *Դանիա* (հավանաբար Դակիա), *Ռիֆեօս* (Ռիփեյան լեռները՝ Ուրալը, Կարպատները կամ Վալդայ բլուրները – տես Պատ. 8-ի տեքստը), *Պորիսթենեօս* (Բորիսթեն, Դնեպր գետը), *Պոնտոս* (Սև ծով), *Հռոմ*, *Րոդոս* (Հռոդոս), *Աղեքսանդրիա*, *Սիյենե* (Ասուան) և *Մէրոէս* (Սուդանի և Եթովպիայի շրջանը): Այս ենթաբաժանումները հակառակ հերթականությամբ կրկնվում են Հարավային բարեխառն գոտում: Վերջին յոթ բաժանումների անվանումները համընկնում են հունական ավանդության մեջ գործածվող անունների հետ:

3 – ՍՈՒՐԲ ՀԵՐՈՆԻՄՈՍ

Սուրբ Հերոնիմոսը, կամ Ջերոմը, ծնվել է Դալմատիայում 340 թվականի շուրջ և մահացել Բեթղեհեմում 420 թվականին: Նա իր կյանքն անց է կացրել Հռոմում, Կոնստանդնուպոլսում և Անտիոքում, որտեղ և ձեռնադրվել էր քահանա: Նա ճանաչված էր իբրև ամեն ինչը հարցականի տակ դնող, հակաճառող ու վիճաբանող մի անձնավորություն: Բավականին երկարատև ճամփորդություններից հետո, նա հաստատվեց Բեթղեհեմի վանքերից մեկում և նվիրվեց կրոնական բովանդակության տեքստերի ու Հին Կտակարանի թարգմանությանը:

Ս. Հերոնիմոսը ճանաչված էր նաև որպես Աստվածաշնչի հեղինակավոր մեկնաբան: Նա հունարենից լատիներեն է թարգմանել Կեսարիայի եպիսկոպոս Եվսեբիոսի (շուրջ 260-340 թթ.) «Քրոնիկոն» («Ժամանակական կանոններ») աշխատությունը, որը պարունակում է Աստվածաշնչի մեջ նշված վայրերի ու տեղանունների մանրակրկիտ բացատրությունները: Ս. Հերոնիմոսի աշխատությունների այս հավաքածուն վերնագրված է *Presbiteri liber Hebraicum Quaestionem in Genesim*, *Ejustem liber de situ nominibus locum Hebraicum. Tabula Geographica ex opusculis S. Hieronimi descripto* կամ էլ պարզապես, "*Liber Locorum*" այսինքն՝ «Գիրք Տեղագրության»:

Չնայած նրան, որ Ս. Հերոնիմոսը համարվում էր կղերական գիտնական, բայց նրա այս աշխատությունը վաղ միջնադարյան աշխարհագրական կարևոր երկերից մեկն է, որը տեղանունների ու քաղաքների ցուցակներից զատ, պարունակում է նաև հինգերորդ դարում պատրաստված երկու ձեռագիր քարտեզ:

Ս. Հերոնիմոսի աշխատության ձեռագիր օրինակը, որն այժմ գտնվում է Բրիտանական գրադարանում, ունի այս երկու քարտեզը, որոնցից մեկն աշխարհացույց քարտեզ է, իսկ մյուսը Պաղեստինի քարտեզը: Սրանք երկուսն էլ արտատպված ու քննարկված են հաջորդ մասերում:

Պատ. 11/11a – Ս. Հերոնիմոսի այս աշխարհացույց կամ, ավելի ճիշտ է ասել Միջին Արևելքի և Հարավ-արևելյան Եվրոպայի քարտեզի բնօրինակը պատկանում է 420 թվականին, բայց այստեղ արտատպվածը դրա 12-րդ դարի ընդօրինակությունից է: Քարտեզի սահմանն արևելքում Հնդկական օվկիանոսն է, արևմուտքում՝ Եգեյան ծովը, հյուսիսում՝ Սև ծովը և հարավում՝ Կարմիր ծովը: Քարտեզը գտնվում է «Գիրք տեղագրության» աշխատության մեջ, որը պահվում է Բրիտանական գրադարանում:

Ըստ ժամանակի ընդունված սովորության, քարտեզն ուղղորդված է արևելքը վերևով: Այստեղ լեռնաշղթաները պատկերված են իրար կից կիսաշրջանների շարքով, գետերը՝ զուգահեռ կրկնակի գծերով, իսկ քաղաքները՝ տարբեր շինությունների ու ամրոցների մանրապատկերներով:

Սև ծովը (*Euxinus Pontus*) պատկերված է երկարացված և գտնվում է քարտեզի ներքևի ձախ ծայրամասում: Կասպից ծովից (*Caspiu Mare*) պատկերված է միայն մեկ մասը՝ Սև ծովից վեր, իսկ Կասպից ծովի վերը՝ քարտեզի ամբողջ արևելյան հատվածում տեղադրված է Հնդկական օվկիանոսը, լի տարբեր կղզիներով: Պարսից ծոցը և Արաբական ծովը գտնվում են քարտեզի վերին աջ մասում: Սրանք ներկված են կարմիր և նույնպես պատկերված մասամբ՝ որպես երկու հարևան ծոցեր: Սրանցից վերինը, որի մեջ է հոսում *Ինդոս* գետը՝ Արաբական ծովն է, իսկ մյուսը՝ Պարսից ծոցը, որի մեջ են թափվում *Եփրատն* ու *Տիգրիսը*:

Թիվ 11a քարտեզի դետալում նշված թվերը Հայաստանի հարակից շրջանների կարևոր տեղանուններն են, որոնք հաջորդ պարբերության մեջ բերված բացատրություններում նշված են փակագծերի մեջ: Տե՛ս ներքևի ցուցակը:[31]

Հայաստանը տեղադրված է Կասպից և Սև ծովերի միջև և այստեղ գտնվող լեռնաշղթայի վրա մակագրված է "*Armenie pile*" (11), որը նշանակում է «Հայաստանի սյուներ (դարպաս)»: Սրա աջումն է *Մեծ Հայքը* (9), իսկ *Արաքսի* (5), *Եփրատի* (6) և *Տիգրիսի* (7) ակունքը միևնույն լեռներն են, ընդ որում, գետերից առաջինը սկիզբ է առնում լեռների հյուսիսից, իսկ մյուս երկուսը՝ հարավից: Այս լեռնաշղթան կարող է լինել միայն հետագայում Հայկական բարձրավանդակ կամ լեռնաշխարհ որակված աշխարհագրական շրջանը, քանի որ այս երեք գետերը հենց այդ բարձրավանդակից են ակունք առնում: Այս քարտեզում Մեծ կամ Վերին Հայքը՝ *Armenia Superior* (9), գտնվում է *Եփրատի* (6) և *Տիգրիսի* (7) ակունքի մոտ՝ նրանց միջև, այսինքն՝ Վասպուրականում, Այրարատում, Մոկքում և Աղձնիքում: *Մեծ Հայքի* անվան ներքո պատկերված է լեռան վրա նստած մի վրանաձև «տուն»՝ մակագրված *Arca Noe* (12) «Նոյյան տապան», իսկ լեռն ունի *Armenia* (27), Հայաստան մակագրությունը: Այս լեռները գտնվում են մի այլ լեռնաշղթայի հարավային ծայրամասում. լեռնաշղթան կոչվում է *Կասպից Դարպասներ* (22), որը սխալ անվանում է, քանի որ սա դարպաս չէ՛, այլ լեռնաշղթա, որը կարող է միայն լինել Արարատից սկսող և դեպի արևմուտք շարունակվող Հայկական Պարը, որը համապատասխանում է Ստրաբոնի նկարագրություններին:[32] *Հայաստանի սյուներից* վեր (արևելք) կա մի երկրորդ՝ ուղղահայաց գրված *Կասպից Դարպասներ* (28) մակագրություն, որը թերևս Կովկասյան լեռնաշղթայի արևելյան ծայրամասի և ծովափնյա Դերբենդ քաղաքի միջև ընկած «Ճորա պահակ» անցքն է, սակայն այստեղ սա տեղադրված է մի անանուն լեռնաշղթայի մեջտեղում, որը կարող է միայն լինել Կովկասյան լեռնաշղթան (26), իսկ դարպասը՝ Դարյալի կիրճը, Կովկասյան լեռների միջով անցնող միակ ճանապարհը:[33] Դերբենդի մոտով անցնող այս ճանապարհը երբեմն «Ալեքսանդրի դարպաս» էր կոչվում, քանի որ ըստ ավանդության դա կառուցել էր Ալեքսանդր Մակեդոնացին, հյուսիսային Գոգ և Մագոգ վայրագ ցեղերից պաշտպանվելու մտադրությամբ: Հայկական Պարից դեպի արևմուտք գտնվում է Փոքր կամ Ներքին Հայքը – *Armenia Inferior* (10), իսկ *Եդեսիան* (Ուրֆան), *Սամոսատան* (Արշամաշատ) և *Խարրանը* գտնվում են Հայաստանի և Միջագետքի հարևանության մեջ գտնվող տարածքում: *Կովկասյան* (23) և *Տավրոսյան* (24) լեռնաշղթաները սխալմամբ տեղադրված են Կասպից ծովի (1) հարավ-արևելքում. դրանք միացած են սուր անկյունով, որոնց միացման կետից դեպի հյուսիս է հոսում մի այլ գետ:

Աղվանքը (18) նշված է *Կասպից ծովից* (1) արևմուտք, *Վերին Սկյութիայի* մոտ և *Արաքսից* (5) հյուսիս, իսկ Կողքիսը (Աբխազիան, 19) տեղադրված է Եվքսինյան ծովի (Սև ծով, 2) արևելյան ափին: Վիրքը, որն այստեղ անվանված է *Իբերիա*, տեղ է գտել *Արաքսի* ափին (11-ի և 16-ի միջև):

Քարտեզի վրա քաղաքների ու տարածաշրջանների տեղադրումը երբեմն պատահական է ու սխալ: Օրինակ, *Գալիլեան* Միջերկրականի արևելքի փոխարեն նշված է դրա հարավում, իսկ Կովկասյան ու Տավրոսյան լեռներն, ինչպես ասվեց, Կասպից ծովի արևմուտքի և հարավի փոխարեն տեղադրված են նրա հարավ-արևելքում: Այս սխալները կարող են շփոթություն առաջացնել, բայց կարևորն այն իրականությունն է, որ քարտեզում նշված աշխարհագրական տվյալների, քաղաքների, երկրների ու տարածաշրջանների մեջ Հայաստանը, Աղվանքը, Վիրքը և Կողքիսն ունեն հստակ ներկայություն:

Ա – Ծովերը
1. C*aspiu Mare* – Կասպից ծով
2. *Euxinus Pontus* – Սև ծով
3. Միջերկրական ծով
4. Պարսից Ծոց

Բ – Գետերը
5. *Araxis fluss* – Արաքս
6. *Euphrates* – Եփրատ
7. *Tigriss fluss* – Տիգրիս
8. *Tanais fluss* – Դոն

Գ – Հայաստանի տարածաշրջանը, ներառյալ Աղվանքը, Կողքիսը և Վիրքը
9. *Armenia Superior* – Մեծ Հայք
10. *Armenia Inferior* – Փոքր Հայք
11. *Armenia pile* – Հայաստանի Դարպասները կամ Սյուները, Հայկական բարձրավանդակ
12. *Arca Noe* – Նոյյան տապանը և Հայաստան
13. *Capadocia* – Կապադովկիա
14. *Chaldea* – Քաղդեա

[31] Այս թվերը հեղինակի կողմից ավելացված են քարտեզի վրա՝ անունները հստակեցնելու և թարգմանությունները պարզաբանելու նպատակով:

[32] Strabo, *Geography*, V, Books 10-12,. Translated from the Greek by Horace L. Jones, (Loeb Classical Library), Cambridge, Mass., 2000. Գիրք 11, Գլուխ 2-19:

[33] Պտղոմեոսն այս կիրճին կոչում է Աղվանների դարպաս (տես, Ptolemy, *The Geogrpahy*, 1991, Գիրք 5, Գլուխ 8, և «Ասիայի երրորդ քարտեզը»), հայերենով՝ «Ալանաց դուռ» (տե՛ս *ՀՍՀ*, Երևան, հատ. 3, 1977, էջ 316), իսկ արաբերենով Բաբ-ի-Ալան: Ըստ Wikipedia կայքային հանրագիտարանի՝ Դարյալի կիրճի հին անվանումն է «Կովկասի դարպաս», երբեմն էլ դրան տալիս են «Կասպից դարպաս» անվանումը, որն ընդհանրապես տրվում է Դերբենդի մոտ գտնվող «Ճորա պահակ» կամ «Դերբենդի անցք»-ին (տե՛ս *ՀՍՀ*, Երևան, հատ. 7, 178, էջ 104): Նման մի վրիպակ կա նաև *Բառգիրք Հայկազեան Լեզուի*-ի մեջ, ուր Ալանաց Դուռը նաև անվանված է Ճորա և Կասպից անցք (տես *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1769, հատ. 2, մաս 2, էջ 235 և Վենետիկ, 1836, հատ. 1, էջ 640): Կիրճին «Դարյոլ» կամ «Դարյալ» անվանումը հետագայում տվել են տեղի բնակիչ թաթարները, թրքերեն լեզվով, որտեղ «Դար»-ը նշանակում է «նեղ» իսկ «յոլ»-ը՝ «ճանապարհ», այսպիսով թաթարների Դարյալին տված «Դարյոլ» անվանումը նշանակում է «նեղ ճանապարհ»՝ կիրճ: Այս բառի ծագման երկրորդ տարբերակն այն է, որ պարսկական աղբյուրներում սա կոչվում էր Դար-է-Ալան, «Ալանաց դուռ», որը կարելի է կրճատելով դարձնել Դարյալ, սակայն առաջին տարբերակը բնակիչներին հարազատ լինելով թերևս ավելի հավանական է:

15. *Parthia* – Պարթևաստան
16. *Adiapeni* – Ադիաբենե, հնագույն երկիր հյուսիսային Միջագետքում:
17. *Hircanea* – Հիրկանիա, Կասպից ծովի ափին
18. *Albania* – Աղվանք, Կասպից ծովի արևմուտքում
19. *Cholchi* – Կողքիսը կամ Աբխազիան, Սև ծովի արևելյան ափին: Ոսկե գեղմի երկիրը:
20. *Cilicia* – Կիլիկիա, Միջերկրականի ափին
21. *Babilon* – Բաբելոն

Դ – Լեռներ և լեռնաշղթաներ

22. Հայկական Պար լեռնաշղթա
23. *Caucasus Mons* – Կովկասյան լեռնաշղթա
24. *Taurus Mons* – Տավրոսյան լեռնաշղթա
25. *Paropanissade Mons* – հավանաբար Կասպից ծովի հարավում գտնվող Պարսկաստանի էլբրուս լեռնաշղթան
26. Անանուն: Սրանք հավանաբար Կովկասյան լեռներն են, որոնց միջով բացված ճանապարհը *Կասպից Դարպասներ* է անվանված (տե՛ս թիվ 28-ը):
27. Արարատներ
28. *Caspie Porte* – այս անվանումը Կովկասյան լեռների և Կասպից ծովի մոտով անցնող Դերբենդի «Ճորա պահակ» անցումն է, որն այստեղ տեղադրված է այնտեղ՝ ուր պետք է իրականում լիներ Դարյալի կիրճը:

Պատ. 12/12a – Քանի որ Ս. Հերոնիմոսի «Գիրք Տեղանունների» ձեռագրի նյութն Աստվածաշնչի տեղանուններն են, հետևաբար բնական է, որ դրա մեջ կլինի նաև Սուրբ Երկրի և նրա հարակից շրջանների քարտեզը:

Քարտեզը Պաղեստինի շրջանին է վերաբերում: Այստեղ լեռները պատկերված են համարյա իրական տեսքով, բայց գետերը դեռևս պատկերված են զուգահեռ կրկնակի գծերով: Կարևոր քաղաքները նշված են շենքերի և ամրոցների մանրապատկերներով, իսկ երկրորդական քաղաքները, որոնք շարված են Միջերկրականի ափերին՝ ավելի պարզ տների պատկերներով: Քարտեզն ուղղորդված է վերև արևելքով: Քարտեզում ցուցադրված տարածքը հարավում հասնում է մինչև Արաբական ծով և Եգիպտոս, իսկ հյուսիսում՝ մինչև Կասպից ծով և Կոստանդնուպոլիս: Կասպից ծովի հարևանության մեջ նշված են մի քանի երկրներ, որոնց մեջ է *Հայաստանը*: Նշված են նաև *Անտիոքը*, *Հիրկանիայի* շրջանը, *Պարթևաստանը*, *Ասորեստանը* ինչպես նաև *Բաբելոնի*, Քաղդեայի ու *Միջագետքի* շրջանները:

Քարտեզի մագաղաթի վնասված մասը, որտեղ նշված են Կովկասյան լեռները, նորոգված է: Այստեղից է, որ սկիզբ են առնում *Փիսոնը* (Գանգես), *Ինդոսը* և *Տիգրիսը* : Կովկասյան լեռների տեղադրման տեսակետից այստեղ էլ առկա է նույն սխալը ինչ որ առկա է նախկին քարտեզում: Կովկասյան լեռներից արևմուտք են Հայկական Լեռները (լեռնաշխարհը) (*Mons Armenie)*, որտեղից նաև սկիզբ է առնում *Եփրատը*: Հայկական լեռների արևմտյան ծայրամասում առանձնացված մասը մակագրված է *Նոյյան տապան*: Սրանից արևմուտք են գտնվում *Տավրոսյան Լեռները*, որոնց շարունակությունը դառնում է Փոքր Ասիան, ներառյալ ներքևի ծայրամասում գտնվող *Կոստանդնուպոլիսը*, որը նշված է երեք աշտարակ ունեցող գլխիվայր գծված ամրոցի մանրապատկերով:

Քարտեզի մեջ ամենամեծ քաղաքը, որը նշված է կրկնակի շրջանակով և չորս դարպասներով, անվանված է *Jrslm*, այսինքն Երուսաղեմ: Սինայի լեռը գտնվում է նրա դարպասներից մեկի առջև, որի վրա նաև վեր է խոյանում *Դավթի աշտարակը*: Երուսաղեմի արևելյան դարպասի մոտ պատկերված է Ձիթենյաց լեռը, իսկ քարտեզի ամբողջ տարածքը լի է աստվածաշնչային տարբեր անվանումներով: Քարտեզի վերի աջ մասում կարմիր ներկված ծովերից առաջինը *Պարսից Ծոցն* է, իսկ մյուսը՝ *Արաբական ծովը*, որոնք երկուսն էլ միացված են Կարմիր ծովին: Արաբական ծովի մոտ է գտնվում *Վերին Եգիպտոսը*, որի միջով հոսում է երկու լճերից սկիզբ առած *Նեղոսը*: Գետը սկզբում հոսում է արևելքից արևմուտք, ապա կտրուկ դառնում դեպի հյուսիս, անցնում *Փարոսի* և *Ալեքսանդրիայի* հարևանությամբ և թափվում Միջերկրական ծով:

Չնայած որ քարտեզը նշում է նաև Սև և Կասպից ծովերի տարածքը, բայց այստեղ Կողքիսը, Վիրքն ու Աղվանքը առկա չեն, իսկ Հայաստանի շրջանի մանրամասնի համար տե՛ս Պատ. 12a դետալը, ուր կապույտով ավելացված թվանշանները հետևյալ տեղանուններն են:

1. Հայաստան
2. Միջագետք
3. Բաբելոնի շրջան
4. Դամասկոս
5. Պարթևաստան
6. Ասորեստան
7. Հիրկանիայի շրջան
8. Անտիոք
9. Կովկասյան լեռներ
10. Կերավնյան – Կովկասյան և Տավրոսյան լեռների հին անվանումը (տե՛ս տողատակի ծանոթագրություն 51)
11. Լիբանանյան լեռներ
12. Տավրոսյան լեռներ
13. Կասպից ծով
14. Գալիլեյի ծով
15. Եփրատ գետ
16. Տիգրիս գետ
17. Ինդոս գետ
18. Ֆիսոն կամ Գանգես գետ
19. Նոյյան տապանը

4 – ՊԱՈՒԼՈՍ ՕՐՈՍԻՈՍ

Պատմաբան և աստվածաբան Պաուլոս Օրոսիոսը ծնվել է Պորտուգալիայում 385 թվականի շրջանում և մահացել է 420-ին: Իր ծննդավայրում ուսումնառությունն ավարտելուց հետո, 413-414 թվականները նա անց է կացրել Ս. Օգոստինոսի (354-430 թթ.) մոտ Հիպոն քաղաքում, որտեղ նա կատարելագործել է իր աստվածաբանական ուսումը, իսկ 415 թվականին այցելել է Պաղեստին՝ Ս. Հերոնիմոսին, որտեղ և հաստատվել է:

Նրա առաջին աշխատությունը կրոնական հակասությունների մասին է (ինչը հետագայում դարձավ նրա մասնագիտությունը), բայց նրա ամենակարևոր աշխատության խորագիրն է *Պատմության յոթ գիրք հեթանոսների դեմ*, որից մեզ են հասել շուրջ 200 ձեռագիր օրինակներ: Այս երկը, որը նա շարադրել է 416-417 թվականներին, պարունակում է աշխարհի արարումից սկսած՝ 5618 տարվա պատմությունը: Գիրքը սկսվում է աշխարհի ընդհանուր բացատրությունով, ուր նա խոսում է ցամաքամասերի T-O տեսակի բաժանման մասին, նշելով շատ քիչ տեղագրական տեղեկություններ: Տեքստի այս գլխում նա տալիս է շուրջ 300 տեղանուններ, որոնք այլևս ուրիշ տեղ չեն հիշատակվում: Չնայած նրան, որ ձեռագիրն ուղղակի կերպով որևէ քարտեզի առկայության մասին չի խոսում, բայց տեքստի լեզուն այնպիսին է, որ կարծես թե բացատրում է տեքստին կից ինչ-որ քարտեզի պարունակությունը: Հետևյալ երկու պարբերությունները քաղված են Օրոսիոսի գրքից:

> *Մեր պապերը աշխարհը բաժանել են երեք մասի, որոնք բոլորը շրջապատված են օվկիանոսով, որին մենք կանվանենք Գերսեք, և սրանք այդ երեք մասերը անվանել են Ասիա, Աֆրիկա և Եվրոպա. չնայած ուրիշներն այն կարծիքի են, որ աշխարհը միայն երկու մասից է կազմված՝ Ասիա և Եվրոպա:*[34]

Երբ նա գրում է ազգությունների մասին, նշում է.

> *... Եփրատ գետից սկսած, որից արևմուտք Միջերկրականն է և հյուսիսում լեռները, որին կոչում են Տավրոս, կա մի երկիր որին կոչում են Հայաստան*

ապա շարունակում է.

> *և այս լեռների հյուսիսումն են Կապադովկիան և Հայաստանը: Հայաստանը գտնվում է Կապադովկիայից արևելք:*[35]

Օրոսիոսի երկից միայն չորս ձեռագրեր կան, որոնց մեջ առկա է ժամանակակից քարտեզի նմանող մի գծագրություն: Դրանցից ամենակարևորն այսպես կոչված «Ալբի» քարտեզն է: Ձեռագրում այն տեղադրված է Օրոսիոսի գրքի աշխարհագրական գլխի մեջ: Քանի որ, ըստ Օրոսիոսի, աշխարհը բաժանված է երեք մասի, ապա կարող ենք եզրակացնել, որ նա խոսում է T-O տեսակի քարտեզի մասին և նրա գրքի քարտեզները պետք է որ հիմնված լինեն այս սկզբունքի, այսինքն՝ եռամաս աշխարհի վրա, որի երեք մայրցամաքամասերը բաժանված են Միջերկրականով և Տանայիս ու Նեղոս գետերով: Ալբի քարտեզը, չնայած որ, ըստ երևույթին, պատրաստված է Օրոսիոսի երկի համար և տեղադրված է նույն ձեռագրում, իրականում ընդունված T-O տեսակին չի պատկանում և, կարելի է ասել, որ ճշմարիտ օրոսյան քարտեզ չէ:

Այս աշխատության տեքստի մեջ հիշվող 50 տեղանուններից միայն 41-ն են, որ կան Ալբի քարտեզի վրա, մինչդեռ Իզիդոր Սևիլիացու աշխահացույց քարտեզում նույն 50 անուններից կան 49-ը: (Տես Գլուխ 2, Մաս 6): Ալբիի քարտեզը ցուցադրված ու քննարկված է այս աշխատության Պատ. 14-ում:

Պատ. 13 – Գերմանացի քարտեզագետ Կոնրադ Միլլերը (1844-1933 թթ.) գծագրել է մի «Աշխարհացույց քարտեզ ըստ Օրոսիոսի», օգտվելով նրա *Պատմության յոթ գիրք կռապաշտների դեմ* հատորի առաջին գրքում նշված բոլոր տեղանուններից և նրանց բացատրություններից: Այստեղ պատկերված քարտեզը Միլլերի վերակառուցումն է, որը բնորոշ T-O տեսակի է, ուր Միջերկրականը, Տանայիսը և Նեղոսը երեք մայրցամաքների բաժանման բնական սահմաններն են: Քարտեզն ուղղորդված է արևելքը դեպի վեր:

Քարտեզում Աղվանքը նշված է Սև ծովի և Կասպից ծովի միջև ընկած տարածքի հյուսիսային հատվածում, մինչդեռ Կողքիսը տեղադրված է Կովկասյան լեռներից և Կասպից դարպասից հարավ: Կովկասյան լեռները ներկայացված են որպես մի երկար լեռնաշղթա, տարածված Կասպից ծովի արևմուտքից մինչև Արևելյան Հնդկաստան, որն ապագայում կիրառվել է նաև միջնադարյան բազմաթիվ այլ քարտեզների մեջ:

Քարտեզում Հայաստանն ընդգծված է կարմիր և նստած է Տավրոսյան լեռների վրա, տարածվելով դրա երկու կողմերում: Այստեղից էլ սկիզբ են առնում Եփրատն ու Տիգրիսը: Ավելի արևելք գտնվող մեկ այլ լեռնաշղթա կտրում է Տավրոսը, որն անվանված է *Montes Armeniae* (Հայկական լեռներ), որն իրականում պետք է լինի Հայկական Պար լեռնաշղթան: Սրանց հանդիպման կետում է գտնվում Հայաստանի Դարպասը կամ Սյուները *(Armenia pilae)*: Հայկական լեռների հյու-

[34] Paulus Orosius, *Seven books of history against the pagans: the apology of Paulus Orosius*. Translated with introduction and notes by Irving W. Raymond. (Records of civilization, sources and studies, no. 26). New York, 1936. Գիրք 1, գլուխ 1, մաս 1.

[35] Paulus Orosius, *King Alfreds Anglo-Saxon version of the Compendious History of the World by Orosius*. Containing,—facsimile specimens of the Lauderdale and Cotton mss., a preface describing these mss., etc., an introduction—on Orosius and his work; the Anglo-Saxon text; notes and various readings; a literal English translation, with notes; Mr. Hampson's Essay on King Alfred's geography, and a map of Europe, Asia, and Africa, according to Orosius and Alfred. London, 1859. Գիրք 1, գլուխ 1, մաս 8.

սիսում կա մի երկրորդ դարպաս, որն անվանված է Կասպից Դարպաս (*Portae Caspiae*), դրանից հյուսիս՝ լեռնաշղթայի անունը փոխվում է «Կովկաս»-ի իսկ արևելքից սկսում են *Mons Caspius*-ը (Կասպից լեռները): Կարելի է եզրակացնել, որ այս դարպասը Դերբենդի մոտ գտնվող «Ճորա պահակն» է, որից անցնելով կարելի է հասնել հյուսիս (տե՛ս տողատակի ծանոթագրություն 33):

Օրոսիոսի քարտեզում Կովկասի հարավային մասում և Հայաստանի հարևան շրջաններում են *Կոմագենեն*, *Փոքր Ասիան*, *Կապադովկիան*, *Կողքիսը*, *Աղվանքը*, *Միջագետքը*, *Պարթևաստանը*, *Սիրիան* և *Իբերիան* (Վիրքը): *Հիրկանիան*, որն ըստ Պլինիոս Ավագի գտնվում է Կասպից ծովից հարավ, այստեղ նշված է նրա հյուսիս-արևելքում, իսկ Կասպից ծովը ներկայացված է որպես մի ծովածոց, միացած աշխարհը շրջապատող օվկիանոսի մասն կազմող *Սկյութական ծովին*:

Պատ. 14/14a – Այս քարտեզը ճանաչված է որպես Ալբի կամ Մերովինյան քարտեզ, որ հավանաբար պատրաստված է եղել Օրոսիոսի *Պատմության յոթ գիրք հեթանոսների դեմ* աշխատության համար, չնայած նրան, որ քարտեզը ստույգ T-O տեսակի չէ և, հետևաբար, իսկական օրոսիական քարտեզ չի կարող լինել: Երկը Ավետարանի մեկնաբանության մի ձեռագիր է, որի մեջ եղած Օրոսիոսի գրքի աշխարհագրական երկու գլուխների միջև էլ զետեղված է այս քարտեզը: Այստեղ բնակելի աշխարհը պատկերված է նեղ և երկար, որը կամարի ձևով կիսով չափ փաթաթված է Միջերկրական ծովի շուրջը:

Քարտեզն ուղղորդված է արևելքը դեպի վեր և ունի միայն մի քանի քրիստոնեական հղումներ: Այստեղ բացակա են Երկրային Դրախտը, Նոյյան տապանը և Պաղեստինը: Քարտեզի քրիստոնեական հիմքերից կարելի է նշել եռանկյունի պատկերված *Սինայի լեռը*, *Երուսաղեմը* և *Հուդան*: Պատկերված են նաև Դրախտի չորս գետերը, որոնք թափվում են շրջապատի օվկիանոսի մեջ: Քանի որ քարտեզն անչափ քայքայված է, հստակության համար Պատկեր 14a-ում տրված է դրա վերագծված տարբերակը, ուր բաժանումներն ու անվանումներն ավելի հստակ են երևում:

Քարտեզը պատկերում է բնակելի աշխարհը, որը կամարաձև ծալված նեղ ու երկար մի շերտի ձև ունի, փաթաթված Միջերկրականի շուրջը, իսկ դրան շրջապատում է արտաքին Օվկիանոսը: Քանի որ քարտեզում ցամաքները *ձևափոխված* են ու երկարած, հետևաբար երկրներն ու շրջաններն էլ ունեն նեղ ու երկար տեսք: Արտաքին՝ շրջապատող Օվկիանոսն ունի երեք ծովածոցեր: Առաջինը ձախում (հյուսիսում) Կասպից ծովն է, որը համապատասխանում է դրա մասին եղած հին հունական տեսություններին, իսկ մյուս երկուսը Պարսից ծոցն ու Կարմիր ծովն են (*Mare Rubrum)*, որոնք գտնվում են աջում: Բնակելի աշխարհը երեքի են բաժանում Նեղոսը և Սև ծովը *(Pontum)* :

Միջերկրականը քարտեզի կենտրոնական մասում է և ունի հինգ կղզի՝ *Կրետեն*, *Կիպրոսը*, *Սիցիլիան*, *Սարդինիան* և *Կորսիկան*: Դրա հյուսիսային ափերին կան նաև երեք ծովախորշեր. առաջինը Լիգուրյան ծովն է, երկրորդը՝ Ադրիատիկը և երրորդը՝ Եգեյանը և Սև ծովը միասնաբար ներկայացնող մի ծոց, որն այստեղ անվանված է *Պոնտում* (Սև ծով): Ներքևից (արևմուտքից) ձախում առաջին թերակղզին Իտալիան է, երկրորդը՝ Հունաստանը, իսկ ամենավերինը՝ անանուն Փոքր Ասիան է: Միջերկրականի արևելյան ծայրամասը կոչված է *Իոնական ծով*: Շրջապատի Օվկիանոսում կա միայնակ մի կղզի, որը կոչած է *Բրիտանիա:*

Բոլոր երկրներն ունեն գծված սահմաններ, որը միջնադարյան քարտեզներում անսովոր մի երևույթ է, բայց եվրոպական երկրների մեծ մասը մնում են անանուն, փոխարենը նշված են *Հռոմ* և *Ռավեննա* քաղաքների անունները: Սրանց ընտրությունը հավանաբար կատարված է այդ քաղաքների կրոնական և քաղաքական կարևորության բերումով: Առաջինը կարևոր կրոնական կենտրոն էր, իսկ Ռավեննան Արևմտյան Եվրոպայում ներկայացնում էր Բյուզանդական կայսրությունը:

Աֆրիկան գտնվում է Նեղոսի արևմուտքում, ուր նշված են վեց տեղանուններ՝ *Մավրիտանիա*, *Նումիդիա*, *Կարթագեն*, *Լիբիա*, *Եթովպիա* և *Եգիպտոս:* Նեղոսն այստեղ հոսում է Կարմիր ծովից դեպի Միջերկրական, իսկ *Գանգեսը* հոսում է Կարմիր ծովից դեպի *Եթովպիա*: Ասիայում նշված երկրներն ու քաղաքներն են *Հայաստանը* (գրված գլխիվայր և նշված դեղինով), *Հնդկաստանը*, *Մարաստանը*, *Բաբելոնը*, *Պարթևաստանը*, *Անտիոքը*, *Արաբիան*, *Ալեքսանդրիան*, *Հուդան* և *Երուսաղեմը*: Մեկ ուրիշ կրկնակի գիծ, որն անվանված չէ, Հայաստանից հասնում է մինչև Պարսից ծոց, որն, ամենայն հավանականությամբ, Եփրատ գետն է: Կովկասի հարավային մասում այլ երկրներ չեն նշված:

Քարտեզը Օրոսիուսի բացատրածից տարբեր է նրանով, որ չնայած եռամաս է, բայց T-O տեսակի բաժանումը չունի: Այստեղ բացակա են նաև մայր ցամաքների անվանումներն ու Դոն գետը, որն ընդհանրապես ներկայացվում է որպես Եվրոպայի և Ասիայի սահմանը:

5 – ԿՈՋՄԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոզմա Ալեքսանդրիացին հույն ծովագնաց էր, որն ապրելով վեցերորդ դարում, ճամփորդել է մինչև Հնդկաստան ու Աֆրիկա. Ալեքսանդրիա վերադառնալուց հետո նա դարձավ մոլեռանդ կուսակրոն և 547-549 թվականներին շարադրեց իր *Քրիստոնեական տեղագրությունն* անունով աշխատությունը: Քանի որ նա ժամանակին ճամփորդել է Հնդկաստան և Տապրոբանա (Ցեյլոն), նրան տվեցին «Հնդկաչու», Indicopleaustes, որը նշանակում է «Հնդկաստան տեսած» մականունը: Պետք է ասել, որ այդ ժամանակներում Հնդկաստան անունը շատ ազատորեն էր գործածվում և կարող էր նշանակել որևէ շրջան, որը գտնվում է դասական աշխարհից և Պարսկաստանից արևելք:

Մինչ այդ նույնիսկ ամենահեղինակավոր կղերական հայրերն անգամ շատ կարևորություն չէին տալիս դեռևս ընդունված՝ երկրի գնդածև լինելու տեսությանը, որի արմատները գալիս էր հին հունական ուսմունքներից, բայց ահա ասպա-

րեզ է դուրս գալիս մի վանական, որը ճամփորդել և այցելել է տարբեր երկրներ ու հայտարարում թե բոլոր մինչ այդ եղած տեսությունները սխալ են և նրանց փոխարեն ներկայացնում է մի նոր անառարկելի տեսակետ: Նրա նպատակն էր երկրի գնդածև լինելու և տիեզերքի երկրակենտրոն համընդունելի տեսությունները վերացնել և աշխարհագրության սկզբունքները համաձայնեցնել Սուրբ Գրքի դոգմաներին: Այս կապակցությամբ նա առաջադրեց այն տեսակետը, որ աշխարհը մի քառանկյունի տափարակ տարածք է (որի երկայնքը լայնքի կրկնակին է) և ունի վրանակերպ կրկնակի ծածկոց, որոնցից առաջինը տափարակ է, իսկ երկրորդը՝ կամարաձև, ուր տեղա դրված են աստղերը: Սրանք բոլորը պարփակված են բյուրեղյա կողմեր ունեցող խորանարդի մեջ (տե՛ս Պատ. 16), իսկ աստղերի շարժումը կարգավորում են հրեշտակները: Իր տեսությունը փաստելու համար նա մեջբերումներ է անում Աստվածաշնչից, որոնք նա մեկնաբանում է ըստ իր հայեցողության, պնդելով, որ աշխարհը կառուցված է վրանի ձևով, նույն այն կերպարանքով, որն Աստված բացահայտեց Մովսեսին՝ Սինայի լեռան վրա:[36] Նա նույնիսկ տալիս է աշխարհի ֆիզիկական չափերը և մինչև աստղեր հասնող տարբեր շերտերի բացատրությունները: Ապա շարունակում է, ասելով, որ աշխարհի գնդածև տեսությունը հեթանոսական է, ու այդպիսով նա դատապարտում է բոլոր նրանց, ովքեր հավատում են այդ տեսությանը:

Կոզմայի անունը հիշատակվում է հայկական հնագույն աշխարհագրական գրքում՝ Աշխարհացույցի մեջ, որն, ըստ ոմանց, պատկանում է հինգերորդ դարի Մովսես Խորենացու գրչին, իսկ ըստ ուրիշների՝ յոթերորդ դարի Անանիա Շիրակացուն: Այստեղ հեղինակը խոսում է *Կոստանդիանոս Անտիոքցու «Քրիստոնեական տեղագրության»* մասին, մեջբերելով այն տեսությունը, ըստ որի ջրհեղեղից հետո Տապանն արևելքից եկավ ու հաստատվեց մեզ արդեն ծանոթ «բնակեցված» աշխարհում: Աշխարհացույցն ավելացնում է, որ սա հակառակ է Պտղոմեոսի տեսություններին, որը չէր հավատում աշխարհը շրջապատող օվկիանոսի առկայության տեսությանը: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Աշխարհացույցում նշված Կոստանդիանոս Անտիոքցին նույն ինքը Կոզման է, քանի որ թե՛ գրքի անվանումը և թե՛ մեջբերումները նույնն են: Այս պարբերությունը նույնությամբ կրկնվում է Աշխարհացույցի տարբեր օրինակներում:

Միջին դարերից հետո Կոզմայի աշխատությունը մնաց մոռացված մինչև 1706 թվականը, երբ Հայր Մոնֆոսոն անունով մի բենեդիկտյան ուխտի վանական իր հրատարակությունների մեջ ներառեց նաև այս գիրքը: Կոզմայի ձեռագրերից երեք օրինակ հասել են մինչև մեր օրերը. մեկը պատկանում է 7-ից 8-րդ դարերին, պահպանված Վատիկանում, և պարունակում է տարբեր պատկերներ և գծագրություններ, ներառյալ Կոզմայի աշխարհի պատկերացումը և քարտեզը, որն, ըստ իրեն, հիմնված է Եփորոսի (405-330 թթ. մ.թ.ա.) երկերի վրա: Մյուս ձեռագրերը, որոնք 11-րդ դարի ընդօրինակություններ են, գտնվում են Ֆլորենցիայում և Սինայի լեռան վանքում: Ձեռագիրը գրված է հին հունարենով և պարունակում է 12 գլուխ, ուր տեղադրված տարբեր գծագրերով ու սխեմաներով Կոզման ցանկանում է «փաստել» իր տեսությունը: Այստեղ կան նրա դեպի Պարսկաստան, Հնդկաստան, Ցեյլոն (Տապրոբանա կամ Շրի Լանկա) և Կարմիր ծով կատարած ճամբորդությունների հուշերը և նույնիսկ արտառոց կենդանիների պատկերներ: Ստորև բերվող պարբերությունները քաղված են Կոզմայի ձեռագրից:

Աշխարհի գնդածևությանը հակառակելու համար նա գրում է.

> *Նրանց դեմ, որոնք իբր քրիստոնյա են, բայց հեթանոսների նման մտածում և պատկերացնում են, որ աշխարհը գնդածև է:[37]*

Ապա իր խոսքը «փաստելու» համար նա ավելացնում է.

> *Եթե երկու մարդ գունդի հակառակ կողմերում ոտքի թաթերը դնեն իրար դեմ, ինչի վրա որ ուզում են կանգնած լինեն՝ հողի, ջրի, օդի կամ կրակի վրա, արդյոք կարո՞ղ ենք ասել, որ երկուսն էլ ուղիղ և գլխիվեր են կանգնած:[38] (Տե՛ս Պատ. 17)*
>
> *Եվ կրկին անգամ, եթե նրանց երկուսի գլխին անձրևում է, արդյո՞ք հնարավոր է ասել, որ երկուսի գլխին էլ անձրև է թափվում, և ո՛չ թե մեկի գլխին անձրևը թափվում է, իսկ մյուսի գլխին անձրևը տեղում է ներքևից:[39]*
>
> *Առավել խորը գիտակցությամբ կարծու՞մ եք, որ աշխարհում կան մարդիկ, որոնք հողի վրա քայլում են ոտքերը դրած հակառակ մյուսների ոտքերին:[40]*

Կոզմայի քարտեզները և նրա գաղափարների պատկերագրական դրսևորումները կարելի է տեսնել թիվ 15-17 պատկերներում, իսկ երկրի քարտեզը՝ Պատ. 18-ում:

Պատ. 15 –Կոզմայի պատկերացրած վրանի վերակառուցումը, որն իբր Աստված բացահայտել է Մովսեսին: Պատկերը վերցված է Tabernacle համացանցի կայքից: Այստեղ կա մի բաց տարածք և մի վրան, որն իբր նման է բնակեցված աշխարհի պատկերին:

Պատ. 16 –Կոզմայի *Քրիստոնեական տեղագրություն* ձեռագրից մի պատկեր, վերցված Սինայի լեռան վանքից, ուր նա ցույց է տալիս իր նկարագրած աշխարհը և տիեզերքը: Ըստ նրա, բնակելի աշխարհի հյուսիսում կա մի հսկա լեռ, որը պատճառ է դառնում որ բնակելի աշխարհը՝ «Օյկումենեն» թեքություն ունենա դեպի հարավ: Արևն ու լուսինը դրա շուրջ են դառնում և երբ գտնվում են դրա հետևում՝ մեզ համար դառնում են անտեսանելի:

---

[36] Cosmas Indicopleustes, *The Christian topography of Cosmas, an Egyptian monk*, translated from the Greek by J.W. McCrindle, London, 1897. էջ 146:

[37] Անդ, Գիրք 1, էջ 7:

[38] Անդ, էջ 17:

[39] Անդ, էջ 17: Ընդգծումները հեղինակինն են:

[40] Անդ, Գիրք 2, էջ 146:

Երկինքը տիեզերքի կամարաձև տանիքն է, որը պարունակում է աստղերը և ուր Աստված է բնակվում: Տուփակերպ տիեզերքի երկու կողմերում արձանագրությունները նշում են «Երկնային թագավորություն»: Ձախում պատկերված արևի վերևը գրված է՝ «Արևը մայր է մտնում», իսկ աջ կողմի արևի տակ գրված է՝ «Արևը ծագում է»:

Կոզմայի աշխարհացույց քարտեզը, որը վերատպված է Պատ. 18-ում, ունի տիեզերքի տեսքին վերաբերող բացատրական մի գրվածք, որը կարելի է թարգմանել այսպես.

> *Երկրի ծայրամասերը չորս բոլոր միացած են երկնակամարի ծայրամասերին, որոնք կազմում են քառանկյունի կերպարանք, մի տեսակ խորանարդ: Դրա վերի մասում երկինքը կամարաձև է և ունի մի երկարավուն կամարակապ: Կամարի տակի հարթ մակերեսը երկինքն է, որն ընդհանուր տիեզերքը բաժանում է երկու ծավալների:*[41]

Վերոհիշյալ բացատրության պատկերը կարելի է պարզ տեսնել այստեղ:


Պատ. 17 – Այս պատկերով Կոզման ցանկանում է բացատրել, թե ինչու՞ է անհնար, որ երկիրը լինի գնդաձև, ապա ավելացնում է.

> *Եթե երկու մարդ գունդի հակառակ կողմերում ոտքի թաթերը դնեն իրար դեմ, ինչի վրա որ ուզում են կանգնած լինեն՝ հողի, ջրի, օդի կամ կրակի վրա, արդյոք կարո՞ղ ենք ասել, որ երկուսն էլ ուղիղ և գլխիվեր են կանգնած:*

Պատ. 18/18a – Կոզմայի աշխարհացույց քարտեզը, պատրաստված 547-549 թվականներին, որը վերցված է իր *Քրիստոնեական Տեղագրություն* աշխատանքի Վատիկանում պահվող 7-ից 8-րդ դարերի օրինակից: Երկրի բնակելի մասը կենտրոնում եղած քառանկյունի տարածքն է, որը շրջապատված է կապույտ օվկիանոսով, Դրախտից բաժանված ցամաքի մի նեղ շերտով: Չորս գլխավոր քամիները պատկերված են շրջանաձև կարմիր օղակի մեջ գծված գունագեղ գլուխներով, որոնք զետեղված են երկիրը շրջապատող օվկիանոսի մեջ, որը մեծ, կարմիր տառերով մակարգրված է *ՕԿԵԱՆՈՍ*: Քարտեզի վերը՝ շրջապատի ցամաքի մեջ գտնվող մակագրությունն ասում է. «*Սա այն շրջանն է, ուր ապրում էր մարդկությունը նախքան ջրհեղեղը և որն այժմ նրա համար անհասանելի է*»:

Երկիրը պատկերվում է որպես տափարակ մի քառանկյունի՝ հյուսիսում մի մեծ լեռան բարձրունքով, որի շուրջ պտտվում են արևն ու լուսինը: Երբ դրանք գտնվում են բարձրունքի հետևում, մեզ համար դառնում են անտեսանելի (տե՛ս Պատ. 16): Կենտրոնում գտնվող նարնջագույն քառանկյունի տարածքը, որի մեջ է կապույտ (ներկը թափված) Միջերկրականը՝ բնակելի աշխարհն է, որը պարունակում է մի քանի քարտեզագրական տեղեկություններ: Սրա շուրջը՝ Օվկիանոսով բաժանված կա մի նեղ շրջանակաձև արտաքին ցամաքամաս: Սա այն աշխարհն է, ուր իբր ապրում էր մարդկությունը նախքան ջրհեղեղը, մինչև որ Նոյյան տապանը նրանց բերեց կենտրոնական աշխարհ, որը հունարենով կոչվում է «Օյկումենե»: Այս արտաքին աշխարհի արևելյան մասում է գտնվում Երկրային Դրախտը, լի պտղատու ծառերով ու գունագեղ ծաղիկներով: Եդեմական չորս գետերը դուրս են հոսում Դրախտից ու անցնելով արտաքին ցամաքամասից, ինչ որ մի կերպ կտրում-անցնում են նաև օվկիանոսը և երևան գալիս կենտրոնական՝ բնակելի աշխարհում, ուր նրանք շարունակում են հոսել իրենց՝ արդեն մեզ ծանոթ հուներով, հոսքն ավարտելով ծովերում: Քարտեզում չկան երկրների անուններ, իսկ մակագրությունները պատկանում են աշխարհագրական շրջանների, ծովերի ու գետերի անուններին: Քարտեզում ցամաքները ներկված են նարնջագույն, ծովերը՝ կապույտ, իսկ գետերը՝ կանաչ: Քարտեզն ուղղորդված է վերը հյուսիսով:

Յոթերորդ դարի հայկական մատենագրության կարևորագույն աշխատությունը՝ *Աշխարհացույցը* գրում է հետևյալը.

 [42]

Վերը մեջբերված տեքստի առաջին երեք տողերն են.

> *Կոստանդին Անտիոքցու Քրիստոնեական Տեղագրությունն ասում է, որ Տապանն արևելյան երկրից է մեզ հասել...*

[41] Այս տեքստի համար տե՛ս Պատ. 18:

[42] Տե՛ս *Աշխարհացույցի* ձեռագիր, Սբ Ղազար Վենետիկ, Ձեռագիր թիվ 1245, էջ 5:

Սա նույն տեքստն է, որը պարունակում է Կոզմայի ձեռագիր քարտեզը (տե՛ս ներքևի ցուցակի թիվ 15-ը): Կոզմայի քարտեզի աշխարհագրական կարևորագույն վայրերը համարներով նշված են կից Պատ. 18a քարտեզում և ցուցակագրված են հետևյալ կերպով:

Ա – Ծովերը

1. Կասպից ծովը, որը մի ծովածոց է հյուսիսից:
2. Հռոմեական ծոցը, այսինքն Միջերկրական ծովը, որը կենտրոնում գտնվող կապույտ ներկված ու արևմուտքում օվկիանոսին միացած տարածքն է:
3. Միջերկրականում ձախից առաջին դեպի հյուսիս բարձրացած ծոցը Ադրիատիկ ծովն է և
4. Երկրորդը Եգեյան ծովն է, որը ձգվում է դեպի ավելի հյուսիս՝ անցնելով Մարմարան պատկերող մի գնդաձև ուռուցքի միջով:
5. Սրա շարունակությունը դառնում են Սև ու Ազովյան ծովերը:
6. Հարավում գտնվող օվկիանոսից ներս մտնող ձախից առաջին գնդաձև ծոցը Արաբական ծոցն է, որը կարող է լինել նաև Կարմիր ծովը:
7. Երկրորդ ծոցը Պարսից ծոցն է ու Արաբական ծովը:

Բ – Դրախտի չորս գետերը:

8. Եփրատը, որ սկիզբ է առնում Դրախտից, անցնում է արտաքին աշխարհով, ապա անցնում է օվկիանոսի տակով և դուրս գալիս Կասպից ծովի հարավում, շարունակելով իր հոսքը դեպի Պարսից ծոց:
9. Տիգրիսը նույնպես սկիզբ է առնում Դրախտից, անցնում է արտաքին աշխարհով, ապա կտրում է օվկիանոսը, դուրս է գալիս Կասպից ծովի հարավում և շարունակում իր հոսքը դեպի Պարսից ծոց:
10. Փիսոն գետը (Գանգեսը), նույնպես անցնում է նույն ուղիով և դուրս գալիս բնակելի աշխարհի հարավ-արևելքում ու հոսում դեպի Արաբական ծովը:
11. Գեհոնը (Նեղոսը), որը երկար ճանապարհ է անցնում արտաքին աշխարհի հարավային մասով, հասնում ու անցնում օվկիանոսի տակով, ապա դուրս է գալիս Կարմիր ծովի արևմուտքում ու գնում թափվելու Միջերկրականի մեջ:

Գ – Քարտեզի մյուս տեղագրությունները

12. Անատոլիան, որը Փոքր Ասիան է:
13. Երկրային Դրախտը, որը Եդեմի այգին է, գտնվում է բնակելի աշխարհից արևելք և լի է ծառ ու ծաղիկով:
14. Բնակելի աշխարհը շրջապատող օվկիանոսը:
15. Արտաքին աշխարհը, որը գտնվում է անդրօվկիանոսյան տարածքում և ուր՝ ըստ Կոզմայի, *մարդիկ ապրում էին նախքան ջրհեղեղը:*

Պետք է նշել, որ Դրախտի չորս գետերի օվկիանոսի տակից անցնելը, հիշատակվում է նաև Աստվածաշնչում, իսկ Նեղոսի դեպքում նաև Պլինիոս Ավագի աշխատություններում: Քարտեզի ներքևի գրվածքի թարգմանությունը տրված է Պատ.16-ի բացատրությունների մեջ:

6 – ԻՋԻԴՈՐ ՍԵՎԻԼԻԱՑԻ

Սևիլիայի եպիսկոպոս Իզիդորը, որը ճանաչված է նաև որպես Սուրբ Իզիդոր, մեծ ազդեցություն ունեցող միջնադարյան բարձրաստիճան կղերականներից էր: Նա ծնվել է Սևիլիայում 560 թվականին և մահացել է 636-ին: Նրա եղբայրը՝ Լեանդրը, Սևիլիայի կրոնական առաջնորդն էր: Նրա մահվանից հետո պաշտոնն անցավ Իզիդորին և նա դարձավ Սևիլիայի թեմի առաջնորդն ու անհապաղ սկսեց աշխատել իսպանա-գոթական շրջանում բնակվող տարբեր ցեղերի և ազգությունների ներքին հարաբերությունները բարելավելու ուղղությամբ: Անդրադառնալով, որ այստեղ բնակվող գոթերի, վիզիգոթերի (վեստգոթերի) և այլ ցեղախմբերի բարոյական և նյութական բարեկեցությունը կախված է նորեկ տարրերի արագ ձուլման ընթացքից, այս նպատակին հասնելու համար նա գործադրեց իր տրամադրության տակ եղած բոլոր կրոնական, քաղաքական ու կրթական միջոցները:

Իզիդորը քաջալերում էր լատիներեն և եբրայերեն լեզուների ուսուցումը: Նրա կարևոր աշխատանքներից էր Արիստոտելի գործերի թարգմանությունը և նրանց շրջանառության մեջ դնելը միջնադարյան Իսպանիայում: Նա կազմել է նաև դասական աշխարհի և համաշխարհային գիտելիքների մի բազմակողմանի հավաքածու, այսպիսով դառնալով արևմտյան քրիստոնեության վերջին դասական փիլիսոփան և Եվրոպայի ամենաազդեցիկ հեղինակություններից մեկը: Այս երկը որը կոչվում է *Էտիմոլոգիա* կամ «Ստուգաբանություն», Իզիդորը շարադրել է Սարագոսայի եպիսկոպոսի քաջալերանքով ու խթանելով և ավարտել է իր մահվան նախօրյակին:

Իզիդորի *Էտիմոլոգիան* բաղկացած է 20 գրքից, որոնցից ամեն մեկը տարբեր նյութի շուրջ է: Սրանց մեջ կան գրքեր բժշկության, օրենսդրության, աստվածաբանության, եկեղեցու, լեզվի, մարդու, կենդանիների, աշխարհի, պատերազմների և այլ նյութերի մասին: Սա հսկայական մի աշխատություն է, որը պարունակում է մինչ այդ գոյություն ունեցած գրեթե բոլոր գիտելիքները: Սա հաշվվում էր դասական գիտությունների մի շտեմարան և լայնորեն կիրառվում էր մինչև

Վերածննդի դարաշրջանը: Այս ընթացքում աշխատությունը բազմաթիվ անգամներ արտագրվել է ու վերահրատարակվել է: Ձեռագրի 13-րդ հատորը կոչվում է «Աշխարհը և նրա շրջանները»: Այս հատորի մեջ եղած նյութերն ու տեղեկությունները մեծ մասամբ վերցված են Սալինոսի (մ.թ.ա. երրորդ դար) և Պլինիոս Ավագի (23-79 թթ.) աշխատություններից: Գլուխ 14-ի խորագիրն է *Ֆիզիկական աշխարհագրության մասին*:

Իզիդորի երկերի մեջ կան նաև մեծ թվով աշխատություններ աստվածաբանության, Ս. Գրքի և այլ նյութերի մասին, որոնց հավաքածուն 1580 թվականին լույս տեսավ Փարիզում: Սրանցից հանրածանոթ են *Դիֆֆերենցիան*՝ բառերի և իրերի տարբերությունների վերաբերյալ, ինչպես նաև *Պրոեմիան*, որը տալիս է բացատրություններ Աստվածաշնչի տարբեր գրքերի վերաբերյալ, նաև *De Natura Rerum*՝ «Գիրք իրերի բնության մասին», ուր տրված են բացատրություններ տիեզերքի մասին՝ ըստ յոթերորդ դարի աղբյուրների և, վերջապես, *Քրոնիկան*, որն աշխարհի պատմությունն է՝ սկզբից մինչև Իզիդորի ժամանակները:

Էտիմոլոգիայի մեջ նախատեսված է մի աշխարհացույց քարտեզ, որի օրինակները տարբեր ընդօրինակություններում միմյանցից բավական տարբեր են: Ընդհանրապես, հին ընդօրինակումների քարտեզներն ավելի պարզ են ու անպաճույճ, մինչդեռ մյուս ժամանակաշրջաններում պատրաստվածները տարբեր ոճերի ու դպրոցների խառնուրդներ են ու ավելի զարդարուն: Ներկա աշխատության հաջորդ էջերում վերատպված ու քննարկված են քարտեզներ Իզիդորի ձեռագրի չորս տարբեր ընդօրինակումներից, որոնք պատկանում են 11-ից մինչև 13-րդ դարերին:

Պատ. 19 և 20 – Այս պարզ T-O տեսակի քարտեզը Իզիդորի յոթերորդ դարի *Էտիմոլոգիայի* 1136 թվականի ընդօրինակումից է: Քարտեզը գտնվում է գրքի 14-րդ գլխում և անվանված է "*La Terra*", այսինքն՝ «Երկիրը»: Այս քարտեզը ներկա հատորում տեղ գտած Իզիդորի մյուս քարտեզներից ամենապարզն է: Այն ուղղորդված է վերև արևելքով և պարունակում է միայն երեք մայրցամաքների ու նրանց բաժանող ջրային տարածքների անվանումները, որոնք են Նեղոս և Տանայիս (Դոն) գետերն ու Միջերկրական ծովը: Առկա են նաև Նոյ նահապետի երեք որդիների անունները, որոնք ցրվեցին ու բնակվեցին տարբեր ցամաքամասերում՝ Սեմն Ասիայում, Քամն Աֆրիկայում և Հաբեթը Եվրոպայում: Քարտեզում չկան երկրների ու շրջանների անվանումներ:

Ի տարբերություն մյուս T-O տեսակի պարզ քարտեզների, այստեղ Տանայիս գետի միացման մոտ կա մի եռանկյունի, որն Ազովյան ծով է և այստեղ կոչված է *Meotites Palus*, այսինքն՝ «Ազովյան ճահիճները կամ լիճը»:

Պատ. 20-ում արտատպված է նույն քարտեզին կից Հայաստանին և նրա հարակից շրջաններին վերաբերող տեքստի մեկ մասը: Աղվանքը բացատրելիս ձեռագրում գրված է.

> *տեղադրված է Կասպից ծովի արևմուտքում, որը նեղուցով միացած է շրջապատի օվկիանոսին, և արևմուտքում հասնում է մինչև Ազովի ծովը:*

Հայաստանի վերաբերյալ տեքստն ունի հետևյալ բովանդակությունը.

> *Հայաստան (Արմենիա) անունը այս երկրին տրված է հիմք ունենալով Արմենիոսի անունը, որը Թեսալացի Յասոնի արգոնավորդներից մեկն էր: ... երկիրը գտնվում է Տավրոսյան և Կովկասյան լեռների միջև և տարածված է Կապադովկիայից մինչև Կասպից ծով: Այստեղից է ակունք առնում Տիգրիսը, ուր նաև ջրհեղեղից հետո իջավ Նոյյան տապանը: Նա [երկիրը] կազմված է երկու մասերից՝ Վերին [Մեծ] Հայաստան և Ստորին [Փոքր] Հայաստան:*

Իսկ Վիրքը բացատրված է որպես.

> *ասիական մի երկիր, որը գտնվում է Հայաստանի և Պոնտոսի [Սև ծովի] միջև....*

Պատ. 21 – Իզիդորի այս T-O տեսակի քարտեզը պահպանված է *էտիմոլոգիայի* մի այլ ձեռագրի մեջ, որն այսօր գտնվում է Ֆրանսիայի էքս-ան-Պրովանս քաղաքի Մեժան գրադարանում: Այս քարտեզը պատրաստված է 12-րդ դարում ու պարունակում է շատ ավելի տեղեկություններ ու տեղանուններ, քան քարտեզի այլ պարզ տեսակները:

Քարտեզի «O» բոլորակը շրջապատված է բնակելի աշխարհն ընդգրկող օվկիանոսով, իսկ բոլորակը բաժանված է երեք մայրցամաքների «T» տառակերպ ջրերով, որոնք են Ասիան, Եվրոպան և Աֆրիկան: «T» տառի ուղղահայաց գիծը մակագրված է *Mari Magno*՝ Մեծ ծով, որը Միջերկրականն է, իսկ հորիզոնական թևերն անվանված են *Տանայիս* և *Նեղոս*: Միջերկրականի արևելյան ծայրամասում սլաքաձև մի եռանկյունի մխրճված է ցամաքի մեջ, որը մակագրված է *Paludes*, այսինքն՝ Ճահիճներ, մի անուն, որով հայտնի էր Ազովի ծովը, որը սակայն գտնվում է Տանայիսի և Սև ծովի միացման կետում, այլ ո՛չ թե Միջերկրականի արևելյան ծայրամասում (տե՛ս Պատ. 19): Հնարավոր է, որ քարտեզագիրն այստեղ ցանկացել է պատկերել Նեղոսի դելտան, որը սակայն պետք է լիներ Աֆրիկայի տարածքում: Սրա արևմուտքում՝ ծովի մեջ, մակագրված են *Պուլիա* և *Կոստանդնուպոլիս* անունները, որոնցից առաջինը Իտալիայի հարավումն է գտնվում և մի նավահանգիստ է, որտեղից Եվրոպայից Սուրբ Երկիր գնացող ուխտավորիներն սկսում էին իրենց ծովային ուղեվորությունը, իսկ երկրորդը կրոնական կարևոր մի կենտրոն էր ներկայացնում:

Եվրոպայի տարածքում նշված է 25 տեղանուն, որոնց թվում են *Գերմանիան*, *Սկյութիան*, *Մեսիան*, *Մակեդոնիան*, *Դալմատիան*, *Պաննոնիան*, *Հռոմը*, *Տոսկանան*, *Գաղղիան* (2 անգամ), *Բելգիան*, *Իտալիան*, *Իսպանիան*, *Կարթագենը*, *Գալիցիան* և տասն ուրիշներ:

Աֆրիկայի տարածքում ընդհանրապես տեղանուններ և այլ տեղեկություններ չեն մակագրված, մինչդեռ այսօրվա որոշ աֆրիկյան երկրներ ու շրջաններ ներառնված են Ասիայի տարածքում, որոնցից են *Եթովպիան*, *Եգիպտոսը*, *Ալեք-*

սանդրիան, *Մեմֆիսը*, *Հելիոպոլիսը* և *Թեբեն*: Վերջին երեքը տեղադրված են մի անանուն գետի ափերին, որն իրականության մեջ պետք է Նեղոսը լինի: Իսկ Եվրոպայի տարածքում նշված *Կարթագենը* պետք է լինի «Նոր Կարթագենը», որը գտնվում էր Իսպանիայում և Կարթագենի զինյալ ուժերի հենակն էր:

Ասիայում քարտեզի կապը կրոնի հետ կարելի է տեսնել մի քանի տեղանուններում: *Դրախտը* նշված է քարտեզի արևելյան (վերի) ծայրամասում, օվկիանոսում պատկերված խաչի տակ: Քաղաքներից նշված են *Երուսաղեմը*, *Բեթղեհեմը* և *Երիքովը* (*Jericho*): Քարտեզի մեջ կողմնացույցի չորս կողմերի անվանումները նշված են կարմիր խաչերով, շեշտելով քարտեզի քրիստոնեական ծագումը:

Ասիայի տարածքը լի է տարբեր տեղանուններով, որոնց մեծ մասը քաղաքների և երկրների անուններ են: Սրանց մեջ կան Վիրքը (*Hiberia*), *Աղվանքը* և երկու *Հայաստաններ*՝ մեկը Մեծ Հայքն է, իսկ մյուսը, որը գտնվում է առաջինի հարավ արևմուտքում, *Կիլիկիա* անվան մոտ, պետք է որ լինի Կիլիկիայի հայկական թագավորությունը, որը քարտեզը պատրաստելու ժամանակ ապրում էր իր ծաղկուն շրջանը և Եվրոպայի հետ ակտիվ առևտրական ու քաղաքական կապերի մեջ էր: Երկու Հայաստանները քարտեզում տեղադրված են համեմատաբար ճշգրիտ տեղերում:

Ասիայի արևելյան ծայրամասում են *Հնդկաստանը*, *Պարթևաստանը*, *Ասորեստանը*, *Մարաստանը* և *Պարսկաստանը*: Քարտեզի հյուսիս-արևելքում Հայաստան *Armenia* մակագրության տակ կարելի է տեսնել *Միջագետքը*, *Եդեսիան* (Ուրֆա), *Դամասկոսը*, *Սիրիան*, *Անտիոքը*, *Հիրկանիան* և ուրիշներ: Հայաստանի հարավ-արևմուտքում, Կիլիկիայի մոտ տեղադրված է երկրորդ Հայաստանը (տե՛ս նախորդ պարբերությունը): Սրա արևմուտքում են *Կապադովկիան*, *Փռյուգիան* և *Փոքր Ասիան*, իսկ *Աղվանքը* (Ալբանիան) և *Վիրքը* (Իբերիան) տեղադրված են սրանցից հյուսիս:

Պատ. 22/22a – Այս ավելի ճոխ և զարդարուն «Աշխարհացույց» քարտեզը նույնպես պատկանում է Իզիդորի քարտեզների T-O ընտանիքին, բայց արդեն իսկ զարգացված է ու պարունակում է շատ ավելի տեղեկություններ, քան մյուսները: Իզիդոր Սևիլիացու աշխատությունների մեջ կան մեծ թվով քարտեզներ, որոնք ընդհանրապես պարզ սխեմայական գծագրեր են մի քանի գրություններով (տե՛ս Պատ. 19 և 21), բայց սրանցից մի քանիսը, ինչպես օրինակ այս քարտեզը, որը նրա 1050 թվականի մի ձեռագրից է, շատ զարդարուն է և պարունակում է առասպելական և կրոնական սիմվոլներ ու մակագրություններ:

Քարտեզն էլ ուղղորդված է վերև արևելքով: Միջերկրականը ներկայացնող T տառի ուղղահայաց գիծը, Միջերկրական ծովը, գրավում է քարտեզի տարածքի մեծ մասը և պարունակում է 22 կղզիներ: Կղզիներից երեքը մեծ են և նրանց մեջ կան շենքերի մանրապատկերներ: Արևմտյան Միջերկրականի եռանկյունի մեծ կղզին *Սիցիլիան* է, հարավ-արևելքի քառակուսի կղզին *Կրետեն* է, իսկ արևելքում ավելի փոքր քառանկյունին՝ *Կիպրոսն* է: Կարմիր ծովը և Արաբական ծովը միացած են իրար և պատկերված քարտեզի վերի աջ մասում կարմիր գույնով՝ որը սեպաձև մխրճված է ցամաքի մեջ: Աստվածաշնչային առասպելը, ըստ որի Կարմիր ծովը ճեղքվել է, որպեսզի Իսրայելի որդիները եգիպտոսից վերադառնան հայրենիք, նույնպես երևում է Կարմիր ծովի ծայրամասում բացված ճանապարհի ձևով: Տասներկու հիմնական հողմերը նշված են աշխարհը շրջապատող օվկիանոսի մեջ: Քարտեզը լի է շենքերի, եկեղեցիների ու ամրոցների մանրապատկերներով, որոնք նշում են կարևոր քաղաքները և կրոնական կենտրոնները: Սրանց մեջ ամենամեծերիցն է գմբեթի վրա խաչ կրող *Երուսաղեմը*:

Աֆրիկան լի է վայրի ու առասպելական արարածներով ու տարբեր քաղաքներով, որոնցից ամենակարևորը Նեղոսի երկու գետաբերանների միջև գտնվող *Ալեքսանդրիան* է: Հարավում, *Քաթբաթմոն* լեռների վրա նստած երեք կամարով մեծ շենքը կոչված է *Ալեքսանդրի ամրոցը*: Ըստ Սալլուստիոսի, այս լեռները Լիբիայի ու Եգիպտոսի միջև են գտնվում, ուր նաև, ըստ քարտեզի, գտնվում է *Սեյենե* կամ Ասուան քաղաքը:[43] Աֆրիկայից դեպի Սիցիլիա ուղղված թերակղզու մեջ է պատկերված *Կարթագեն* քաղաքը, իսկ դրանից արևմուտք, երկու գետերով շրջապատված կարմիր քաղաքը *Հիպոնն* է՝ այսօրվա Աննաբան, ուր բնակվում էր Ս. Օգոստինոսը: Աֆրիկայի արևմտյան, ատլանտյան ափերին, օվկիանոսի մոտի կանաչ բուրգը *Ատլասի լեռներն* են, որոնց ձախում *Կալպեն*՝ է՝ Ջիբրալթարը: Նեղուցի մեջ պատկերված են Հերակլեսի առասպելական սյուները:

Եվրոպայում ամենակարևոր քաղաքներն են Սև ծովի ափին գտնվող *Կոստանդնուպոլիսը* և Արևելյան Միջերկրականում՝ *Աթենքն* ու *Հռոմը* (վերջինս պատկերված է որպես մի շեղակի կանգնած ամրոց, որի միջից անցնում է *Տիբեր* գետը) և *Իսպանիան*, որպես մի եռանկյունի գմբեթ ունեցող աշտարակ Ջիբրալթարի ափին: *Կորդովան* պատկերված է Իսպանիայի ձախում մզկիթի և միհարեի մանրապատկերով, *Գաղղիայից* բաժանված մի լեռնաշղթայով: Իսպանիայի հյուսիսում եղած օվկիանոսի մեջ են պատկերված Անգլիան, Շոտլանդիան և Իռլանդիան *(Anglia Insula*, *Scotia*, *Hibria)* :

Պատ. 22a դետալում քարտեզի տեղանունների վրա ավելացված են թվանշաններ, որոնք վերաբերում են Կովկասյան լեռներից հարավ ընկած երկրներին և Հայաստանին: *Վերին Աղվանքը* (8) նշված է *Կովկասյան լեռներից* (19) հարավ: Այստեղ է երկու գագաթների վրա նստած մի տնակի մանրապատկեր, մակագրված «Նոյյան տապան» (4, *Archa Noe*), երկգագաթանի լեռն էլ՝ *Արարատն* է (3): Սա, հավանաբար, նախքան խաչակիրների արշավանքները մեզ հասած առաջին քարտեզն է ուր, հակառակ առաջադրված որոշ նոր և անհիմն տեսությունների (տե՛ս սույն աշխատության Նախաբանը), Տապանն ու Արարատը ցույց են տրվում Հայաստանի տարածքում: Արարատի ներքևի մակագրությունն ասում է «Հայաստանի լեռներ» (2, *Montes Armenie*), որոնք գտնվում են Տավրոսից (11, *Mons Taurus*) սկիզբ առած և դեպի Սև ծովը (18) հոսող *Յուքսիս* (հավանաբար Ալիս կամ Կիզիլիրմաք) գետի մոտ: Մեծ կամ Վերին Հայքը (1, *Armenia Superior*), տեղադրված է օվկիանոսին միացած կանաչագույն ծովածոցի տեսք ունեցող Կասպից ծովից արևմուտք: Կովկասյան լեռները (10, *Mons Caucasus*) գտնվում են Մեծ Հայքից հյուսիս-արևմուտք, որոնց հարավային վերջամասումն են Կաս-

[43] Sallust, *The Jugurthan Wars*, [63].

պյան Դարպասները (5, *Porte Caspie*): Սրանցից հյուսիս Կովկասյան լեռներն են, իսկ դեպի հարավ-արևելք *Mons Acroceraunis* (Ակրոկերավնյան) կոչված լեռնաշղթան, այսինքն Կովկասյան լեռնաշղթայի մեկ մասը՝ Դաղստանի լեռները:[44] Այսպիսով կարելի է եզրակացնել, որ այս դարպասը Դարյալի կիրճն է և ոչ թե Ճորա պահակը, որը գտնվում է Կասպից ծովի արևմտյան ափին (տե՛ս տողատակի ծանոթագրություն 33): Երեք գետերի (12, 13, 14) ակունքի նշված կետում այս լեռնաշղթան միանում է Հայաստանից (1) դեպի արևմուտք շարունակվող *Տավրոսին* (11): Այս երեք գետերն են *Տիգրիսը* (12) և *Եփրատը* (13) ինչպես նաև *Արաքսը* (14): Առաջին երկուսը հոսում են դեպի հարավ, թափվելով Կարմիր կամ Արաբական ծովը, իսկ Արաքսը հոսում է հյուսիս և թափվում շրջապատի օվկիանոսը: Քարտեզի մեջ եղած կարևոր տեղանունները հետևյալներն են.

Ա – Տարածաշրջանի երկրները

1. *Armenia superior*- Մեծ կամ Վերին Հայք
2. *Montes Armenie* – Հայկական լեռներ կամ Հայկական Պար
3. *Ararat* – Արարատն իր երկու գագաթներով
4. *Archa Noe* – Նոյյան տապանը նստած Արարատին
5. *Porte Caspie*- Կասպից Դարպասները, այստեղ՝ Դարյալի կիրճը: (Տես տողատակի ծանոթագրություն 33):
6. *Regio amazonii* – Ամազոնուհիների բնակված տարածքը
7. *Hircania Superior* – Վերին Հիրկանիա
8. *Albania Superior* – Վերին Աղվանք
9. *Sarmatharia* – Ռուսաստանի շրջան

Բ – Լեռներ, գետեր և ծովեր

10. *Mons Caucasus* – Կովկասյան լեռներ
11. *Mons Taurus* կամ *Tauris* – Տավրոսյան լեռներ
12. *Tigris* – Տիգրիս
13. *Euphrates* – Եփրատ
14. *Araxis* – Արաքս
15. *Ganges* – Գանգես
16. *Indus* – Ինդոս
17. *Meotide paludes* – Մեոտիսյան կամ Ազովյան ճահիճներ
18. Սև ծով
19. *Mons Acroceraunis* – Ակրոկերավնյան լեռներ: Կովկասյան լեռների մի ճյուղը, որը բաժանում է Հայաստանը Վիրքից՝ Դաղստանի լեռները:
20. *Mare Caspiu* – Կասպից ծով
21. Միջերկրական ծով

Պատ. 23 – Քարտեզը Իզիդորի *Էտիմոլոգիայի* տասներեքերորդ դարի մեկ ուրիշ օրինակից է, որը պահվում է Հայդելբերգի համալսարանի գրադարանում: Քարտեզը յուրահատուկ է այն իմաստով, որ դա T-O և եղանակային գոտիների տեսակի քարտեզների խառնուրդ է և իր դասավորումով շատ նման է Բեատուսի քարտեզներին (տե՛ս Պատ. 28-ից 32-ը):

Քարտեզն ուղղորդված է վերև արևելքով, բայց միաժամանակ ունի Մակրոբիոսի հինգ եղանակային գոտիների բաժանումը, որոնք ընդհանրապես ցուցադրվում են հյուսիսով վեր ուղղորդված քարտեզներում, բայց քանի որ այստեղ քարտեզն ուղղորդված է արևելքով վեր, այս գոտիները շարված են ուղղահայաց: Քարտեզում գոտիներն անվանված են.

1. *Հյուսիսային սառուցյալ և անբնակելի գոտի*,
2. *Հյուսիսային բարեխառն գոտի*,
3. *Կենտրոնական կիզյալ գոտի*,
4. *Հարավային բարեխառն գոտի*,
5. *Հարավային սառուցյալ և անբնակելի գոտի* :

Աշխարհը շրջապատված է ծփացող ալիքներ ունեցող օվկիանոսով, որը հյուսիս-արևելքում և արևելքում ունի մի քանի ծովախորշեր, ներկայացնելով Կասպից և Կարմիր ծովերը: Քարտեզի կենտրոնական մասում՝ կիզյալ գոտում կամ հասարակածում ցուցադրված ուղղահայաց ծովը կազմում է շրջապատող օվկիանոսի մասը: Բնակելի աշխարհն ամբողջովին տեղադրված է Հյուսիսային բարեխառն գոտու մեջ և ունի T-O տեսակի բաժանում: Ինչպես նման այլ քարտեզներում, T տառի ուղղահայաց գիծը Միջերկրականն է, բայց հորիզոնական թևերը մակագրություն չունեն և Տանայիս ու Նեղոս գետերը չեն ներկայացնում, այլ պարզապես Միջերկրականի շարունակությունն են: Տանայիսը սկզբնավորվում է քարտեզի հյուսիսում սև գույնով ցուցադրված Ռիփեյան լեռներից և թափվում է ծով T տառի հյուսիսային (ձախակողմյան) ծայրամասում, իսկ *Նեղոսն* սկիզբ է առնում Վերին Եգիպտոսում (*Egyptus Superior*) գտնվող աննշան մի լճից ու հոսում դեպի արևմուտք, հասնելով T տառի հարավային թևի ծովին:

Շրջապատող օվկիանոսի մոտ գտնվող որոշ լեռնաշղթաներ պատկերված են որպես սև զանգվածներ, որոնցից են հյուսիսում՝ *Ռիփեյան լեռները*, արևմուտքում՝ Ջիբրալթարի հյուսիսում նշված *Կալպեն* (որը Ջիբրալթարի հին անվա-

[44] Orosius, Paulus – *Seven books of history against the Pagans* – Translated by Irving W. Raymond. Records of Civilizations" series. Columbia University Press, New York, 1936, էջ 38.

նումն է), և դրա հարավում, Միջերկրականի մյուս ափին՝ *Ատլաս լեռները*: Մավրիտանիայի տարածքում, Ատլաս լեռներից վեր պատկերված է մի անանուն գետ:

Հյուսիսային Ասիայում ցուցադրված են մի շարք երկրներ ու շրջաններ, որոնցից են *Հնդկաստանը*, *Աղվանքը*, *Ամազոնուհիների երկիրը*, *Սկյութիան*, *Հայաստանը*, *Սիրիան*, *Գալիլեան*, *Դանը* (Դակիան ?) և *Տրոյան*: Սրանցից դեպի հարավ են *Բաբելոնը*, *Շոշ քաղաքը*՝ Պարսկաստանի հին մայրաքաղաքը, *Մեծ Մարաստանը*, *Գալիլեյը* և *Պաղեստինը*: Երուսաղեմ քաղաքը նշված է բնակելի աշխարհի կենտրոնում, մեծատառ *Ihlm* (Ierusalem) մակագրությամբ: Հարավային Ասիայում հոսող Նեղոսի աջ ափին են *Ներքին Եգիպտոսն* ու *Վերին Եգիպտոսը*, *Սինայի լեռը* և *Արաբիան*, իսկ մյուս ափին մակագրված է *Hic Ethiopes habitant* (այստեղ են ապրում եթովպացիք), *Desertus superior Egiptus* (Վերին Եգիպտոսի անապատ) և *Desertus Sertie* (Սիրտիի անապատը):

Եվրոպայում առկա են 16 տեղանուններ, որոնց մեջ են *Հունգարիան*, *Տեվտոնները*, *Հռոմը*, *Տոսկանան*, *Գաղղիան* (Ֆրանսիա), *Իսպանիան* և ուրիշները: Բրիտանական կղզիները չեն նշված: Աֆրիկայում կան միմիայն վեց տեղանուններ, իսկ Հարավային բարեխառն գոտու մեջ, բացի գոտու անվանումից որևէ հավելյալ մակագրություն չկա, քանի որ սա համարվում է մեզանից բաժանված անանցանելի և տաք Կիզյալ կենտրոնական գոտիով, հետևաբար անծանոթ մի երկրամաս է:

7 – ԲԵԴԱ ԵՐԱՆԵԼԻ

Բեդան անգլիացի պատմաբան էր ու բարձրաստիճան կղերական: Նա ծնվել է 672 թվականին և մանկությունից սովորել Անգլիայի Նորթհամբրիա նահանգում գտնվող Ուերմութի վանքում: Ըստ իր հուշերի, նա իր կյանքն անց է կացրել հենց նույն վանքում, ուսումնասիրելով Աստվածաշունչն ու կղերական հայրերի այլ աշխատանքները, միևնույն ժամանակ շարադրելով իր երկերը: Նա մահացել է 735 թվականին նույն վանքում և հետմահու հայտնի դարձել որպես Բեդա Երանելի (Venerable Bede): Այսօր նա հիմնականում ճանաչված է իր գիտական, պատմական և աստվածաբանական աշխատանքներով: Նրա կարևոր երկերից է *Historia ecclesiastica gentis Anglorum* աշխատությունը, որը պարունակում է Անգլիայի պատմությունը սկսած Հուլիոս Կեսարի ժամանակներից մինչև իր օրերը (731 թ.): Այդ աշխատանքը հանդիսանում է բրիտանական պատմագիտության հիմքը:

Բեդա Երանելու մյուս աշխատություններից են *De Temporibus Liber* և *De Temporam Ratione*, որոնք պարունակում են որոշ չափով պատմական ու աշխարհագրական տեղեկություններ: Բայց նրա ամենամեծ ճանաչում ունեցող աշխատանքներից է *De Natura Rerum*, «Գիրք իրերի բնության մասին», որին ընդհանրապես ուղեկցում է մի աշխարհացույց T-O տեսակի քարտեզ: Ինչպես սպասվում էր, Բեդայի քարտեզների հիմքն են հանդիսանում նախորդներից իրեն հասած քարտեզագրական տեղեկությունները և քարտեզները:

Քրիստոնեության համար բերված նրա ամենամեծ ավանդը Աստվածաշնչի նոր խմբագրությունն էր, որն Արևմուտքում գործածության մեջ էր մինչև 16-րդ դարը, իսկ կաթոլիկ եկեղեցին դա գործածում էր մինչև 1966 թվականը:[45]

Բեդայի ձեռագրերը մի քանի հարյուր տարի օգտագործվում էին որպես դասագրքեր: Նրա աշխատություններից որոշ մասեր 15-րդ դարում թարգմանվել են հայերենի (տե՛ս Երևանի Մատենադարանի թիվ 2037 ձեռագիր, գրված 1421 թվականին):

Պատ. 24 – Այս պարզ T-O տեսակի քարտեզը Բեդայի «Գիրք իրերի բնության մասին» աշխատության 11-րդ դարի ընդօրինակությունից է: Քարտեզն ուղղորդված է վերն արևելքով, ուր երեք մայրցամաքները լի են հերթականորեն շարված տեղերի ու երկրների անվանումներով, առանց տեղագրական որևէ տեղեկության: Աֆրիկայում կա 14 տեղանուն, իսկ Եվրոպայում առկա են Հունաստանի շրջանների ու կղզիների, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի մի քանի երկրների անվանումները, ընդհանուրը 24 տեղանուն:

Բոլորակի արևելքում է «Երկրային Դրախտը», որի մոտ մակագրված է «Ասիա» անունը, դրան հետևում են 35 երկրների ու շրջանների անունների մակագրություններ: Սրանք սկսվում են *Հնդկաստան*, *Պարթևաստան*, *Ասորեստան*, *Մարաստան*, *Փյունիկ*, *Միջագետք* և *Արաբիա* երկրներով, իսկ նախավերջին տողում մակագրված են *Հիրկանիա*, *Աղվանք*, *Հայաստան*, Վիրք *(Hiberia)*, *Կապադովկիա*, *Փոքր Ասիա* անվանումները:

Քարտեզում այլ տեղեկություններ չկան, միայն նրա ներքևի մակագրության մեջ Բեդայի անունը նշված է որպես քարտեզի հեղինակը:

Պատ. 25 – Գեղատեսիլ այս քարտեզը պահվում է Անգլիայի Թորնի աբբայության գրադարանում: Ձեռագիրը պատրաստվել է 1110 թվականին և համարվում է ամենագեղեցիկ գրքերից մեկը: Սա կարևոր աշխատությունների մի հավաքածու է, որոնց մեջ կան Բեդայի «Գիրք իրերի բնության մասին»-ը և երկու այլ ձեռագրեր, ներառյալ մի քանի աղյուսակներ և գծագրություններ:

Բուն ձեռագրի մեջ այստեղ տեղադրված քարտեզին վերաբերող որևէ տեքստ գոյություն չունի: Սա մի T-O տեսակի քարտեզ է, ուղղորդված վերն արևելքով, բայց ունի բավականին աղավաղված դրվածք: Աշխարհագրական չորս կողմերի անվանումները գրված են լատիներեն և լատինատառ հունարենով: Համապատասխան մակագրություն չունեցող Միջերկրականը միմյանցից բաժանում է Ասիան, Եվրոպան և Աֆրիկան. այստեղ Եվրոպան զբաղեցնում է քարտեզի ներքևի

[45] Աստվածաշնչի Սուրբ Հերոնիմոսի լատիներեն թարգմանությունը, հինգերորդ դար:

մեծ մասը, Աֆրիկային թողնելով միայն մի փոքր տարածք աշխարհի հարավ-արևմուտքում: Սա համընկնում է որոշ դասական հեղինակների առաջադրանքներին, ըստ որոնց Եվրոպան և Աֆրիկան պետք է հաշվել մեկ ցամաքամաս:[46]

Քարտեզի վերի կեսը զբաղեցնում է Ասիան՝ Եվրոպայից ու Աֆրիկայից բաժանվելով մի ջրային տարածքով, որը փոխանակ ունենալու ընդունված Դոն և Նեղոս անվանումները, մակագրված է *Hierusalem* (Երուսաղեմ): Սրա մեջտեղում կարմիր լեռներով լցված մի քառակուսու մեջ նշված է *Mons Syon* (Սիոն լեռ):

Քարտեզի տեղանունների մեծ մասն ունի կրոնական կարևորություն: Վերը՝ Մեծ Ասիայի տակ, գրիչը մակագրել է *Quod unt septuaginta due gentes orte*, «Այստեղ [աշխարհում] կան 72 ցեղեր», քարտեզի տարբեր հատվածներում տալով դրանց մասին տեղեկություններ: Սեմն Ասիայում է իր 27 ցեղախմբերով, Քամն Աֆրիկայում՝ իր 30 ցեղերով, բայց Հաբեթի ցեղերը չեն նշված, դրանց փոխարեն Հայաստանին տրված են 33 ցեղախմբեր, որոնց գումարը 72-ի փոխարեն դառնում է 90: Հայտնի չէ, թե ինչու՞ են Հայաստանին վերագրվել այս ցեղախմբերը: Աստվածաշնչային ուրիշ անվանումներից քարտեզում առկա են *Նազարեթը*, *Հորդանան գետը*, *Գալիլեան*, *Հուդայի երկիրը*, *Պաղեստինը* և այլն: Վերջին երկուսը տեղադրված են Երուսաղեմ (*Hierusalem*) անվանված ժապավենակերպ ծովից արևմուտք:

Այստեղ է *Նոյյան տապանը*, նստած *Հայաստանի* և *Եփրատ* գետի մոտակայքում, բայց սրանք բոլորը պատկերված են Հարավ-արևմտյան Ասիայում, *Կեսարիայի* և *Միջագետքի* մոտ, մինչդեռ *Փոքր Ասիան*, որից արևելք են գտնվում Հայաստանն ու Եփրատը, տեղադրված է դրանցից բավական հեռու դեպի հյուսիս: Ասիայում առկա մյուս տեղանուններից են *Կոստանդնուպոլիսը*՝ Փոքր Ասիայի ներքևում, իսկ դրա աջ կողմում են *Եփեսոսը* և *Կիլիկիան*: *Կարթագենը* տեղադրված է *Պաղեստինից* հարավ, որը նույնպես ամբողջովին սխալ տեղադրում է:

Եվրոպայի տարածքում են *Մակեդոնիան*, *Իտալիան*, *Հռոմը* և *Տիբեր գետը*, *Սիցիլիան* իր *էտնա* հրաբուխով, *Տոսկանան* և մեկ ուրիշ *Կարթագեն*, որը կրում է *Մեծն* ածականը: Այս Կարթագենը հավանաբար «Նոր Կարթագեն»-ն է, որը Իսպանիայում կարթագենյան բանակի կենտրոնն էր: Եվրոպան կազմված է միմիայն *Մակեդոնիա*, *Իտալիա*, *Սիցիլիա* և *Կարթագեն* շրջաններից, իսկ *Բրիտանիայի*, Իռլանդիայի (*Hiberia*) և Իսլանդիայի (*Thile*) անուններն, ըստ երևույթին, ավելացված են հետագայում, քարտեզի բուն տարածքից դուրս՝ ձախում: Ըստ երևույթին գրիչը, լինելով բրիտանացի, լրացրել է քարտեզագրի գործը, դրան ավելացնելով իրեն հարազատ անվանումները, բայց դրանք փոխանակ տեղադրելու հյուսիս-արևմուտքում, որոշել է դնել քարտեզի հյուսիսում:

Եվրոպա մակագրությունը գրված է Եվրոպա ու Միջերկրականի հարավի ցամաքամասերի վրա. այդպիսով Եվրոպան ընդգրկում է նաև Միջերկրականի հարավում գտվող ցամաքի մեծ մասը, իսկ Աֆրիկան սահմանափակվում է քարտեզի հարավ-արևմուտքում զուգահեռ գծերով նշված սահմանից դուրս՝ որը պետք է Նեղոս գետը լինի:

Հայտնի չէ ինչու քարտեզագիրը անունների ճիշտ տեղադրելու մասին չի մտածել, այլ բավարարվել է նրանք պարզապես քարտեզում նշելու, մի երևույթ որ միջնադարյան քարտեզներում հաճախ է հանդիպում (տե՛ս Պատ. 2, 24, 26): Քարտեզի ներքևի յոթ սյունյակները օրացույցի աղյուսակներ են:

Պատ. 26 – Սա Բեդայի քարտեզներից մեկ ուրիշն է, որը 1120 թվականի մի ձեռագրից է վերցված և շատ նմանություններ ունի Պատ. 24-ի քարտեզի հետ: Քարտեզը «Առնշտայն Աստվածաշունչ» կոչված ձեռագրից է, տեղադրված գրքի վերջում: Սրա հետ կան նաև մի քանի էսքիզներ, որոնցից ոչ մեկը Աստվածաշնչի հետ չի առնչվում: Ըստ երևույթին քարտեզը պատրաստվել է Գերմանիայում: Քարտեզի վերի մասում կան փիլիսոփայական գիտության ճյուղավորումները նշող բոլորակներ, որոնց մեջ գրված են դրանց անվանումները:

Այս քարտեզն էլ T-O տեսակից է, բայց ընդգրկում է նաև Մակրոբիոսի եղանակային բաժանումները: Եղանակային քարտեզներն ընդհանրապես ուղղորդված են լինում վերը հյուսիսով, իսկ T-O տեսակները՝ արևելքով, ինչպես որ այս քարտեզն է: Հետևաբար, ինչպես Իզիդորի Պատ. 23-ի մեջ, այստեղ էլ եղանակային գոտիներն ուղղահայաց շերտավորումներ են, որոնք գծված են նեղ, որպեսզի քարտեզի տարածքի մեծ մասը մնա բնակելի աշխարհին պատկանող Հյուսիսային բարեխառն գոտուն, իսկ այս գոտու տարածքն ինքը ցուցադրված է որպես T-O տեսակի մի քարտեզ: Երկու բևեռներում են *intemperata*, «ծայրահեղ կամ անբարեխառն», գոտիները, իսկ Կենտրոնական կիզյալ գոտին, ինչպես նաև Հարավային բարեխառն գոտին նեղացված են ու սեղմված դեպի հարավ, բևեռին մոտ:

Ամբողջ բնակելի աշխարհը տեղավորված է Հյուսիսային բարեխառն գոտու մեջ, այդ իսկ պատճառով էլ սեղմված է ու ներկայացված խեղաթյուրված: Գալով աշխարհագրական տեղեկություններին, այս քարտեզն ավելի ճշգրիտ է քան նախկին պատկերինը: Ինչպես հիշվեց վերը, հենց այս նպատակով էլ աշխարհի բնակելի գոտին լայնացված է և իր լայնությամբ գերակշռում է մյուս չորսի համատեղ լայնքին: Միջերկրական ծովը, որը Եվրոպան բաժանում է Աֆրիկայից, կոչված է *Affricum mare*, Աֆրիկյան ծով, իսկ Ասիան առանձնացնող գետեր, ըստ ընդունված կարգի, *Տանայիսը* և *Նեղոսն* են: Միջերկրականի ստորին ծայրամասի երկու շեղակի գծերից ձախինը *Calpe*-ն է՝ Ջիբրալթարը, իսկ մյուսը Ատլասի լեռներն են, դրանց միջև՝ Միջերկրականի նեղուցում, ներկա է Իսպանիայի Կադիս քաղաքը (*Gades*):

Ասիայի տարածքը բաժանված է երեք մասի: Հյուսիսային մասում հերթականորեն շարված են *Հայաստանը*, *Բյուքանիան*, *Փռյուգիան*, *Գալա[ի]ցիան*, *Լյուդիան*, *Բակտրիան*, *Պամփյուլիան*, *Կիլիկիան*, *Նիկեան* և *Տրոյան:* Կենտրոնական մասը գլխավորում է *Երկրային Դրախտը*, որից արևմուտք գալիս են *Հնդկաստանը*, *Պարթևաստանը*, *Ասորեստանը*, *Պարսկաստանը*, *Մարաստանը*, *Միջագետքը*, *Քաղդեան*, *Արաբիան*, *Սիրիան*, *Պաղեստինը*, *Ասկալոնը* և *Անտիոքը: Բիբլիական Սամարիան*, *Գալիլեան*, *Հուդան* և *Երուսաղեմը* նշված են *ԱՍԻԱ* մակագրության ներքևում: Կովկասի հարավային տարածաշրջանի երկրներից առկա է միայն *Հայաստան* անունը: Թե՛ քարտեզը և թե՛ մակագրությունները ընդհանուր շատ բան ունեն Պատ. 2-ի քարտեզի հետ:

[46] Orosius, Paulus – *Seven books of history* – New York, 1936. Գիրք 1, գլուխ1, մաս 1.

Քարտեզի ներքևի ձախ մասը զբաղեցրած Եվրոպայում առկա են բազմաթիվ քաղաքներ ու շրջաններ, ինչպես, օրինակ, *Հռոմը*, *Իտալիան*, *Կոստանդնուպոլիսը*, *Հունաստանը*, *Հունգարիան*, *Դանուբ գետը*, *Գերմանիան* և *Ֆրանսիան*:[47] Քարտեզի սահմանի վրա են պատկերված *Անգլիան*, *Շոտլանդիան*, *Իռլանդիան* (*Hiberia*) և, Մեծ Բրիտանիայի փոխարեն՝ *Բրետանյը*, որի բաղկացուցիչ երկրամասերն ու կղզիներն արդեն մեկ առ մեկ նշված են:

Աֆրիկայում նշված են *Կարթագենը*, *Սեյենեն* (Ասուանը), *Հիպոնը* (Աննաբան), ինչպես նաև մի քանի այլ տեղանուններ: Ըստ Սալլուստիոսի պատմածի, թե իբր պարսիկներն ու հայերը հաստատվել են Հյուսիսային Աֆրիկայում, այստեղ նշված է պարսիկների անունը, սակայն հայերինը բացակայում է քարտեզից:

8 – ԱՆԱՆՈՒՆ ՌԱՎԵՆՆԱՑԻ

Յոթերորդ դարի կեսերին ռավեննացի մի վանական, տարբեր աղբյուրներից հավաքելով նյութեր, շարադրել է աշխարհագրության մի գիրք: Նրա աղբյուրները շատ բազմազան են ու տարբեր. դրանց մեջ են Պտղոմեոսը, Օրոսիոսը, Ագրիպպան, Իզիդորը, Կեստորիոսը և ուրիշներ: Նրա աշխատության արդյունքն է հինգ հատորով մի ձեռագիր, ուր տրված են բացատրություններ բնակելի աշխարհի աշխարհագրության և տեղագրության մասին՝ միաժամանակ նշելով երկրների ու քաղաքների անուններ: Շուրջ 200 տարի անց մեկ ուրիշ ռավեննացի՝ Գուիդո Ռավեննացին, օգտվելով իր համաքաղաքացու նյութերից, շարադրեց իր աշխատությունը:

Ըստ Անանուն Ռավեննացու տեքստի, ձեռագրի հետ պետք է լիներ նաև մի աշխարհացույց քարտեզ, բայց մեզ հասած օրինակներում որևէ քարտեզ չկա: Տարիներ շարունակ տարբեր քարտեզագետներ աշխատել են Անանուն Ռավեննացու տեղագրական և աշխարհագրական բացատրությունների հիման վրա վերագծել նրա քարտեզը, բնականաբար, ստեղծելով միմյանցից շատ տարբերվող քարտեզներ: Սրանցից ամենամանրակրկիտը և ամենավստահելին 19-րդ դարի գերմանացի քարտեզագետ Կոնրադ Միլլերինն է, ում գրչին են պատկանում նաև շատ ուրիշ վերականգնումներ: Նրա քարտեզը ցուցադրված և քննարկված է ստորև:

Պատ. 27 – Անանուն Ռավեննացու՝ Միլլերի պատրաստած աշխարհացույց քարտեզը T-O ընտանիքի ճոխ տեսակին է պատկանում: Քարտեզն ուղղորդված է վերև արևելքով և, քանի որ հեղինակը Ռավեննայից է, ապա այդ քաղաքի վրա են կենտրոնանում աշխարհը 24 մասի բաժանող գծերը: Բնակելի աշխարհը շրջապատված է Հյուսիսային, Հարավային, Արևելյան և Արևմտյան օվկիանոսներով, կենտրոնում ունենալով ցամաքամասերն միմյանցից բաժանող Միջերկրական ծովը:

Ըստ գոյություն ունեցող ավանդույթի, այստեղ էլ *Կասպից ծովը* պատկերված է իբր *Հյուսիսային օվկիանոսին* միացած մի ծովածոց, իսկ *Պարսից* ու *Արաբական ծոցերը* միանում են *Կարմիր ծովին*, որն ինքը *Հարավային օվկիանոսից* է ճյուղավորվում: Կասպից ծովի շրջանում նշված են Վիրքը (*Իբերիան*), Աղվանքը *(Ալբանիան*) և *Կասպիան*, իսկ *Կասպից լեռները* սկսում են ծովից ու հասնում մինչև *Կովկասյան լեռներ*: Արաքս և Կուր (*Araxis*, *Cyrus*) գետերը, որոնք նախքան Կասպից ծով հասնելը միանում են, այստեղ պատկերված են որպես մինչև ծովը հասնող առանձին գետեր: Կովկասյան լեռնաշղթայի մեջտեղում նշված է «Կասպից Դարպասներ»-ը (*Portae Caspiae*), որը չի կարող Դերբենդի մոտի անցքը՝ «Ճորա պահակ»-ը լինել, քանի որ գտնվում է լեռնաշղթաների միջև և ո՛չ թե նրանց վերջամասում (տե՛ս տողատակի ծանոթագրություն 33):

Աղվանքը տեղադրված է Կասպից ծովի հարավ-արևմուտքում, Հայաստանի մոտ, և Հայաստանից բաժանվում է Կովկասյան լեռներով: Վիրքը գտնվում է Աղվանքի հյուսիսում, Կասպից ծովի և լեռների մոտ (Կասպից լեռներն էլ նույն Կովկասյան լեռների տարբեր անվանումն է): Կողքիսը տեղադրված է Սև ծովի հյուսիս-արևելյան ափին:

Քարտեզում *Հայաստանը* պատկերված է *Կասպից ծովից* հարավ-արևմուտք և *Միջագետքից* հյուսիս: *Եփրատի* և *Տիգրիսի* ակունքներն են *Հայկական* (Տավրոսյան) լեռները: Հայաստանի հարակից շրջաններն են *Վիրքը*, *Աղվանքը*, *Հիրկանիան*, *Մեծ Մարաստանը*, *Պարթևաստանը*, *Ասորեստանը*, *Սիրիան*, *Կիլիկիան* և *Քաղդեան*:

Միջերկրականն այստեղ անվանված է Մեծ ծով (*Mare Magnum)*, որը լի է բազմաթիվ կղզիներով: Սրանցից ամենամեծն է *Սիցիլիան*, ապա *Կրետեն* ու *Կիպրոսը*: *Պրոպոնտիսը* (Մարմարայի ծովը) միանում է *Պոնտոսի ծոցին* ու Ազովյան ճահիճներին (*Meotides Palus*): *Տանայիս* գետը, որի վրա մակագրված է «*Տանայիս*, *որը բաժանում է Ասիան Եվրոպայից*» հոսում է դեպի այս ճահիճները:

Եվրոպայի տարածքում կան բազմաթիվ մակագրություններ այնտեղ բնակվող ազգերի ու երկրների մասին: Այստեղ է, որ երկրագունդը բաժանող 24 գծերը կենտրոնանում են Ռավեննայի՝ քարտեզի ծննդավայրի վրա: Շրջապատի Արևմտյան օվկիանոսի մեջ են *Բրիտանիան*, Իռլանդիան (*Yberia*) և Իսլանդիան (*Thyle*), ինչպես նաև մի քանի ուրիշ կղզիներ: Եվրոպայում են նշված մի շարք ուրիշ երկրներ ու շրջաններ, այդ թվում՝ *Դարդանիան*,[48] *Թրակիան*, *Մակեդոնիան*, *Թեսսալիան*, *Հունաստանը (Ellas)*, *Արքայան*, *Սարմատիան*, *Իլլիրիան*,[49] *Մեծ Դաքիան*, *Միկեան*,[50] *Դանիան*, *Գերմանիան*. *Ֆրանսիան*, *Բուրգունդիան*, *Իբերիան*, *Իսպանիան* և ուրիշներ, որոնցից մի քանիսն *Իտալիայի* տարածքում են տեղադրված:

[47] Այստեղ արդեն օգտագործվել է Գաղղիայի արդիական անվանումը՝ *Ֆրանսիա*:

[48] Դարդանիան բալկանյան շրջաններից է:

[49] Իլլիրիան դասական ժամանակաշրջանի երկիր էր, այսօրվա Կոսովոյի մոտակայքում:

[50] Միկեան Փոքր Ասիայի շրջաններից է, որը գտնվում էր Մարմարայի ծովից հարավ:

Աֆրիկայի տարածքում նշված են երկրների և դրանցում բնակվող ցեղախմբերի անվանումները: Այս մայրցամաքը Ասիայից բաժանված է *Գեհոն* (Նեղոս) գետով, որն սկզբնավորվելով Աֆրիկայի հարավ-արևելքում գտնվող լեռներից, հոսում է հյուսիս, անցնում *Եգիպտոսի* միջով և հասնում մինչև Միջերկրական ծով: *Վերին Եգիպտոսում* և *Թեբեի* մոտակայքում, Նեղոսի մեջ առկա է մի կղզի, որն անվանված է *Մերոե:* Տե՛ս նաև Պատ. 10-ը:

9 – ԼԻԲԵՆԱՑԻ ԲԵԱՏՈՒՍ կամ ԲԵԱՏ

Իսպանացի կղերական Բեատուսը (շուրջ 730-798 թթ.) բենեդիկտյան ուխտի մի կուսակրոն հոգևորական և աստվածաբան էր, որն աշխատում էր Իսպանիայի Լիբենայի լեռներում գտնվող մի վանքում: Նա այսօր ճանաչված է որպես *Commentarium in Apocalipsin*, կամ «Ապոկալիպսի մեկնաբանություն» աշխատության հեղինակ: Աշխատությունը հիմնված է Ավետարանի Ս. Հովհաննու Հայտնությունների Գրքի վրա, որի նախաբանում Բեատուսը նշում է իր օգտագործած աղբյուրները, սրանց շարքում են Հերոնիմոսի, Ամբրոզիոսի, Օգոստինոսի, Գրիգոր Մեծ Պապի, Իզիդորի, Աֆրիկացի Տիկոնիոսի և այլոց գործերը:

Մեզ հասել են «Ապոկալիպսի մեկնաբանության» կամ, ինչպես հաճախ անվանվում է, «Բեատուս»-ից 26 օրինակ, որոնք մեծ մասամբ ունեն հարուստ զարդարանքներ ու գունագեղ մանրանկարչություններ Հայտնության Գրքի մեջ նշված նյութերի վերաբերյալ: Աշխատության բնօրինակը պատրաստվել է 776 թվականին, բայց մեզ հասած օրինակները 10-ից 13-րդ դարերի ընդօրինակումներ են: Սրանցից 14 օրինակի մեջ առկա են Աստվածաշնչի թելադրանքների վրա հիմնված աշխարհացույց քարտեզներ, որոնցից մի քանիսը ձվածիր են, մյուսները՝ շրջանաձև կամ քառանկյունի: Բեատուսի քարտեզների զարգացումն անկախ է անգլո-սաքսոն և գերմանական քարտեզագրական դպրոցների ուղղություններից և չնայած, որ սրանք բոլորը հիմնված են նման աղբյուրների վրա և ունեն շատ նմանություններ, բեատուսները հիմնականում մյուսներից բավական տարբեր տեսք ունեն: «Բեատուս» քարտեզներն ունեն հետևյալ ընդհանուր մի քանի հատկանշական բնութագրերը.

- Սրանք պատկանում են T-O ընտանիքին, որոնց մեջ Միջերկրականը, Տանայիսը և որոշ չափով էլ Նեղոսը բաժանում են մայրցամաքները:
- Նեղոսի ակունքը հաճախ նշված է ոչ թե հարավում, այլ հարավ-արևելյան Աֆրիկայում և գետը, նախքան Միջերկրական հասնելը անցնում է Աֆրիկայի գրեթե ողջ տարածքով:
- Հարավային մասում ներկա է չորրորդ՝ անմարդաբնակ և անծանոթ մայրցամաքը, ուր իբր ապրում են «անտիպոդները» կամ «հակոտնյաները»:
- Շրջապատի օվկիանոսում պատկերված են լինում ձկներ, ինչպես նաև նավեր ու նավակներ:
- Երկրային Դրախտը տեղադրված է արևելքում:

Ինչպես որ իսլամական քարտեզները կենտրոնանում են իսլամական երկրների վրա, այդպես էլ միջնադարյան T-O քարտեզներն ու «Բեատուսները» հիմնականում ցուցադրում են քրիստոնյա երկրները և այն շրջաններն, ուր ապրում են քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում Հայաստանը, ինչպես նաև Կողքիսն ու Աղվանքը, որոնք նույնպես քրիստոնյա էին:

Չորրորդ մայրցամաքը՝ հարավայինը, ըստ Բեատուսի, կիզիչ արևի պատճառով անմարդաբնակ է ու անծանոթ: Այս բնութագրումը նմանվում է Մակրոբիոսի քարտեզներում հասարակածի վրա գտնվող «Կենտրոնական կիզյալ» գոտու անվանմանը, որը նույնպես անմարդաբնակ է: Բոլոր «Բեատուսները» պարունակում են այս չորրորդ մայրցամաքը: Այս քարտեզներից հինգը պատկերված ու քննարկված են հաջորդ էջերում:

Պատ. 28/28a – Այս քարտեզը պատճենված է Բեատուսի «Ապոկալիպսի մեկնաբանություն» աշխատության 1050 թվականի օրինակից, որը պահպանվում է Ֆրանսիայի ազգային գրադարանում: Քարտեզն ունի մեծ քանակությամբ և մանրակրկիտ պատմական ու աշխարհագրական տեղեկություններ և ճանաչված է որպես «Սան Սևերի Բեատուս»: Չնայած որ քարտեզն ընդօրինակված է 776 թվականի բնագրից, բայց ընդօրինակողը գործի է դրել նաև իր ճաշակն ու ունեցած տեղեկությունները, քարտեզին տալով յուրահատուկ հանրագիտարանային բնույթ:

Քարտեզն ուղղորդված է վերն արևելքով և զարդարված է բազմաթիվ մանրապատկերներով: Շրջապատի օվկիանոսը լի է բազմաթիվ կղզիներով, իսկ ջրի ազատ տարածքները լցված են նավակներով ու ձկներով: Դրախտն ակնհայտորեն արևելքում է գտնվում, ուր պատկերված են Ադամն ու Եվան «արգիլյալ պտուղը» քաղելիս: Ասիայի և Աֆրիկայի տարածքները լի են պատմական և առասպելական բնույթի նյութերով, իսկ Եվրոպայում կան բազմաթիվ քաղաքների մանրապատկերներ, լեռներ ու գետեր:

Միջերկրական ծովը քարտեզի մեջտեղի մուգ կապույտ տարածքն է, որն անուն չունի և բաղկացած է տարբեր անուններ կրող ծովերից: Միջերկրականում են *Մայորկա*, *Մինորկա*, *Սարդինիա*, *Սիցիլիա (Scicia)*, *Կորսիկա*, *Կրետե* և *Կիպրոս* կղզիները: Այստեղ Աֆրիկան անվանված է *Լիբիա*, Կասպից ծովն էլ (դետալի քարտեզում՝ թիվ 12) ցույց է տրված որպես հյուսիս-արևելյան օվկիանոսին միացած մի ծովածոց: Կարմիր ծովը ուղղահայաց կարմիր տարածքն է, որը հարավային անմարդաբնակ ցամաքը բաժանում է բնակելի աշխարհից: Սրան են միացած երկու ծոցեր, *Պարսից* և *Արաբական* ծոցերը, որոնք ուղղված են դեպի *Պարսկաստան* և *Վերին Եգիպտոս*, երկու կողմից շրջապատելով Արաբիային:

Միջերկրականի վերի մասից դեպի հյուսիս (ձախ) ձգվող ջրային տարածքը ցուցադրված է անսովոր կերպով: Այստեղ մեկ շարքի վրա են եգեյան ծովը, Դարդանելի նեղուցը (*Hellespont*), Մարմարա ծովը (*Equor Ponti*, Propontis), Բոսֆորի նեղուցը, Սև ծովը (*Eusin Pontus*) և Ազովի ծովը, պատկերված ձվաձև, եռանկյունի, երկարավուն ու այլ կերպարանքով: Այս շարքի արևմուտքում (ներքևում) մի երկար ու նեղ ծովածոց կա, որն Ադրիատիկ ծովն է, ուր նաև պատկերված է Հռոմը: «Բրիտանական օվկիանոս» անվանումը տրված է Եվրոպայի հյուսիս-արևմուտքում գտնվող Հյուսիսային ծովին, որի մեջ առկա են ձախից՝ *Tile* (Իսլանդիա) *Britter* (?), Բրիտանիա, *Hibernia* (Իռլանդիա), *Gades* (Իսպանիայի Կադիս քաղաքը) և այլ կղզիներ:

Մայրցամաքները լի են շենքերի ու եկեղեցիների մանրապատկերներով, որոնց չափերն ուղղակի հարաբերություն ունեն իրենց կարևորության հետ: Ամենամեծ շինություն-քաղաքն Ասիայում *Երուսաղեմն* է, իսկ Եվրոպայում՝ *Հռոմն* ու *Կոստանդնուպոլիսը* (դետալի թիվը՝ 14): Ամենամեծ եկեղեցին *Սան Սևերն* է Ֆրանսիայի *Գասկոնիա* նահանգում, ուր որ պատրաստվել է այս ձեռագիրը:

Աֆրիկան գրավում է քարտեզի հարավ-արևմտյան մի անկյունը և անվանված է *Լիբիա: Նեղոսը* սկիզբ է առնում սրա հարավային ծայրամասում գտնվող լեռներից ու մի լճից և, անցնելով ամբողջ Աֆրիկայով, գալիս թափվում է Միջերկրական: Քարտեզի մեծ մասը զբաղեցնում է Ասիան, որի հյուսիսն ու հարավը միմյանցից բաժանված են *Կերավնյան* կոչվող (թիվ 15, թաքնված քարտեզի կենտրոնական ծալքում), ինչպես նաև *Կովկասյան* (թիվ 8) ու *Տավրոսյան* (թիվ 9) լեռնաշղթաներով: [51] Այս լեռնաշղթաները մասամբ գտնվում են քարտեզի կենտրոնի ծալքի մեջ ու պարզ են միայն քարտեզի վերագծված դետալում: Նշենք, որ վաղ միջնադարում Ասիա ասելով ընդհանրապես նկատի էր առնվում միայն Արևմտյան Ասիան, որն արևելքում տարածվում էր միմիայն մինչև Հնդկաստան:

Միջին Արևելքը և Կովկասի երկրամասը ավելի պարզ կարելի է տեսնել Կոնրադ Միլլերի նույն քարտեզի վերագծվածի մեջ (Պատ. 28a): Պարզաբանելու համար ավելացված են ավելացված են թվանշաններ, որոնց բացատրություններն են հետևյալը:

1. *Armenia Regio*
   «Այս շրջանը գտնվում է Տավրոսյան և Կովկասյան լեռների միջև, որը տարածվում է մինչև Կասպից ծով, և որի փեշերից ակունք է առնում Տիգրիսը: Հայաստանը երկու մասից է բաղկացած՝ Վերին Հայք և Ներքին Հայք»
2. *Կապադովկիա*
3. *Մեծ Սկյութիա* – այստեղ՝ Ռուսաստանի հարավային շրջանը:
4. *Կողքիսի ժողովուրդներ*
5. *Աղվանք* – բերում ենք տեքստի ազատ թարգմանությունը.
   Այստեղ մարդիկ ծնվում են սպիտակ մազերով: Սրա արևելքումն է Կասպից ծովը, որը բարձրանում ու միանում է շրջապատող Օվկիանոսին և մյուս կողմից հասնում մինչև Ազովյան ճահիճները: Այստեղի շներն այնքան կատաղի են, որ խեղդում են ցուլերին ու սպանում առյուծներին:
6. *Լյուդիա*
7. *Արաքս գետ*
8. *Կովկասյան լեռներ*
9. *Տավրոսյան լեռներ*
10. *Փոքր Ասիա*
11. *Սև ծով*
12. *Կասպից ծով*
13. *Միջերկրական*
14. *Կոստանդնուպոլիս*
15. *Կերավնյան լեռներ* (տե՛ս թիվ 49 ծանոթագրությունը):

Պատ. 29/29a – Բեատուսի այս քարտեզը նրա «Ապոկալիպսի մեկնաբանություն» աշխատության ձեռագրի 12-րդ դարի օրինակից է, որը պահպանվում է Մանչեստերի համալսարանի (Անգլիա) գրադարանում:

Քարտեզը T-O ընտանիքին է պատկանում և ուղղորդված է արևելքը դեպի վեր, իսկ մեջտեղի ուղղահայաց ժապավենը Միջերկրականն է: T տառի հորիզոնական թևերից ձախը Դոնն է (Տանայիսը), իսկ աջը՝ Նեղոսն է, Հարավային ու Արևմտյան Աֆրիկայի իր երկու ակունքներով և տարբեր ճյուղավորումներով: Քարտեզի վերն է Դրախտը, որի մեջ պատկերված են Ադամը, Եվան ու օձը: Եվայից ձախ՝ կանաչ և նարնջագույն լեռների միջև մակագրված է *Կովկասյան լեռներ*, որը վերաբերում է նարնջագույն լեռներին: Կանաչ գույնի լեռները պետք է որ նշեն Տավրոսյան լեռները, որոնց ներքևումն է *Հայաստանը*, ապա *Կապադովկիան*: Սրանցից ներքև, ձախ մասում են *Քաղկեդոնը*, *Պամփյուլիան* և *Փռյուգիան*, իսկ ավելի ներքև առկա է *Փոքր Ասիան*: Անանուն մի գետ, սկիզբ առնելով Կովկասյան լեռներից, հոսում է դեպի շրջապատի օվկիանոսը:

Եվրոպայի տարածքում դեպի Ադրիատիկ կամ Եգեյան ծովն է հոսում *Դանուբ* գետն իր բազմաթիվ ճյուղավորումներով, որոնց ափերին կան մոտակա տեղանունների մակագրությունները: Մեկ ուրիշ գետ՝ սկզբնավորվելով կանաչ զանգ-

[51] Ըստ Մելայի, նախադասական ժամանակներում Կովկասյան և Տավրոսյան լեռները կոչվում էին Կերավնյան: Տե՛ս Mela, *Description of the World*, Michigan 1998, մաս 1.109 և 3.39:

վածից՝ հավանաբար Կարպատյան լեռներից, հոսում է դեպի Միջերկրականը. գետաբերանի մոտ նշված է *Կոստանդնուպոլիս* անունը: Ծովի այս մասը պետք է լինի Մարմարան: Եվրոպայում առկա մյուս տեղանուններից են *Թեսսալոնիկան*, *Մակեդոնիան*, *Ալանները*, *Սարմատիան*, *Գերմանիան*, *Ֆրանսիան*, *Բելգիան*, *Դալմատիան*, *Հռոմը*, *Գալիցիան* և շատ ուրիշներ:

Աֆրիկայում և հարավ-արևմտյան Ասիայում որոշ տեղանուններ սխալ են տեղադրված: Օրինակ, *Բաբելոնը* տեղադրված է *Նեղոսի* ափերին, *Միջագետքը՝ Սինայի* լեռան հարավում: *Լիբանանի լեռները* ցուցադրված են որպես երկու գետերի ակունք, իսկ *Կարմիր* ծովը հասնում է մինչև *Արաբական լեռները* և հարավում՝ անկյունադարձ անելով, անցնում է Աֆրիկայի ամբողջ լայնքով դեպի արևմուտք, չորրորդ մայրցամաքը բաժանող օվկիանոսին զուգահեռ հուսով:

Բնակելի աշխարհին շրջապատող օվկիանոսն ու ծովերը լի են ծովային կենդանիներով, նավակներով ու կղզիներով: Օվկիանոսի ներքևի ձախումն են գտնվում Բրիտանիան, Շոտլանդիան ու Իսլանդիան (*Tile insula*): Քարտեզի հարավային ծայրամասում (աջում) ցուցադրված է մի անբնակ աշխարհամաս, առանձնացած օվկիանոսով և Կարմիր ծովով, որտեղ որևէ մակագրություններ չկան: Բեատուսի մյուս քարտեզներից շատերում այս մայրցամաքը կոչվում է «Հարավային Անծանոթ» և «Անբնակելի», որը չորրորդ մայրցամաքն է համարվում:

Վերջապես պետք է ասել, որ դիտարկված քարտեզն ավելի արժեք ունի որպես զարդարանք և գեղանկարչություն, քան քարտեզագրական ինչ-որ մի լուրջ աշխատություն:

Պատ. 30/30a – Այս քարտեզը մեկ ուրիշ «Բեատուս» քարտեզ է, վերցված Ֆրանսիրայի ազգային գրադարանից: Այս օրինակը պատրաստված է 12-րդ դարի վերջերում:

Քարտեզի ուղղորդումը տարօրինակ է: Ըստ դրա կողմերում եղած նշումների, այն պետք է ուղղորդված լինի վերը հարավով, բայց աշխարհագրական ու տեղագրական տեղեկությունները նրան տալիս են արևելյան ուղղորդում: Այս հակասությունները պատճառ են հանդիսացել քարտեզում առկա անհասկանալի աշխարհագրական սխալներին: Հավանական է, որ ընդօրինակողն աջի ու ձախի մակագրությունների տեղերը փոխելով, արևելքն ու արևմուտքը խառնել է իրար՝ ուղղորդումը դարձնելով անորոշ, հետևաբար նաև խառնելով երկրների մեծամասնության տեղադրումները:

Քարտեզի ձախում պատկերված երկու բոլորակները, կարմիր/նարնջագույն արևը և սև/սպիտակ լուսինը, սրա առանձնահատկություններից են: Հետաքրքիր է նաև այն երևույթը, որ չնայած աշխարհը բաժանված է չորս մասի, սրանցից երկուսը հատկացված են Եվրոպային, հետևաբար քարտեզում բացակա է բեատուսյան «անծանոթ»՝ չորրորդ ցամաքը: Բայց այդտեղ բնակվող «սկիապոդը», կամ մեկ մեծ ոտ ունեցող մարդը, ներկա է՝ նստած քարտեզի վերի աջ անկյունում: Բեատուսյան քարտեզներից մեկ ուրիշում (Պատ. 31) այս նույն արարածը գտնվում է նստած հարավային «անծանոթ» աշխարհամասում:

Ավելի ամբողջական տեղանունների համար տե՛ս Պատ. 30a-ն, ուր ցուցադրված է Կոնրադ Միլլերի ձեռքով վերագծված նույն քարտեզը, վրան ավելացված թվերով, որոնք փակագծերի մեջ նշված են հաջորդ պարբերություններում:[52]

Քարտեզում Դրախտը գտնվում է վերը, ուր որ պետք է արևելքը լինի (1), բայց ուղղությունը նշված չէ: Քարտեզի բիբլիական դիմագծերից են դրախտի չորս գետերը՝ Եփրատը, Տիգրիսը, Փիսոնն ու Գեհոնը (Նեղոսը), որոնք Դրախտից հոսում են դուրս՝ դեպի շրջապատող օվկիանոսը: Քարտեզում այս օվկիանոսն անվանված է *Mare Magnum* (Մեծ ծով), մի անուն, որն ընդհանրապես վերապահված է Միջերկրականի համար:

Մեծ Հայքը (*Armenia Maior*) պատկերված է քարտեզի վերի ձախ անկյունում (2), որն աշխարհի ասիական (3) մասն է: *Արաքս* գետը (4) հոսում է Հայաստանի տարածքից դեպի շրջապատող օվկիանոսը. *Կապադովկիան* (16) և *Բյութանիան* ցույց են տրված որպես Հայաստանին հարակից երկրներ: Կովկասյան երկրներից ուրիշ ոչ մեկը ցուցադրված չէ: Քարտեզի այս քառորդը միակն է, որի տեղանունները և դրանց տեղերը մեծ մասամբ նման են ուրիշ «Բեատուս» քարտեզներին:

Միջերկրական ծովը (5) տարածված է ամբողջ աշխարհի լայնքով՝ արևելյանից մինչև արևմտյան օվկիանոսների միջև և կիսում է աշխարհը: Միջերկրականից դեպի ձախ բաժանվող ճյուղը (6) անվանված է *Mare Til* (?) և բաժանում է *Ասիան* (3) *Եվրոպայից* (9a): Սա պետք որ լինի Ադրիատիկ – Սև ծով – Դարդանել – Բոսֆոր առանցքը, քանի որ դրա ափերին է պատկերված *Կոստանդնուպոլիսը* (12): Այստեղ *Նեղոսը* (7) *Ասիայի* և *Աֆրիկայի* (8) սահմանը չէ, այլ ցուցադրված է որպես մի գետ, որը հոսում է Աֆրիկայի խորքում: Ջրային այն տարածքը, որը բաժանում է Ասիան Աֆրիկայից, *Միջերկրական ծովի* (5) մի մասն է: *Աֆրիկային* (8) է հատկացված քարտեզի վերի աջ քառորդը, որը չորսի մասերից ամենափոքր տարածքն է: Դրան հակառակ, *Եվրոպային*, որն իրականում ամենափոքր մայր ցամաքն է, տրված են քարտեզի ներքին երկու քառորդները (9a և 9b), այսինքն՝ աշխարհի կեսը: Երկարավուն դեղին ծովը, որը լցված է զուգահեռ կարմիր գծերով, Կարմիր ծովն է (10), որն իրականում բաժանում է Աֆրիկան Ասիայից, բայց այստեղ ցուցադրված է որպես *Աֆրիկան* (8) *Եվրոպայից* (9b) բաժանող ջրային տարածք: Այս սխալ դրվածքի պատճառն է քարտեզի խառնիճաղանճ ուղղորդությունը, որի պատճառով էլ խառնված են քարտեզի վրայի արևմտյան ու հարավային երկրների տեղերը:

Նույն պատճառով քարտեզի ներքևի ձախում, այսինքն *Եվրոպայում* (9a) է տեղադրված *Երուսաղեմը* (11), որը գտնվում է *Կոստանդնուպոլսի* (12), *Հունաստանի* (13) և *Արաբիայի* (14) հարևանության մեջ, որոնք բոլորը տեղադրված են Եվրոպայում: Իտալիայի որոշ նահանգներ, օրինակ *Կալաբրիան* ու *Լուկան* (15) տեղադրված են ինչ որ գետի հանդիպակաց ափերին: Միջերկրականի հարավային ափին են տեղադրված *Հռոմը* (17), *Վիեննան* (18), *Տոլեդոն* (19) և *Բարսելոնը* (20), ներկայացնելով մի տարօրինակ տեղադրություն:

[52] Miller, Dr. Konrad – *Die ältesten Weltkarte* – Stuttgart, 1898, Volumes I through VI. Հատոր. 1, էջ 31:

Եվրոպայի (9b) վերը՝ *Աֆրիկայում* (8) են գտնվում *Եգիպտոսը* (21), *Սիրիան* (22), *Պաղեստինը* և *Հուդան* (23), *Դամասկոսը* (24), *Եթովպիան* (25), *Միջագետքը* (26), ինչպես նաև *Ալեքսանդրիան* (27), որը նշված է հսկայական փարոսի մանրապատկերով: Իրականում ավելի ճիշտ կլիներ, եթե այս աշխարհամասն անվանված լիներ «Միջին Արևելք», քանի որ այդ պարագայում տեղանունները կլինեին համեմատաբար ավելի ընդունելի:

Կիպրոսն (28) ու *Կրետեն* (29) երկու մեծ կղզիներն են Միջերկրականում, որն ինքը երեք կողմից միացած է ձկներով լեցուն շրջապատի օվկիանոսին: Կղզիներից երրորդն անվանված է *Լյուկաոնիա* (30), որը Փոքր Ասիայում մի անկախ պետություն-կղզի է եղել, իսկ մեկ ուրիշն է *Արքաիան* (31), որն իրականում Հունաստանի տարածքում մի նեղ երկրամասի անվանումն է:

Քարտեզի բոլոր տեղանունների համար տե՛ս Կոնրադ Միլլերի նույն քարտեզի վերագծագրումը (Պատ. 30a): Փակագծերի մեջ նշված թվերն այս քարտեզին են պատկանում:

Պատ. 31/31a – Այս գեղարվեստական գործը 1203 թվականին ընդօրինակված բեատուսյան մեկ ուրիշ աշխարհացույց քարտեզ է, որը պահվում է Իսպանիայի Բուրգո-դի-Օզմա քաղաքի Մայր Տաճարի գրադարանում:

Սա զարդարուն տեսակի T-O քարտեզ է, որի ամենացայտուն դիմագիծը Միջերկրական ծովն է: Քարտեզն ուղղորդված է վերն արևելքով և ունի ձվածիր կերպարանք: Սրա տարածքը լի է քաղաքների ու երկրների մանրապատկերներով ու տարբեր կղզիներով: Ծովերն ու գետերը ներկված են կապույտ, իսկ լեռները՝ կանաչ: Դոն գետը, որը բաժանում է Եվրոպան Ասիայից, ներկայացված է որպես *Ռիփեյան* լեռներում ակունք առնող մի լայն գետ, որը հասնում ու թափվում է Ազովի ծովը (այստեղ տառասխալով նշված *Padules Meotis* ձևով): Նեղոսի ակունքը Կենտրոնական Աֆրիկայում է, որտեղից նա հոսում է դեպի արևելք, ապա կտրուկ ձախ պտույտ կատարելով շարունակում դեպի Միջերկրական, առանց որևէ տեղ անունը հիշվելով:

Քարտեզի չորրորդ, «անծանոթ» ցամաքամասում գերիշխող տեղը տրված է առասպելական միոտանի մարդուն՝ «սկիապոդին», որը կիզիչ արևից պաշտպանվելու համար նստած է իր մեծ ոտի ստվերում: Այստեղ նշված տեքստը նույն առասպելին է վերաբերում:

Քարտեզի վերևում պատկերված քառանկյունին Երկրային Դրախտն է իր չորս գետերով: Քարտեզում առկա Հիսուսի 12 առաքյալների դիմանկարներն իրենց բացատրություններով ծառայում են որպես սրա կրոնական հիմքերը: Այստեղ բացակա է Երուսաղեմը և միակ կամարակապ շենքը, որն ունի նաև երեք խաչ՝ *Տրոյան* է: Քարտեզագիրն ուրիշ որևէ քաղաքի խաչ կրելու արժանի չի համարել:

Աֆրիկան կրում է թե՛ Աֆրիկա, և՛ թե Լիբիա անվանումները: Քարտեզի կենտրոնի մոտ, Նեղոսի գետաբերանին ու Միջերկրականի ափին կարմիր պարիսպով առանձնացած անկյունը *Ալեքսանդրիան* է, որի ներքևում պատկերված է աշխարհի հրաշալիքներից մեկը՝ Փարոսը (*Faro*): Քարտեզում նշված են աֆրիկյան մի քանի այլ շրջաններ, որոնցից են *Եթովպիան*, *Եգիպտոսը*, *Գեթուլիան* և երկու *Մավրիտանիաները*: Եվրոպայում *Իսպանիան* կարմիր գծով առանձնացված է մյուսներից, ինչն, ըստ երևույթին, հետագայում է արվել: Իսպանիայում եղած մանրապատկերները մակագրված են *Աստուրիա*, *Սուրբ. Հակոբ* և *Տոլեդո*: *Հռոմի* մոտ են պատկերված *Պողոս* և *Պետրոս* Առաքյալների մանրապատկերները, իսկ Սև ծովը թափվող *Դանուբի* գետաբերանի մոտ է կանաչ դարպասներով *Կոստանդնուպոլիսը*:

Հյուսիսային Ասիայում, *Տրոյայի* ու *Սև ծովի* արևելքում է գտնվում մեծ տառերով գրված *Հայաստանը*, որը տեղադրված է *Աղվանքի* ու *Փռյուգիայի*, ինչպես նաև *Աքուիլոնիս* [°], *Կովկասյան* և *Տավրոսյան լեռների* միջև: Վերջին երկու լեռնաշղթաները սկիզբ են առնում արևելյան օվկիանոսից և հասնում են համարյա մինչև Եգեյան ծովը*: Աղվանքն* առկա է Կասպից ծովի արևմուտքում և կանաչ լեռնաշղթան կոչված է *Աքուիլոնիս*:[53] *Եփրատի* և *Տիգրիսի* ակունքներն այս լեռներում են, որտեղից նրանք հոսում են հարավ, հասնելով հարավային օվկիանոսը և չորրորդ ցամաքամասը անջատող ծովը: Քարտեզում Կասպից ծովը ներկայացված է որպես հյուսիս-արևելյան օվկիանոսին միացած մի ծովածոց, որի մեջ են հոսում երկու գետեր՝ Կուրը և Ամու դարյան (*Cirus & Oxus*): Ասիայի մյուս շրջաններից են *Հիրկանիան*, *Կապադովկիան*, *Իսավրիան*, *Միջագետքը*, *Փյունիկիան*, *Պարթևաստանը*, *Ասորեստանը*, *Հնդկաստանը*, *Բաբելոնը*, *Հուդան*, *Պաղեստինը* և ուրիշներ: Կարմիր գույնով ցույց տրված *Կարմիր ծովն* ունի երկու ճյուղավորում և միացած է հարավային ծովին: Իրականում այս երկուսը պետք է լինեն Արաբական և Կարմիր ծովերը: Քարտեզի հյուսիսային Ասիայի մասում են առաքյալներ *Թովմայի*, *Հովհաննեսի* և *Բարդուղիմեոսի* պատկերները, իսկ հարավում՝ *Հակոբինը* և *Մատթեոսինը*: Այստեղ պակասում է 12-րդ առաքյալը՝ Թադեոսը, մինչդեռ Մատթեոսի անունը կրկնված է Արևելյան Եվրոպայի տարածքում:

Անունների համար տե՛ս Կոնրադ Միլլերի նույն քարտեզի վերագծագրումը, որը ցուցադրված է Պատ. 31a-ում:[54] Քարտեզի տեղանունների մեկ մասը համարակալված է հետևյալ հերթականությամբ.

[53] Ըստ Սիլվիա Վոլկի, սա հավանաբար կովկասյան էլբրուս գագաթն է: Տես Wikipedia կայք “Trivial page of Myths”:

[54] Miller, Dr. Konrad – *Die ∂ltesten Weltkarte* – Stuttgart, 1898, Volumes I through VI. Հատոր. 1, էջ 35:

Մայրցամաքներ
1. Ասիա
2. Եվրոպա
3. Լիբիա
4. Աֆրիկա
5. Դրախտ

Ծովեր
6. Միջերկրական
7. Սև
8. Օվկիանոս
9. Հարավային կամ Արաբական
10. Կարմիր
11. Ադրիատիկ
12. Կասպից

Լեռներ
13. Կովկասյան և Տավրոսյան լեռներ
14. Ատլաս
15. Ռիփեյան լեռներ

Գետեր
16. Տանայիս
17. Նեղոս/Գեհոն
18. Տիգրիս
19. Եփրատ
20. Կուր
21. Ամու դարյա
22. Ինդոս
23. Հորդանան
24. Դանուբ
25. Ռոն

Երկրներ/Քաղաքներ և այլն
26. Հայաստան
27. Աղվանք
28. Փռյուգիա
29. Կապադովկիա
30. Հիրկանիա
31. Ասորեստան
32. Բաբելոն
33. Հուդա և Պաղեստին
34. Քաղդեա
35. Պարթևաստան
36. Միջագետք
37. Անտիոք
38. Կոստանդնուպոլիս
39. Հռոմ
40. Աստուրիա
41. Տոլեդո
42. Գալիցիա
43. Գաղղիա
44. Վերին և Ներքին Գերմանիա
45. Հունաստան և Մակեդոնիա
46. Նումիդիա և Մավրիտանիա
47. Վերին Եգիպտոս
48. Տրիպոլի
49. Ալեքսանդրիայի Փարոսը
50. Ալեքսանդրիա
51. Արևը

Կղզիներ
52. Բրիտանիա
53. Շոտլանդիա
54. Իսլանդիա
55. Օրկնեյան կղզիներ
56. Կադիս քաղաքը
57. Տապրոբանա (Ցեյլոն)
58. Կրետե
59. Կիպրոս
60. Մայորկա

Պատ. 32/32a – Սա Բեատուսի մեկ ուրիշ, այս ամգամ շրջանաձև գծված քարտեզ է, վերցված է Փարիզի Ազգային գրադարանից: Այս քարտեզը ներկայացված է յուրահատուկ ձևով և ոճը տարբերվում է մյուս ընդօրինակություններից: Քարտեզը պատկանում է 13-րդ դարի վերջերին և, հավանաբար, Բեատուսի քարտեզի վերջին ընդօրինակումներից է:

Քարտեզն ունի սովորական արևելյան ուղղորդում, որտեղ քաղաքները պատկերված են շինությունների ու եկեղեցիների մանրապատկերներով, իսկ լեռները՝ տարբեր գույների քարակույտերով: Չորրորդ, հարավային ցամաքամասն այստեղ պատկերված է շատ նեղ և չունի որևէ մակագրություն: Երկրային Դրախտը քարտեզի արևելքումն է, ուր կանգնած Ադամն ու Եվան աշխատում են տերևներով ծածկել իրենց մերկությունը: Շրջապատի օվկիանոսը լի է ձկներով, կղզիներով, նավակներով ու հրեշներով: Չնայած նրան, որ քարտեզում առկա են բազմաթիվ երկրներ ու քաղաքներ, բայց լավագույն դեպքում նրանց տեղադրությունը մոտավոր է:

Այստեղ «Հայաստան» (*Armenia*) մակագրությունը ներկա է արևելքում, երկու գետերի միջև եղած ժայռակույտի, *Հայկական*, այսինքն Տավրոսյան լեռների մոտ: Գետերն անանուն են, բայց կարելի է ենթադրել, որ դրանք Եփրատն ու Տիգրիսն են, որոնցից գոնե մեկը սկիզբ է առնում այս լեռներից: Հայաստանի ուղղակի ներքևումն է *Կապադովկիան*, որը գտնվում է Հայաստանի *Տավրոսյան* ու *Կովկասյան* լեռների միջև: Կովկասյան այլ երկրներ քարտեզում նշված չեն:

Ուղղահայաց ջրային տարածքը, որը միացնում է վերի և ներքևի օվկիանոսները՝ Միջերկրականն է, որի երկայնքը չափազանցված է, իսկ դրվածքը նման է Պատ. 30-ի քարտեզին: Սրանից ձախ դուրս եկող հորիզոնական ջրաշերտը բաղկացած է Դոն գետից, Սև և Եգեյան ծովերից, որոնք շարված են մեկ ուղիղ գծի վրա: Եվրոպական ափին առկա երկու գետաբերանները աջ է տեղադրված *Կոստանդնուպոլիսը*, իր աջում ունենալով *Թեսալոնիկան*: Միջերկրականի աջից դուրս եկող առաջին գետը Ասիան Աֆրիկայից բաժանող, Նեղոս գետն է, որի ակունքը Հարավային Աֆրիկայում ինչ-որ լիճ է: Այս լճի վերևում մակագրված է «Հնդկաստան» (*India*): Այս անունը միջնադարյան շրջանում տրվում էր հեռավոր, հատկապես արևելքում գտնվող երկրներին, այս դեպքում հավանաբար Եթովպիային:

Դրախտի աջում գտնվող լեռներն են *Լիբանանի լեռները*, *Սիրիայի լեռները*, *Սինայի լեռը* և *Կարմել լեռը*: Երուսաղեմը *(Ihrlm)* տեղադրված է Ադամի ոտքի տակ, որից ներքև են գտնվում *Ասկալոնն* ու *Հուդան*:

Եվրոպայի տարածքը լցված է տեղանուններով ու մանրապատկերներով: Սրանց տեղ տալու նպատակով Եվրոպայի սահմանները լայնացված են դեպի վեր: Քարտեզի ներքևում, ձախ կողմի վրա առկա չորս կղզիներից առաջինն *Իռլանդիան* է, իսկ կողքինը՝ *Անգլիան*: *Շոտլանդիան* անհասկանալի պատճառով քշված է արևելք և գտնվում է *Հայաստանին* կից օվկիանոսի մեջ որպես մի առանձին կղզի:

Պատկեր 32a-ն նույն քարտեզի Կոնրադ Միլլերի վերագծագրումն է, ուր գրվածքներն ավելի պարզ են և ընթեռնելի:[55]

[55] Անդ, էջ 39:


ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ
(Տասից մինչև տասնչորսերորդ դարեր)

Իսլամական քարտեզագրությունն իրականում ժառանգորդն էր հին հունական դասական քարտեզագրության, որի տարբեր տեսությունները որդեգրեցին արաբ աշխարհագրագետները: Դրանց թվում են երկրի գնդաձևության, եղանակային գոտիների բաժանելու, շրջապատող օվկիանոսի և նույնիսկ բնակելի աշխարհի տարածքի վերաբերյալ տեսությունները: Իսլամական քարտեզագրության սկիզբը իններորդ դարն է: Այն ծաղկուն շրջան ապրեց շուրջ 350 տարի, որի ընթացքում իսլամական աշխարհագրագետները շատ ավելի առաջատար էին, քան նրանց արևմտյան գործընկերները: Չնայած նրան, որ արաբների ու պարսիկների քարտեզագրական ներդրումները 13-րդ դարից հետո էլ շարունակվեցին, բայց դրանք աստիճանաբար պակասում ու դառնում են հազվադեպ: Այսպես կոչված «արաբ» աշխարհագրագետներից շատերն իրականում պարսիկ էին կամ պարսկական ծագում ունեին: Սրանց մեջ կարևորներից են Իսհաղ իբն-Մուհամմեդ ալ-Իսթախրին (մահ. 957 թ.), Աբու-Ռեյհան Բիրունին (972-1048 թթ.), Զաքարիա իբն-Մուհամմեդ Ղազվինին (1203-1283 թթ.) և Համդ-Ուլլա ալ-Մոսթոուֆին (1281-1339 թթ.): Արաբ աշխարհագրագետները, մասնավորապես իբն-Բաթութան (1304-1368/9 թթ.), ճամփորդում էին դեպի աշխարհի չորս կողմերը, ներառյալ Կասպից ծովի հյուսիսը (1330-1335 թթ.), Ռուսաստան, Կենտրոնական Ասիա, Չինաստան, Հնդկաստան (1345-1349 թթ.) և այլ հեռավոր երկրներ, ընդլայնում էին այդ ժամանակներում ճանաչված աշխարհի սահմանները, որոնց մասին մանրակրկիտ գրանցումներ էին կատարում իրենց աշխարհագրական աշխատությունների մեջ:

Իսլամական քարտեզագրության առաջին շրջանից որևէ քարտեզ մեզ չի հասել, բայց ըստ տարբեր ձեռագրերի, ամենակարևոր քարտեզը իններորդ դարում պատրաստված ալ- Մայմունի խալիֆայի (իշխել է 813-833 թթ) քարտեզն էր, որն ըստ երևույթին հետևել է պարսկական «քիշվար» համակարգին, որտեղ աշխարհը բաժանված է 7 քիշվարների (երկրների): Սրանց վեց բոլորակները շարված են մեջտեղում՝ տեղադրված յոթերորդ բոլորակի շուրջը:[56] Այս ընթացքում արաբական աշխարհն արդեն ծանոթացել էր Պտղոմեոսի աշխատություններին և քանի որ այս համակարգը Պտղոմեոսյան աշխարհի պատկերին չէր համապատասխանում, հետևաբար աստիճանաբար տեղի տվեց Բալխի դպրոցին, որը շատ բաներով համապատասխանում էր Պտղոմեոսի *Աշխարհագրությանը*:

Հաջորդ գծագրի մեջ եղանակային բոլորակների՝ քիշվարների միացման շրջանները նշված են Ա-ից մինչև Ի-տառերով, որոնց անվանումները տրված են ստորև: Գծագիրը ուղղորդված է հարավը վերևով:



Ա – Ալ-Սաղլաբիյյա
Բ – Սիրիա
Գ – Նասիբներ
Դ – Ատրպատական (Ադրբեջան)
Ե – Բալխ գետը
Զ – Դայբուլի երկիրը
Է – Բահրեյնի ծոց [Պարսից ծոց]
Ը – Եթովպական ծով
Թ– Բյուզանդական ծոց [Միջերկրական]
Ժ – Գոգ և Մագոգ
Ի – Գոգ և Մագոգ
Լ – Քաշմիր

Պարսկական «քիշվար» աշխարհացույցն իր բաժանումներով:
Ահմեդ Զեքի Վալիդի Թոգանի *Բիրունիի աշխարհը* հոդվածից, Դելիհի, 1937, էջ 61:

Իսլամական քարտեզագրության մեջ ամենահայտնին այսպես կոչված «Բալխի» դպրոցն էր, որն ուներ մի քանի յուրահատկություններ՝ առկա համարյա բոլոր քարտեզներում: Դրանք ընդհանրապես ուղղորդված են վերը հարավով և շատերը բնակելի աշխարհը բաժանում են յոթ եղանակային գոտիների: Սրանց մեջ կարևոր ծովերից է

[56] Harley, J. B. & Woodward, David – *The History of Cartography* – Vol.1, Vol.2 Books 1 & 2, Chicago, 1987, 1992, 1994. Հատոր 2, էջ 90-107:

Միջերկրականը (Հռոմի ծովը), որի արևելյան վերջավորությունը պտտվում է հյուսիս ու միանում Սև ծովին: Հարավում առկա է մի մեծ ծով/օվկիանոս, որը Հնդկական օվկիանոսն է, միացած Պարսկական ու Արաբական ծոցերին իրենց կղզիներով: Հյուսիսում Կասպից ծովը (Բահր-ի Խազար) ցույց է տրվում որպես մի լիճ, որը երբեմն պարունակում է մի քանի կղզի, ինչպես նաև Արալյան լիճը (Բահր-ի Խորեզմ) և Ամու դարյա գետը: Սա արդեն հին քարտեզագրության սրբագրված տեսակն է, ուր Կասպից ծովը ցույց էր տրվում որպես հյուսիսային օվկիանոսին միացած մի ծովածոց: Տիգրիսը (Դեջլե) և Եփրատը (Ֆորաթ) պատկերվում են դեպի Պարսից ծոցը հոսող գետեր, իսկ Նեղոսի հինգ ակունքները Աֆրիկայի Լուսնի լեռներն են, որտեղից նա հոսում ու հասնում է Միջերկրական ծով: Համատարած օվկիանոսն ու Ղաֆի լեռները շրջապատում են Երկրի բոլորակը: Աստվածաշնչական Գոգ և Մագոգ ցեղախմբերը ցուցադրվում են առանձնացած Ալեքսանդր Մակեդոնացու կառուցած պարիսպով, որն այս վայրագ ցեղերին հեռու էր պահում «առաջատար» մարդկությունից (Տե՛ս *Հին Կտակարան*, Եզեկիել 38 և 39):

Իսլամական ձեռագրերից շատերը կարող են պարունակել աշխարհացույց քարտեզներ, բայց ինչ վերաբերում է երկրների ու տարածաշրջանների քարտեզներին, ապա սրանք հիմնականում իսլամական երկրների ու տարածաշրջանների քարտեզներ են: 10-րդ դարի պարսիկ ճանապարհորդ ու աշխարհագրագետ ալ-Մուղադդասին (945 – մոտ 1000 թթ.) իր 985 թվականին շարադրած աշխարհագրական երկում գրում է հետևյալը.

> *Այստեղ մենք գրում ենք իսլամական աշխարհի մասին և մենք մեզ չենք անհանգստացնում անհավատների երկրներով և օգուտ չենք տեսնում դրանց մասին խոսելուց: Ի հարկե մենք կխոսենք նրա՛նց մասին, որոնց մեջ ապրում են նաև մուսուլմաններ:*[57]

Տարածաշրջանների ու երկրների քարտեզները հիմնականում կենտրոնացված են Պարսկաստանի, Միջին Արևելքի և Կենտրոնական Ասիայի վրա: Ընդհանրապես Ֆարս, Դեյլամ, Քիրման, Իրաք, Ջազիրա (Միջագետք), Սիստան, Սինդ, Հինդ, Թաբարիստան, Խորեզմ, Միսր և Շամ (Սիրիա) շրջաններից ամեն մեկն ունի իր քարտեզը, որոնց նախորդում է մի աշխարհացույց քարտեզ: Աշխարհացույց քարտեզներում իսլամական աշխարհից դուրս ընդամենը մի քանի երկիր են արժանանում հիշատակվելու պատվին, որոնցից են Անդալուզիան, Հռոմը (Բյուզանդիան), Բուլղարիան, Ռուսաստանը, Աղվանքը, Հայաստանը, Սակալիբան[58] (Սակերը), Հնդկաստանը և Չինաստանը: Ոչ իսլամական երկրների համար առանձին քարտեզ չէր պատրաստվում, բացի Աղվանքից ու Հայաստանից, որոնք Ատրպատականի (Պարսկաստանի հյուսիս-արևմտյան նահանգի՝ տեղակայված Արաքսի հարավում) հետ միասին պատկերվում են մեկ առանձին քարտեզի մեջ, որն կրում է «Հայաստանը, Ատրպատականն ու Աղվանքը» տիտղոսը: Ինչպես արդեն նշվեց, արաբական քարտեզներն ընդհանրապես ուղղորդված են վերը հարավով, բացառությամբ այս մեկ քարտեզի, որը միշտ ուղղորդված է վերը հյուսիսով: Նաև պետք է նշել այն հանգամանքը, որ այս շրջանի քարտեզներին ուղեկցող տեքստերում հաճախ նշվում է, որ

> *«Այս երեք երկրներն իրար շատ մոտ են տեղադրված ու հաճախ նրանց սահմանները պարզել հնարավոր չէ»:*

Իսլամական քարտեզների մեջ Կովկասյան լեռների հարավում գտվող երկրներից Կողքիսի և Վիրքի անունները չեն հիշատակվում, փոխարենը Ադրբեջանը կամ Ատրպատականը մշտապես ներկա է որպես Պարսկաստանի հյուսիս-արևմտյան նահանգը: Աղվանքը նույնպես ներկա է իր պարսկերեն «Արրան» անվանումով: Այս երկիրը հիշատակվում է բոլոր իսլամական քարտեզներում, քանի որ տեղի բնակչությունն արդեն կրոնափոխ էր եղել և ընդունել իսլամը, հետևաբար այս երկիրն արդեն համարվում էր իսլամական: Այս երկրների տեղադրումը հետևյալն էր. Աղվանքը՝ տարածված Կուր գետի երկու ափերին, Թիֆլիսից մինչև Կասպից ծով, Ատրպատականը՝ Արաքսի հարավային ափին, Ուրմիա լճից արևելք, իսկ Հայաստանը՝ Արաքսից հարավ և Ուրմիա լճից արևմուտք:

Իսլամական երկրների փոքրածավալ քարտեզները հաճախ ավելի նմանում են գեղարվեստական աշխատանքի, քան քարտեզի: Սրանցից որոշները նման են շքեղ, գունագեղ և ոճավոր ճանապարհների քարտեզների, որոնք ցուցադրում են ճանապարհներն ու նրանց վրա եղած քաղաքները՝ տեղադրված հավասար հեռավորությունների վրա, առանց նկատի առնելու նրանց մեջ եղած իրական հեռավորությունները (Տես պատ. 38 և 41 և դրանց համեմատումը Լոնդոնի մետրոյի քարտեզի Պատ. 42-ի հետ): Շատերն էլ պարզապես արվեստի ճաշակավոր և գեղեցիկ գործեր են:

Իսլամական աշխարհագրության գրքերում քարտեզների թիվը 17-ից մինչև 21 է: Սրանց մեջ բացառություն է ալ-Իդրիսիի «Ռոժեի գրքի» քարտեզները, ուր աշխարհացույց քարտեզից բացի կան 70 երկրների ու շրջանների քարտեզներ: Այս 17-21 աշխարհամասերի քարտեզները ինչ որ ձևով առկա են համարյա բոլոր իսլամական ատլասներում, այդ թվում իբն-Հաուքալի, ալ-Իսթախրիի, ալ-Մուղադդասիի և ուրիշների գործերում: Քարտեզներից որոշները սխեմայական են և պարունակում են գծեր ու շրջաններ (Պատ. 38, 39, 41 և 43), իսկ ուրիշներն ավելի զարդարուն են ու գունագեղ, լի փրփրացող ծովերով ու այլ պատկերներով լի (տե՛ս Պատ. 47 և 48):

Ջննելով ու քննարկելով իբն-Հաուքալի, ալ-Իսթախրիի ու ալ-Մուղադդասիի ձեռագրերում առկա Ատրպատականի, Հայաստանի ու Աղվանքի քարտեզները, կարելի է հանգել այն եզրակացության, որ սրանք բոլորը պատկանում են միևնույն դպրոցին և ունեն նույնանման աղբյուրներ, քանի որ նրանց մեջ կան շատ նմանություններ:

Հաջորդող էջերում վերատպված ու քննարկված են իսլամական քարտեզագրության կարևոր քարտեզներից մի ընտրանի, հատկապես Հայաստանին վերաբերող շրջանների քարտեզների կարևոր մասը:

---

[57] Al-Muqaddasi, *Ahsan al Taghāsim fi Ma'rifat al-Aqālim*, translated from the Arabic by Prof. Basil Collins, Reading, 2001, p.8, PS p.9.

[58] Այս անվանումը արաբները տալիս էին սլավոններին, խազարներին ու արևելյան ու կենտրոնական Եվրոպայում բնակվող ցեղերին , որոնք բնակվում էին Բյուզանդական կայսրությունից հյուսիս: Տե՛ս *Encyclopaedia of Islam*, New Edition – Leiden/London.Հատոր 8, 1995, էջ 872-881:

1 – ԻԲՆ-ՀԱՈՒՔԱԼ

Իսլամական քարտեզագրության մեջ առաջատար դեր ուներ Աբու-Զաիդ Բալխին, ում անունով էլ անվանվում է իսլամական քարտեզագրության առաջին դպրոցը: Աբու-Զաիդ իբն-Սահլ ալ-Բալխին (մահ. 934 թ.)՝ գիտնական ու մաթեմատիկոս էր: Նա ապրում էր Բաղդադում, սակայն իր կյանքի վերջին շրջանում տեղափոխվեց Միջին Ասիայի Բալխ քաղաքը (այժմ՝ Աֆղանստանում), ուր սկսեց աշխատել իր աշխարհագրական երկի վրա: Նրա ձեռագիրը մի տեքստ էր, որին կից կային քարտեզներ ու նրանց բացատրությունները, որոնցից սակայն, ոչ մի օրինակ չի պահպանվել: Մեզ հասած իսլամական վաղագույն աշխարհագրական աշխատանքը Աբուլղասիմ Մուհամմեդ Իբն-Հաուքալի (ճամփորդել է 943-973 թթ.) *Սուրաթ ուլ-Արդ*, կամ «Երկրի պատկերը» աշխատությունն է, որը պարունակում է շուրջ 21 քարտեզ ու դրանց վերաբերյալ բացատրություններ:

Պատ. 33 և 34 – Այս պատկերները «Հայաստանի, Աղվանքի ու Ատրպատականի քարտեզը» և դրան կից բացատրական տեքստն են, վերցված Աբուլղասիմ Մուհամմեդ Իբն-Հաուքալի *Սուրաթ ու-Արդ*, «Երկրի պատկեր» աշխատության Փարիզում պահպանված 1145 թվականի օրինակից: Այս աշխատությունը պարունակում է նաև այլ տարածաշրջանների, ինչպես նաև աշխարհացույց քարտեզներ: Քարտեզում գետերը ներկված են կապույտ, իսկ լեռները՝ բաց սրճագույն:

Պատ. 33-ի քարտեզը գրքի միակ հյուսիսով ուղղորդված քարտեզն է կամ, ավելի ճշգրիտ ասած՝ հյուսիս-արևելքով ուղղորդված: Կապույտ ժապավենները *Արաքս* և *Կուր* գետերն են, որոնք հոսում են դեպի Կասպից ծով: Սրանց միջև մակագրված է *Արանիյա* (Աղվանք), որի քաղաքները տեղադրված են Կուրի ափերին: Արաքսի ներքևում երկարաձգված տառերով մակագրված է *Ատրպատական*, իսկ դրանից ներքև՝ արևմուտքում, ներքևում գտնվող երկու գետերից աջի վերջավորության և ձվածև *Կապուտան լճի* (Ուրմիո լճի) միջև գրված է *Արմինիյե* (Հայաստան): Տեքստի մեջ ցուցակագրված երկրների ու նրանց պատկանող վայրերի ու քաղաքներ անունները հետևյալ կերպ են նշված.

- Աղվանք – *Բաբ ու Աբուաբ* (Դերբենդ), *Շիրվան*, *Շամախի*, *Շաքի*, *Թիֆլիս*, *Ջանզա* (Գանձակ – Գյանջա), *Բարդահե* (Պարտավ, Բարդա):
- Ատրպատական – *Մարանդ*, *Խոնջ*, *Թավրիզ*, *Արդաբիլ*, *Ջանջան*, *Մարաղա*, *Դաջերման*, *Ուշնե* (այսօրվա Օշնավիյեն), *Խոյ*, *Ուրմիո* կամ *Կապուտան լիճ:* Այս քաղաքներն այսօր բոլորը գտնվում են Պարսկաստանում:
- Հայաստան – *Խլաթ*, *Դվին*, *Վարզան* (Վարզական), *Կալիկլա* (Կարին կամ Էրզրում), *Արզան*, *Բիթլիս*, *Միաֆարկին*[59] (սրճագույնով ներկված լեռների մյուս կողմում), *Խլաթի լիճ* (Վանա լիճ) *և Արարատ լեռ:*

Քարտեզի ներքևում եղած երկու գետերը Տիգրիսի վտակներից *Մեծ* և *Փոքր Զաբ* գետերն են, իսկ Տիգրիսը մնացել է քարտեզի տարածքից դուրս: Պատ. 34-ն այն էջն է, ուր տրված են դրան կից քարտեզի բացատրությունները: Էջի ներքևում մեծ կարմիր տառերով գրված է *Այս է Հայաստանի, Ատրպատականի ու Աղվանքի քարտեզը:*

Պատ. 35 – Սա Իբն-Հաուքալի հեղինակած մեկ ուրիշ «Հայաստանի, Ատրպատականի և Աղվանքի քարտեզ» է՝ վերցրած նրա *Երկրի պատկերը* աշխատության մեկ այլ օրինակից, որը պահպանվում է Ստամբուլի Թոփկափու թանգարանի գրադարանում: Այս օրինակը պատրաստված է 1086 թվականին:

Սա գրքի 21 քարտեզներից մեկն է, որը նշված է ուղղորդված հյուսիս-արևելքը դեպի վեր, բայց իրականության մեջ ուղղորդված է հյուսի՛սը դեպի վեր: Այստեղ պատկերված է Պարսկաստանի հյուսիս-արևմտյան մասը, որը տեղակայվում է Կովկասյան լեռների հարավից մինչև Կասպից ծովի ու Տավրոսյան լեռնաշղթայի միջև ընկած տարածքում: Այստեղ լճերը ներկված են կանաչ, կարևոր սարերը՝ կարմիր, լեռնաշղթաները՝ մուգ կապույտ, գետերը՝ բաց կապույտ և հիմնական ճանապարհները՝ նարնջագույն: Մակագրությունների թանաքի գույներն էլ միմյանցից տարբերվում են: Քաղաքների անունները գրված են սևով, իսկ շրջաններինն ու երկրներինը՝ կանաչ թանաքով: Աջ կողմում գտնվող կանաչ մեծ տարածքը Կասպից ծովի մեկ հատվածն է:

Աղվանքի տերիտորիան ցույց է տրված Արաքսի հյուսիսում, որը հորիզոնական լայն կապույտ գիծն է, շրջանակված նարնջագույն սահմաններով: Մյուս գետը, որը գալիս է հյուսիս-արևմուտքից՝ *Կուրն* է: Երկու գետերն էլ թափվում են Կասպից ծով, բայց նախքան իրար հասնելը միացած են մի այլ գետով, որն այստեղ ներկված չէ: Ըստ ցուցադրվածի, Արաքսը հոսում է թե Կուրի և թե Կասպից ծովի մեջ: Սա մի ընդհանուր սխալ է, որը հաճախ կրկնվում է իբն-Հաուքալի ու ալ-Իսթախրիի քարտեզներում (տե՛ս Պատ. 36-40): *Ատրպատականը*, ինչպես միշտ, տեղադրված է *Արաքսից* հարավ, իսկ *Հայաստանը*՝ Ատրպատականից հյուսիս-արևմուտք և արևմուտք: Քարտեզում նշված են տարածաշրջանի կարևոր քաղաքները՝ իրար միացած միջքաղաքային առևտրական ճանապարհներով, որոնք գծված են ուղիղ նարնջագույն գծերով: Աղվանքի *Բարդահե* (Պարտավ, Բարդա) և Ատրպատականի *Արդաբիլ* քաղաքներն այս միջքաղաքային ճանապարհների կարևոր հանգույցներից են:

Քարտեզի կենտրոնում՝ Արաքսի հարավում, կանաչ գույնով գլխիվայր գրված է *Ատրպատական*: Դրա ձախում ուղղահայաց կանաչ մակագրությունը նշում է *Արմինիյե*, Հայաստան, իսկ աջում նշված է *Դեյլամ* (այսօրվա Պարսկաստանի Գիլան նահանգը): Արաքսի հյուսիսում, կրկին անգամ գլխիվայր նշված է Աղվանքը, *ալ-Րանը*: Հյուսիս-արևմուտք գնացող ճանապարհի վրա Աղվանքի կարևոր քաղաքներից նշված են *Պարտավը*, *Ջանզան*, *Շամխորը*, *Խունանը*, *Ղալ՛ան*

[59] Սիլվան քաղաքի մոտ եղած Հայաստանի Տիգրանակերտ մայրաքաղաքի անվանումը, որը կառուցել էր Տիգրան Երկրորդը (Մեծ) մ.թ.ա. 70 թվականներին: Տես. Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Երևան, 1991, հատոր 3, էջ 678 և 818, նաև հատոր 5, Երևան, 2001, էջ 92:

(Գարդաբանի կամ Կարդաման) և *Թիֆլիսը*: Հյուսիս-արևելք գնացող ճանապարհի վրա են *Բարդաջը*, *Շամախին*, *Շիրվանն* ու *Շաբարանը*: Քարտեզի վերի աջ եզրում գրված է *ալ-Բաբ*, որը պետք է լինի Բաբ-ուլ-Աբուաբ, այսինքն Դերբենդը:

Ուղղահայաց *Հայաստան* մակագրությունը գրված է հարավ-արևմուտք գնացող ճանապարհի վրա: Այս ճանապարհն սկսում է Ատրպատականի *Արդաբիլ* քաղաքից, անցնում է *Սարաբ*, *Մարաղա*, *Դախերղան*, *Թավրիզ*, *Սալմաստ* և *Խոյ* քաղաքներով, ապա մուտք գործելով Հայաստանի տարածքն՝ անցնում է *Բերկրիի*, *Արճեշի*, *Խլաթի* ու *Բիթլիսի* միջով: Հայաստանի տարածքում եղած լիճը կոչվում է *Խլաթի լիճ*, որը Վանա լիճն է, իսկ լճի հարավում եղած շրջանը կոչված է *Վանի և Ոստանի շրջան*: Լճի հյուսիսում Արարատի զույգ գագաթները մակագրված են իրենց արաբական անվանումով, *Ջաբալ ալ-Հարիթ ուա Հուայրիթ*, որոնց հյուսիսային փեշերին է տեղադրված *Դվինը*, իսկ արևմուտքումն է *Նաշուհի*, Նախիջևանը: Քարտեզի արևմտյան եզրին ներկա են *Արզանը* և *Միաֆարկինը*: Արդաբիլից արևմուտք գնացող մեկ ուրիշ ճանապարհ անցնում է Ատրպատականի *Մեյմանդ*, *Սհար*, *Վարզական* քաղաքներով, նախքան Հայաստանում *Դվին* քաղաքին հասնելը:

Արաքսի հարավում, Ատրպատականի տարածքում, շրջանի անունը կրկին գլխիվայր է մակագրված, իսկ Արդաբիլ քաղաքի մոտ գտվող կիսալուսնի նման պատկերված *Սավալան* լեռան վերը դրա անունը գրված է շեղակի: *Արդաբիլ* քաղաքը գտնվում է չորս առևտրական ճանապարհների խաչմերուկում: Սավալանի հարավումն է Ուրմիո լիճը, որին տրված է հայկական *Կապուտան* անվանումը, իսկ *Ուրմիա* քաղաքը տեղադրված է լճի հարավում: Ատրպատականի տարածքում մեկ ուրիշ ճանապարհ՝ սկսելով Արդաբիլից, գնում է դեպի հարավ-արևելք, անցնելով *Միանե*, *Խոնջ* և *Զանջան* քաղաքներով: Ճանապարհից դուրս՝ հարավում առկա է մեկ այլ քաղաք, որը կոչված է *Ներիզ*, բայց որը միայն կարող է լինել Թավրիզը, ինչ անունով մեկ ուրիշ քաղաք արդեն առկա է դեպի Հայաստան տանող ճանապարհի վրա: Քարտեզի ներքևում դեպի հարավ հոսող երկու գետերը Տիգրիսի վտակներից *Մեծ և Փոքր Զաբ* գետերն են: Այս գետերը հայտնվում են միայն իբն-Հաուքալի քարտեզներում իսկ մյուս իսլամական քարտեզներում սրանք ընդհանրապես չեն նշվում:

Ատրպատականից արևելք՝ Կասպից ծովի հարավ-արևմուտքում, եռանկյունի գրված մակագրությունը *Ջաբալ Դեյլամ*-ն է, որը նշում է Պարսկաստանի Գիլան նահանգի հարավի էլբուրզյան լեռները: Դրանց վերը, Կասպից ծովի մեջ մտած թերակղզին անվանված է *Մողան*, որը Արաքսի հարավում գտնվող հարթավայրի անունն է:

Հաջորդ վեց քարտզները տարբեր հեղինակների են պատկանում, բայց բոլորն էլ վերաբերում են նույն աշխարհագրական տարածաշրջանին: Սրանք միմյանց հետ ունեն շատ ընդհանուր հատկություններ, բայց ստեղծված են ամբողջովին տարբեր ոճերով:

2 – ԱԼ-ԻՍԹԱԽՐԻ

Իբն-Հաուքալն իր ժամանակակից Աբու Իսհաղ Իբրահիմ բին Մուհամմեդ ալ-Ֆարսի ալ-Իսթախրիի (մահ. 957 թ.) հետ հաճախ քննարկում էին իրենց աշխատությունները և Իբն-Հաուքալը երբեմն քննադատորեն էր արտահայտվում ալ-Իսթախրիի մասին ասելով, որ նա բավարար ուշադրություն չի դարձնում քարտեզի մանրամասնություններին: Ալ-Իսթախրին հիմնականում ճանաչված է իր *Քիթաբ ուլ Մասալիք ուա Մամալիք*, «Գիրք ճանապարհների և երկրների» աշխատությունով, որը պարունակում է 19-ից 21 քարտեզ (ներառյալ մեկ աշխարհացույց քարտեզ) և դրանց վերաբերող տեքստեր, ուր տրված են քարտեզում պատկերված տարածքի աշխարհագրության ու ժողովրդի վերաբերյալ տեղեկություններ: Ինչպես Իբն-Հաուքալի գրքում, այստեղ էլ առկա է «Հայաստանի, Ատրպատականի ու Աղվանքի քարտեզը» վերնագրով մեկ գլուխ, ուր բացատրված ու նշված են այս երեք երկրներն ու նրանց քաղաքները, գետերը, լճերն ու լեռները: Ալ-Իսթախրիի ձեռագրից մեզ են հասել 34 օրինակ, որոնց մեծ մասն ունեն քարտեզներ, բայց դրանցից ամենահինը 1173 թվականին է պատկանում:[60]

Պատ. 36 – Ալ-Իսթախրիի այս աշխարհացույց քարտեզը վերցված է նրա *Քիթաբ ուլ Մասալիք ուա Մամալիք*, «Գիրք ճանապարհների և երկրների» աշխատությունից, պատրաստված է իսլամական Բալխի քարտեզագրական դպրոցի հիմունքներին համապատասխան: Քարտեզն ուղղորդված է վերը հարավով և, ըստ ավանդույթի, պարունակում է Միջերկրականն ու Հնդկական օվկիանոսը: Քարտեզը վերցված է արաբերեն բնօրինակի 1836 թվականի պարսկերեն թարգմանության ձեռագրից:

Ձեռագիրը պարունակում է 18 տարածաշրջանների ու իսլամական երկրների քարտեզներ, որոնց շարքում են *Իրաքը*, *Միջագետքը*, *Եգիպտոսը*, *Հյուսիսային Աֆրիկան*, *Պարսից ծոցը*, *Քիրմանը*, *Խորասանը*, *Ֆարսը*, *Սիստանը*, *Խորեզմը* (Օքսիանան), *Խազարը* (Կասպիան), ինչպես նաև Կասպից ծովի հարավ-արևմտյան մասը, որը կոչվում է *Աղվանք*, *Ատրպատական և Հայաստան*:

Քարտեզի ձախում գտնվող ջրային տարածքը միացումն է Պարսից ծոցի, Արաբական ծովի, Հնդկական և Խաղաղ օվկիանոսների: Աջում եղածը Միջերկրականն է, որն իր հյուսիս-արևելքում (ներքևում, ձախից) ջրանցքով (որը պետք է եգեյան ծովը լինի) միացած է մի շրջանաձև ծովի՝ Սև ծովին: Քանի որ այս շրջանաձև ծովի հարավ-արևմուտքում նշված է Խազարներ անունը և Կասպից ծովն էլ առանձին չի՛ նշված, ուրեմն սա կարող է միաժամանակ նաև լինել Կասպից ծովը: Դրանից ձախ գտվող կապույտ շրջանը պատկերում է Արալյան լիճը, որի մեջ են թափվում երկու լայն գետեր:

[60] Harley, J. B. & Woodward, David – *The History of Cartography* – Vol.1, Vol.2 Books 1 & 2, Chicago University Press, 1987, 1992, 1994, էջ 130:

Քարտեզի վերը, հարավում, շրթնաձև նարնջագույն պատկերը *Լուսնի լեռներն* են, ուր, ըստ ավանդության, գտնվում են Նեղոսի հինգ ակունքները: Այս գետերը գալիս միանում են ու կազմում *Նեղոսը*, որը հոսում է դեպի հյուսիս ու հասնում է Միջերկրական ծով:

Քարտեզում Կասպից (կամ էլ Սև) ծովի հարավում է գտնվում *Ատրպատականը*, իսկ դրա արևմուտքում նշված է *Հայաստանը:* Կովկասյան լեռների հարավում գտնվող և հարակից երկրներից նշված են նաև Բյուզանդիան (*Հռոմի վիլայեթը*), *Խազարը* և *Սակալիբան*, այսինքն՝ սակերը[61]: Քարտեզն ավելի շուտ դեկորատիվ մի գեղանկար է, քան իսլամական քարտեզագրության մի լուրջ նմուշ, որպիսին կարելի է տեսնել հաջորդ պատկերում:

Պատ. 37 – Այս աշխարհացույց քարտեզը ևս վերցված է ալ-Իսթախրիի *Քիթաբ ուլ Մասալիք ուա Մամալիք*, «Գիրք ճանապարհների և երկրների» աշխատության մեկ ուրիշ ընդօրինակումից, որը պատրաստված է 1325 թվականին ու պահպանվում է Թեհրանի «Իրանե բասթան» թանգարանում:

Քարտեզը, հետևելով իսլամական քարտեզագրության ավանդույթին, մեծ կարևորություն է տալիս Միջերկրական ու Հնդկական/Արաբական ծովին ու Պարսից ծոցին: Այստեղ Պարսից ծոցն ու Միջերկրականն օժտված են երեքական կղզիներով: Սև ծովը հավանաբար Միջերկրականը շրջապատի օվկիանոսին միացնող լայն գետանման գիծն է, իսկ *Արալյան* (Խորեզմ) ու *Կասպից* (Խազար) լճերը ցույց են տրված որպես շրջանաձև լճեր, որոնց մեջ է հոսում մեկական լայն գետ:

Աֆրիկայի տարածքում նշված են մի քանի երկրներ, ինչպիսին են *Միսրը* (Եգիպտոսը), *Սևամորթների երկիրը*, *Սեհհեն*, *Հաբաշը* (Եթովպիան) և *Զանգեբարը* (Զանզիբարը): *Նեղոսն* ուղղահայաց կապույտ ժապավենն է, որը *Հաբեշիստանից* հոսում է ցած և հասնում Միջերկրական ծով, *Մաղրիբի* և *Միսրի* միջև: Ասիան զբաղեցնում է քարտեզի ամենամեծ մասը. *Շամից* (արևմուտքում) մինչև *Չին* (արևելքում), *Խուզիստանից* (հարավում) մինչև *Գոգ ու Մագոգների երկիրը* (հյուսիսում): Այստեղ առկա են բազմաթիվ տեղանուններ, որոնց մեծամասնությունը պատկանում է Պարսկաստանի նահանգներին: Եվրոպայում կան ավելի քիչ թվով երկրներ: Սրանցից են *Հռոմի Վիլայեթը* (Բյուզանդիան), *Սակալիբան* (Սակերի կամ Սլավոնների երկիրը), *Վիլայեթի Ֆարանգ* (Ֆրանկների երկիրը) և *Անդալուզը*, իսկ ավելի արևելք՝ կենտրոնում, նշված է *Ռուս* անունը: Միջերկրականի երեք կղզիներն են *Կիպրոսը*, *Էքրիտը* (Կրետեն) և *Սաղալիան* (Սիցիլիան):

Ըստ քարտեզին վերաբերող տեքստի, Հայաստանի անունը պետք է որ ներկա լիներ այս քարտեզում, ընդ որում այդ անվանումը կա նույնիսկ 21 քարտեզներից մեկի տիտղոսում, որի խորագիրն է «Հայաստանի, Աղվանքի ու Ատրպատականի քարտեզը» (տե՛ս նույն ձեռագրից Պատ. 39-ը): Բայց քարտեզի էջի այն մասը, ուր որ պետք է լիներ Հայաստանի, ինչպես նաև Աղվանքի անունները գտնվում է ձեռագրի ծալվածքի մեջ, որը վնասված է ու անընթեռնելի: Սրանք պետք է լինեին քարտեզում ստորակետի կերպարանքով պատկերված Կասպից ծովի աջում ու Միջերկրականի և նրանից ներքև իջնող Սև ծովի ձախում գտնվող վնասված մասում, ուր միմիայն *Ատրպատական* ու *Խազար* մակագրությունները մասամբ ընթեռնելի են մնացել:

Պատ. 38 – Այս «Հայաստանի, Արրանի և Ատրպատականի քարտեզ»-ը ալ-Իսթախրիի շուրջ 950 թվականի *Քիթաբ ուլ Մասալիք ուա Մամալիք*, «Գիրք ճանապարհների և երկրների» աշխատության երկրամասերի վերաբերյալ քարտեզներից մեկ ուրիշ պատճենն է: Քարտեզի ձեռագիրը 1173 թվականի է և պահվում է Հոլանդիայի Լեյդեն քաղաքի համալսարանում:

Քարտեզն ուղղորդված է վերը հյուսիսով, ինչն ալ-Իսթախրիի այս ժամանակաշրջանում ստեղծված քարտեզների յուրահատկություններից է: Այստեղ քաղաքները կանաչ շրջանակներ են՝ շրջապատված կարմիր փշավոր օղակներով, սարերը մանուշակագույն զարդարուն բուրգեր են, գետերը կանաչ կրկնակի զուգահեռ գծեր են, իսկ ճանապարհները՝ կարմիր գծեր: Կասպից ծովի արևմտյան ափին, Աղվանքի տարածքում քարտեզը նշում է *Բաքուն* և *Բաբ-ուլ-Աբուաբը* (Դերբենդը), իսկ *Կուրի* հյուսիսային կողմում, հյուսիսային Աղվանքի տարածքում են նշված նաև *Շիրվանը*, *Շամախը*, *Ղաբլան* (Կապաղակը) և *Շաքին*: Նույն գետի հարավում, Աղվանքի տարածքում են շարված ձախից *Թիֆլիսը*, *Ղալ՛ան* (Գարդաբանի կամ Կարդաման), *Շամխորը*, *Ջանզան* (Գանձակը), *Պարտավը* (Բարդա) և *Բայլականը*, որոնք բլոլորն իրար են միացած առևտրական ճանապարհով: *Արազ* (Արաքս) գետը կազմում է է Աղվանքի հարավային և Ատրպատականի հյուսիսային սահմանը:

Ավելի հարավ, Ատրպատականի տարածքում, *Դեյլամի* (էլբուրս) լեռների հարավում մի այլ գետ է հոսում դեպի Կասպից ծովը, որն անվանված է *Սեֆիդ Ռուդ*, պարսկերենով «Սպիտակ գետ», որն այսօրվա Իրանի Գիլան նահանգում է գտնվում:

Արազ կամ Արաքս գետի հարավում՝ քարտեզի արևմտյան սահմաններում, ցուցադրված է *Կալիկլա* քաղաքը, որը Կարին-էրզրումի հին անվանումն է, իսկ նրանից հարավ՝ Արարատ լեռան արևմուտքումն է մեկ ավելի մեծ քաղաք, *Մանազկերտը*: Արարատներին այստեղ տրված են նրանց արաբերեն՝ *Ջաբալ Հարիթ և Ջաբալ Հուայրիթ* անվանումը և նրանցից հյուսիս-արևելք նշված է հայկական «Դվին» մայրաքաղաքը, որն արաբերենով կոչված է *Դեբիլ*: Սկսած հարավ-արևմուտքից, Հայաստանի տարածքում ճանապարհն անցնում *է Ամիդ*[62], *Միափարկին*[63], *Բիթլիս*, *Խլաթ*, *Արճեշ* և *Բերկրի* քաղաքներով և ապա շարունակում Ատրպատականի քաղաքներով (տե՛ս հաջորդ պարբերությունը): Ճանապարհի հարավային ծայրում մեծ շրջանակով նշված է հայկական *Արզան* (Արծն) քաղաքը: Քարտեզի ներքևի կիսակլոր մեծ լիճը կոչված է *Բուհայրե Արմինիյե*, այսինքն՝ Հայկական լիճ, որը Վանա լիճն է:

[61] Տե՛ս տողատակի ծանոթագրություն թիվ 58:

[62] Ամիդը՝ արաբերենով «Ամադիա», ամրոց ունեցող հայկական քաղաք էր, գտնվում է այսօրվա Թուրքիայի արևելյան տարածքում:

[63] Տե՛ս տողատակի ծանոթագրություն թիվ 59:

Քարտեզի կենտրոնում ցուցադրված *Սաբալան* լեռան հարավում գտնվող քաղաքներից է *Արդաբիլը*, որը գտնվում է ճանապարհների խաչմերուկին, նրանից ձախ *Մանեհ*-ն է (պետք է լինի Միանե), որտեղից և սկիզբ է առնում Հայաստան տանող ճանապարհը: Միանեին հաջորդում են *Սարաբը*, *էրամը*, *Աիարը և Մարանդը*, որոնք Ատրպատականի մեծ քաղաքներից են: Դեպի Հայաստան գնացող ճանապարհի վրա են Ատրպատականի մյուս քաղաքներից՝ *Մարաղան*, *Դախերղանը*, *Ուրմիան*, *Սալմասը* և *Խոյը*, որից հետո սկսվում է Հայաստանը: Ատրպատականի այլ քաղաքներից նշված են նաև *Թավրիզը*, *Աշնեն* (այսօրվա Օշնավիյեն) և *Ջանջանը*: Սավալան լեռան աջում՝ Արաքսի հարավային ափին է *Վարսան* քաղաքը, որի հայերեն անվանումն է Վարդանակերտ:

Իր «Գիրք ճանապարհների և երկրների» խորագրին հավատարիմ, քարտեզը ցույց է տալիս բոլոր կարևոր ճանապարհները, որոնք իրար են միացնում տարածաշրջանի մեծ քաղաքները: Չնայած քաղաքների մոտավոր տեղադրմանը, փաստորեն սա առաջին իսլամական ճանապարհների քարտեզներից է:

Պատ. 39 – Ալ-Իսթախրիի այս քարտեզը վերցված է նրա *Քիթաբ ուլ Մասալիք ուա Մամալիք*, «Գիրք ճանապարհների և երկրների» 950 թվականի աշխատության պարսկերեն թարգմանության 1325 թվականի օրինակից, որը պահպանվում է Թեհրանի «Իրանե բասթան» թանգարանում: Քարտեզն ուղղորդված է վերը հյուսիսով:

Քարտեզն իր տեղագրությամբ ու դրվածքով շատ նման է նախորդ քարտեզին և Պատ. 38-ի համար տրված բացատրությունները կարելի է գործածել նաև այս քարտեզի համար: Սրանց միջև եղած էական տարբերությունն այն է, որ այստեղ քաղաքները ներկված են տարբեր գույներով, *Նաշուի* (Նախիջևան) քաղաքը պատկերված է Դվինի տեղում, իսկ *Դվինը* բարձրացել է հյուսիս և գտնվում է Փոքր Մասիսի գագաթի մոտ: Արարատներն այստեղ անվանված են իրենց հայերեն անունով՝ Մասիս, բայց ընդօրինակողը իրեն անծանոթ անվան վերջին տառի երկու կետերը վերի փոխարեն դնելով ներքևում՝ տառը «իս»-ից փոխել է «թ»-ի, հետևաբար դրանց անունը փոխվել դարձել է *Մեծ և Փոքր Մասթ* լեռներ: Այս քարտեզում պարզորեն կարելի է տեսնել ընդօրինակողի ճաշակի պատճառով ստեղծված տարբերությունները: Գրիչը կարող է գործածած լինի նախկին քարտեզը որպես իր աղբյուրը, սակայն ներդնելով իր ճաշակն ու երևակայությունը՝ ստեղծել է մի այլ տեսք ունեցող աշխատանք:

Քարտեզի պատրաստվելուց հետո ինչ որ մեկն Արաքսի հունը փոխել ու միացրել է Կուրին, որոնք բնօրինակում ամեն մեկն առանձին է հոսել դեպի Կասպից ծով, մի սխալ, որն ալ-Իսթախրիի քարտեզների մեջ հաճախ է երևում: Ակնհայտ է, որ փոփոխությունը կատարված է ավելի ուշ, քանի որ դա տարբեր թանաքով է արված:

Կասպից ծովի արևմտյան ափի մոտ գտնվող քաղաքներն են *Բաբ-ուլ-Աբուաբը* (Դերբենդը՝ նարնջագույն), *Շաբարանը* (կարմիր), *Բաքուն* (կանաչ), ինչպես նաև *Շիրվանը* (մոխրագույն), *Շամախը* (նարնջագույն), *Շաքին* (կարմիր) Կուրի հյուսիսում: Նույն գետի հարավումն են *Թիֆլիսը* (նարնջագույն), *Ղալ՛ան* (Գարդաբանի կամ Կարդաման, կանաչ), *Խունանը* (կարմիր), *Շամխորը* (կանաչ), *Ջանզան* (Գանձակը՝ նարնջագույն), *Պարտավը* (Բարդա, կարմիր), *Բայլականը* (կանաչ). սրանք բոլորն էլ գտնվում են Աղվանքի տարածքում: *Արաքս* գետը հոսում է *Աղվանքի* ու *Ատրպատականի* սահմանում:

Քարտեզի կենտրոնի աջում, Կասպից ծովի հարավ-արևմուտքումն են *Դեյլամի* (էլբուրսի) լեռները, որոնց միջով մեկ ուրիշ գետ, *Սեֆիդ Ռուդը* (Սպիտակ Գետ) հոսում է դեպի Պարսկաստանի *Գիլան* նահանգն ու Կասպից ծով:

Արազի կամ Արաքսի հարավում, քարտեզի կենտրոնի ձախ ծայրամասում նշված են *Կալիկլան* (դեղին, հին հայկական Կարին-էրզրումը), և *Մանազկերտը* (կարմիր): Մանազկերտի աջումն են Արարատի զույգ գագաթները իսկ սրանց արևելքում է *Նաշուին* (Նախիջևանը՝ դեղին): Արարատի զույգ գագաթներից վեր նշված է հին հայկական մայրաքաղաք *Դվինը* (կարմիր): *Արդաբիլից* դեպի հարավ-արևմուտք գնացող ճանապարհն անցնում է Ատրպատականի *Խունջ* (նարնջագույն), *Մարաղա* (կանաչ), *Դախերղան* (Դահխառական, կարմիր), *Ուրմիա* (կանաչ), *Սալմաստ* (նարնջագույն) և *Խոյ* (կանաչ) քաղաքներով: Ճանապարհն ապա շարունակվում է արդեն Հայաստանի տարածքով, անցնելով *Բերկրի* (կարմիր), *Արճեշ* (կանաչ), *Խլաթ* (նարնջագույն), *Բիթլիս* (Բաղեշ, մոխրագույն), *Միաֆարկին*[64] (կանաչ) և *Ամիդ*[65] (Ամադիա՝ կարմիր) քաղաքներով: *Արզան* կոչված հայկական Արծն քաղաքը (կարմիր), տեղադրված է ճանապարհի ծայրամասում, Արարատի հարավում: Հայաստանը նշված է ուղղահայաց և թեք՝ *Բիլադ Արմինիյե* մակագրությամբ: Ներքևի մեծ լիճը կրում է *Բուհայրե Արմինիյե* մակագրությունը, որը Հայկական՝ այսինքն Վանա լիճն է:

Քարտեզի կենտրոնի մեծ լեռը Ատրպատականի *Սաբալան* լեռն է: Այս լեռան հարավ-արևելքից դեպի արևմուտք գնացող ճանապարհը սկսվում է խաչմերուկում գտնվող *Արդաբիլ* (կանաչ) քաղաքից, ապա անցնելով *Միանեհ* (կարմիր կիսակլոր), *Սարաբ* (մոխրագույն), *էրամ* (նարնջագույն), *Աիար* (մոխրագույն) և *Մարանդ* (կանաչ) քաղաքներով հասնում է *Դվին* (կարմիր): Արդաբիլից հարավ-արևելք տանող ճանապարհի վրա են *Մեյմանդն* (մոխրագույն) ու *Ջանջանը* (նարնջագույն): Ճանապարհից դուրս նշված են *Դաջերմանը* (կանաչ), *Թավրիզը* (կարմիր), *Աշնեն* (Օշնավիյե՝ կանաչ) և *Դինավարը* (դեղին): *Շահրեզուր* (նարնջագույն) քաղաքը գտնվում է քարտեզի շրջանակից դուրս, *Ալջազիրայի* (Միջագետքի) սահմանի վրա:

Այստեղ էլ քաղաքների ու դրանք միացնող կարևոր առևտրական ճանապարհների պատկերումը այս քարտեզը դարձնում են տարածաշրջանային ճանապարհների մեկ ուրիշ քարտեզ: Քարտեզագիրն այստեղ փորձել է գծել մի քարտեզ, որը կարող է օգնել ճամփորդին նրան տալով ուղղություն իր նպատակին հասնելու համար:

[64] Տե՛ս տողատակի ծանոթագրություն թիվ 59:

[65] Տե՛ս տողատակի ծանոթագրություն թիվ 62:

Պատ. 40 – «Հայաստանը, Աղվանքը և Ատրպատականը» կոչված այս քարտեզն ալ-Իսթախրիի *Քիթաբ ուլ Մասալիք ուա Մամալիք*, «Գիրք ճանապարհների և երկրների» 950 թվականի աշխատության 19-րդ դարի արաբերեն ընդօրինակումից է, որը պահպանվում է Բրիտանական գրադարանում:

Ինչպես նույն շրջանի ուրիշ օրինակները, այս քարտեզը ևս ուղղորդված է վերը հյուսիսով: Այստեղ քաղաքները նշված են փոքրիկ քառակուսիներով, դրանք միացնող ճանապարհները՝ ոսկեգույն գծերով, գետերը՝ զուգահեռ ոսկեգույն զույգ գծերով, իսկ լեռները՝ նույնպես ոսկեգույն ներկով: Տեղանունները գրված են բազմաթիվ սխալներով, հավանաբար մի անտեղյակ գրչի ձեռքով, որն արտագրելիս սխալ տեղ է տեղադրել կամ էլ ընդհանրապես վերացրել է գրություններում առկա կետերից շատերը, որոնք արաբերենով գրված անունը կարող են հիմնավորապես փոխել:

Քարտեզի կենտրոնում ձախից աջ հոսող գետն Արաքսն է: Դրա վերից դեպի հարավ-արևելք է հոսում Կուրը, որը սակայն վերջում չի միանում Արաքսին, այլ կտրվում է նախքան ծով հասնելը:

Արրանը (Կովկասյան Ալբանիա, Աղվանք) գտնվում է քարտեզի վերի մասում: Քարտեզի աջում մեկ քառորդ ձվածևը Կասպից ծովի հատվածն է, որի ափին է *Բաքուն*: Սրա վերը ծովափնյա *Դերբենդ* քաղաքից դեպի ներքև ու ձախ գնացող ճանապարհի վրա են *Լաջանը*, *Շիրվանը* և *Շամախին*: Կուրն անցնելով, ճանապարհը հասնում է *Պարտավ*, որը նշված է ավելի մեծ քառակուսիով: Այստեղից արևմուտք գնացող ճանապարհն անցնում է *Ջանզան*, *Շամգոռ*, *Խունան*, *Ղալ՛ահ* և Թիֆլիս (այստեղ՝ *Սելիս*) քաղաքներով: *Արաքսի* հյուսիսային ափին է *Բայլական* քաղաքը, որի հանդիպակաց ափին է գտնվում Վարսականը (այստեղ տառասխալով գրված է *Ռույան*, իրականում՝ Վարդանակերտ): Ճանապարհը գնում է դեպի խաչմերուկում գտնվող *Արդաբիլ* քաղաքը, որից հետո շարունակվում է դեպի *Ջանջան*: Աղվանքից արևմուտք գտնվող երկրամասն անվանված է *ալ-Ալան*, որն օսերի հին արաբական անվանումն է:[66]

Ատրպատական (Ազերբայջան) տեղանունը գրված է երկու անգամ, երկու դեպքում էլ ուղղահայաց: Այդ երկրի քաղաքներից են *Արդաբիլը*, *Ջանջանը*, *Մարաղան*, *Աիարը* և *Շահրեզուրը*: Սավալան լեռն այստեղ կետադրման սխալների պատճառով անվանված է *Սաման*՝ պատկերված որպես մի ոսկեգույն եռանկյունի: *Ուրմիո լիճը* ցուցադրված է ձվածև և տեղադրված է Հայաստանին սահմանակից՝ քարտեզի ներքևի կենտրոնական հատվածում: Դրա արևելքում են *Ջաբալ* երկրամասն ու *Դեյլամ* (էլբուրսի կամ Թաբարիստանի) լեռները: Արդաբիլից արևմուտք գնացող ճանապարհն անցնում է *Մեյմանդ* ու *Մարանդ* քաղաքներով ու հասնում *Դեբիլ* (Դվին), որի վերևում մակագրված է *Արմինիյե* «Հայաստան»:

Հայաստանը տեղադրված է քարտեզի ներքևի ձախ կեսում, երկու անգամ թեք գրված *Արմինիյե* մակագրություններով, մեկը՝ Դվինի վերևում, մյուսը՝ Փոքր Մասիսից դեպի ներքև: Շեղակի իջնող ճանապարհի վրա են ձախից՝ *Բիթլիսը*, *Խլաթը*, *Արճեշը*, *Բերկրին*, *Խոյը*, *Ուրմիան* և *Դաջերմանը*, բուն Ատրպատականի տարածքում են *Մարաղան*, *Աիարը* և *Միանեն*: Արարատի զույգ կատարները պատկերված են ձախում, ձվաձև, անվանված արաբական անունով *Հարիթ*, բայց փոխանակ գրելու *ջաբալ* այսինքն լեռ, գրված է *ջազիրա*, այսինքն՝ կղզի: Արարատներից արևմուտք է գտնվում *Կալիկլա* քաղաքը՝ այսինքն Կարին-էրզրումը:

Եվ վերջապես, Հայաստանից արևմուտք գտնվում է *Բիլադ ուլ-Ռումը*, Բյուզանդիան, իսկ քարտեզի հարավումն է Միջագետքի շրջանը (*Ալջազիրան*):

Պատ. 41 – «Հայաստանը, Աղվանքը և Ատրպատականը» կոչված այս քարտեզն էլ ալ-Իսթախրիի *Քիթաբ ուլ Մասալիք ուա Մամալիք*, «Գիրք ճանապարհների և երկրների» 950 թվականի աշխատության 14-րդ դարի կեսերին կատարված պարսկերեն թարգմանությունից է, որը պահվում է Բրիտանական գրադարանում:

Այս քարտեզն էլ շատ բաներում նման է ալ-Իսթախրիի մյուս քարտեզներին, միայն թե այստեղ պայմանական նշանները տարբեր են: Օրինակ, քաղաքները հավասար և գունագեղ բոլորակներ են, լեռները՝ բուրգեր, իսկ գետերն ու ծովերը՝ բաց կապույտով են պատկերված: Երբ համեմատում ենք այս քարտեզի տեղանունները մյուսների հետ, ապա ակնբախ է արաբական տառերի կետադրության պատճառով ստեղծված անունների տարբերությունները: Այս քարտեզում էլ հյուսիսը վերն է և գլխավոր ճանապարհները իրար են կապում հավասար հեռավորությունների վրա տեղադրված կարևոր քաղաքները:

Այս քարտեզի ջրագրությունն ավելի կատարյալ է, քան մյուսներինը: Հյուսիսում *Կուրն* է, որը նախքան Կասպից ծով հասնելը միանում է *Արաքսին*: Դրանցից հարավ կա մի այլ գետ՝ Պարսկաստանի *Սեֆիդ Ռուդն* իր երկու վտակներով, որն անցնելով *Դեյլամի* (էլբուրսի) միջով, *Գիլան* նահանգում հասնում է Կասպից ծով: Այստեղ պատկերված է Կասպից ծովի միմիայն մեկ հատվածը: Շրջանի մյուս երկու կարևոր լճերը նույնպես առկա են քարտեզում: Սրանք են իրար մոտ տեղադրված Ուրմիո լիճը *(Դարյայե Շահի)* և Վանա լիճը *(Դարյայե Արմինիյե)*:

Կասպից ծովի արևմտյան ափին, Աղվանքի տարածքում են *Բաքուն* (կանաչ), *Շաբարանը* (կարմիր) և *Դերբենդը* (կանաչ), իսկ *Կուր* գետի հարավային ափին շարված են ճանապարհների խաչմերուկներում գտնվող *Պարտավից* (Բարդա, կանաչ) սկսած մինչև *Ջանզան* (Գանձակը, կարմիր), *Շամխորը* (կանաչ), *Խունանը* (դեղին), *Ղալ՛ան* (Գարդաբանի կամ Կարդաման, կանաչ) և արևմտյան ծայրում *Թիֆլիսը* (կարմիր):

Արաքսից հարավ, քարտեզի արևմտյան ծայրամասում է գտնվում *Կալիկլան* (հայկական Կարին-էրզրում քաղաքը, կարմիր) և *Մանազկերտը* (կանաչ): *Սաբալան* լեռան (մոխրագույն լայն եռանկյունին աջում) հարավ-արևելքում գտնվող ճանապարհների հանգույցումն է *Արդաբիլ* (դեղին) քաղաքը, որից արևմուտք գնացող ճանապարհին, նախքան Հայաստանի մայրաքաղաքներից *Դվինին* (կարմիր) հասնելը, գտնվում են *Խոնջը* (կանաչ), *Սարաբը* (կարմիր), *Մարանդը* (կանաչ), *Աիարը* (դեղին) և *Էրամը* (կանաչ): Այս ճանապարհի ներքևում գտնվող կարմիր շրջանակը մակագրված է *նախկին Նաշուի քաղաքը, որն այժմ կոչվում է Նախիջևան*: Արդաբիլից դեպի հյուսիս գնացող ճանապարհի վրա են *Բարզանդ*

[66] *Encyclopaedia of Islam*, հատոր 1, էջ 251/354

(կանաչ) և *Վարթան* (հավանաբար Վարսական, հայերենով՝ Վարդանակերտ, կարմիր) քաղաքները: Ատրպատականի մյուս քաղաքներից նշված են *Թավրիզը* (կանաչ), *Ուշնեն* (Օշնավիյեն, կարմիր), *Զանջանը* (կանաչ) և *Դինավարը* (դեղին):

Արարատի զույգ գագաթներին տրված է հայկական Մասիս անվանումը, մի փոքր աղավաղումով: Վերջին տառի կետերի սխալ տեղադրության պատշճառով «իս» վանկը դարձել է «թ», և այսպիսով լեռան անվանումը դարձել է Մասիսի փոխարեն՝ *Մեծ Մասթ լեռը և Փոքր Մասթ լեռը*, որոնցից հարավ նշված է հայկական *Արզան* (Արծն) քաղաքը: Արդաբիլից հարավ-արևմուտք դեպի Հայաստան գնացող ճանապարհն անցնում է *Միանե* (կանաչ), *Մարաղա* (կարմիր), *Դախերղան* (կանաչ), *Ուրմիա* (դեղին), *Սալմաստ* (կանաչ), *Խոյ* (կարմիր), *Բերկրի* (կանաչ), *Արճեշ* (դեղին), *Խլաթ* (կանաչ), *Բիթլիս* (կարմիր) *Միաֆարկին*[67] (կանաչ) և *Ամիդ*[68] (դեղին) քաղաքներով: Ճանապարհի աջում ուղղահայաց մակագրված է *Բիլադ Արմինիյե*, Հայաստան երկիր: Քարտեզի ներքևի մեջտեղում կլոր կապույտը Ուրմիո լիճն է, իսկ դրա ներքևի ավելի մեծ լիճը՝ Վանա լիճն է, մակագրված *Դարյայե Արմինիյե:*

Այս քարտեզի կառուցվածքը, ինչպես ալ-Իսթախրիի մյուս քարտեզներինը, շատ արդիական է և կարելի է դրանք դիտել որպես արդի արվեստի գործեր, որոնց շատ նման է հանրաճանաչ մի այլ քարտեզ, Լոնդոնի մետրոյի պլանը, պատրաստված նույն հիմունքներով և ցուցադրված Պատկեր 42-ում: Ալ-Իսթախրիի քարտեզում միջքաղաքային իրական հեռավորությունները պահպանված չեն ու քաղաքները ցուցադրված են միմյանցից հավասար հեռավորության վրա՝ ուղունքի նման շարված միջքաղաքային ճանապարհներին, որոնք ընդհանրապես գծված են ուղղահայաց, հորիզոնական կամ շեղակի գծերով: Այսպիսով, քարտեզին տրվում է աչքին ավելի հաճելի տեսք և դյուրին հասկանալու հնարավորություն: Լոնդոնի մետրոյի քարտեզն առաջին անգամ 1931 թվականին պատրաստել է անգլիացի գծագրիչ Հարրի Բեքը, որ հավանաբար գաղափար անգամ չունենալով ալ-Իսթախրիի կիրառած հիմունքների մասին, աշխատել ու գործել է նույն ուղղությամբ, ինչը որ արել էր միջնադարի վարպետ աշխարհագրագետը ավելի քան 1000 տարի առաջ: (Տե՛ս հաջորդ պատկերը):

Պատ. 42 – Սա Լոնդոնի մետրոյի պլանի կենտրոնական մասից մի հատված է, որի մտահղացումն ու գծագրումը պատկանում է անգլիացի գծագրիչ Հարրի Բեքին (1903-1974 թթ.): Նա քարտեզը պատրաստել էր 1931 թվականին, բայց մինչև իր կյանքի վերջին օրերը անընդմեջ այն բարեփոխություններ էր ենթարկում: Լոնդոնի տրանսպորտային ընկերությունը շատ դժկամորեն ընդունեց Բեքի սխեման, բայց այսօր նրա ձևավորումն ընդօրինակվում ու կիրառվում է աշխարհի տարբեր երկրների տրանսպորտային համակարգերի կողմից. մասնավորապես, այդ կերպ են ստեղծված Փարիզի և Մոսկվայի, նաև բազմաթիվ այլ քաղաքների մետրոների սխեմաները: Բոլոր այս քարտեզ-սխեմաներում գծերը և ճանապարհները գծված են հորիզոնական, ուղղահայաց կամ 45^0 անկյունով և կանգառները նշված են միմյանցից համահավասար հեռավորությունների վրա, որոնք իրական հեռավորություններին չեն համապատասխանում, բայց հասկանալու և գործածելու համար շատ ավելի հարմար են և միաժամանակ հաճելի են դիտվում: Լոնդոնի մետրոյի քարտեզն այնքան հանրամատչելի ու հանրաճանաչ է, որ, կարելի է ասել, աշխարհում ամենաընդհարացած քարտեզն է, քանի որ, բացի միլիոնավոր ուղևորների գրպանում եղած քարտեզներից, այն տպագրվել է վերնաշապիկների, բաժակների, մոխրամանների և տուրիստական բազմաթիվ հուշանվերների վրա, որոնք ամեն օր հսկայական քանակությամբ վաճառվում են Լոնդոնում:

Հավելյալ տեղեկությունների համար տե՛ս Պատ. 41-ի բացատրությունները:

Պատ. 43 – Սա ալ-Իսթախրիի քարտեզներից վերջինն է, որը պատկերվում ու քննարկվում է այս հատորի մեջ: Սա էլ *Քիթաբ ուլ Մասալիք ուա Մամալիք*, «Գիրք ճանապարհների և երկրների» ալ-Իսթախրիի 950 թվականի աշխատության 13-րդ դարի կեսերին կատարված պարսկերեն թարգմանությունից է, որը պահվում է Օքսֆորդի համալսարանի Բոդլեյան գրադարանում:

Ընդհանուր դրվածքով քարտեզը նման է իր մյուս օրինակներին, բացառությամբ ներկայացման ձևի, որն ընդօրինակողի ճաշակն է ներկայացնում: Բացի այդ, քարտեզագիրը անհրաժեշտ ուշադրությունը չի դարձրել ճանապարհներին ու դրանց մեկ մասն ընդհանրապես բաց է թողել: Այստեղ քաղաքները պատկերված են շրջանակներով, մեծ քաղաքները՝ կրկնակի շրջանակներով, իսկ լեռները՝ բրգաձև: Այստեղ էլ տեղանուններն ունեն նույնանման սխալներ, ինչ որ առկա էին մյուս քարտեզներում: Քարտեզը մյուսների նման ուղղորդված է վերը հյուսիսով:

Աղվանքի տարածքում Կասպից ծովի ափին են *Բաբ-ուլ-Աբուաբը* (Դերբենդը), *Շաբարանը* և *Բաքուն*, իսկ *Շիրվանն* ու *Շամախին* գտնվում են ծովից ավելի հեռու: Այս քաղաքները բոլորը Կուրի հյուսիսային կողմում են, իսկ դրա հարավում գտնվող քաղաքներից ամենից արևմտյանը *Թիֆլիսն* է, պատկերված նստած գետի զույգ ափերին, հետո գալիս են ձախից՝ *Ղալ՛ան*, *Խունանը*, *Շամխորը*, *Զանզան*, խաչմերուկի վրա *Պարտավը* և *Բայլականը*, սրանք բոլորն Արաքսի հյուսիսում են:

Արաքսից հարավ, Պարտավից Արդաբիլ տանող ճանապարհին, Բայլականից հետո նշված են *Վազկանը* (Վարսական, կամ Վարդանակերտ) և *Բարզանդը*: Արաքսից հարավ, Ատրպատականի տարածքում իշխողն է *Սաբալան* լեռը, որի հարավից անցնող ճանապարհի վրա, մինչև Դվին շարված են *Միանեն*, *Սարաբը*, *Էրամը*, *Աիարը* և *Մարանդը*: Արդաբիլից հարավ տանող ճանապարհի վրա են գտնվում *Սահանդը* և *Զանջանը*, որի մոտակայքում են *Դաջերմանն* ու *Թավրիզը:* Ատրպատականի հարավային տարածքում է ձվաձև պատկերված *Ուրմիո լիճը*, որից հարավ են *Մարաղան* ու *Ուրմիա* քաղաքը, իսկ արևմուտքումն է *Սալմաստը*:

[67] Տե՛ս տողատակի ծանոթագրություն թիվ 59:

[68] Տե՛ս տողատակի ծանոթագրություն թիվ 62:

Հայաստանը գտնվում է քարտեզի արևմտյան մասում, ուր երկու շրջանակները նշում են *Կալիկլա* Կարին-էրզրում և *Մանազկերտ* քաղաքները, տեղադրված անանուն զույգ լեռների, Արարատներն մոտ: Քարտեզ պատրաստողը Արդաբիլից հարավ-արևմուտք՝ դեպի Հայաստան գնացող ճանապարհը չի գծել, և այդ ճանապարհին գտնվող քաղաքները դասավորել է ձախ կողմի լճի, *Բուհայրե Արմինիյեի* (Վանա լճի) շուրջը: Այս քաղաքներն են *Խոյը*, *Վանը*, *Բերկրին*, *Արճեշը*, *Խլաթը* և *Բիթլիսը*, իսկ *Միաֆարկինը*[69] ու *Արզանը* տեղադրված են լճի հարավ-արևմուտքում գտնվող լեռան փեշերին: Այս լեռն անուն չունի և կարող է լինել Սիփանը, քանի որ այս անունը նշված է քարտեզին վերաբերող տեքստի մեջ: Ճանապարհների բացակայության դեպքում քաղաքները դասավորված են այլ կերպ և մյուս քարտեզների համեմատ դրանց տեղադրությունն իրականությանն ավելի մոտ է:

Քարտեզում Հայաստանից արևմուտք սկսում է *Բիլադ ուլ-Ռումը*՝ Բյուզանդիան, իսկ հարավից նրան սահմանակից է *Ալջազիրան*՝ Միջագետքը:

3 – ԱԼ-ՄՈՒՂԱԴԴԱՍԻ

Տասներորդ դարի հայտնի արաբ/պարսիկ աշխարհագրագետներից էր Մուհամմեդ Բին-Ահմեդ Շամսուդդին ալ-Մուղադդասին (945-1000 թթ.), որի քարտեզները պարզ են ու պարունակում են բազմաթիվ կարևոր ճանապարհներ և քաղաքներ: Նրա *Երկրների վերաբերյալ տեղեկությունների լավագույն բաժանումները* աշխարհագրական երկը պարունակում է տեղեկություններ բազմաթիվ երկրների, գավառների ու դրանցում բնակվող ժողովուրդների մասին, միաժամանակ ունենալով ավելի քան 20 քարտեզ: Նրա աշխատության բնագիրն արաբերեն է, բայց նաև կա դրա պարսկերեն թարգմանությունը, որն ալ-Մուղադդասիի մայրենի լեզուն էր: Գրքի առկա օրինակներից մի քանիսը դրա պարսկերեն լեզվով թարգմանություններն են:

Ալ-Մուղադդասին անչափ սիրում էր ճամփորդել և այցելելով ողջ իսլամական աշխարհը, գրի է առել իր տեսածներն ու փորձությունները, որոնք բոլորը հավաքված են նրա վերոհիշյալ երկում: Գիրքը, աշխարհագրական գործ լինելուց զատ, նաև տարբեր երկրների մասին եղած բազմաթիվ տեղեկությունների և ընդհանուր բնույթի գիտելիքների հավաքածու է: Դրա մեջ կան այլազան տեղեկություններ տարբեր ժողովուրդների զբաղմունքների, տարազների, սովորությունների, այլ յուրահատկությունների մասին: Շատ տեսակետներից այս աշխատությունը ներկայանում է որպես պատմական ու հասարակական գիտելիքների մի կարևոր աղբյուր:

Պատ. 44 – Այս քարտեզը վերցված է տասներորդ դարի իսլամական աշխարհագրագետ ալ-Մուղադդասիի 985 թվականի *Երկրների վերաբերյալ տեղեկությունների լավագույն բաժանումները* աշխատության էջերից, որը պահվում է Բեռլինի քաղաքային գրադարանում:

Այս քարտեզը Ատրպատականի ու Հայաստանի տարածքին հատկացված քարտեզն է, որի խորագիրն է *Հայաստանի, Աղվանքի և Ատրպատականի քարտեզը*: Չնայած որ քարտեզը ուղղորդված է վերը հյուսիս-արևելքով, բայց իրականության մեջ պարզապես ուղղորդված է վերը հյուսիսով: Այստեղ քաղաքները նշված են քառակուսիներով, ճանապարհները՝ կարմիր գծերով, իսկ գետերը՝ զուգահեռ զույգ կարմիր գծերով: Քարտեզը բազմաթիվ նմանություններ ունի ալ-Իսթախրիի քարտեզներից Պատկեր 40-ում ցուցադրվածին, ինչպես նաև ուրիշ օրինակներին:

Քարտեզի համարյա կենտրոնում ձախից աջ հոսող գետն Արաքսն է (*Նահր ուլ-Ռասս*), դրա վերինը Կուրն է, որը միանում է Արաքսին նախքան ծով հասնելը, իսկ Կասպից ծովը քարտեզի աջ կողմի վերի հատվածում առանձնացած տարածքն է: Արաքսից հարավ՝ ձախում Հայաստանն է, աջում՝ Ատրպատականը:

Աղվանքը կամ Արրանը սկսվում է Արաքսի հյուսիսային ափերից: Ալ-Մուղադդասին այս շրջանի վերաբերյալ գրում է.

> *Ալ-Ռանի [Արրան կամ Աղվանք] շրջանը զբաղեցնում է երկրամասի մեկ երրորդը և նրա մայրաքաղաքն է Պարտավը: Նրա քաղաքներից են Թիֆլիսը, Ղալ՛ան, Խունանը, Շամգոռը, Ջանզան [Գանձակը], Բարդիջը, Շամախին, Շիրվանը, Բաքուն, Շաբարանը, Բաբ-ուլ-Աբուաբը [Դերբենդ], ալ-Աբխանը [Աբխազը], Ղաբլան [Կապաղակ], Մանազկերտը և Թաբլան:*[70]

Պարտավն (Բարդան) այս տարածքի մայրաքաղաքն է և գտնվում է Արաքսից հյուսիս, խաչմերուկների վրա, պատկերված մի մեծ քառակուսիով: Այստեղից հարավ-արևելք գնացող ճանապարհի վրա են *Վարզականը*, *Արդաբիլը* և *Սարաբը*, ապա ճանապարհը հասնում է խաչմերուկի վրա գտնվող մի անանուն քաղաքի և շարունակվում դեպի *Ջանջան*: Հյուսիս-արևելք գնացող ճանապարհին են *Շամախը*, *Շիրվանը* և ապա *Բաբ-ուլ-Աբուաբը* (Դերբենդ) Կասպից ծովի ափին: Արևմուտք գնացող ճանապարհին են *Ջանզան* (Գանձակը), *Շամխորը*, *Խունանը*, *Ղալ՛ան*[71] և *Թիֆլիսը*: *Պարտավից* մի այլ ճանապարհ էլ գնում է հարավ-արևմուտք, որի անկյունի վրա է *Դվինը*, ապա Ատրպատականում *Մարանդը*, *Սհարը* և *Մեյմանդը* մինչև խաչմերուկի վրա գտվող մի անանուն քաղաք: Հայաստան, *Արմինիյե* մակագրությունը ուղղահայաց գրված է Դվինի մոտ, որի աջումն են երկու Արարատները, այստեղ անվանված իրենց արաբերեն անուններով՝

[69] Տե՛ս տողատակի ծանոթագրություն թիվ 59:

[70] Al-Muqaddasi, *The best divisions*, translated from Arabic Prof, Collins, Reading, 2001, էջ 303-305:

[71] Ղալ՛ա արաբերենում ու պարսկերենում նշանակում է «ամրոց», մինչդեռ ըստ ալ-Մուղադդասիի, այս քաղաքը, որը Թիֆլիսին ամենամոտ քաղաքն էր, ամրոց չուներ: Al-Muqaddasi, *The best divisions*, translated from Arabic Prof, Collins, Reading, 2001, էջ 305: Այսօրվա Գարդաբանին կամ Կարդամանը:

ալ-Հարիթ և ալ-Հուայրիթ: Սրանցից հարավ նշված է *Կալիկլան*, Հայաստանի Կարին կամ Էրզրում քաղաքը: Ալ-Մուղադդասին Հայաստանի վերաբերյալ հետևյալն է ասում.

> *Հայաստանը մի կարևոր շրջան է: Այստեղից են գալիս վարագույրներ, գեղեցիկ ժանյակավոր հագուստներ և ուրիշ հատուկ իրեր: Մայրաքաղաքը Դվինն է և կարևոր քաղաքներից են Բիթլիսը, Խլաթը, Արծեշը, Բերկրին, Խոյը, Սալմաստը, Ուրմիան, Դախերղանը, Մարաղան, Սհարը, Մարանդը, Սանջանը. Կալիկլան և Նուրինը (հավանաբար Նուրիկ):*[72]

Քարտեզի ներքևում տեղակայված անանուն քաղաքից հարավ-արևմուտք գնացող ճանապարհին են *Միանեն*, *Խունջը*, *Մարաղան*, *Դաջերմանը*, *Ուրմիան*, *Սալմաստը*, *Խոյը*, *Բերկրին*, *Արծեշը* և *Խլաթը*: Ճանապարհի վերջում է *Բիթլիսը*: Սրանց ներքևում նշված մեծ լիճն անվանված է *Բուհայրի Արմինիյե*, այսինքն Հայկական լիճ, որը նշում է Վանա լիճը, բայց աշխարհագրական տեսակետից այս լիճը կարող է լինել նաև Ատրպատականի Ուրմիո լիճը:

Պարսկաստանի Ատրպատական նահանգի վերաբերյալ ալ-Մուղադդասին ասում է.

> *Ատրպատականը [Ազերբայջանը] մի նահանգ է, որի մայրաքաղաքն Արդաբիլն է.... Նրա քաղաքներից են Ռասբան, Թավրիզը, Ջաբերվանը, Խունջը, Միանեն, Սարաբը, Բերուան, Վարզականը, Մողանը, Մեյմանդը և Բարզանդը:*[73]

Ատրպատականի որոշ քաղաքներ նշված են Վանա լճի աջ մասում, որոնցից են *Ջաբերվանը*, *Թավրիզը* և *Ուշնեն* (Օշնավիյեն), ինչպես նաև ավելի հեռու՝ արևելքում *Զանջանը* և *Դինավարը*, *Դեյլամ* (Գիլան) նահանգի մոտակայքում:

Քարտեզի արևմտյան եզերքին՝ վերևում նշված է *Ալանների*, այսինքն՝ օսերի երկիրը, որն Աղվանքից արևմուտք է գտնվում, իսկ դրա հարավում, Հայաստանից արևմուտք պատկերված է *Բիլադ-ուլ-Ռումը*, Բյուզանդիան:[74]

4 – ԳԻՐՔ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԻ

2002 թվականի հունիսին Օքսֆորդի համալսարանի Բոդլեյան գրադարանը գնեց մի արաբերեն ձեռագիր, որի խորագիրն էր *Քիթաբի ղարաեբ ուլ-ֆոնուն ուա մալհ ուլ-Ույուն* և որը կարելի է թարգմանել որպես «Գիրք անսովոր գրությունների ու տեսանելի հրաշալիքների», որին տրվեց «Հրաշալիքների գիրք» համառոտ անվանումը: Գրքի հեղինակն անհայտ է, բայց դրա բնօրինակը, ըստ պարունակած տեղեկությունների, պետք է պատրաստված լինի 1050 թվականի շրջանում: Գնված ձեռագիրը բնագրի մոտավորապես 1200 թվականի ընդօրինակում է:

Այս գիրքը շատ առումներով հիմնված է Պտղոմեոսի *Աշխարհագրության* վրա: Աշխատության առաջին գիրքը պարունակում է առանձին գլուխների մեջ ամփոփված տեղեկություններ աստղագիտության, այդ թվում համաստեղությունների ու գիսաստղերի վերաբերյալ, մինչ երկրորդ գիրքը աշխարհագրական տեքստ է, որին ուղեկցում են աշխարհացույց և տարածաշրջանային քարտեզներ, ինչպես նաև կարևոր կղզիների ու գետային ցանցերի քարտեզներ: Քարտեզներից շատերը հետևում են իսլամական քարտեզագիտության մեջ հայտնի «Բալխի» կոչված դպրոցին, բայց դրանցից մի քանիսը բավականին յուրահատուկ են: Օրինակ, ձեռագրի շրջանաձև աշխարհացույց քարտեզը պատկանում է Բալխի դպրոցին, բայց այստեղ կա նաև քառանկյունի տեսք ունեցող մեկ այլ աշխարհացույց քարտեզ, որը շատ անսովոր քարտեզագրական ձև է: Այս քարտեզը պարունակում է շատ ավելի մանրամասն տեղագրություն ու աշխարհագրական դետալներ, քան մյուսը: Այս քարտեզում Միջերկրական ծովը պատկերված է առանց կղզիների, բայց գրքում կա Միջերկրականի կղզիներին հատկացված մի քարտեզ, ուր ցուցադրված են Միջերկականի 118 կղզիները և նույնիսկ դրանցից ամենամեծին՝ Սիցիլիային, հատկացված է մի առանձին քարտեզ, որը պարունակում է բազմաթիվ մանրամասնություններ նույն կղզու վերաբերյալ: Այս բոլորը շեղումներ են իսլամական Բալխի դպրոցի հիմունքներից: Ձեռագիրը պարունակում է 17 քարտեզ, որոնցից երկուսը աշխարհացույց են, ութը ջրագրական քարտեզներ են, ևս յոթը՝ տարբեր աշխարհամասերի ու կղզիների քարտեզներ: Դիտարկվող ձեռագրից ներկա աշխատության մեջ ներկայացված ու քննարկված են երկու քարտեզ:

Պատ. 45/45a – «*Հրաշալիքների գրքից*» վերցված այս երկու էջանոց քառանկյունի աշխարհացույցն ունի հետաքրքիր ձևավորում: Այն ուղղորդված է վերը հարավով և աշխարհը պարփակում է քառանկյունու սահմաններում, հետևաբար որոշ երկրամասեր սեղմված են ու ներկայացված բավականին աղավաղված տեսքով: Ծովերը ներկված են կանաչ, գետերն ու լճերը՝ կապույտ, լեռները՝ սրճագույն, իսկ քաղաքները նշված են կարմիր կետերով: Կան նշված բազմաթիվ քաղաքներ, որոնց զգալի մասն անանուն է: Հավանաբար, գծողն այս բացթողումն արել է անուշադրության պատճառով կամ էլ քարտեզը պարզապես մնացել է անավարտ: Առևտրական կարևոր, ուղիղ կամ կամարաձև գծված ճանապարհների վրա քաղաքները շարված են հավասար հեռավորություններով, ինչը հիշեցնում է ալ-Իսթախրիի քարտեզները, բայց այս քարտեզում կա մի հակասություն: Այստեղ պատկերված է քարտեզի չափագույց, որը դառնում է ավելորդություն, մինչդեռ քաղաքների հեռավորությունները ճանապարհների վրա դրված են համահավասար հեռավո-

[72] Անդ, էջ 303:
[73] Անդ:
[74] *Encyclopaedia of Islam*, հատոր 1, էջ 251/354:

րությամբ ու պատկերված են միայն սխեմատիկ կերպով, որն իրականությանը չի համապատասխանում: Միջերկրականը սկսվում է աջում՝ արևմտյան օվկիանոսից, ապա պտույտ անում դեպի հյուսիս, վերջանալով քարտեզի ներքևում Սև և Հյուսիսային ծովերով, այդպիսով Եվրոպան դարձնելով մի կղզի:

Վերի մեծ աշխարհամասն Աֆրիկան է, որն Ասիայից բաժանված է *Նեղոս* գետով: Նեղոսի ակունքը քարտեզի վերի հատվածի մեջտեղում նշված լեռներն են: Այստեղից երկու խումբ գետակներ հոսում են դեպի երկու լճեր, ապա այդտեղից դեպի մեկ այլ՝ ընդհանուր լիճ, որտեղից և սկսվում է բուն Նեղոսը, ինչն իրականությունից շատ էլ հեռու չէ: Նեղոսն ունի նաև մեկ այլ վտակ (որը սկզբնավորվում է Աֆրիկայի արևմուտքում գտնվող լեռներում) և երկու այլ ճյուղավորում, որոնցից մեկը հոսում է դեպի Միջերկրական, իսկ մյուսը՝ դեպի Արաբական ու Կարմիր ծովերը: Միջերկրականի ափերին ցուցադրված են բազմաթիվ քաղաքներ:

Եվրոպան քարտեզի ներքևի աջ մասումն է: Իսպանիան, որն աջ կողմում դուրս պրծած թերակղզին է, պատկերված է անհամեմատ մեծ, և պարունակում է բազմաթիվ քաղաքներ ու գետեր: Իսպանիայից ձախ գտնվող թերակղզին Իտալիան է, իսկ մյուս երկու ավելի փոքր թերակղզիները ներկայացնում են Հունաստանը, ձախում ունենալով Եգեյան ծովը: Դրանից հետո գալիս է Սև ծովն ու նրա ափին գտնվող *Կոստանդնուպոլիսը*, որի անունը մակագրված է սրճագույն լեռներից ձախ:

Քարտեզի մեծ մասը զբաղեցնում է Ասիան, որը գրավում է ձախ էջի գրեթե ամբողջ մակերեսը, հարավում ունենալով Հնդկական օվկիանոսը: Վերը՝ հարավի մեծ թերակղզին *Արաբիան* է, ուր ոսկեգույն գմբեթի տակ նշված է *Մեքքան*: Մյուս թերակղզին միմյանց հետ մեկտեղված Պարսկաստանն ու Հնդկաստանն են, որոնց միջով անցնում է մի կարմիր գետ: Երկու թերակղզիների միջև, ցամաքի մասում կա մի մեծ գետային ցանց, որը ներկայացնում է Պարսից ծոցի մեջ թափվող Եփրատ ու Տիգրիս գետերը: Գետերի ներքևում եղած շրջանը Կասպից ծովն է, որի մեջ են թափվում չորս գետ: Ներքևինը *Վոլգան* է, ձախում ավելի մեծը Ամու դարյան է (*Ջեյհունը* կամ Օքսուսը), իսկ մյուսը Սիր դարյան (Սեյհունը): Աջից միացած չորրորդ գետն *Արաքսն* է, որին՝ նախքան ծով հասնելը, միանում է Կուրը:

Պատ. 45a-ում ավելի մեծադիր ձևով ներկայացված է քարտեզի Կասպից ծովի շրջանը, որտեղ տեղանունների վրա ավելացված են համարներ, որոնց թարգմանությունը նշված է փակագծերի մեջ: Այստեղ կապույտ բոլորակը Կասպից ծովն (1): Սրա մեջ են թափվում չորս գետ, որոնք են Վոլգան (3), Արաքսը (4), Սեյհունն (6) ու Ջեյհունը (7): Վոլգային կից նրա ձախում կարմիրով պատկերված են Ուրալյան լեռները: Սրանց ձախում է Սիր դարյա կամ Սեյհուն գետը (6), որն ակունք է առնում Ալեքսանդր Մակեդոնացու կառուցած պարսպի մոտից (22), որի նպատակն էր Գոգ և Մագոգ վայրագ ցեղերին «առաջատար» մարդկությունից հեռու պահելը: Սեյհունի վերն է *Ջեյհունը* (Օքսուս կամ Ամու դարյա – 7), որի հարավային ափին մակագրված է *Արևմտյան Թուրքեստան* (13), իսկ երկու գետերի միջև ընկած է Պարսկաստանի *Խորեզմ* (12) նահանգը:

Վոլգայից (3) աջ, համարյա թե քարտեզի ներքևի ծայրամասում, մեծ տառերով գրված է بـــــلاد ارمينيـــــه «Հայաստան Երկիր» (10), որը գտնվում է Կասպից (1) և կանաչագույն ներկված Սև ծովի (2) միջև ընկած տարածքում: Հայաստանի վերը, հարավում գտնվող սրճագույն լեռները կոչված են *Արմինիյե* (14), որոնք կարող են լինել Տավրոսյան լեռները կամ էլ Արարատները: Հարավում հոսում է *Արաքսը* (4), իսկ Կուրը (5) աջից միանում է Արաքսին: Սրանց ափերին կան մի շարք քաղաքներ, որոնց տեղադրություններն այնքան էլ ճշգրիտ չեն: Հյուսիսային ափերի մոտ են *Դվինը* (15), *Ուրմիան* (16) և *Մարաղան* (17), իսկ հարավային ափերին՝ *Ամիդն* (18) ու *Բիթլիսը* (19):

Արևմուտքում նշված են երկու քաղաքներ *Թաբարիստան* (20) և *Դեյլամ* (21) անուններով: Երկուսն էլ սխալ են տեղադրված, քանի որ երկուսն էլ Կասպից ծովի հարավում գտվող Պարսկաստանի նահանգներից են: Թաբարեստանը պետք է հավանաբար լինի Տրապիզոնը, որը կարող է գրչի սխալը լինել, իսկ Դեյլամի տեղը պարզապես այստեղ չէ, այլ Կասպից ծովի հարավ-արևմուտքում: Ատրպատականը (11) սխալմամբ տեղադրված է Վոլգա գետի և Ուրալյան լեռների միջև:

Քարտեզի ներքևը՝ ձախում պատկերված դարպասը և պարիսպները Ալեքսանդր Մակեդոնացու կառուցածն են (22), որով նա մարդկությունից հեռու էր պահում վայրագ Գոգ և Մագոգ ցեղերին: Քարտեզի յուրահատկություններից է այն, որ քարտեզի հարավում Աֆրիկան միացած է մի լայն ցամաքամասի հետ, որի սահմաններն անորոշ են: Արևելյան ծայրամասում առկա է մի կղզի, շրջապատված կարմիր լեռներով:

Պատ. 45a դետալի վրա ավելացված համարները վերաբերում են հետևյալ անուններին.

1. Կասպից ծով
2. Սև ծով
3. Վոլգա գետ
4. Արաքս գետ
5. Կուր գետ
6. Սիր դարյա
7. Ամու դարյա
8. Տիգրիս
9. Եփրատ
10. Հայաստան
11. Ատրպատական
12. Խորեզմ
13. Արևմտյան Թուրքեստան
14. Հայկական [լեռներ]
15. Դվին
16. Ուրմիա
17. Մարաղա
18. Ամիդ
19. Բիթլիս
20. Թաբարիստան, Դեյլամ
21. Ալեքսանդրի պարիսպը

Պատ. 46 – Կասպից ծովը պատկերող այս քարտեզը վերցված է «Հրաշալիքների Գրքից», որի մասին կարելի է տեսնել նախորդ քարտեզի բացատրություններում:

Այս քարտեզը նման է Բալխի դպրոցի նույն ժամանակաշրջանի այլ քարտեզներին, ուղղորդված վերը հարավով այնպես, որ Պարսկաստանի հյուսիսում, Կասպից ծովին զուգահեռ էլբուրս լեռները զբաղեցնում են քարտեզի վերի մասը: Ինքը, Կասպից ծովը՝ կանաչ շրջանն է որը պարունակում է երկու մեծ կղզիներ, *Բաբ-ուլ-Աբուաբ* և *Բաքու* անուններով,

որոնք նաև տրված են ցամաքում գտնվող երկու քաղաքների: Իրականում այս կղզիներն այսօր գոյություն չունեն, իսկ նույնանուն քաղաքները գտնվում են հենց Կասպից ծովի ափին: Կասպից ծովն են հոսում երեք գետեր: Սրանցից վերևինն *Արաքսն* է, ապա Կուրը, որոնք իրականում նախքան ծով հասնելը միանում են իրար, իսկ այստեղ պատկերված են թե՛ միացած և թե՛ առանձին: Երրորդ գետը կոչված է *Նահր ու-Ռուս* «Ռուսական գետ»: Սրա հյուսիսում է *Բաբ-ուլ-Աբուաբը*, իսկ Արաքսի ու Կուրի միջև տեղադրված է Աղվանքի մայրաքաղաք *Պարտավը*:

Նախորդ քարտեզումն էլ Կասպից ծովը ցուցադրված է բավականին մանրամասն: Այն քարտեզում նրա մեջ են թափվում հինգ գետեր (եթե Արաքսն ու Կուրն առանձին հաշվենք) և, չնայած որ սա աշխարհացույց քարտեզի միայն մեկ մասն է կազմում և պատկերված է ավելի մեծադիր, այնուհանդերձ ավելի ճշգրիտ է ցուցադրում Կասպից ծովը քան Պատ. 46-ի քարտեզը:

Արաքսից հարավ նշված է Պարսկաստանի Ատրպատական նահանգի *Մողան* քաղաքը՝ տեղադրված *Դեյլամի լեռների* ու *Կասպից ծովի* միջև: Լեռների վերը՝ աջում, քարտեզագետը նշել է մի քաղաք և նրան տվել *Արմինիայե*, «Հայաստան» անվանումը, որը Կասպից ծովից և Աղվանքից հարավ-արևմուտք է տեղադրված:

5 – ԱԼ-ԻԴՐԻՍԻ

Արաբ աշխարհագրագետներից ամենաշատ աշխարհ շրջած և ճանաչվածներից է իբն-Աբդուլլահ Մուհամմեդ բին Աբդուլլահ բին Իդրիս ալ-Շարիֆ ալ-Իդրիսին, որն ավելի հայտնի է պարզապես ալ-Իդրիսի անունով: Նա ծնվել է Մարոկկոյի Սեուտա քաղաքում 1099 թվականին, սովորել է Կորդովայում, որն այդ ժամանակ արևմտյան Եվրոպայի կարևորագույն մշակութային կենտրոնն էր, ուր և առիթ է ունեցել հետազոտելու պորտոլան ծովային քարտեզներ:[75] Ալ-Իդրիսին ճամփորդել էր Եվրոպայում, Միջին և Կենտրոնական Ասիայում, հավաքել աշխարհագրական բազմաբնույթ տեղեկություններ: Ճամփորդություններից վերադառնալուց հետո Սիցիլիայի Ռոժե II թագավորը նրան նշանակել է արքունիքի աշխարհագրագետ, ուր և նա աշխատեց մինչև իր մահը՝ 1166 թվականը: Նրա գրքերից են *Քիթաբի նուզհատ ուլ-մուշթաղ ֆի էխթերաղ աֆաղ* որը կարելի է թարգմանել «Հաճելի գիրք նրանց համար, ովքեր ցանկանում են աշխարհը տեսնել» և որը հանրաճանաչ է «Ռոժեյի գիրք» վերնագրով: Այս գրքում ալ-Իդրիսին սկզբում ներկայացնում է բոլորակածև աշխարհացույց մի քարտեզ, գծված Բալխի դպրոցի հիմունքներով, ապա բնակելի աշխարհն ըստ աշխարհագրական լայնության բաժանում է յոթ կլիմայական գոտիների, և ամեն մի գոտին բաժանելով տաս մասի՝ ներկայացնում է 70 մանրամասն քարտեզներ, յուրաքանչյուրն իր բացատրական տեքստով: Այսպիսով, 1154 թվականին պատրաստված ձեռագիրն ունի մեկ աշխարհացույց և 70 մանրամասն քարտեզներ:

Ալ-Իդրիսիի ձեռագրից պահպանվել են ութ օրինակ, մեծ մասը քարտեզներով: Իդրիսին ասում է, որ գիրքը պատրաստելիս օգտվել է Պտղոմեոսի *Աշխարհագրություն* հատորից, ինչպես նաև իրեն նախորդող՝ այլ արաբ աշխարհագրագետների ձեռագրերից: Նրա քարտեզները պատրաստված են շատ ճաշակով և գունավորված են պայծառ գույներով: Ամեն քարտեզի վրա նշված է եղանակային գոտին և համապատասխան թիվը, բայց հաճախ երկու հարակից քարտեզ անհնար է միմյանց միացնել առանց ուղղումների, քանի որ դրանց չափանիշներն ու կտրվածքի տեղերն իրար կարող են համապատասխան չլինել: Այս նույն քարտեզի հիման վրա ալ-Իդրիսին պատրաստել էր նաև մի արծաթյա երկրագունդ, բայց այն ցավոք մեզ չի հասել: Գերմանացի քարտեզագետ Կոնրադ Միլլերը (1844-1933 թթ.) ալ-Իդրիսիի «Ռոժեի գրքի» 70 փոքր քարտեզների հիման վրա կազմել է մի մեծ աշխարհացույց քարտեզ և հրատարակել 1928 թ. որպես Իդրիսիի «Մեծ քարտեզը»:

Պատ. 47/48 – Այս երկու քարտեզները վերցված են տասներկուերորդ դարի արաբ աշխարհագրագետ ալ-Իդրիսիի (1099–1166 թթ.) *Ռոժեի գրքից*: Օգտվելով հունական ծովային ճանապարհների նկարագրություններից ու իր ժամանակներում առկա տեղեկություններից, 1154 թվականին ալ-Իդրիսին պատրաստում է հանրահայտ *Ռոժեի գիրքը*, որին կից կան աշխարհացույց քարտեզ և յոթ եղանակային գոտիների, արաբերենով՝ էղլիմների (կլիմա) 70 հատվածային ու տարբեր շրջանների քարտեզներ:

Ձեռագրում աշխարհը բաժանված է յոթ եղանակային գոտիների և ամեն մի գոտի, իր հերթին, բաժանված է տասը մասի, ամեն մեկը ներկայացված մեկ քարտեզով: Բոլոր քարտեզներն ուղղորդված են վերը հարավով:

Պատ. 47-ի քարտեզի խորագիրն է «Չորրորդ կլիմայի վեցերորդ մասը», որը ներառում է Հայաստանի և Պարսկաստանի Ատրպատական նահանգի ու նրանցից հարավ գտնվող երկրամասերը: Քարտեզի ներքևում (հյուսիսում) են Հայաստանի և Պարսկաստանի Ատրպատական նահանգի հարավային շրջանները, իսկ ձախում եղած կապույտ ծովը Կասպից ծովի մեկ մասն է, որի մնացորդը երևում է հաջորդ քարտեզում: Երկու կղզի ունեցող ներքևի կանաչ լիճը անվանված է *Բուհայրի Քաբութան*, (Կապուտան կամ Ուրմիո լիճ), որի վերն է *Մարաղա* քաղաքը: Մարաղայի վերը մակագրված է *մին Արմինիյե* (Հայաստանի մաս), իսկ դրա ձախումն են *Թավրիզ* քաղաքը և *Դեյլամ* ու *Ատրպատական* շրջանները:

Քարտեզում պատկերված լեռներից հարավ գտնվող բարդ գետային ցանցը *Տիգրիսի* և *Եփրատի* վտակներն ու աղբյուրներն են, որոնք սկսվում են Տավրոսյան լեռներից ու Արարատներից. վերջիններս ցուցադրված են ներքևում որպես զույգ մանուշակագույն լեռներ: Տիգրիսի վտակներից *Մեծ և Փոքր Զաբ* գետերն Արարատներից լեռներից են սկիզբ առնում ու հոսում դեպի հարավ՝ Պարսից ծոց:

[75] Այդ ժամանակ Կորդովայում կային ավելի քան 70 գրադարան և քաղաքը համարվում էր Եվրոպայի մշակույթի ու գիտության կենտրոն:

Պատ. 48-ի խորագիրն է «Հինգերորդ կլիմայի վեցերորդ մասը», որը Պատ. 47 քարտեզի հյուսիսային մասն է, ուր իրար են հանդիպում Պարսկական Ատրպատական նահանգը, Հայաստանն ու Աղվանքը: *Ատրպատականը* գտնվում է հարավում՝ քարտեզի վերի ձախ անկյունում, իսկ *Աղվանքը՝ Բաբ-ուլ-Աբուաբ* քաղաքով, տեղադրված է քարտեզի մեջտեղը՝ ներքևում: Ծովերը ներկված են կապույտ, լի փրփրացող ալիքներով: Ձախի ծովը *Կասպից ծովն* է, իսկ աջինը՝ *Սև ծովը*: *Վանա լիճը* քարտեզի մեջտեղի կանաչ լիճն է, որի ափերին են *Արճեշ* (կարմիր) ու *Խլաթ* (դեղին) քաղաքները: Կարմիր թանաքով գրված *Հայաստան* մակագրությունը առկա է քարտեզի վերը՝ մեջտեղում, *Վանա* լճի ու *Արճեշ* քաղաքի կողքին, ինչպես նաև քարտեզի աջ անկյունում եղած սրճագույն լեռների հյուսիսում՝ գրված ուղղահայաց: *Ատրպատականը* քարտեզի վերի ձախ անկյունումն է, Կասպից ծովի հարավ-արևմտյան ափին, *Դեյլամի* մոտ, վերում պատկերված կանաչ գետի՝ *Արաքսի* հարավային ափին: Քարտեզի ներքևի հատվածում Բաբ-ուլ-Աբուաբի և Աղվանքի հյուսիսում գտնվող տարածաշրջանն անվանված *է Խազարների երկիրը*:

Այս քարտեզում պատկերված գետային համակարգը Արաքս ու Կուր գետերն են, որոնք հոսում են աջից ձախ և նախքան Կասպից ծով հասնելն միմյանց են միանում: Վերինն Արաքսն է, իսկ ներքևինը՝ Կուրը: Կոնրադ Միլլերի կողմից 1927 թվականին պատրաստված այս երկու քարտեզների համատեղված վերագծումը կարելի է տեսնել հաջորդ պատկերում:

Պատ. 49 – Այս վերագծված քարտեզն ալ-Իդրիսիի Ռոժեի գրքի քարտեզների հիման վրա 1927 թվականներին պատրաստել է գերմանացի քարտեզագետ Կոնրադ Միլլերը, որը հրատարակվել է Շտուտգարտ քաղաքում 1928 թվականին: Քարտեզի այս հատվածը համապատասխանում է նախորդ երկու քարտեզների տարածքին: Այստեղ ցուցադրված են Միջին Արևելքի, Կովկասի ու Փոքր Ասիայի շրջանները, որոնց արաբական անվանումները նշված են լատինատառ: Քարտեզի այս հատվածը վերագծված ամբողջ քարտեզի համարյա մեկ վեցերորդ մասն է կազմում:

Այս վերագծումն էլ բնագրի նման ուղղորդված է վերը հարավով: Կենտրոնի ծովը Սև ծովն է, ձախինը Կասպից կամ Խազարների ծովն է, իսկ վերի աջումն է Միջերկրականի հյուսիս-արևելյան անկյունը:

Հայաստանի անունն առկա է երեք տեղերում. «Մեծ Հայքը», *Ալի-Արմինիյե*, տեղադրված է Վանա լճի մոտ, որն այստեղ անվանված է *Արգիս* (Արճեշի աղավաղումը բնագրինն է), «Փոքր Հայքը», *Ասաֆիլ Արմինիյե*, Վանա լճի հյուսիս-արևմուտքումն է, իսկ երրորդը, *Բաքիյյաթ ուլ-Արմինիյե*, «Հայաստանի մնացորդը», տեղադրված է երկու լճերի միջև:

Քարտեզում պատկերված մյուս ծանոթ քաղաքներից են *Բիթլիսը*, *Կալիկլան* (Կարին, էրզրումը), *Խլաթը*, *Դվինը*, *Նախիջևանը* (Նաշուի), *Արզանը*, *Ամիդը*, *Միաֆարկինը*, *Խոյը* և *Սալմաստը*, որոնցից ութը Մեծ Հայքի տարածքումն են գտնվում:

Քարտեզի վերի հատվածի ձախ կողմում եղած կանաչ լիճը Ուրմիո լիճն է, որն այստեղ անվանված է *Բուհայրի Քանութան* : Այստեղ առկա է մի տառասխալ, քանի որ անունը պետք է լիներ Քաբութան՝ այսինքն Կապուտան լիճը: Սխալի պատճառը արաբերեն տեքստում տառի մեկ կետը ներքևի փոխարեն վերը դնելն է, որով «բ» տառը դարձել է «ն»:: Դատելով Բիթլիս, Խլաթ և Արճեշ քաղաքների տեղադրությունից, մյուս փոքր լիճը, որը գտնվում է Ուրմիո լճի աջից ներքև, Վանա լիճն է:

Նույնիսկ 1154 թվականի այս քարտեզում *Բիլադ ուլ-Ռանը*, այսինքն Աղվանք-Արրանը գտնվում է Արաքսից հյուսիս, իսկ *Ատրպատականը*՝ գետի հարավային ափին: Աղվանքի տարածքում գտվող քաղաքներից են *Բաբ-ուլ-Աբուաբը*, *Շամխորը*, *Շամախին*, *Բայլականը*, *Վարսականը Թիֆլիսը* և ուրիշներ: Բոլոր երեք երկրները տեղադրված են միասին և երկու գետերի խառնիճաղանճ համակարգը պատկանում է Եփրատին ու Տիգրիսին:

6- ԱԼ-ՂԱԶՎԻՆԻ

Զաքարիա իբն Մուհամմեդ ալ-Ղազվինին (1203-1283 թթ.) պարսիկ ծագումով արաբական աշխարհագրագետ էր, որի աշխարհագրական բառարան ձեռագիրը կոչվում է *Վայրերի, հուշարձանների և հավատացյալների պատմությունը*: Սա պարունակում է եղանակների գոտիների բաժանված սխեմատիկ մի աշխարհացույց քարտեզ, ուղղորդված վերը հարավով: Ձեռագրի պատճեններից շատերը պարունակում են նաև նրա ծննդավայր Ղազվինի՝ Պարսկաստանի հնագույն քաղաքներից մեկի հատակագիծը:

Ղազվինին նաև հանրագիտակ էր և գրել է տիեզերքի վերաբերյալ մի քանի աշխատություններ, որոնցից է *Արարչության հրաշալիքները և կենդանիների տարօրինակությունները*: Նա այս գրքում ևս տեղադրել է մյուս գրքի քարտեզների նման մի աշխարհացույց քարտեզ: Պետք է նշել, որ Ղազվինիի ձեռագրերի ընդօրինակությունների մեջ եղած քարտեզները միմյանցից էական տարբերություններ ունեն և հաճախ մեկը մյուսի հետ անհամեմատելի է:

Պատ. 50 – Այս քարտեզը Ղազվինիի *Վայրերի հուշարձաններ և Աստծո արարածների պատմությունը* աշխատության 1329 թվականի ընդօրինակությունից է, որը պահվում է Բրիտանական գրադարանում: Քարտեզը շատ պարզ է և ուղղորդված է վերը հարավով, առանց ցուցադրելու ցամաքամասերի ափերը և այլ սահմանները: Սա տիպիկ իսլամական գոտիական քարտեզ է ուր, սկսած հարավից՝ բոլորակի կենտրոնից, աշխարհը բաժանված է յոթ եղանակային կամ կլիմայական գոտիների, արաբերենով «էղլիմ»-ների: Եղանակային գոտիները պարունակում են բնակելի աշխարհը, սահմանափակվելով հարավում Հասարակածի գոտիով, և վերջում՝ յոթերորդ գոտուց հյուսիս գտնվող անբնակելի «Հյուսիսային բևեռ» շրջանով:

Քարտեզում իշխող են յոթ կլիմայական գոտիները, որտեղ ծովածոցերը նշված են սեպաձև, մխրճված տվյալ գոտիների մեջ: Ձախից աջ ցուցադրված ծոցերն են *Կանաչ ծոցը*, *Պարսից ծոցը* և *Բերբերների* ծոցը: Կենտրոնի շրջանը Կասպից ծովն է, իսկ դրա աջում երկու զուգահեռ թեք գծերն անվանված են *Բահր-ուլ-Մաղրիբ ուա ալ-Ռում ուա ալ-Շամ*, «Արևմուտքի, Հռոմի (Բյուզանդիայի) և Շամի ծովը», այսինքն Միջերկրականը:

Այստեղ նշված երկրները հիմնականում իսլամական են, բայց սրանց մեջ կան նաև մի քանի ոչ իսլամական երկրներ, որոնցից են *Բյուզանդիան*, *Բուլղարիան*, *Սակալիբան* (Սլավոնները) և *Ռուսը*: *Հայաստանը* նույնպես առկա է, տեղադրված Կասպից ծովի և Ռուսաստանի միջև: Սկսած վերի առաջին գոտուց, դրանց տեղանունների մակագրությունները աջից այսպես են.

Առաջին գոտի	*Բերբերների ծոցը*, *Եմեն*, *Օմման*, *Պարսից ծոց*, *Կանաչ* [կամ Բենգալի] *ծոց*, *Չինաստան*
Երկրորդ գոտի	*Տանժեր*, *Բերբերների երկիրը*, *Ներքին Եգիպտոս*, *Հիջազ*, *ալ-Սիր*
Երրորդ գոտի	*Անդալուզիա*, *Աֆրիկա*, *Ալեքսանդրիա*, *Բեյթ-ուլ Մուղադդաս* [Երուսաղեմ], *Շիրազ*, *Քիրման*, *Մոքրան*, *Սինդ*, *Հնդկաստան*, *Կանդահար*, *Մաչին*:
Չորրորդ գոտի	*Միջերկրական*, *Դիարբեքիր*, *Իրաք*, *Ջիբալ*, *Խորասան*, *Շաջա*, *Բադախշան*, *Աթաչին*, *Տիբեթ*:
Հինգերորդ գոտի	*Ֆրանկ*, *Կոստանդնուպոլիս*, *Կասպից ծով*, *Ռուս*, *Հայաստան*, *Խորեզմ*, *Օքսիանա*, *Սադդ-Թարան*, *Թուրքեր*:
Վեցերորդ գոտի	*Գերմանիա*, *Սակալիբա* [Սլավոններ], *Ռուսներ*, *Արալյան լիճ*, *Ղփչաղներ*, *Բամիան*, *Ղայմալի*:[76]
Յոթերորդ գոտի	*Մաղրիբ*, *Ներքին Բյուզանդիա*, *Բուլղարներ*, *Բահր-ի Վարանգ*[77] [Բալտիկ կամ Հյուսիսային ծով], *Գոգ և Մագոգ* [ցեղեր]:

Եղանակային գոտիներից դուրս, վերի (հարավային) մասում կան մի քանի այլ մակագրություններ, որոնցից են *Արևմուտքի Սև ցեղեր*, *Հաբեշիստան* (Եթովպիա), *Զանզիբար*, *Նուբիա*, *ալ-Զինջ* (Արևելյան Աֆրիկայում):[78] Քարտեզի կենտրոնի ուղղահայաց մակագրությունը նշում է Հասարակածը:

Պատ. 51 – Ոսկեզօծ ու արծաթազօծ այս աշխարհացույց քարտեզը Ղազվինիի (1203-1283 թթ.) 13-րդ դարի *Վայրերի հուշարձաններ և Աստծո արարածների պատմություն* աշխատության մեկ ուրիշ՝ 1580 թվականի ընդօրինակությունից է: Այս քարտեզը պարունակում է բավականաչափ ավելի շատ տեղեկություն և մանրամասնություններ, քան նախորդը: Քարտեզը պարսկերենով է և պատված է ոսկյա և արծաթյա թերթիկներով, ինչպես մի մանրապատկեր: Օրինակը պահպանվում է Ամերիկայի Բալտիմոր քաղաքի Ուալտերս Արթ Գալերիի գրադարանում: Այստեղ լեռները ցուցադրված են ոսկեզօծ, իսկ ծոցերն ու գետերը՝ արծաթազօծ:

Ղազվինիի մյուս քարտեզների նման, սա էլ ցուցադրում է յոթ եղանակային գոտիները և քարտեզում առկա մակագրությունների մեծ մասը դրանց վերաբերյալ է: Քարտեզն ուղղորդված է վերը հարավով: Ամենահյուսիսային գոտուց դեպի հյուսիս մակագրված է.

Այստեղ բավարար արև չկա և ցրտի պատճառով կենդանիներ չեն ապրում:

Բնակելի գոտիներից հարավ մակագրությունն ասում է.

Այս շրջանի մասին տեղեկություններ չկան *և* Ծայրահեղ տաքի պատճառով
այստեղ կենդանիներ չեն ապրում:

Այս մակագրությունները հիշեցնում են Մակրոբիոսի «Փոթորկոտ» կամ «Կիզյալ» գոտին: Հյուսիսային բևեռի մոտ մեկ ուրիշ տեղ մակագրված է.

Այս տարածքում Խոյից մինչև Կշեռ(ք) մեկ օր է և Կշեռ(ք)ից Խոյ՝ մեկ գիշեր:

Հարավային բևեռի մոտ նման մի մակագրություն հայտնում է, թե.

Կշեռ(ք)ի սկզբից մինչև Ջուկ մեկ օր է և Խոյից մինչև Կույսի վերջը՝ մեկ գիշեր:

Վերոհիշյալ մակագրությունները փաստում են իսլամական քարտեզագետի ունեցած գիտելիքները արեգակային համակարգի ինչպես նաև օրվա և եղանակների տևողության մասին. չնայած որ անհավանական չէ, որ 16-րդ դարում քարտեզն ընդօրինակող գրիչն ինքն այս տեղեկություններն ավելացրած լինի 13-րդ դարի բնագրին:

Քարտեզի մեծ մասը զբաղեցնում են Աֆրիկան ու անծանոթ հարավային շրջանները, մինչդեռ Եվրոպան ու Ասիան միասնաբար զբաղեցնում են քարտեզի ներքևի մասը: Ձախում գրված յոթ մակագրությունները գոտիների անվանումներն ու նրանց ֆիզիկական չափերն են ճշտում:

Ձախում գտնվող ծովը Խաղաղ օվկիանոսն է, իսկ վերի մեջտեղինը՝ Հնդկական օվկիանոսը և Արաբական ծովը: Վեց կղզիներով շրջապատված թերակղզին *Չինաստանն* է, որի աջումն է *Հնդկական* կամ Բենգալյան ծոցը: Գնալով աջ, ծովածոցը, որի մեջ են թափվում երեք գետերը՝ Պարսից ծոցն է: Սրան կից, Արաբական ծովը մտած կիսաշրջանաձև թերակղզին Արաբական թերակղզին է, իսկ դրանից աջ՝ մակագրված *Բահր-ի Խուլզում*, Կարմիր ծովն է: Նեղոսի ութ վտակները թափվում միանում են ինչ-որ լճի մեջ, որից սկսվում է բուն *Նեղոսը* և հոսում դեպի Միջերկրական: Սա աջից

[76] Տե՛ս տողատակի ծանոթագրություն թիվ 58:
[77] Ըստ Աբուլֆեդաի ու Ղազվինիի, Վարանգը հյուսիսային մի ծոց է, որը շատ սառն է ու անհյուրընկալ:
[78] Կարող է նաև լինել Բահրեյնի Զինջ քաղաքը:

օվկիանոսին միացած ճյուղավորումներով ու ծովախորշերով լի ծովն է, անվանված *Բահր-ի Միսր* (Եգիպտական ծով): Սև ծովը ճյուղավորվում է Միջերկրականի մեջտեղից և մյուս կողմից շարունակվում ու միանում է Հյուսիսային օվկիանոսին: *Տիգրիսն* ու *Եփրատը* Սև Ծովը միացնում են Պարսից ծոցին: Կասպից ծովի մեկ մասը տեսանելի չէ, քանի որ ծածկված է կազմված էջերի ծալքի մեջ: Արաքսը սկսվում է Տիգրիսից, իսկ Կուրը՝ Սև ծովից: Սրանք միանում են իրար ու հոսում դեպի Կասպից ծով: Արաքսի ու Տիգրիսի միջև տեղադրված է *Արմինիյե* «Հայաստան» անվանումը, որի երկու կողմերում նշված են *Թավրիզն* ու *Էրզրումը*:

Քարտեզի ծալքից արևելք գտնվող քառանկյունի ծովը Արալյան ծովն է, որի մեջ են թափվում Կենտրոնական Ասիայից սկիզբ առնող *Ջեյհունն* (Ամու դարյա, Օքսուս) և *Սեյհունն* (Սիր դարյա) գետերը:

7 – ԻԲՆ-ՍԱԻԴ

Անդալուզիացի բանաստեղծ ու աշխարհագրագետ Աբուլ-Հասան իբն-Սաիդ ալ-Մաղրիբին ծնվել է Գռանադայում 1213 թվականին, 1241-ից տեղափոխվել ու բնակվել է Եգիպտոսում, ուր նա արդեն ճանաչված էր որպես բանաստեղծ:[79] Այստեղ նա շարադրել է մի շարք բանաստեղծական ու աշխարհագրական երկեր: 1276-ին նա մեկնում է Թունիս, ուր տաս տարի անց մահանում է: Մաղրիբի մասին գրված նրա աշխարհագրական պոեմներն ու հավաքածուները մեծ համբավ ունեին, բայց ցավոք մեզ չեն հասել:[80] Նրա ոչ շատ հայտնի ձեռագրերից մեկը պահպանվում է Օքսֆորդի համալսարանի Բոդլեյան գրադարանում և պարունակում է ստորև ներկայացված հետաքրքրական քարտեզն ու մի քանի այլ գծագրեր:

Պատ. 52/52a – Իսլամական այս քարտեզի բնօրինակը պատկանում է 13-րդ դարին, բայց այստեղ պատկերվածը ձեռագրի 1570 թվականի ընդօրինակությունից է, որը կոչվում է *Գիրք պատմության և սկզբի*: Ձեռագիրը վերագրվում է իբն-Սաիդ ալ-Մաղրիբիի գրչին, կամ էլ Սաուի ալ-Ֆարսիին: Քարտեզի աղբյուրները գալիս են 13-րդ դարի իսլամական քարտեզագրությունից: Քարտեզի վերի աջ մասում քարտեզագիրը նշում է, որ քարտեզը պատրաստելիս օգտվել է հույն Պտղոմեոսից և երկու այլ հեղինակների աշխատություններից:

Քարտեզի ուղղորդությունը իսլամական չէ, այսինքն սրա վերը ոչ թե հարավն է, այլ արևելքը, որն ընդունված էր ժամանակի քրիստոնեական քարտեզագրության մեջ: Սա Բալխի իսլամական դպրոցի ուշ շրջանի նմուշներից է, ուր արևելյան կիսագունդը ներկայացված է բավականին մանրամասն ու համեմատաբար ճշգրիտ: Այստեղ ցամաքների ու ծովերի համեմատական դրվածքը իրականությանը բավականին մոտ է: Քարտեզում լեռները ներկված են սրճագույն, ծովերը՝ մուգ կանաչ, իսկ գետերը՝ բաց կանաչ: Եղանակային յոթ գոտիները նշված են կարմիր կամարաձև գծերով. Հայաստանն ընկնում է մասամբ չորրորդ և մասամբ էլ հինգերորդ գոտիների միջև, այսինքն նույն գոտիներում, ինչ որ ալ-Իդրիսիի քարտեզներում է (տե՛ս Պատ. 47 և 48):

Կարելի է ասել, որ այս քարտեզում արևելյան կիսագնդի պատկերն իսլամական քարտեզների մեջ լավագույնն է: Աֆրիկան ներկայացված է որպես մի մայրցամաք շրջապատված ջրով և արևմտյան՝ Ատլանտյան օվկիանոսը հարավային անցումով միացած է արևելյան՝ Խաղաղ օվկիանոսին: Ասիայում Արաբական թերակղզու, Հնդկաստանի, Հնդկաչինի, Մալայան արշիպելագի և Չինաստանի ուրվագծերը ճանաչելի են: Սիբիրը նշված է որպես *Գոգ և Մագոգ* ցեղերի արգելանոցը, ուր նրանք առանձնացված են մարդկությունից Ալեքսանդր Մակեդոնացու կառուցած պարիսպով, որի վարը տեղադրված է մի դարպաս: Հարավ-արևելյան Ասիայի ծովերը լի են բազմաթիվ կղզիներով: Եվրոպայում ճանաչելի են Իբերյան (Պիրենեյան) թերակղզու, Ֆրանսիայի ու Հյուսիսային Եվրոպայի ուրվագծերը *Հյուսիսային ծովում* առկա են յոթ մեծ կղզիներ, իսկ Միջերկրականում՝ հինգը: Բոլոր ցամաքամասերի տարածքները լցված են բազմաթիվ երկրների ու շրջանների տեղանուններով:

Կոստանդնուպոլիսը տեղադրված է Միջերկրականը Սև ծովին միացնող նեղուցի վրա, որը նշում է Ադրիատիկ ծովը, Բոսֆորն ու Դարդանելը: Կասպից ծովը քարտեզի կենտրոնի քառանկյունի լիճն է, որն իր երկու (երևակայական) կղզիներով գտնվում է Սև ծովի արևելքում:

Կասպից ծովի ներքևում առկա է մի մեծ լեռնաշղթա, հավանաբար Կովկասյանը, իսկ մեկ ուրիշն էլ առկա է սրանից արևմուտք (ներքև), որը կամ Հայկական լեռնաշխարհը կամ էլ Տավրոսյան լեռներն է ներկայացնում:

Պատ. 52a-ի մեջ, հետևյալ կարգով և թվերով նշված են քարտեզում ցուցադրված Հայաստանի հարակից երկրների, տարածաշրջանների ու քաղաքների անվանումները.

1. *Արմինիյե* (Հայաստան), տեղադրված Կասպից ծովի հարավում եղած երկու լեռնաշղթաների միջև:
2. *Բաբ-ուլ-Աբուաբ*, Դերբենդ, Կովկասյան լեռների մոտ:
3. *Շիրվան*, կրկին Կովկասյան լեռների մոտ:
4. *Դեյլամ* (Գիլան) վերոնշյալ երկուսի միջև:
5. *Համադան*, Հայկական լեռնաշխարհից արևելք:

[79] Քաղաքի անվանումը հայերենով ընդհանրապես գրվում է Գրանադա, բայց քանի որ իսպաներենում դա հնչվում է «ռ», ապա տեսքտում պահպանվել է իսպաներենի ճշգրիտ հնչումը:

[80] *Encyclopaedia of Islam*, հատոր 3, էջ 296:

6. *Բաղդադ*, Հայկական լեռնաշխարհից հարավ:
7. *Ջազիրա* (Միջագետք), Հայկական լեռնաշխարհից հարավ-արևմուտք:
8. *Խորասան*, Հայկական լեռնաշխարհից հարավ-արևելք ու Կասպից ծովից հարավ:
9. *Բահր-ուլ-Խազար*, Կասպից ծով:
10. *Բահր-ուլ-Ռում*, Միջերկրական ծով:
11. *Բահր-ուլ-Ֆարս*, Պարսից ծոց:
12. Կովկասյան լեռները և Արարատները:
13. Հայկական լեռնաշխարհը (բարձրավանդակը):
14. Տիգրիսը, որը սկիզբ է առնում Հայկական լեռնաշխարհից:
15. Եփրատը, որի ակունքը գտնվում է Արարատի հարավում:

Պատ. 53 – Իբն-Սաիդի նույն ձեռագիրը պարունակում է նաև աշխարհի մեկ ուրիշ բոլորակ քարտեզ, ուր պատկերված են միայն եղանակային գոտիները: Այս քարտեզն էլ ուղղորդված է վերև արևելքով, և այդ իսկ պատճառով իսլամական յոթ եղանակային գոտիները դարձել են ուղղահայաց բաժանումներ: Այստեղ բացակա են ծովերի ու ցամաքների բաժանումներն ու այլ աշխարհագրական ու տեղագրական տվյալներ, և եղանակային գոտիները ամբողջովին լցնում են բոլորակի տարածքը:

Գոտիները համարակալված են աջից ձախ և տարածվում են արևելքից արևմուտք: Ամեն մի գոտի պարունակում է քաղաքների ու երկրների անվանումների մակագրություններ: Սրանց մի մասը թարգմանաբար բերվում են ստորև.

Գոտի 1 - *Ադեն*, *Օմման*, *Սանա*, *Ասուան*, *Նուբիա*, *Դամասկոս*, *ալ-Զինջ և այլն*
Գոտի 2 - *Մեքքա*, *Ասուան*, *Բահրեյն*, *Եգիպտոս*, *Հիջազ*, *Անթակիա և այլն*.
Գոտի 3 - *Ալեքսանդրիա*, *Ռամմալահ*, *Ղոդս* [Երուսաղեմ], *Քիրման*, *Քաբուլ*, *Բասրա*, *Իսթախր*, *Թարսուս*, *Ասկալոն*, *Խուլզում*, *Բերբեր*, *Բաղդադ և այլն*.
Գոտի 4 - *Մոսուլ*, *Խարրան*, *ալ-Ջազիրա* [Միջագետք], *Նիշաբուր*, *Սպահան*, *Անթակիա*, *Դինավար*, *Համադան*, *Աֆրիկա*, *Տանժեր և այլն*.
Գոտի 5 - *Անդալուզիա*, *Թաբարիստան*, *Մերվ*, *Ատրպատական*, *Սամարղանդ*, *ալ-Խազար*, *ալ-Թուրք*, *ալ-Ռում* [Բյուզանդիա] *և այլն*.
Գոտի 6 - *Սակալիբա*, *Պարտավ*, *Հայաստան*, *Խորեզմ*, *Գորգան*, *Դեյլամ և այլն*.
Գոտի 7 - *Կոստանդնուպոլիս*, *Խազար և այլն*.

Կարևոր է նշել, որ քարտեզում այն գոտին ուր տեղադրված է Հայաստանը, գտնվում է Ատրպատականից հյուսիս և Խազարից (որոնք աղվանների հարակից ցեղախմբերից են) հարավ շրջաններում:

8 – ԱԼ-ՄՈՍԹՈՒՖԻ

Համդ Ուլլահ ալ-Մոսթոուֆի ալ-Ղազվինին (շուրջ 1281-1339 թթ.)՝ ճանաչված որպես ալ-Մոսթոուֆի, միջնադարյան հանրահայտ պատմաբան ու աշխարհագրագետ էր, ծնված Պարսկաստանի Ղազվին քաղաքում: 1330 թվականին նա սկսեց շարադրել իր *Զաֆար-Նամեն* (Հաղթանակների գիրքը), որը 70,000 տողանոց մի էպոս է իսլամական պատմության ու հաղթանակների մասին: Նրա մյուս աշխատություններից են *Թարիխէ գոզիդա* (Ընտրանի պատմություն) պատմական երկը և *Նուզհաթ ուլ-Ղուլուբ* (Սրտի երջանկություն) տիեզերագիտական ու աշխարհագրական ձեռագիրը:[81] Աշխարհագրական գլուխներում գիրքը տեղեկություններ է տալիս աշխարհի տարբեր երկրների, շրջանների ու քաղաքների, ինչպես նաև իսլամական աշխարհի կարևոր ծովերի, լճերի, գետերի, կղզիների ու լեռների վերաբերյալ: Հայաստանի լեռներից, լճերից ու գետերից շատերը նշված են այս աշխատության մեջ: Լեռներին վերաբերող գլխում նշված են, որ Արարատն ու Սիփանը Հայաստանի կարևոր լեռներից են, իսկ Ատրպատականի կարևոր լեռն է Սավալանը:

Պարսկաստանի հարակից երկրների մասին խոսելիս հեղինակը մեկ գլուխը հատկացրել է Հայաստանին: Նա իր խոսքն սկսում է այսպես.

> *Գոյություն ունեն երկու Հայաստաններ՝ Մեծը և Փոքրը: Փոքր Հայքը պարսից տիրապետության ներքո չէ: Մեծ Հայքը հպատակվում էր Պարսկաստանին և տարեկան հարկ էր վճարում Պարսից թագավորին, որը հավասար էր ամեն մեկ բեխի [այսինքն՝ տղամարդու] համար երեք թումանի:*

Հեղինակն ապա ցուցակագրում է երկրի մեծ քաղաքներն ու նրանց կարևոր յուրահատկությունները, եղանակը, գյուղատնտեսությունը, արտադրությունն ու առևտուրը ինչպես նաև ամեն մի քաղաքից գանձած տարեկան հարկի քանակը:[82]

Տասնյոթերորդ դարի Օսմանցի աշխարհագրագետ Քյաթիբ Չելեբին (1609-1657 թթ.) իր կարևորագույն աշխատության՝ *Ջիհան Նյումայի* մեջ մեկ գլուխ հատկացրել է Հայաստանին, որտեղ տեքստը սկսում է համարյա թե ալ-Մոսթո-

[81] *Encyclopaedia of Islam*, հատոր 3, էջ 122:
[82] Ալ-Մոսթոուֆի, *Նուզհաթ ուլ-Ղուլուբ*, Բրիտանական գրադարան, ձեռագիր թիվ MS Add.7709, թ. 190a/b:

ուֆիի նույն բառերով: Շատ հավանական է, որ Չելեբիին իր նյութի կարևոր մասը ուղղակի վերցրել է ալ-Մոսթոուֆիի շարադրածից: Որքան մեզ հայտնի է, այս աղբյուրը Չելեբիին վերաբերող որևէ աշխատության մեջ չի հիշատակվում:[83] Ըստ երևույթին, ալ-Մոսթոուֆիի այս աշխատությունը միջնադարյան արաբական ու պարսկական գրականության մեջ կարևոր աղբյուր է հանդիսացել, քանի որ ավելի քան 500 անգամ ընդօրինակվել է: Տեքստից Քյաթիբ Չելեբիի օգտվելն ու այդ մասին չնշելը ընդհանրապես ժամանակի բնութագրական գծերից մեկն է:

Ալ-Մոսթոուֆիի *Նուզհաթ ուլ-Ղուլուբ* աշխատության մեջ կա երկու ձեռագիր քարտեզ: Մեկը Պատ. 54-ի աշխարհացույց քարտեզն է, իսկ մյուսը տարածաշրջանային մի քարտեզ է, ուր պատկերված է Միջերկրականի և Կենտրոնական Ասիայի միջև ընկած տարածքը (Պատ. 55), որը կազմում է իսլամական աշխարհի մեծ մասը: Ներկա հատորում վերատպված այս երկու քարտեզներն էլ վերցված են ձեռագրի 17-րդ դարի ընդօրինակություններից, որոնք պահվում է Բրիտանական գրադարանում:

Պատ. 54 – Այս շրջանաձև աշխարհացույց քարտեզը ալ-Մոսթոուֆիի 1339/1340 թվականների *Նուզհաթ ուլ-Ղուլուբ* ձեռագրի տասնյոթերորդ դարի ընդօրինակությունից է, որը պահվում է Բրիտանական գրադարանում: Քարտեզը Բալխի դպրոցի քարտեզներին չի նմանում և ավելի հարազատ է ալ-Բիրունիի քարտեզներին, որոնց մեջ ցամաք/ծով սահմանները տարբեր կերպ են ներկայացված: Քարտեզը կարևոր է այն առումով, որ օգտագործում է ինչ-որ նախնական աշխարհագրական կոորդինատների մի ցանց:

Քարտեզում հորիզոնական գծերը ներկայացնում են եղանակային գոտիները, որոնք բնակելի աշխարհը բաժանում են յոթ շրջանների, հավելյալ նշելով նաև երկու ծայրամասային և անբնակելի գոտիներ: Այս հորիզոնական բաժանումներին ավելացված են ուղղահայաց ցանցի գծերը, որոնք նման են միջօրեականների, գծված միմյանցից տասն աստիճան հեռավորության վրա, բայց սրանք գծված են ուղիղ և շարունակվում են անգամ քարտեզի շրջանից դուրս: Ցանցը ծածկում է ամբողջ բնակելի աշխարհը: Հարկ է նշել, որ ի բացառություն Պտղոմեոսյան վերակառուցված քարտեզների, միջօրեականների աղեղնաձև ներկայացվելն ու նրանց բևեռներում միահալը քրիստոնեական միջնադարյան քարտեզներում երևան եկան շատ ավելի ուշ: Քարտեզին վերաբերող տեքստի մեջ գոտիներն անվանված են ըստ դրանց տեղադրմանը. այդ մասին նշված է քարտեզի բոլորակից դուրս: Հասարակածից հարավ (վերևում) գտնվող շրջանը կոչվում է *նախաեղանակային գոտի*, որը տարածված է Հասարակածից մինչև *Հարավային բևեռ*: Դրանից ներքև առկա են յոթ գոտիները, իսկ դրանց վերջում՝ քարտեզի ամենաներքևի ծայրամասում առկա է մի փոքր աշխարհամաս, որը կոչվում է *գոտիներից հեռու* և *Հյուսիսային բևեռ*: Ցանցի ամեն մեկ բաժանմունք ներկայացնում է տասն աստիճան հեռավորություն:

Քարտեզը հիմնականում ուղղորդված է վերը հարավով, բայց ձեռագրի մեջ թերթը տեղադրված է գլխիվայր այնպես, որ ավելացված մակագրությունների մեկ մասն էլ այդպես են գրված՝ շուռ տրված 180 աստիճանով: Ներկա հատորում ներկայացվածը ճշգրիտ ուղղորդությամբ է ցուցադրված՝ վերը հարավով:

Կապույտ զանգվածը Հնդկական ու Խաղաղ օվկիանոսներն են, որոնք Աֆրիկայի արևմուտքում միանում են *Արևմտյան ծովին*: Բնակելի աշխարհը սկսվում է հասարակածից հյուսիս, որն այստեղ կոչվել է *բարեխառն գիծ*: Աջ կողմում ծովի մեջ մխրճված երկու ցամաքամասերը ներկայացնում են Աֆրիկան: Աջից առաջինը հյուսիս-արևմտյան Աֆրիկան է, որից հետո եղած ծոցը կոչված է սովորաբար Միջերկրականին տրված անունով՝ *Բահր-ի ֆարանգ*: Սա իրականում Արևմտյան Աֆրիկայի Գվինեական ծոցն է, որը պատկերված է խեղաթյուրված: Հաջորդ ցամաքամասը Կենտրոնական և Հյուսիսային Աֆրիկան է, որի ձախումն է *Բահր-ի Խուլզումը*: Սա Կարմիր ծովին տրված հին արաբական անվանումն է, որի հիմքումն է Կարմիր ծովում եղած «Խուլզում» ժամանակակից կարևոր նավահանգստային քաղաքի անունը:[84] Սրա ձախումն է Արաբական թերակղզին և *Բահր-ի Օմմանը*: Արևելքում վերջին ցամաքամասը ներկայացնում է *Չինաստանն* ու *Հնդկաստանը*: Աջում օվկիանոսից ցամաք մտած ծովը Միջերկրականն է, որը կոչվում է *Բահր-ի Ռում ուա Ֆարանգ*, որի հյուսիսումն է գտնվում *Կոստանդնուպոլիսը*: Ցամաքամասի կենտրոնում եղած կապույտ բոլորակը *Կասպից ծովն* է:

Փոքր Հայքը նշված է *Չորրորդ գոտու* մեջ, իսկ այս երկրամասի մոտ առկա են դրան հարակից քաղաքների ու շրջանների անունները: Մեծ Հայքը, չնայած որ կարևոր տեղ ունի քարտեզի բացատրական տեքստի մեջ, աշխարհացույց այս քարտեզում պատկերված չէ, սակայն առկա է նույն ձեռագրի մեկ ուրիշ քարտեզում, որն իսլամական աշխարհի քարտեզն է (տե՛ս հաջորդ պատկերը):

Կասպից ծովի հարավում նշված են *Արաբական Իրաքն* ու *Ատրպատականը*: Դրա հարավ-արևելքում կարելի է տեսնել *Խորասանը*, *Ֆարսը*, *Քիրմանը*, իսկ հյուսիսում ու հյուսիս-արևմուտքում՝ (որտեղ պետք է լինի Կովկասյան լեռնաշղթան) առկա են *Բուլղարիան*, *Ռուսը*, *Ղփչաղները*, *Չերքեզները* և *Ֆրանկները*: *Գոգ և Մագոգ* վայրագ ցեղերը նշված են բնակելի աշխարհի ծայրամասի *Վեցերորդ գոտում*:

Պատ. 55 – Ալ-Մոսթոուֆիի այս քարտեզը, որը պարունակում է Կասպից, Սև, Միջերկրական, Օմմանի ծովերի ու Պարսից ծոցի միջև ընկած տարածքը, նրա պատմական ու աշխարհագրական նույն աշխատությունից են, ինչ որ նախկին քարտեզը:[85] Այստեղ էջը ծածկված է մեկից երկու աստիճանի բաժանումներով գծված մի ցանցով: Ծովերի ափերը

---

[83] Քյաթիբ Չելեբի, *Ջիհան Նյումա*, գլուխ 41, 1657 և Սաֆրաստյան, *Թրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին* , Հատոր 2, Երևան, 1964, էջ 29:

[84] *Encyclopaedia of Islam*, հատոր 5, էջ 367-369, 1980:

[85] Այս անունն ընդհանրապես գրվում է մեկ մ-ով, բայց քանի որ արաբերենում սա երկու մ-ով է գրվում և հնչվում, այս թարգմանության մեջ պահպանված է արաբերենի ճշգրիտ հնչումը:

նշված են սև գծերով, իսկ ուղղահայաց գրությունները գոտիների անվանումներն են որոնց անգլերեն թարգմանությունը կապույտով ավելացված է քարտեզի վրա, իսկ այդ թվերին վերաբերող տեղանունների թարգմանությունները տրված են ներքևի ցուցակում:

Քարտեզն ուղղորդված է վերը հարավով և ցանցի քառակուսիների մեջ գրված են տարբեր տեղանուններ: Ցանցի ամեն մեկ բաժանումն ունի մեկ աստիճան երկայնություն և մոտ երկու աստիճան լայնություն: Այստեղ հիմնականում ներկայացված է իսլամական աշխարհը, ներառյալ Պարսկաստանն ու Միջագետքը, հարավում Եգիպտոսն ու արևելքում Կենտրոնական Ասիան մինչև *Սամարղանդ* ու *Բուխարա:* Սա նախկին պատկերի, աշխարհացույց քարտեզի, կենտրոնական մասն է, որի ընդհանուր բացատրականները նաև այս քարտեզին են վերաբերում: Այստեղ կարելի է տեսնել Կարմիր ծովի նավահանգիստ *Խուլզում* քաղաքը:

Քարտեզի վրա կապույտով ավելացված թվերը տեղադրված են տեղանունների մոտ, որոնց թարգմանությունները տրված են ստորև:

1. *Բահր-ի Խազար* – Կասպից ծով
2. *Բահր-ի Օմման* – Օմմանի ծով կամ Պարսից ծոց
3. *Բահր-ի Ռում* – Միջերկրականը և Սև ծովը
4. *Բահր-ի Խուլզում* – Կարմիր ծով
5. *Սալմաստ**, *Արմինիյե* * – Հայաստան
6. *Խլաթ**
7. *Արճեշ* *
8. *Երզնկա**
9. *Մանազկերտ**
10. *Արրան*, Աղվանք – Թիֆլիսի հյուսիսում
11. *Թիֆլիս* **
12. *Բաքու*** և *Շամախ*** – Կասպից ծովի ափերին
13. *Մըսըր* – Եգիպտոս
14. *Բուխարա* և *Սամարղանդ* – Կենտրոնական Ասիայում
15. *Խուլզում* – Կարմիր ծովի նավահանգիստ
16. *Ուրմիա*
17. *Թավրիզ* և *Արդաբիլ*
18. *Մարաղա*
19. *Դամասկոս* և *Անբակիա*
20. *Կայսերի* – Կեսարիա
21. *Բեյթ ուլ-Մուղադդաս* – Երուսաղեմ
22. *Նախիջևան** և *Մարանդ*
23. *Մալաթիա**
24. *Պարտավ*** և *Շամխոր*** [Շամգոռ]

(*) Ձեռագրում սրանք նշված են որպես Հայաստանի քաղաքներ:
(**) Այս քաղաքները նշված են Աղվանքի տարածքում:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՈՒԾ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ (Տասնմեկերորդից մինչև տասնչորսերորդ դարերի քրիստոնեական քարտեզներ)

Տասնմեկ-տասնչորսերորդ դարերից մեզ հասել են շատ կարևոր աշխարհացույց քարտեզներ, որոնց մեծ մասը տեղ են գտել տարբեր ձեռագիր ժողովածուների մեջ, իսկ մի քանիսն էլ մեծադիր են ու իրենցից ներկայացնում են առանձին աշխատություններ, պատրաստված որպես քարտեզներ: Այս ժառանգությունից ընտրված կարևորագույն քարտեզները քննարկված են գրքի այս գլխում:

Այն ձեռագրերը, որոնց մեջ կան քարտեզներ, ընդհանրապես տարբեր նյութերի հավաքածուներ են, ինչպես օրինակ Զատկական աղյուսակներ, տոնացույցեր, բնագիտական, աստղաբաշխական ու պատմական աշխատություններ և, հատկապես, կրոնական տարբեր նյութերի հավաքածուներ: Այս քարտեզները շատ տարբեր են իրենց պարունակած տեղեկություններով, տվյալներով և դրանց դասավորումներով, բայց և այնպես ունեն շատ ընդհանուր գծեր: Այստեղ կան պարզ T-O տարատեսակի քարտեզներ, որոնք դեռևս հետևում են Սալլուստիոսի և Օրոսիոսի մոդելներին, պարունակելով իրենց նախորդներից համեմատաբար ավելի շատ տեղագրական տեղեկություններ: Կան նաև մանրամասն տեղեկություններ պարունակող և դետալներ ցուցադրող քարտեզներ, որոնք ներկայացնում են աստվածաշնչական ավանդույթներից ու առասպելներից հավաքած նյութեր ու պատկերներ:

Միջնադարում պարզ T-O տեսակի քարտեզների վրա սկսեցին ավելանալ առասպելներից ու լեգենդներից վերցված նյութերն ու պատկերները, որոնք քարտեզագիրներին էին հասել հնագույն հունական կամ այլ դասական աղբյուրներից: Առասպելական արարածների շարքում էին շան գլուխ ունեցող մարդը, անգլուխ մարդը (որի աչքն ու բերանը նրա կրծքի վրա են), մեկ ոտ ունեցող մարդը՝ Սկիապոդը, որը շատ արագ վազում է ցատկելով և արևից պաշտպանվում իր հսկա ոտի ստվերի տակ, մեծ ականջներով մարդը, որը ցրտից պաշտպանվելու համար ականջներով է փաթաթվում, մարդակերները և այլն: Քարտեզներում տեղ էին գտնում նաև տեղեկություններ, վերցված պատմական ու աստվածաշնչական աղբյուրներից, օրինակ Զրհեղեղի, Նոյյան տապանի, Կարմիր ծովի ճեղքվելու, Գոգ և Մագոգ վայրագ ցեղերի արշավանքներին դիմադրելու նպատակով Ալեքսանդր Մակեդոնացու կառուցած պարսպի, Երկրային դրախտի ու նրա չորս գետերի, ամազոնուհիների ու նման այլ նյութերի վերաբերյալ:[86]

Այս ժամանակաշրջանում (1000-1350 թթ.) պատրաստված մանրակրկիտ քարտեզները պարունակում են վերը թվարկված նյութերի վերաբերյալ մակագրություններ ու մանրապատկերներ, ինչպես նաև մանրամասն պատմական ու աշխարհագրական տեղեկություններ, քարտեզում ցուցադրված երկրների ու շրջանների մասին: Տեղեկությունների քանակը, բնականաբար, սահմանափակվում է քարտեզի ֆիզիկական չափերով և մեծ քարտեզներում այս տեղեկությունները բավականին ծավալուն են: Սրանցից շատերն ունեն կրոնական ուղղվածություն, մասնավորապես քարտեզի կենտրոնում ունենալով Երուսաղեմը, Կարմիր ծովը ճեղքված և ներկված կարմիր գույնով, որը ցուցադրում է իսրայելցիների անցման համար ծովի բացվելը: Քարտեզները պարունակում են տարբեր քանակի տեղագրական և այլ մակագրություններ: Համեմատության համար այս դարաշրջանի կարևոր քարտեզների պարունակած մակագրությունների քանակը նշող թվերը տրված են ներքևի աղյուսակում:

Քարտեզի անվանումը	Պատ.	Մակագրությունների քանակը
Ալբի քարտեզ	14	50
Թորնի աբբայության քարտեզ	25	60
Մատթեոս Փարիսի աշխարհացույց	-	81
«Բարոյախոս» գրքի քարտեզ	68	95
Քոթթոնյան քարտեզ	57	146
Լամբերտի քարտեզ	59	180
Բարհեբրեոս	76	190
Սաուլիի աշխարհացույց	58	229
Հիգդենի մեծ աշխարհացույց	79	346
Հերոնիմոսի քարտեզ	11	407
Հերեֆորդի աշխարհացույց	77	1,021
Էբսթորֆի աշխարհացույց	70	1,224

[86] Տե՛ս *Հին Կտակարան*, Եզեկիել 38 և 39:

Պետք է հիշել, որ այս քարտեզներից ոչ մեկն ամբողջությամբ նորաստեղծ գործ չէ. նրանց պարունակած որոշ տեղեկություններ վերցված են մեկ այլ աղբյուր-քարտեզից, որի վրա քարտեզագիրն ավելացրել է իր ունեցած տեղեկություններն ու անհրաժեշտ նյութերը՝ թելադրված քարտեզը պատվիրողի կողմից կամ էլ պայմանավորված դրա կիրառության նպատակով: Հետաքրքիր է, որ այստեղ ներկայացված 12 քարտեզից 9-ն ունեն ինչ-որ մի առնչություն Անգլիայի հետ, չնայած կարող են նույնիսկ Անգլիայում պատրաստված չլինել:

Ուշ միջնադարյան շրջանում պատրաստվել են մեծադիր աշխարհացույց քարտեզներ, այսպես կոչված «մապպա մունդի»-ներ, որոնք բավական մեծաթիվ են եղել, բայց իրենց ֆիզիկական չափի պատճառով դրանցից շատ քչերն են մնացել համեմատաբար անվնաս և հասել մինչև մեր ժամանակները: Սրանցից չորսը հասել են մինչև քսաներորդ դար, որոնք են՝ Կոռնուոլյան դքսության, Վերչելլի, էբսթորֆի և Հերեֆորդյան աշխարհացույց քարտեզները, այդպես անվանված ըստ իրենց պահպանության վայրերի անունների: Այս չորս քարտեզներն էլ ունեն անգլիական ծագում կամ աղբյուր:[87] Քորնվալյան դքսության աշխարհացույցը հայտնաբերվել է Անգլիայում, Վերչելլիի մասին ասվում է, թե Իտալիա է բերվել Անգլիայից, էբսթորֆի քարտեզն էլ պատրաստել է մի անգլիացի վանական և, վերջապես, Հերեֆորդի «Մապպա Մունդին» ծնունդ է առել ու պահպանվում է Անգլիայում:

Այս քարտեզների ձևավորումը, դրանց մեջ ցուցադրված Միջերկրական ծովը և պարունակած հավելյալ պատմական, առասպելական ու աշխարհագրական տեղեկությունները ու մանրապատկերները շատ տեղերում ունեն ընդհանուր նմանություններ: Սրանք բոլորը T-O տեսակի են ու հիմնված Օրոսիոսի մոդելի վրա, որի վրա ավելացված են տեղեկություններ Պլինիոսի, Հերոնիմոսի, Օգոստինոսի, Իզիդորի և ուրիշների աշխատություններից: Իտալացի Ումբերտո Էքոյի «Բաուդոլինո» պատմական վեպում, ուր պատկերված է կյանքը 12-րդ դարում, հերոսը երազում է գնալ հեռավոր երկրներ, հասնել ու բարձրանալ Արարատը, ուր կարելի է տեսնել Նոյյան տապանի մնացորդները, գնալ Աղվանք, ուր մարդիկ ավելի սպիտակ են քան ալյուրը, հանդիպել ամազոնուհիների ու հասնել Նեղոս, Դրախտի չորս գետերից մեկը, որը սկիզբ առնելով այնտեղից՝ անցնում է հնդկական անապատներից, ընդհատակյա անցումով հասնում է Եգիպտոս և կտրելով սրա տարածքը՝ թափվում Միջերկրական ծով: Այս բոլորը և դեռ ավելին ինչ-որ ձևով ցուցադրված են այս գլխում քննարկված համարյա բոլոր ուշ միջնադարյան քարտեզներում՝ հատկապես մեծածավալ աշխարհացույց քարտեզներում:

Քսաներորդ դարի վերջերում Կոռնուոլյան դքսության արխիվներում գտնվեց մի աշխարհացույց քարտեզի պատառիկ: Սա 61x53 սմ չափերով մի մագաղաթ էր, որը մաս էր կազմել 157 սմ տրամագիծ ունեցող շրջանաձև աշխարհացույց մի քարտեզի: Գտնված պատառիկը վերաբերում է Աֆրիկային և իր ներկայացման ոճով ու պարունակությամբ նման է Վերչելլիի ու Հերեֆորդի քարտեզներին: Քարտեզն այստեղ չի քննարկված, քանի որ այս պատառիկը Կովկասի շրջանը չի պարունակում:

Վերոհիշյալ քարտեզների մեծ և հիմնական մասը, ինչպես նաև ուրիշ կարևոր ուշ միջնադարյան քարտեզներ քննարկված են ներկա գրքի մեկ այլ գլխում:

1 – ՔՈԹՈՆՅԱՆ ՔԱՐՏԵԶ

Պատ. 56/56a – Այս քարտեզը կոչվում է Անգլո-Սաքսոն կամ Քոթթոնյան քարտեզ, քանի որ պատկանում էր սըր Ռոբերտ Քոթթոնին, որը 1753 թվականին Բրիտանական թանգարանը հիմնող այն երեք անհատներց մեկն էր, որն իր հավաքած գրադարանը նվիրեց թանգարանին: Քարտեզը փոքրածավալ է ու պատրաստված է Անգլիայում 1050 թվականին և տեղադրված անգլո-սաքսոն Պերիգետեսի ձեռագիր ընդօրինակության մեջ: Սա պարունակում է Դիոնիսուս Պերիգետեսի երրորդ դարում գրված աշխարհագրական չափածո պոեմը, ուր հեղինակը նկարագրում է բնակելի աշխարհի տարածքը: Ձեռագիրը պարունակում է նաև տոնացույցեր և այլ աղյուսակներ, պատմություն և նույնիսկ մի ուրիշ փոքր Մակրոբիոսյան աշխարհացույց քարտեզ, ուղղորդված վերը հյուսիսով: Քարտեզը կազմվել է Անգլիայում, բայց նրա արմատները հասնում են մինչև հռոմեական շրջանը և ուղղակի կապ ունեն Մարկոս Վեսպասիանոս Ագրիպպայի (ծնված մ.թ.ա. 63 թվին) քարտեզին, որը նա պատրաստել էր Հուլիոս Կեսարի կարգադրությամբ մ.թ.ա. առաջին դարում:

Չնայած որ քարտեզը պատրաստվել է այն ժամանակներում, երբ քրիստոնեական տեղագրությունը իշխող էր և հիմքում ունի T-O տեսակի քարտեզների ձևը, բայց պատրաստված է քառանկյունի և ոչ շրջանաձև: Ըստ երևույթին, քարտեզը պատրաստողը աշխատել է լցնել էջը, հետևաբար աշխարհը ներկայացված է խեղաթյուրված կերպարանքով: Քարտեզում Բրիտանիան ու Իսպանիան սեղմվել են իրար և Արաբական թերակղզին ուղղված է դեպի արևելք, ինչ ուղղությամբ նաև նշված է Նեղոսի ակունքը:

Հակառակ իր ժամանակակից քարտեզներին, այս քարտեզը կրոնի հետ անմիջական կապ չունի և ամենակարևորն այն է, որ Երուսաղեմը քարտեզի կենտրոնում չի տեղադրված: Սա մի իրական աշխարհագրական քարտեզ է, որը նշում է քաղաքներ, գավառներ, երկրներ, լեռներ ու գետեր: Քարտեզի ընդհանուր տեսքը խառնուրդ է Պտղոմեոսյան ու T-O տեսակ քարտեզների և ունի ավելի ազատ ոճ, քան իր ժամանակակից քրիստոնեական տեղագրության սկզբունքները կթույլատրեին: Արևելքում առկա չէ Երկրային Դրախտը և դրա փոխարեն այդ մասում նշված է մի մեծ կղզի, *Տապրոբանան*, այսինքն Ցեյլոնը, որի անմիջական ներքևում են *Հնդկաստանն* ու *Մարաստանը*: *Երուսաղեմի* մանրապատկերը տեղադրված է Միջերկրականի արևելյան ափին, իսկ քարտեզում պատկերված ամենամեծ քաղաքը *Բաբելոնն* է:

Այս քարտեզն այն հազվագյուտներից է, ուր ուղիղ գծերով նշված են երկրների ու նահանգների սահմանները՝ միա-

[87] Harley, J. B. & Woodward, David – *The History of Cartography* – հատ. 1, էջ 1987.

ժամանակ պահպանելով T-O տեսակի հատկությունները, որոնցից կարևորներն են քարտեզի մեջ իշխող դիրք ունեցող Միջերկրականը լի բազմաթիվ ու տարբեր չափի ու ձևի կղզիներով, *Նեղոսն* Աֆրիկայում և քարտեզի հյուսիսի կենտրոնական մասում՝ *Տանայիսը* (Դոնը), որը սկզբնավորվում է կանաչ *Ռիփեյան լեռներից*: Նեղոսն ունի երկու մաս. ակունք առնելով *Վերին Եգիպտոսից*, նա հոսում է արևելք, հետդարձ պտույտ կատարելով անցնում է ընդհատակ, ապա քիչ հեռու դուրս գալիս ու շարունակում դեպի *Ալեքսանդրիա* և *Միջերկրական* իր հոսքը, որը համապատասխանում է երկրային դրախտից հոսող գետերի հունին:

Քոթթոնյան քարտեզում Եվրոպայի ուրվագիծն ավելի ճշգրիտ է պատկերված, քան որևէ այլ ժամանակակից քարտեզում: Ասվածը վերաբերում է հատկապես Բրիտանական կղզիներին ու Հյուսիսային Ֆրանսիայի ափերին, որոնք անսովոր ճշգրտությամբ են գծված: Ինչպես վերը նշվեց, այս քարտեզի մեջ պարփակված տեղեկությունները վերցված են դասական Հունաստանի, հռոմեական և նախաքրիստոնեական շրջանի աշխարհագրագետների գործերից: Ըստ ավանդույթի, քարտեզն ուղղորդված է վերև արևելքով: Հաճախ ասվում է, թե Արարատի ու Նոյյան տապանի կապակցումը Հայաստանի հետ միջնադարյան Եվրոպայում հայտնի է դարձել խաչակիրների առաջին արշավանքից հետո: Այս քարտեզը, որը պատրաստված է խաչակրաց առաջին արշավանքից 45 տարի առաջ, բավականին հստակորեն իրար է կապում Հայաստանը, Արարատը և Նոյյան տապանը, վերջին երկուսը տեղադրելով Հայաստանի տարածքում:

Լեռները քարտեզում նշված են կանաչ. կարմիրը գործածվել է Պարսից ծոցի ու Կարմիր ծովի, ինչպես նաև մի քանի կարևոր գետերի համար: Քարտեզի վերևի աջ մասում, առյուծի ոտքերի տակ, նշված է *Տավրոսի լեռներ*, որտեղից սկիզբ են առնում Եփրատն ու Տիգրիսը (տե՛ս Պատ. 56a): Լեռնաշղթայի ներքևումն է Արարատ լեռն իր երկու գագաթներով, գծված կողքի վրա և անվանված *Հայկական լեռներ*, որի վրա նստած է եռահարկ *Նոյյան տապանը*: Արարատից ներքև կա *Արմենիա* (Հայաստան) մակագրությունը, որը սակայն քարտեզի ետևի կողմից թափանցած թանաքի պատճառով դժվար է կարդացվում: Դեպի արևմուտք (ներքև), Սև ծովից աջ կա մեկ այլ լեռնաշղթա, որը նույնպես *Տավրոս* է կոչված: Սա վարի լեռնաշղթայի երկրորդ մասն է, որը շարունակվում է ընդհատումով: Հայաստանի հարևան երկրներն են *Իբերիան*, Վիրքն ու *Միջագետքը*: Տապանից ձախ երկու կղզիներ ունեցող ծովածոցը Կասպից ծովն է, որի ներքևում՝ Հյուսիսային օվկիանոսի մոտ է գտնվում *Գոգ և Մագոգ* վայրագ ցեղերի արգելանոցը:

Կասպից և Սև ծովերի միջև գտնվող տարածքում կան երկու մակագրություններ: Մեկը նշում է *Աղվանքի լեռներ*, որոնք հավանաբար կարող են լինել Կասպից կամ Կովկասյան լեռները, մյուսը՝ *Կողքիսի շրջան*, որը տեղադրված է Սև ծովին կից: Վիրքը, այստեղ *Իբերիա*, նշված է Հայկական լեռներից հարավ, Հայկական և Տավրոսյան լեռներից սկիզբ առնող երկու գետերի միջև՝ Միջագետքի տարածաշրջանում:

Քարտեզում Հայաստանի և հարակից շրջանների տեղանունները կարելի է ավելի պարզ տեսնել Պատ. 56a դետալում, որի վրա ավելացված թվերը նշում են հետևյալը:

1. Հայկական լեռներ
2. Նոյյան տապան
3. Հայաստան (մյուս կողմից ներծծված թանաքի պատճառով դժվար ընթեռնելի)
4. Եփրատ
5. Տիգրիս
6. Միջագետք
7. Վիրք
8. Աղվանքի լեռներ – Կովկասյան լեռները
9. Կասպից ծով
10. Գոգ և Մագոգ ցեղեր
11. Կողքիսի շրջան կամ Աբխազիա, ուր գտնվում էր Ոսկե գեղմը:
12. Անտիոք
13. Տավրոսյան լեռներ

2 – ՌԻՊՈԼԼԻ ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑԸ

1055-56 թվականներին իսպանական Ռիպոլլ մենաստանում կազմվեց մի ձեռագիր, որը պարունակում էր չորս գիրք և Ջատկական տոների շուրջ հազար տարվա աղյուսակ: Ձեռագրի չորս գրքերի վերնագրերն էին *Արևի մասին*, *Լուսնի մասին*, *Իրերի բնության մասին* և *Աստղագիտության մասին*: Գրքերն իրականում հին աղբյուրների, Պլինիոս Ավագի, Մակրոբիոսի, Իզիդորի, Բեդայի և ուրիշների գործերի մի ընտրանի է: Տեքստի պարզաբանման համար ձեռագիրն ունի բազմաթիվ գծագրություններ ու պատկերազարդումներ, այս թվում նաև երկու քարտեզ: Սրանցից մեկը Չորրորդ գրքի՝ *Աստղագիտության* մեջ է, որը պատկերում է երկինքն ու մոլորակներն իրենց ձվաձև ծիրերով:

Երրորդ գիրքը՝ *Իրերի բնության մասին*, սկսվում է աշխարհի արարումով: Ժամանակակից չորս հիմնական տարրերից այստեղ քննարկված են ջուրը, օդը և հողը: Չորրորդ տարրը՝ կրակը, քննարկված է Չորրորդ գրքում, որը ներառում է Պլինիոս Ավագի և Բեդայի գործերից հատվածներ, որպես վերջաբան ներկայացնելով երկրորդ քարտեզը, անվանված *Աշխարհացույց քարտեզ ըստ տարբեր հեղինակների*: Այս քարտեզն է, որ ճանաչված է որպես «Ռիպոլլի» քարտեզ:

Պատ. 57/57a – Ռիպոլլի քարտեզն ուղղորդված է վերև արևելքով և իր տեսակով Մակրոբիոսի եղանակային քարտեզներին է պատկանում: Շրջանի ծախ մասը զբաղեցնում է Հյուսիսային բարեխառն գոտին՝ հունական «Օյկումենեն», որը համարվում է բնակելի աշխարհը, իսկ մյուս կեսը՝ հասարակածով բաժանված անծանոթ աշխարհն է: Մակագրությունը նշում է, որ այս գոտին կիզված է արևի տաքությունից, որը դրան դարձնում է անանցանելի և հարավային գոտուն հասնելը՝ անհնարին: Այս բացատրությունը համընկնում է Վերգիլիոսի և Մակրոբիոսի տեքստերին (տե՛ս Գլուխ 2, մաս 1):

Քարտեզն իր մեջ նաև ներկայացնում է հիմնական չորս տարրերը՝ հողը, ջուրը, օդը և կրակը, որոնք, ըստ մեր նախնիների, տիեզերքի բաղկացուցիչ չորս տարրերն էին: Այստեղ հողը երկրագունդն է, ջուրը՝ դրան շրջապատող օվկիանոսը, օդը ներկայացնում են օվկիանոսում տեղադրված շեփորներ փչող տասներկու հիմնական հողմերի պատկերները և, վերջապես, կրակը նշված է սկավառակը շրջափակող բոցերով:

Երկրի սկավառակի շուրջը գրված տեքստը բացատրում է աշխարհի երեք մասերը՝ Ասիան, Եվրոպան ու Լիբիան: Սրանց հետևում են նրանց բաղկացուցիչ շրջանների ու երկրների անուններն ու գրված տարածքները: Աջում գրված բացատրությունը սկսում է Ասիայով և երրորդ տողից սկսած տարածաշրջանների անվանումներն են *Կապադովկիա*, *Կիլիկիա*, *Սիրիա*, *Կոմագենա*, *Իբերիա* (Վիրք), *Ալբանիա* (Աղվանք), *Մեծ Հայք*, *Պարթևաստան*, *Հնդկաստան* և այլն: Ըստ երևույթին, տեքստը ընդօրինակված է մի ուրիշ, հավանաբար հինգերորդ դարի *Աշխարհի բաժանումներն ըստ Թեոդոսիոս Երկրորդի* ձեռագրից, որը շարադրվել է Կոստանդնուպոլսի տիրակալ Թեոդոսիոս Երկրորդի օրոք (408-450 թթ.):

Քարտեզի մեծադիր դետալ Պատ. 57a-ում Հայաստանը և հարակից շրջանները կարելի է ավելի մանրամասն տեսնել: Տեքստի մեջ նշված համարները համապատասխանում են քարտեզի վրա ավելացված թվերին, իսկ հստակության համար գույները պատկերված են բնականից ավելի ցայտուն: Այստեղ հիմնական ծովերն են Միջերկրականը (1), Սև (2) և Կասպից (3) ծովերը. վերջինը պատկերված սլաքածև, որպես շրջապատի օվկիանոսին միացած ծովածոց: Լեռները նշված են որպես եռանկյունիներ, իսկ լեռնաշղթաները՝ եռանկյունիների երկարաձիգ շղթաներ: *Կովկասյան լեռներ* (4) անվանումը նշված է, բայց Տավրոսյան լեռներն (5) ու նրանցից սկիզբ առնող Եփրատի (9) ու Տիգրիսի (10) անունները չեն նշված: Այս երկու գետերը ներկված են կանաչ, ունեն ընդհանուր ակունք և առանձին-առանձին հոսում են Պարսից ծոց կամ Կարմիր ծով: Սուրբ երկրում առկա են *Լիբանանյան լեռները* (6), *Սինայի լեռը* (7) և հինգ քաղաք՝ *Երուսաղեմ* (8), *Բեթղեհեմ*, *Հեբրոն* և այլն: Ասիայի տարածքում միայն մի քանի երկրներ ու տարածաշրջաններ են նշված, ինչպես օրինակ *Փոքր Ասիան* (12), *Հիրկանիան* (15), *Լյուդիան*, *Մեծ Հնդկաստանը* (11), *Բաբելոնը*, *Քաղդեան*, *Պարթևաստանը* և *Արաբիան*: Հայաստանի անունը, չնայած որ նշված է շրջապատի տեքստում և պետք է որ լինի Փոքր Ասիայում կարմիր A (16) տառի ներքևում, բայց շատ ուրիշ տեղանունների նման՝ նրա անունն այստեղ մակագրված չէ:

Լիբիայի, այն է Աֆրիկայի տարածքում միայն երկու քաղաքի անուններ են նշված, որոնք են *Ալեքսանդրիան* ու *Կարթագենան*, ինչպես նաև *Նեղոս* գետն (14) իր ոլորապտույտ հունով: Եվրոպայում ամենամեծ քաղաքը *Կոստանդնուպոլիսն* է՝ նշված երեք գմբեթավոր եկեղեցիների մանրապատկերով ու տեղադրված Միջերկրականից ներքև: Կարմիր ծովը (13) քարտեզում գծված է բնականից շատ ավելի մեծ և տարածված է աշխարհի լայնքի համարյա կեսով: Այստեղ պատկերված է նաև մի ճեղքվածք, որով, ըստ Հին Կտակարանի, Մովսեսի ժողովուրդը կարողացավ Եգիպտոսից Իսրայել անցնել:

3 – «ՍԱՈՒԼԻ» ՔԱՐՏԵԶԸ

Պատ. 58/58a – Այսպես կոչված «Սաուլի աշխարհացույցը» կամ Հենրի Մայնցեցիի քարտեզը գտնվում է *Իմագո Մունդի* «Աշխարհի պատկերը» անունով մի ձեռագրի մեջ, որը Պլինիոս Ավագից և ուրիշներից վերցված տիեզերագիտական ու աշխարհագրական գրվածքների մի հավաքածու է: Այս ձեռագիրը պարունակում է նաև մի ճանապարհացույց, Անգլիայի պատմություն, Տոնացույց աղյուսակ և աստվածաբանական երկեր: Ձեռագրի բնօրինակը պատկանում է 1110 թվականին, իսկ այստեղ պատկերվածը 1180 թվականի ընդօրինակություն է: Գրքի հեղինակը, ըստ Քեմբրիջում գտնվող այս օրինակի, Գերմանիայի Մայնց քաղաքի Ս. Մարիամ եկեղեցու հովիվ Հոնորիոսն էր, որը ճանաչված էր որպես «Հենրի Մայնցեցի»: Նա բնակվում էր Անգլիայում, ապա՝ Գերմանիայում, ուր և մահացել է 1156 թվականին: Ձեռագիրը պահվում էր Անգլիայի Յորքշիր կոմսության «Սաուլի» վանքում, դրա համար էլ կրում է նույն անվանումը, իսկ այժմ այն գտնվում է Քեմբրիջի Կորպուս Քրիստի կոլեջի գրադարանում:

Քարտեզը պատկանում է դասական T-O տեսակին, բայց պարունակում է քրիստոնեական գաղափարախոսության հետ համընկնող հավելյալ տեղեկություններ: Այն մաս է կազմում քարտեզների մի ընտանիքի, որը ներառում է փոքրածավալ «Սաղմոսային» քարտեզը (Պատ. 75), ինչպես նաև սրա մեծածավալ ազգակիցը՝ Հերեֆորդի «Մապպա Մունդին» (Պատ. 77): Քարտեզների այս ընտանիքը ընդլայնելով կարելի է ներառել նաև Քոթթոնյան, Վերչելլի և Էբսթորֆյան քարտեզները (Պատկերներ 56, 69 և 70): Քեմբրիջի այս 1180 թվականի ընդօրինակությունը բավականին ճոխ է, իսկ նույն քարտեզի տարբեր ընդօրինակությունները հաճախ շատ ավելի պարզ են ու երբեմն էլ նույնիսկ վեր են ածված պարզ էսքիզի:

Քարտեզն ուղղորդված է վերև արևելքով, որտեղ, ըստ քրիստոնեական տեսության, Երկրային Դրախտն է, դեպի շրջապատի օվկիանոսը հոսող իր չորս գետերով: Այստեղ կան շատ նմանություններ Հերեֆորդի «Մապպա Մունդի» մեծադիր քարտեզի հետ և Սաուլի քարտեզը կարելի է համարել մյուսի համառոտված տարբերակը: Քարտեզն ունի նաև շատ նմանություններ ավելի հին, Հերոնիմոսի (Պատ. 11) և Օրոսիոսի (Պատ. 13) քարտեզների հետ:

Այս քարտեզում, ինչպես նաև նույն ընտանիքին պատկանող մյուս քարտեզներում, աշխարհը բաժանված է երեք մայրցամաքների: Միջերկրականը, որն ունի շուռ տված Լ տառի տեսք, իր արևելյան ծայրամասում անկյունադարձ է անում ու շարունակվում է դեպի հյուսիս՝ *Հելլեսպոնտ* և Սև ծով, վերջանալով Ազովի ծովով: *Տանայիսը*՝ Դոնը, սկսվելով Հյուսիսային օվկիանոսից, անցնում է լեռնաշղթաների միջով ու գալիս հասնում Ազովի ծով՝ բաժանելով Եվրոպան Ասիայից: Նեղոսն անվանված չէ և քարտեզում սկիզբ է առնում ոչ թե Ալեքսանդրիայի հեռավոր հարավում, այլ Աֆրիկայի հարավ-արևելքում, Կարմիր ծովի մոտ գտնվող մի լճից, որն անվանված է «*Նեղոսի ակունք*»: Այս գետի մեջ կան երկու մեծ կղզիներ, որոնցից մեկն է *Մերոե կղզին*:[88] Գետի հունը վերջում շուռ է գալիս դեպի հյուսիս, անցնում *Ալեքսանդրիայի* մոտակայքով ու հասնում Միջերկրական:

Միջերկրականի մեջ նշված են *Մինորկա*, *Մայորկա*, *Կորսիկա*, *Սարդինիա*, *Սիցիլիա*, *Կրետե* կղզիները և *Դելոսը*՝ շրջապատված մանր կղզիներով: Քարտեզի վերևի ձախ մասում *Կասպից ծովը* պատկերված է որպես օվկիանոսին միացած կոշկաձև մի ծովածոց (12՝ քարտեզ 58a-ի վրա): Նրա ներքևում շրջաններն անվանված են *Հիրկանիա*, *Ամազոններ* և *Հայաստան*: Հայաստանի հարավում են Տավրոսյան լեռները, որոնք կարմիրով գծված լեռներ են՝ ուղղահայաց ձգված համարյա մինչև Արևելյան օվկիանոս:[89] Այս լեռներից են սկզբնավորվում *Եփրատն* ու *Տիգրիսը*, իսկ երկու անանուն գետեր՝ Կուրն ու Արաքսը, ակունք առնելով Հայկական լեռներից, հոսում են դեպի Կասպից ծով: Այս դրվածքը հիշեցնում է Ռիպոլլի քարտեզը (Պատկեր 57): Այստեղ էլ *Գոգ և Մագոգ* ցեղերը պարիսպով առանձնացած են մարդկությունից, բայց գտնվում են Կասպից ծովից արևելք: Քարտեզում *Կասպից դարպաս* (թիվ 2) անունը տրված է մի կիրճի, որը գտնվում է Կասպից ծովից հեռու, անանուն մի լեռնաշղթայի մեջ, որը միայն կարող է Դարյալի կիրճը լինել (տե՛ս տողատակի ծանոթագրություն 33): Կողքիսը (9) տեղադրված է Սև ծովի հարավ-արևելքում, «Կասպից Դարպասներ» ունեցող լեռնաշղթայի մոտ, մինչդեռ Աղվանքը (10) փոխադրված է Սև ծովից հյուսիս:

Ասիայում քարտեզը նշում է *Բեթղեհեմ*, *Երուսաղեմ*, *Հերիքով*, *Պերսեպոլիս*, *Բաբելոն*, *Դամասկոս*, *Տրոյա* և ուրիշ քաղաքներ: *Սինայի լեռը* տեղադրված է Ասիայի հարավում, Կարմիր ծովի մեջ բացված ճանապարհին մոտ, որտեղից անցնելով Իսրայելի ժողովուրդն վերադարձավ հայրենիք: Դրա ներքևում երեք բաժին ունեցող վրանն անվանված է *Հովսեփի գոմը*, որը նշում է եգիպտական բուրգերը: *Վերին Եգիպտոսը* Կարմիր ծովից աջ է, ուր Նեղոսի մյուս ափին կանգնած է *Սուրբ Անտոնիոսի* վանքը: *Կարմիր ծովը* գծված է կարմիրով: Նեղոսի աֆրիկյան ափին, կարմիրով մակագրված *«Աֆրիկա»*-ի աջում *Քաթբաթմոն* լեռների ստորոտին կանգնած պայտակերպ մեծ շինությունն անվանված է *Տեմպլում Ջովիս*, որը նշանակում է Յուպիտերի տաճարը:

Եվրոպայում ամենամեծ տարածքը հատկացված է Իտալիային, ուր նշված են *Հռոմ* ու *Պիզա* քաղաքներն ու այլ նահանգներ: Ամենամանրակրկիտ գծված շրջանը Ֆրանսիան է, ուր քաղաքներից *Փարիզը* գետի միջի մի կղզի է, *Մագութիա* քաղաքը *Հռենոսի* վրա է և առկա է նաև *Ռուանը*: Եվրոպայի այլ քաղաքներից են *Կոստանդնուպոլիսը*, *Քյոլնը* և ուրիշներ: Քարտեզն ունի 229 տեղանուն: Քարտեզների տեղանունների համեմատական ցուցակի համար տե՛ս այս գլխի սկիզբը: Պատ. 58a-ում կարելի է տեսնել Հայաստանի և հարակից երկրների մանրամասները հետևյալ կարգով:

1. *Հայաստան*
2. *Կասպից դարպաս* – Այստեղ տրված Դարյալի կիրճին, Կովկասյան լեռնաշղթայի մի նեղ անցում, որով կարել է հասնել Կովկասյան լեռներից հյուսիս գտվող շրջանը (տես տողատակի ծանոթագրություն 33):
3. *Տավրոսյան լեռներ*
4. *Տիգրիս* գետը
5. *Եփրատ* գետը
6. *Միջագետք*
7. *Հիրկանիա*
8. *Ամազոնուհիների շրջան* – ուր բնակվում են ռազմիկ կանայք
9. *Քաղդեա*
10. *Աղվանք*
11. *Անտիոք*
12. *Կասպից* ծով
13. Սև ծով
14. Միջերկրական ծով
15. *Կիպրոս* կղզի
16. *Հռոդոս* կղզի
17. *Կոստանդնուպոլիս*

4 – ՍԵՆՏ ՕՄԵՐԻ ԼԱՄԲԵՐՏԸ ԵՒ ԻՐ «ԾԱՂԿԱՔԱՂԸ»

Լամբերտը ֆրանսիացի բենեդիկտյան վանական և տոմարագիր էր (շուրջ 1061-1150 թթ.), սովորել էր աստվածաբանություն, քերականություն, երաժշտություն և ճանաչված էր որպես շատ գիտուն կղերական: Նա նաև Սենտ Օմերի միաբանության աբբահայրն էր, որի անունով էլ նա ճանաչված է մինչև այսօր:

Նրա կարևորագույն աշխատասիրությունը աստվածաշնչական, աստվածաբանական, աշխարհագրական, պատմական և երաժշտական նյութերի հանրագիտարանն էր, որը նա ավարտեց 1120 թվականին, վերագրելով այն *Լիբեր Ֆլորիդուս*, այսինքն՝ Ծաղկաքաղ:[90] Ձեռագիրը տարբեր հեղինակների աշխատանքներից քաղված մի հավաքածու է և պարունակում է բազմաթիվ գծագրություններ, պատկերազարդումներ ու քարտեզներ, ներառյալ մեկ մեծ աշխարհացույց քարտեզ, որից մի քանի պատճեններ հասել են մինչև մեր օրերը:

[88] Ըստ Շիրակացու, այս կղզին Վերին Եգիպտոսում Նեղոսի վտակներից մեկում է գտնվում: Շիրակացի, *Մատենագրություններ*, Երևան 1979, էջ 278:

[89] Ըստ Օրոսիոսի, Կովկասյան լեռները սկսելով Սև ծովի արևելքից տարածվում են արևելք, մինչև Հնդկաստան: Տե՛ս Օրոսիոս, Յոթ Գիրք, Նյու Յորք, 1936, էջ 35 և 38, և Պատկեր 13:

[90] *Լիբեր Ֆլորիդուս* բառացիորեն նշանակում է «Ծաղիկների գիրք», տվյալ դեպքում, թերևս, նկատի ունենալով ծաղկաքաղ կամ անթոլոգիա:

Գրքի տեքստերի և քարտեզների հիմքում ընկած են Մակրոբիոսի, Կապելլայի և այլ միջնադարյան հեղինակների աշխատանքները: Լամբերտի ձեռագիրն իր ժամանակին համարվում էր լուրջ գիտական և աղբյուրագիտական աշխատություն:

Պատ. 59/59a/60 – Այս պատկերները վերցված են *Լիբեր Ֆլորիդուսի* 1180 թվականի ընդօրինակությունից, որն այժմ պահվում է Գերմանիայի Վոլֆենբյութթել քաղաքի «Հերցոգ Ավգուստ» գրադարանում:

Գրքի աշխարհացույց քարտեզը (Պատ. 59/59a) եղանակային գոտիների բաժանված տեսակից է, որոնք ընդհանրապես ուղղորդված են վերը հյուսիսով, բայց այս մեկը, որը նաև շատ նմանություններ ունի Ռիպոլլի քարտեզի հետ (Պատ. 57), ուղղորդված է վերն արևելքով: Քարտեզում աշխարհի բնակեցված մասը՝ օյկումենեն, տեղադրված է Հյուսիսային բարեխառն գոտում և գրավում է ամբողջ աշխարհի համարյա թե կես տարածքը: Ինքը, Հյուսիսային բարեխառն գոտին պատկերված է որպես մի T-O տեսակի քարտեզ, որով այս քարտեզը դառնում է երկու տարբեր քարտեզագրական տեսակների մի յուրօրինակ խառնուրդ: Բոլորակի աջում եղած բացատրության մեջ նշված է, որ քարտեզը հիմնված է հինգերորդ դարի հեթանոս հեղինակ Մարտիանուս Կապելլայի գրվածքների վրա:

Տեքստը, հաստատելով երկրի գնդաձև տեսությունը հայտարարում է, որ երկրագնդի մյուս կողմում՝ այսինքն մյուս կիսագնդում, առկա են երկու հավելյալ ցամաքամասեր՝ մեկը հյուսիսային մասում, իսկ մյուսը՝ հարավայինում:[91] Սրանք ամբողջովին համընկնում են Մակրոբիոսի տեսությունների հետ, ով նույնպես նախատեսել էր արևմտյան կիսագնդում երկու անծանոթ ցամաքամասերի առկայությունը, մեկ ամբողջ հազարամյակ Ամերիկայի հայտնագործումից առաջ: Լամբերտի ներկայացրած տեսությունը նույնպես զարմանալի գուշակություն է, կատարված 300 տարի նախքան Ամերիկայի հայտնագործումը:

Մակրոբիոսի քարտեզների պես, այս քարտեզում էլ հասարակածի փոթորկոտ ծովը բաժանում է հյուսիսային կիսագունդը հարավայինից: Այս շրջանը անչափ տաք է ու կիզիչ այնպես, որ կենդանի էակներն անկարող են նրանով անցնել: Երկրագնդի հարավում և հյուսիսում ցամաքամասերի հավասարակշռությունը պահպանելու համար հարավային կիսագնդում առկա է մի չորրորդ՝ անծանոթ ցամաքամաս, տեղադրված հասարակածից հարավ, և իր չափերով հավասար է երեք հյուսիսային ցամաքների ընդհանուր տարածքին, հետևաբար նաև կշիռին: Այս անծանոթ ցամաքամասի վերաբերյալ բացատրությունը նույնպես վերցված է Կապելլայից: Քարտեզի արևմտյան ծայրամասում, այսինքն ներքևում նշված է մի կղզի, ուր ըստ Լամբերտի ապրում են Անտիպոդները, այսինքն՝ հակոտնյաները, որոնց սակայն Մակրոբիոսը տեղադրում է հարավային այսպես կոչված «Չորրորդ» կամ «Անծանոթ» ցամաքամասում: Հեղինակն ապա ավելացնում է, թե նրանց ցերեկն ու գիշերը մերինից տարբեր են. հավանաբար նա ցանկացել է առաջադրել այն միտքը, որ արևմտյան ու արևելյան կիսագնդերի ցերեկն ու գիշերն իրար չեն համընկնում: Սրանից կարելի է եզրակացնել, որ ըստ Լամբերտի, Անտիպոդներն ապրում են արևմտյան կիսագնդում և ո՛չ թե հարավային «Անծանոթ» ցամաքամասում, որն ավելի ընդունելի է կղերականների համար և կարող է հարմարվել կրոնական տեսություններին:

Հյուսիսային բարեխառն գոտում Միջերկրականը, որը T տառի ուղղահայաց գծիկն է, իր կենտրոնում ունի մի մեծ կղզի, *Սիցիլիան*: Շրջապատի օվկիանոսը լի է տարբեր կղզիներով, որոնցից ամենաարևմտյանը *Թիլե* կղզին է՝ Իսլանդիան: Այստեղ կան երկու *Հիբերնիաներ* կամ Իռլանդիաներ և մեկ *Անգլիա* կղզի, աշխարհագրական տեսակետից ճշգրիտ տեղադրված: Եվրոպա մայրցամաքում նշված են *Գերմանիան* (երկու անգամ), *Գաղղիան* (չորս անգամ), *Իսպանիան*, *Վենետիկը*, *Իտալիան*, *Մեծն Հունաստանը*, *Հռոմը* և ուրիշներ, ընդամենը 49 տեղանուն:

Աֆրիկան գտնվում է Միջերկրականի աջ կողմում, ուր նշված են *Մավրիտանիան*, *Նումիդիան*, *Լիբիան*, *Եթովպիան* և մի քանի ուրիշ երկրներ: *Եգիպտոսը* նշված է Ասիայի տարածքում:

Ներքոբերյալ պարբերությունների մեջ նշված համարները վերաբերում են Պատ. 59a դետալի վրա կապույտով ավելացված համարներին: Քարտեզի կենտրոնում երկու գծերի մեջ գրված է *Հայաստան* (1), սրա շուրջն են *Ասորեստանը* (2), *Միջագետքը* (3), *Սիրիան* (4), *Կիլիկիան* (5), *Կապադովկիան* (6), *Պոնտոսը* (7) և *Տիգրիդիս* (Տիգրիս – 8) անվանված հինգ զուգահեռ գետերի մի փունջ, որոնք հոսում են լեռներից դեպի ծով: Սրանցից արևելք գտնվում են *Պարթևաստանը* (9), *Տավրոսյան և Կովկասյան լեռները* (10) և *Հիրկանիան* (11): Հայաստանից ուղիղ դեպի հյուսիս, քարտեզի եզրի մոտ է գտնվում *Ամազոնուհիների նահանգը* (12), այսինքն երկիրը՝ ուր իբր ապրում են այսպես կոչվող ռազմիկ կանայք: Կողքիսը նույնպես քարտեզում ներկա է, բայց այստեղ այն պատկերված է որպես շրջապատի Հյուսիս-արևելյան օվկիանոսում գտնվող մի կղզի:

Չնայած նրան, որ Լամբերտն իր քարտեզի աղբյուրն է ընտրել հեթանոս Մարտիանուս Կապելլայի աշխատությունները և ընդհանրապես նրա քարտեզը կրոնական բնույթ չունի, բայց և այնպես այստեղ առկա են կրոնական որոշ ենթատեքստեր, որոնք հավանաբար իր՝ Լամբերտի լրացումներն են: Սրանցից են՝ արևելքում գտնվող *Երկրային Դրախտը* (13), որից դուրս են հոսում չորս բիբլիական գետերը: Այս անանուն գետերը հոսում անցնում են օվկիանոսի տակով, հասնում են Ասիա, ուր նրանք թափվում են Կարմիր ծովի ու Պարսից ծոցի (14) մեջ: Սրանցից երկուսն անցնում են Միջագետքի (3) երկու կողմերով և, չնայած որ անանուն են, պետք է որ լինեն Եփրատն ու Տիգրիսը: Մյուս աստվածաշնչային տեղանուններից են *Քաղդեան* (15 – Աբրահամի ծննդավայրը), *Բաբելոնը* (16) և հյուսիսային մասում Ալեքսանդր Մակեդոնացի կառուցած պարիսպով առանձնացված *Գոգ և Մագոգ* 32 վայրագ ցեղերը (17), մակագրված *«Ալեքսանդրը 32 [ցեղեր]ին այստեղ բանտարկեց»*: Նաև առկա են *Գալիլեան* (18), *Հուդան* (19) և *Պաղեստինը* (20):

Նույն ձեռագիրն ունի մեկ փոքրադիր մանրանկար ևս (տե՛ս Պատ. 60), ուր պատկերված է Օգոստոս Օկտավիանոսը (63 թ. մ.թ.ա. – 14 թ.), նստած իր գահավորակին, աջով բռնած թուրն ու ձախով T-O տեսակի բաժանումներով երկրագունդը, մակագրված *Ասիա*, *Աֆրիկա*, *Եվրոպա*:

[91] Տե՛ս Գլուխ 2, մաս 2, Մակրոբիոս:

Պատկեր 59a-ի վրա նշված թվանշանները նշում են հետևյալ տեղանունները.

1. *Հայաստան*
2. *Իսսիրիա* – Իսավրիա
3. *Միջագետք*
4. *Սիրիա*
5. *Կիլիկիա*
6. *Կապադովկիա*
7. *Պոնտիկա* Պոնտոս
8. *Տիգրիդես* – կամ Տիգրիս
9. *Պարթևաստան*
10. *Կովկասյան և Տավրոսյան լեռներ*
11. *Հիրկանիա*
12. *Ամազոնների երկիր*
13. *Երկրային դրախտ*
14. Պարսից ծոց
15. *Քաղդեա*
16. *Բաբելոն*
17. Գոգ և Մագոգ ցեղեր
18. *Գալիլեա*
19. *Հուդա*
20. *Պաղեստին*

5 – ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՔԱՐՏԵԶ

Երևանի Մատենադարանում կան բազմաթիվ միջնադարյան ձեռագրեր, որոնք պարունակում են աշխարհագրական, աստղագիտական տեղեկություններ, մոլորակների ծիրերի պատկերներ, խավարումների սխեմաներ, տոնացույցեր ու այլ աղյուսակներ, տարբեր ավանդություններից եկած տարվա ամիսների համեմատական աղյուսակներ, ինչպես նաև աստղաբաշխական կենդանակերպերի գծագրեր, պատկերներ ու բոլորակներ: Այստեղ կան նաև Աշխարհացույցի տարբեր շարադրությունների ընդօրինակություններ, սրանց շարքին՝ Մովսես Խորենացու[92], Անանիա Շիրակացու[93], Կարապետ Բաղեշեցու և Վարդան Արևելցու երկերից:

Բացառությամբ Պատ. 67-ի քարտեզի, Մատենադարանի միջնադարյան ձեռագրերի մեջ չկան նյութեր, որոնց կարելի է իրական քարտեզ կոչել: Քարտեզ հիշեցնող կամ քարտեզանման նյութերից, այստեղ կարելի է նշել քամու ուղղությունը ցուցադրող մի քանի գծագրություններ, մակրոբիոսյան պարզ մի քանի բոլորակներ՝ բաժանված եղանակային գոտիների և առանց աշխարհագրական որևէ նշումների, երուսաղեմի հատակագիծը և աստղաբաշխական կենդանակերպերի ու խավարումների գծագրեր, որոնցից մի քանիսը կարելի է տեսնել այս աշխատության առաջին գլխում (Պատ. 3, 4, 9 և 10): Միակ իրական և ամբողջական միջնադարյան քարտեզը, որը Պատ. 67-ն է, ներկայացված և քննարկված է այս գլխում:

Նախքան այդ քարտեզի քննարկմանն անցնելը, ստորև բերված են Մատենադարանի ձեռագրերից վերցված մի քանի քարտեզներ ու գծագրեր, որոնք չնայած կարող է և ուղղակի առնչություն չունենան մեր աշխատության քարտեզներին, բայց ընթերցողին կներկայացնեն ընդհանուր տեղեկություններ Մատենադարանում եղած քարտեզանման գծագրերի մասին: Բուն ձեռագրերը, որոնցից վերցված են այս պատկերները, բացի թիվ 1780-ից, միջնադարյան են, բայց աշխատությունները, որոնց մեջ սրանք գտնվում են՝ մեծ մասամբ 15-րդ կամ 16-րդ դարերի ընդօրինակություններ են:

Մատենադարանի թիվ 8973 ձեռագրից, 1445 թ., Թեոդոսիա (Կաֆա).

Պատ. 61 – Մոլորակների ծիրերը և կենդանակերպի համեմատությունը, թերթ 13բ:

Պատ. 62 – Սողոմոնի տաճարի հատակագիծը, հրեական և քրիստոնեական արարողությունների համեմատությունները, թերթ 58բ:

Մատենադարանի թիվ 1770 ձեռագրից, 1589 թ.

Պատ. 63 – Լուսնի և արևի փուլերի գծագրություն, թերթ 115բ:

Պատ. 64 – Մարդու մարմինը և նրա համեմատությունը կենդանակերպի հետ, թերթ 354բ:

Պատ. 65 – Երուսաղեմի հատակագիծը, թերթ 392ա:

Մատենադարանի թիվ 1780 ձեռագիր, 1617 թ.

Պատ. 66 – Մոլորակներն ու կենդանակերպը ըստ Պտղոմեոսի, թերթ 305ա:

Պատ. 67 – Այս քարտեզն աշխարհում միակ T-O տեսակի միջնադարյան հայերեն աշխարհացույց քարտեզն է: Անանուն հեղինակի կազմած այս քարտեզը պահվում է Երևանի Մատենադարանում (ձեռագիր համար 1242, թերթ 132ա): Տարբեր աշխարհագրագետների կարծիքով, այս քարտեզը պատկանում է 1206[94] կամ էլ նույնիսկ 1360[95] թվականներին: Քարտեզը կազմված է 15-րդ դարում համատեղված մի ձեռագրի մեջ, ուր դրա մասին որևէ ակնարկ իսկ չկա: Քարտեզն ուղղորդված է վերն արևելքով և պարզ T-O տեսակներից է, բայց պարունակում է բավականին ավելի տեղեկություններ քան մյուս նման քարտեզները: Բոլորակից դուրս նշված են քարտեզի ուղղությունները, երկրորդ շրջանի՝ օվկիանոսի սահմանի մոտ նշված են մի շարք երկրների անուններ, իսկ ավելի ներս՝ կենտրոնին մոտ, նշված են կարևոր առևտրական քաղաքների ու կրոնական վայրերի անունները: Պատ. 67a-ի վրա կապույտով ավելացված մակագրությունները հայերենով գրվածքների անգլերեն թարգմանություններն են:

---

[92] Աշխարհացույցի հեղինակի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Ըստ ոմանց, սրա հեղինակն է 7-րդ դարի մաթեմատիկոս ու գիտնական Անանիա Շիրակացին, իսկ ուրիշները հավատացած են, որ դա 5-րդ դարի հայ պատմաբան Մովսես Խորենացու աշխատանքն է, և որ հետագայում ուրիշները՝ նրանց շարքում նաև Շիրակացին, լրացրել ու արդիականացրել են Խորենացու տեքստերը: Տես. Բաբկեն Հարությունյան, *Խորենացու Աշխարհացույցի նախաբան*, Հայկական Մատենաշար, Հետոր Բ, Անթիլիաս, 2003, էջ 2123-2136:

[93] Աբրահամյան, *Շիրակացու մատենագրությունը*, 1944, Երևան:

[94] Խաչատրյան, Երևան, 1976: Հատորիս հեղինակի կարծիքով քարտեզն ավելի ուշ է պատրաստված:

[95] Հովհաննիսյան, Երևան, 1954, էջ. 89-93:

Ինչպես միջնադարյան T-O տեսակի քարտեզների մեծամասնության մեջ, այս քարտեզում ևս Երուսաղեմն իր վեց դարպասներով պատկերված է անհամեմատ մեծ և տեղադրված է քարտեզի ու աշխարհի կենտրոնում, որի շուրջը մակագրված է *Բնակուի հին եւ նոր աւրհնաց քաղաք ի[սրա]էլացոց որ է Երուսաղեմ*: Այս հատակագիծը տեսքով և թաղամասերի անվանումներով նման է Պատ. 65-ի մեջ ցուցադրված Երուսաղեմի 1589 թ. մեկ այլ ձեռագիր հատակագծին: Սրանից բացի, քարտեզն ունի այլ կրոնական նյութերի պարունակություն, որոնցից են *Սինական Լեառը*՝ Երուսաղեմի հարավ-արևելքում, *Կարմիր ծովը*՝ դրա հարավում: Երուսաղեմի վերը կան մի քանի մակագրություններ, որոնք են *Եկին անապատն*, *Եկին Յե[րուսաղե]մ սակաւքն* և գլխիվայր գրված է *Տախտակ օրհնաց որ ետ[ուր] Ա[ստուա]ծ Մովս[էս]ի*:

Ամբողջ աշխարհը շրջապատված է օվկիանոսով, որը քարտեզի վերը՝ աջում, մակագրված է *Համատարած ծովն որ պատէ զ երկիր(?)ս այս կերպիւս է*, իսկ քարտեզի բոլորակի շուրջը կրկնվում է *Ծով* բառը: Երկու զուգահեռ գծերով նշված Միջերկրականը բաժանում է Աֆրիկան Եվրոպայից և երեք տեղ մակագրված է *ծով*: Եվրոպայի և Ասիայի բաժանումը նշված է կարմիր գծով, որը պարզ չէ ի՞նչ է ներկայացնում: Այս գծի հյուսիսային ծայրամասը հավանաբար ներկայացնում է Ասիայի և Եվրոպայի սահման Տանայիս (Դոն) գետը: Եգեյան և Սև ծովերն այստեղ նշված են որպես Երուսաղեմից արևմուտք՝ Միջերկրականին միացած մի ծով, որը սկսում է Կիպրոսից և ներկայացված է սև գծով: Սրա հորիզոնական մասն Եգեյան ծովն է և Դարդանելի նեղուցը, Մարմարա ծովն ու Բոսֆորը, իսկ ուղղահայաց գիծը հավանաբար ներկայացնում է Սև ծովը, որը հասնում է մինչև T տառի ձախ թևի վրա նշված երեք անանուն կղզիները: Այս պատկերացումն իրականությանն ավելի մոտ է, քան ուրիշ քարտեզների վրա ցուցադրվածը, ուր T տառի ձախ թևը նշում է Դոնը, ներառյալ Եգեյան ծովը, Դարդանելի նեղուցը, Մարմարա ծովը, Բոսֆորը և Սև ծովը. բոլորը համատեղ՝ ներկայացված մեկ գծով: Միջերկրականում առկա են չորս շրջանաձև կղզիներ, որոնցից միայն մեկը, *Կիպրոսն* անվանված է, իսկ մյուսները մնում են անանուն:

Միջերկրականի ձախում մակագրված է *Այս կողմս Էրօպա*, որից հետո գծողն ավելացրել է հետևյալ տեղանունները՝ *Պուլղարք*, *Ալամանք*, *Ֆռանքս*, *Սպանիա* և ապա կենտրոնին ավելի մոտ՝ *Վենէտիա:* Ինչպես նշվեց, Միջերկրականի ձախից դեպի հյուսիս ձգվող գիծը ներկայացնում է Եգեյան ծովը, Դարդանելն ու Բոսֆորը: Եգեյանի և Միջերկրականի միացման կետում է գտնվում *Կիպրոս* կղզին, իսկ Սև ծովի միացման կետումն է *Կոստանդնուպոլիսը*: Այստեղից ծովը շեշտակի անկյուն ադարձ անելով գնում է դեպի արևելք՝ Ասիա: Դեպի արևելք ձգվող այս գիծը ներկայացնում է Սև ու Ազովի ծովերը, որոնց միանում է Դոն գետը (ոչ Դնեպրը, ինչպես նշում է Խաչատրյանը):[96] Պատահական չէ, որ Եվրոպայում նշված են Վենետիկ ու Կոստանդնուպոլիս քաղաքները: Առաջինը հայ առևտրականների համար կարևոր մի նավահանգիստ էր, իսկ երկրորդը՝ Բյուզանդական կայսրության մայրաքաղաքն էր, կրոնական ու քաղաքական կարևոր մի կենտրոն:

Միջերկրականի աջում մակագրված է *Այս կողմս Աֆրիկա:* Այստեղ գծված է մի կարմիր շրջան, որի մեջ մակագրված է *Փարաւոն և զորքն Եգիպտոսի*: Շրջանի հարավում գրված է *Սքանդարիա է* (Ալեքսանդրիա), դրա ներքևում կան երկու *Ծով* մակագրություններ և մեկ ուրիշ՝ *Այս ծովիս անունն Տուման* մակագրություն: Բոլորակի աջ ծայրամասում նշված է *Հապաշ* (Եթովպիա): Կարմիր ծովը պատկերված է հատված կարմիր շրջանով և *Ծով* մակագրությամբ, իսկ բացվածքի ջնջված մակագրությունն, ըստ երևույթին, նշում է Կարմիր ծովի բացվելը Մովսեսին ու իսրայելացիներին Եգիպտոսից դուրս գալու ճանապարհ տալու համար (*զծովն անց*.....): Երկու կարմիր շրջանների միջև նշված է *Մսր – Եգիպտոս*, *ցամաք*: Դեպի հյուսիս գնացող կարմիր գծից ձախ՝ երկրորդ գլխիվայր գրվածքը նշում է *Այս ծովիս անունն Նիլ [Նեղոս] ասեն*: Քարտեզում «Ծով» որակումը տրվում է կարևոր ջրային տարածքներին ու գետերին՝ առանց նրանց մեջ որևէ տարբերություն դնելու: Աֆրիկայի արևմուտքում երկու զուգահեռ կարմիր գծերով նշված է մեկ ուրիշ գետ (ծով), որն Օվկիանոսը միացնում է Միջերկրականին և հավանաբար նույն վերը նշված *Այս ծովիս անունն Տուման է* կոչվող գետն է: Բայց այդ մակագրության վերը առկա է մի փոքրիկ շրջանակ ևս, որը կարող է լինել մի լիճ և որին նաև կարելի է վերագրել նույն մակագրությունը:

Քարտեզի մեծ մասը զբաղեցնում է Ասիան: Այստեղ քարտեզի ձախից՝ Եվրոպայի սահմանում կարելի է տեսնել *Ըռուզքը*՝ Ռուսաստանը: Սրանից արևելք հերթականորեն շարված են *Կաֆայ* (Թեոդոսիայի իտալական անվանումը), *ցամաք*, *Ազախ* (Ազով), *ցամաք*, *Սարայ*[97] , *ցամաք*, *Խորեզմ* և վերջում *Կանսայի* (Չինաստանի կարևոր քաղաքներից): Բոլորակի արևելյան սահմանում նշված են *Խայթայքը* և *Չայթունը*, ապա գալիս են *Աշխարհք հնդկացը* և ի վերջո՝ *Հնդկաստանը*: Միջին դարերում «Հնդկաստան» տեղանունը հաճախ գործ էր ածվում Պարսկաստանից ու Միջին Արևելքից դեպի արևելք գտնվող երկրների համար, այնպես որ այստեղ էլ «Աշխարհք հնդկաց»ը կարող է նաև նշանակել Հնդկաստանից արևմուտք ու հյուսիս գտնվող երկրները, մինչդեռ *Հնդկաստան* մակագրությունը նշում է բուն Հնդկաստանը: Եվրոպայի և Չինաստանի միջև առկա բազմաթիվ տեղանունները փաստում են քարտեզի պատրաստման ժամանակներում դրանց կարևորությունը արևելքի և արևմուտքի միջև զարգացող առևտրական կապերի բնագավառում: Հնարավոր է, որ քարտեզի հեղինակն առևտրականությամբ զբաղվող այս շրջաններից է եղել, հավանաբար Կաֆայից (Թեոդոսիայից), որը 13-14-րդ դարերում Սև ծովի հյուսիսում գտնվող հայ մատենագրության կենտրոններից էր:

Գալով Չինաստանի Չայթուն քաղաքին, այս անունը երևում է իբն-Բաթութայի և Մարկո Պոլոյի երկերի, ինչպես նաև իտալացի քարտեզագիր Բոլոնյինո Զալթիերիի «*Նոր Ֆրանսիայի հայտնաբերման քարտեզի*»-ի մեջ, հրատարակված Վենետիկում, 1566 թվականին, ուր դեռ ներկա են Չայթուն քաղաքը և նույնանուն ծովածոցը:[98] Այս քաղաքը հավանաբար

---

[96] Խաչատրյան, – *Միջնադարի ձվածիր հայերեն քարտեզը* – Բնագիտության և Տեխնիկայի Պատմությունը Հայաստանում, հատոր VI, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1976, էջ 219/221:

[97] Կարելի է վստահաբար ասել, որ սա Ոսկե Հորդայի Սարայ-Բաթու մայրաքաղաքն է, կառուցված 1240 թվականին կամ էլ դրան հաջորդող Սարայ-Բերքեն, որը կառուցվել է 1260-ականներին: Այս երկու քաղաքներն էլ գտնվում էին Աստրախանի շրջանում, Կասպից ծովից հյուսիս:

[98] Ефимов, Александр Владимирович – *Атлас Географических Открытий в Сибире и в Северно-Западной Америке XVII-XVIII в.* – Издательство "Наука", Москва, 1964. Քարտեզ թիվ 14, էջ 9:

այսօրվա Ֆուջիան նահանգի քաղաքներից է (տե՛ս հաջորդ պարբերությունը): Զալթիերիի քարտեզում առաջին անգամ լինելով ցույց է տրված նաև Բերինգի նեղուցը, անվանված *Ստռետտո դի Անյան* (Անյանի նեղուց):

Այստեղ պետք է նշել, որ հին ժամանակներում Քուանժոուն կամ Յեու-Թունգը արաբների ու պարսիկների հետ կատարվող առևտրի կարևոր նավահանգիստներից էր և արաբերենով կոչվում էր Զայթուն: Ըստ 14-րդ դարի արաբ ճանապարհորդ և աշխարհագիր իբն-Բաթութայի (1304-1368/9 թթ.), Զայթունը նրա տեսած ամենամեծ նավահանգիստն էր, ուր կարող էին խարիսխ ձգել ավելի քան 100 չինական մեծ ջունկեր:[99] Այս նավահանգիստը գտնվում էր Ֆորմոզա կղզու հանդիպակաց ափերին և, ըստ Իբն-Բաթութայի, այստեղ էր պատրաստվում ու արտահանվում «սատին» կոչվող մետաքսանման կտորը, որի անվանումն էլ վերցված է «Զայթուն» անունից: Միջին դարերում այստեղ հաստատվել էին մեծ թվով արաբ և պարսիկ առևտրականներ: Իբն-Բաթութան շարունակում է գրել, որ Զայթունից ոչ հեռու գտնվող Խանսա կամ Կանսայ նավահանգիստը Չինաստանի մեծագույն քաղաքն է:[100] Տասներեքերորդ դարի ճանապարհորդ Մարկո Պոլոն նույնպես նշում է Զայթունի և Կանսայի անունները որպես կարևոր նավահանգիստներ Ճապոնիայի (Զիպպանգու) և արաբական երկրների հետ կատարվող առևտրի մեջ:[101] Այս հայալեզու T-O տեսակի քարտեզն եզակի է այն առումով, որ քրիստոնեական քարտեզների մեջ այստեղ առաջին անգամը լինելով նշված է Խայթայ (Կիտայ, Չինաստան) երկիրը և նրա երկու քաղաքները՝ Զայթունն ու Կանսայը: Այս երկու քաղաքների անվանումները առկա են նաև 1375 թվականին պատրաստված «Կատալան ատլասում», որը հավանաբար պատրաստել է Աբրահամ Կրեսկը, նրանց անվանելով *Զայթուն քաղաք* և *Կանսայ քաղաք*: *Զայթունի իշխանություն* անվանումը նաև առկա է Ֆրա Մաուրոյի (մահ. 1460 թ.) աշխարհացույց քարտեզում, որը նա պատրաստել էր 1459 թվականին: Դիտարկվող քարտեզի կենտրոնական մասում կարելի է տեսնել *Մերդին* (Մարդին), *Բաղդատ* և *Դմըշխ* (Դամասկոս) առևտրական քաղաքները:

Մ. Խաչատրյանն այս քարտեզի մասին իր գրած հոդվածում տվել է մի քանի սխալ տեղեկություններ ու մեկնաբանություններ:[102] Նա այս քարտեզը կոչում է ձվածիր ու հայտնում, որ քարտեզի ուղղահայաց և հորիզոնական տրամագծերը 98 և 101 մմ են: Առաջին հերթին պետք է ասել, որ քարտեզի արտաքին շրջանի տրամագիծը 125 մմ է, իսկ ներքին շրջանինը՝ 113-114 մմ: Քարտեզը շրջանաձև է և ո՛չ ձվածիր: Որպես փաստ բոլորակի կենտրոնում նույնիսկ կարելի է տեսնել շրջանը գծող կարկինի ասեղի բացած անցքը: Հակառակ նրան, որ բոլոր T-O քարտեզներում Ասիան Եվրոպայից բաժանող գետը Դոնն է, Խաչատրյանն իր հոդվածում պնդում է, որ T տառի ձախ հորիզոնական գծիկը ոչ թե Դոնն է, այլ Դնեպրը, որպես «փաստ» բերելով գետը ծովին միանալու վայրը, առանց նկատի առնելու այն հանգամանքը, որ միջնադարյան այս տեսակի քարտեզները սխեմատիկ են, որոնց մեջ աշխարհագրական վայրերն ու երկրները տեղադրված են շատ մոտավոր կերպով, հաճախ իրենց գտնված բուն վայրից շատ հեռու: Հենց այս քարտեզի մյուս տեղանունները ասվածի ցայտուն վկայություններն են, որոնց մասին ինքը՝ Խաչատրյանը նույն հոդվածում գրում է. «*քարտեզում նշված տեղանունները չեն համապատասխանում իրենց իրական տեղերին ու դրանք ցուցադրված են միմիայն տեղադրված մոտավոր կետում*»:[103]

Քարտեզի պատրաստման ժամանակի թվականի մասին էլ կան տարբեր կարծիքներ, սկսած 1206 թվականից մինչև 14-րդ դարի կեսերը: Ըստ Խաչատրյանի, քարտեզը պատրաստված է 1206 թվականին, մի ենթադրություն, որը նա հիմնում է քարտեզի տեղանունները դրա պատրաստելուն ժամանակակից լինելու վրա: Սխալ է քարտեզի թվականը հիմնել նրանում նշված տեղանունների անվանումների վրա, քանի որ բազմաթիվ միջնադարյան քարտեզներում նշված են քաղաքների ու երկրների անուններ, որոնք քարտեզը պատրաստելու ժամանակ այլևս գոյություն չունեին: Դրանցից կարելի է նշել Բաբելոնը, Աղվանքը, Ասորեստանը, Լյուդիան, Փռյուգիան և շատ ուրիշներ, որոնք ընդհանրապես նշվում են մինչև ուշ միջնադարյան քարտեզներում:

Մոնղոլների «Ոսկե Հորդայի» մայրաքաղաք Սարայ-Բաթուն, որի անունն առկա է քարտեզում որպես Սարայ, հիմնադրվել է 1240-ականներին, իսկ Խաչատրյանը պնդում է որ այս անունը ո՛չ թե այս քաղաքին է վերաբերում, այլ մի այլ աշխարհագրական վայրի, ինչպես օրինակ Կասպից ծովում գտնվող հավանական մի կղզու: Սա ամբողջովին անհիմն պատճառաբանություն է, քանի որ, նախ և առաջ, Կասպից ծովը քարտեզում առկա չէ և եթե նույնիսկ լիներ, այնտեղ գոյություն չունի «Սարայ» անունով որևէ բնակելի կղզի: Սարայի մասին խոսում է տասներեքերորդ դարի ֆլամանդացի ճանապարհորդ Վիլլեմ դե Ռուբրուքը (1220-1293 թթ.), որը 1253 թվականին այցելել է Ոսկե Հորդայի այս մայրաքաղաքը:[104] Խաչատրյանն իր ենթադրությունը հիմնավորելու համար բերում է նաև հավելյալ «փաստեր», որոնք լուրջ քննարկման չեն դիմանում: Սրանց շարքին են քարտեզի ձեռագիրը վերագրել Կիլիկիային, քանի որ Կաֆայում 1445-ին պատրաստված և այժմ Մատենադարանում պահվող No. 8973 ձեռագրի գրությունը շատ նման են քարտեզի ձեռագրին: Խաչատրյանի ենթադրությունը, որ քարտեզը պետք է պատրաստված լինի Կիլիկիայում անհավանական է նաև այն պատճառով, որ քարտեզագիրն այստեղ նշել է Մետաքսի ճանապարհի հյուսիսային ճյուղի վրա գտնվող և Կիլիկիայից շատ հեռու քաղաքներ, ինչպիսին են Կաֆան, Ազովը, Սարայը, Խորեզմը և այլն, մինչդեռ Կիլիկիայի ու այդ շրջանի քաղաքներից ոչ մեկի անունը քարտեզում նշված չէ:

---

[99] Իբն-Բաթութա, *ճանապարհորդություններ*, պարսկերենով, հատոր 2, Թեհրան 1990, Գլուխ 29, էջ 290-295:

[100] Անդ, էջ 202-203:

[101] *Marco Polo*, *the Travels of* – Translated and Edited by William Marsden, Doubleday & Co., NY, 1948. Գիրք 2, Գլուխ 77 և Գիրք 3, Գլուխ 4, էջ 245-258:

[102] Մ. Խաչատրյան, Երևան, 1976, էջ 218-230:

[103] Անդ էջ 211 և 213:

[104] Hakluyt, Richard – *The Principal Navigations*, *Voyages*, *Traffiques and Discoveries of the English Nation* – James MacLehouse, Glasgow, 1903. հատոր 1. էջ 271-276:

Ինչ վերաբերում է Կաֆային, ապա այն մի փոքր նավահանգիստ էր. Թեոդոսիա անունով, որի ղեկավարումը 13-րդ դարում անցավ Ջենովայի վաճառականներին:[105] Ջենովացիները սրան տվեցին *Կաֆա* կոչումը, որից հետո նա զարգացավ ու դարձավ Արևելքի հետ Ջենովայի առևտրական կապերի կարևոր մի կենտրոն:[106] Կաֆայի և այնտեղ բնակվող հայերի մասին հայ մատենագրության մեջ առաջին անգամ խոսվում է 13-րդ դարի կեսերին, իսկ 14-րդ դարի կեսերին սա արդեն հայկական մեծ քաղաք էր, որի 70,000 բնակչության մեծ մասը հայեր էին և ունեին մատենագրական ծաղկուն դպրոց:[107] Քարտեզում Կաֆայի անվան առկայության փաստը վկայում է, որ դա պետք է պատրաստված լինի ամենավաղը 1270-ական թվականներց հետո:

Քարտեզը հավանաբար պատրաստված է 13-րդ դարի վերջերին կամ դրանից հետո, այսինքն Սարայ-Բաթու և Սարայ-Բերքե (Նոր-Սարայ՝ հիմնադրված 1257-1266 թթ.) քաղաքների հիմնադրումից հետո, այն ժամանակ, երբ Կաֆան արդեն կարևոր առևտրական կենտրոն էր հանդիսանում: Ըստ Հ. Հովհաննիսյանի քարտեզի մեջ Խորեզմի և Կաֆայի առկայության փաստը հուշում է, որ քարտեզի պատրաստման ժամանակներում Ոսկե Հորդան և Խորեզմը միմյանց հետ ունեին առևտրական և այլ կապեր, իսկ այս կապերը պահպանվում էին 1240-ից մինչև 1360 թվականները: Այսպիսով, քարտեզում առկա տեղանուններին հիմնվելով կարելի է եզրակացնել, որ սրա պարտրաստման ժամանակը կարող է ամենավաղը լինել 13-րդ դարի վերջերը, թերևս մինչև 14-րդ դարի կեսերը:[108]

Իսկ քարտեզի պատրաստելու վայրը նույնպես հավանաբար Կաֆան է, քանի որ ինչպես Կիլիկիայում բնակվող հայերը, Կաֆայում հաստատված հայերը նույնպես հնարավորություններ ունեին կապ պահելու Ջենովայի և այլ եվրոպական քարտեզագրական կենտրոնների հետ և այնտեղից ստանալու տեղեկություններ արևմտյան T-O տեսակի քարտեզների մասին: Կա նաև այն փաստը, որ քարտեզի մեջ նշված են Մետաքսի Ճանապարհի հյուսիսային ճյուղավորման վրա գտնվող կարևոր քաղաքների անունները, Խորեզմ, Սարա, Ազախ և Կաֆա:

Հետաքրքիրն այն է, որ այդ ժամանակների եվրոպական միջնադարյան քարտեզներից գրեթե բոլորի վրա նշված են Հայաստանը, Արարատները և Նոյյան տապանը, իսկ դիտարկվող քարտեզի հայազգի քարտեզագիրը որոշել է Արարատը, Հայաստանը և նրանց հարակից շրջաններն իր քարտեզի մեջ ընդհանրապես չնշել: Այս երևույթը կարելի է բացատրել նաև այն իրականությամբ, որ քարտեզ պատրաստողն ապրելով Հայաստանից ու Կիլիկիայից հեռու գտնվող հայկական մի գաղթօջախում, անմիջական և անձնական կապ չի զգացել Հայաստանի և հարակից երկրների քաղաքների և աշխարհագրության հետ, հետևաբար նրանցից ոչ մեկը չի նշել իր պատրաստած քարտեզի վրա:

Ամեն դեպքում, այս քարտեզը համաշխարհային քարտեզագրության մեջ ունի իր եզակի և շատ կարևոր տեղը, քանի որ ինչ որ կերպ կապում է հայկական այս քարտեզը եվրոպական քարտեզագրական մշակույթի հետ:

6 – ԱՆԳԼԻԱԿԱՆ «ԲԱՐՈՅԱԽՈՍ» ՁԵՌԱԳՐԻ ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑ ՔԱՐՏԵԶԸ

«Բարոյախոս» կամ անգլերենով “bestiary” կոչվող ձեռագրերը պարունակում են պատկերազարդ համառոտ պատմվածքներ իրական ու առասպելական կենդանիների, բույսերի ու քարերի մասին: Այս ձեռագրերը պարունակում են բացատրություններ և բարոյախրատական տեքստեր, փոխաբերաբար դրանք վերագրելով Քրիստոսին, սատանային և մարդկանց: Սրանք առաջին անգամ շարադրվել են երկրորդ դարում՝ հունարենով, ապա թարգմանվել հայերենի, եթովպերենի, ասորերենի, արաբերենի ու լատիներենի և այլն, հետո նաև եվրոպական այլ լեզուների:[109] Հունարեն օրինակներից մեզ են հասել 77 ձեռագիր, իսկ Երևանի Մատենադարանում են գտնվում 35 հայերեն ձեռագրեր:[110] Տասներկուերորդ դարից սկսած Բարոյախոսներն ընդհանրացած էին Անգլիայում և Ֆրանսիայում և դրանցից մեզ հասել են ավելի քան 50 ձեռագիր օրինակներ:[111] Ներկա աշխատության Պատկեր 68-ում վերատպված քարտեզը վերցված է Բարոյախոսների երրորդ սերնդին պատկանող, 1220-1230 թվականների մի ձեռագրից, որը պահպանվում է Անգլիայի Քեմբրիջ քաղաքի «Ֆիցուիլյամ» թանգարանում:

Պատ. 68 – Այստեղ վերատպված «Աշխարհացույց» քարտեզը 13-րդ դարի անգլիական մի «Բարոյախոս» ձեռագրից է: Սա ինքնըստինքյան մի անսովոր երևույթ է, քանի որ այս քարտեզը միակն է, որ գոյություն ունի նման խորագրով մի ձեռագրի մեջ, կամ էլ, կարելի է ասել, որ սա միակ քարտեզ պարունակող «Բարոյախոս» ձեռագիրն է: Քարտեզի մեկ ուրիշ եզակի հատկությունն այն է, որ սա իր կառուցվածքով փոփոխված T-O տեսակի քարտեզ է և այդ ընտանիքի «խորթ» զավակը, քանի որ, ըստ իր իսկ ներքևում եղած մակագրության, Միջերկրական ծովը հորիզոնական կապույտ ժապավենն է, որը բնակելի աշխարհը բաժանում է երկու մասի: Քարտեզը նմանվում է վերն արևելքով ուղղորդված T-O

---

[105] Donabedian, Patrick – *Armenians in Crimea during the era of the Genovese* – Roma Armenia, Catalogue of exhibition. Curator Claude Mutafian. Rome, 1999, էջ 188-189 և Միքայելյան. Վարդգես Ա. – *Ղրիմի հայկական գաղութի պատմությունը* – ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964, էջ 64-68:

[106] King – *The Black Sea, A History* – Oxford University Press, 2004, էջ 84,85,91,94:

[107] *Հայկական Սովետական Հանրագիտարան*, Երևան, հատոր 4. 1978, էջ 170:

[108] Հ. Հովհաննիսյան, *Աշխարհի հայկական ձեռագիր քարտեզը*,, Երևան, 1954, էջ 81-93:

[109] Muradyan, Gohar – *PHYSIOLOGUES*, *The Greek and Armenian Versions with a Study of Translation Techniques* – Hebrew University Armenian Studies 6, Peeters, Leuven, 2005. էջ 1:

[110] Անդ, էջ 2:

[111] Wikipedia, կայքային հանրագիտարան – *Bestiary*.

տեսակի քարտեզներին, բայց սրանց մեջ սովորաբար ուղղահայաց պատկերված և Եվրոպան Աֆրիկայից բաժանող Միջերկրականն, այստեղ գծված է հորիզոնական՝ բաժանելով Ասիան աշխարհի մնացորդ մասերից, իսկ Եվրոպան ու Աֆրիկան ցույց են տրված որպես մեկ միացյալ մայրցամաք: Այսուհանդերձ, քարտեզի ներքևի տեքստն ասում է, որ աշխարհը բաժանված է երեք ցամաքամասերի, որոնք են Ասիան, Եվրոպան և Աֆրիկան, մի բան, որը նաև վկայում են երկրի բոլորակից դուրս գրված նույն երեք անվանումները: Սխալ գծված Միջերկրականը և պատկերված երկու մայրցամաքները հիշեցնում է այն ժամանակները, երբ, ըստ Օրոսիոսի՝ *Որոշներն այն կարծիքի էին, որ աշխարհը բաժանված է երկու ցամաքամասերի* (տե՛ս Գլուխ 2, մաս 4):[112]

Քարտեզի բոլորակի դրսում կարմիրով նշված են երեք մայրցամաքների և մի քանի կարևոր հողմերի անունները: Ինչպես վերը նշվեց՝ հորիզոնական ջրի շերտը Միջերկրականն է, որը երկրի սկավառակի հակառակ ծայրերը՝ հարավն ու հյուսիսն իրար է միացնում: Սա շատ տարբեր է մյուս T-O տեսակի քարտեզների Միջերկրականից, որն ընդհանրապես ներկայացված է որպես "T" տառի ուղղահայաց գծիկը, ուր ձախ թևը Դոնն է՝ Տանայիսը, ներառյալ Եգեյան, Սև և Ազովի ծովերը, իսկ աջը՝ Նեղոսը: Քարտեզում պատկերված Միջերկրականը պարունակում է *Կրետե*, *Հռոդոս*, *Կիպրոս*, *Դելոս*, *Տենեդոս* և *Սիտերա* կղզիները, որոնք բոլորն էլ գտնվում են Արևելյան Միջերկրականում:

Քարտեզի առնչությունը կրոնի հետ դրսևորվում է լոկ արևելքում պատկերված *Երկրային դրախտով*, ինչպես նաև *Երուսաղեմի* առկայությամբ, պատկերված մի ամրոցի մանրանկարով, որոնց անունները գրված են կարմիրով: Ասիայի տարածքում կարմիր թանաքով գրված տեղանուններից են նաև քարտեզի կենտրոնում տեղադրված խաչակիրների *Ակկա* քաղաքը և *Ասորեստանը*, իսկ Եվրոպայում՝ *Հռոմն* ու *Փարիզը*:

Քարտեզում տեղանունների առաջին տառերը գրված են կարմիրով և ավելի փոքր տառերով ու տեղադրված են տեղանվան մյուս տառերից առանձնացած, այդպիսով դժվարացնելով տեղանունների ընթերցումը: Ասիայում առկա մյուս տեղանունները, ձախից հաշվված, հետևյալն են. *Մեծ Հնդկաստան*, *Ասորեստան*, *Կովկասյան լեռներ*, *Բաբելոն*, *Քաղդեա*, *Մարաստան*, *Պարթևաստան*, *Միջագետք*, *Սիրիա*, *Պարսկաստան*, *Հիրկանիա*, *Հայաստան*, *Արաբիա*, *Անտիոք*, *Կապադովկիա*, *Կարմիր ծով* (գրված երկու տողի վրա), *Իբերիա*, *Կուր*, *Կիլիկիա*, *Վերին Սկյութիա*, *Պաղեստին. Եգիպտոս*, *Լյուկիա*, *Իսավրիա*, *Հուդա և Ալեքսանդրիա*, նաև *Վերին Եթովպիա*՝ մակագրված քարտեզի հարավային եզրին: Սրանք բոլորը երկրամասերի անվանումներ են՝ բացի Կարմիր ծովից, Կուրից և Կովկասյան լեռներից: Կովկասի տարածաշրջանի և Հայաստանի մոտակա երկրներն են, արևելքում՝ *Պարթևաստանն* ու *Միջագետքը*, հյուսիսում՝ *Իբերիան* (Վիրքը) և *Հիրկանիան*, արևմուտքում՝ *Կիլիկիան* և *Կապադովկիան*, հարավում՝ *Արաբիան* ու *Պաղեստինը*: Եթովպիան բաժանված է երկու մասի՝ *Վերին Եթովպիան* Ասիայի հարավային ծայրամասում և *Եթովպիան՝* տեղադրված *Աֆրիկայում*, քարտեզի հարավ-արևմտյան վերջամասում: Քարտեզում հարավային Կովկասի երկրներից միմիայն Հայաստանն ու Վիրքն են նշված:

Քանի որ քարտեզում Աֆրիկան և Եվրոպան ներկայացված են միասին, առանց դրանք բաժանող Միջերկրականի, այս երկու մայրցամաքների երկրներն ու քաղաքները ցուցադրված են խառնաշփոթ և հաճախ ամբողջովին սխալ տեղերում: Եվրոպայի, այսինքն ձախ կողմի մակագրություններից են *Ներքին Սկյութիան*, *Մեսիան*, *Վերին Գերմանիան*, *Պաննոնիան*, *Թրակիան*, *Ներքին Գերմանիան* և *Ալմանիան*: Քարտեզի կենտրոնական առանցքի վրա, ուր պետք է լիներ Միջերկրականը, վերից ներքև նշված են *Ապուլիան*, *Իտալիան*, *Ալպյան լեռները*, *Փոքր Իսպանիան*, *Ֆրանսիան*, *Փարիզը* և *Նորմանդիան:* Աֆրիկայի շրջանում եղած տեղանուններից են *Հունաստանը*, *Հռոմը*, *Բրիտանիան՝* տեղադրված քարտեզի ներքևի կենտրոնում, որոնց աջ կողմում նաև առկա են աֆրիկյան մի քանի տարածքների անուններ, ինչպես օրինակ *Գեթուլիան*, *Մավրիտանիան* և *Եթովպիան*:

Աշխարհը շրջապատող օվկիանոսի մեջ տեղադրված են բազմաթիվ կղզիներ, որոնցից հանրածանոթներն են *Անգլիան* ու *Ուելսը*, սրանցից Ադրիանոսի կառուցած պարսպով առանձնացած է *Շոտլանդիան:* Առկա է նաև *Հիբերնիան*, այսինքն Իռլանդիան: Սրանք բոլորը տեղադրված են *Բրիտանիա* կոչված աշխարհամասի մոտակա օվկիանոսում, որը գտնվում է բոլորակի ներքևի աջ մասում, Եթովպիայի մոտակայքում: *Տիլոս* կղզին, որն այսօրվա Բահրեյնն է, գտնվում է արևելքում՝ *Փոքր Հնդկաստանի* և *Բրահմինների կղզու* մոտ (Բրահմինները ցեղեր են, որոնք իբր բնակվում են Հնդկաստանի մոտակայքում): Մեկ ուրիշ կղզին *Կադիսն* է, իրականում իսպանական մի նավահանգիստ Ջիբրալթարի նեղուցի մոտ, որը սակայն Միջերկրականի սխալ դրվածքի պատճառով արևմուտքում լինելու փոխարեն հայտնվել է քարտեզի հյուսիսային ծայրամասում, Միջերկրական կոչված ծովի և օվկիանոսի միացման վայրում: Մեծ կղզիներից մյուսներն են *Տապրոբանան* (Ցեյլոնը, Տիլոսի մոտ՝ արևելքում), *Օրկադիան* (շոտլանդական Օրկնեյան կղզիները՝ քարտեզի հյուսիս-արևմուտքում), որոնց մասին գրված է, թե սրանք թվով 33-ն են, որոնցից քսանն անմարդաբնակ են: Իրականությունն այն է, որ քարտեզագիրն օվկիանոսում խառնիճաղանճ կերպով տեղադրել է իր ճանաչած կղզիները, պարզապես կատարելով իր պարտականությունը, առանց ուշադրություն դարձնելու դրանց ճշգրիտ տեղակայմանը:

7 – ՎԵՐՉԵԼԼԻԻ ՔԱՐՏԵԶԸ

Պատ. 69/69a – Աշխարհացույց այս քարտեզը պահպանվում է Իտալիայի Վերչելլիի քաղաքի կենտրոնական արխիվում և ճանաչված է որպես Վերչելլիի քարտեզ: Սա համեմատաբար մեծ քարտեզ է, գծված մագաղաթի վրա, որի չափերն են 84x72 սմ: Քարտեզի որոշ մասերը պատառոտված են, իսկ մի մասն էլ շատ մաշված է ու լավ վիճակի մեջ չի

[112] Paulus Orosius -*Seven books of History against the Pagans* – New York, 1936, Գիրք 1, Պլ. 1, մաս 1, էջ 34:

պահպանվել: Վերչելլի քարտեզը երեք միջնադարյան մեծ աշխարհացույց քարտեզներից մեկն է, որ համեմատաբար ամբողջական է մեզ հասել: Այս քարտեզը երեքի մեջ ամենահինն է և քարտեզագետներն այն կարծիքի են, որ պատրաստվել է Անգլիայում անհայտ վարպետի ձեռքով 1191-1218 թվականներին: Կան նաև գրավոր փաստաթղթեր հաստատելու, որ այս քարտեզը Անգլիայից Վերչելլի է բերել իտալացի կարդինալ Գուալա-Բիքքիան 1218/9 թվականներին:

Իր բովանդակությամբ այս քարտեզը նման է մյուս մեծ միջնադարյան աշխարհացույց քարտեզներին, ուր ցույց են տրված քաղաքներ ու տարածաշրջաններ, մարդիկ ու պատմական դեպքեր, ինչպես նաև առասպելական էակների, աստվածաշնչային ու այլ լեգենդների մանրանկարներ ու բացատրություններ:

Քարտեզն ուղղորդված է վերև արևելքով: Սրա հյուսիսային և հարավային ծայրամասերը պակասում են, իսկ Եվրոպայի ու Աֆրիկայի մասերը վերջին տարիների սխալ վերանորոգումների ընթացքում բավականին տուժել են, և կան անգամ մասեր, որոնք դարձել են անընթեռնելի: Քարտեզի ոճն ու ցուցադրության ձևը շատ նման է էբսթորֆի քարտեզին և Հերեֆորդ տաճարում պահվող «Մապպա Մունդիին», որոնք նույնպես պարունակում են գազանների, առասպելական էակների մանրապատկերներ ու տեքստեր (տե՛ս Պատ. 70 և 77): Սրանց հիմնական տարբերությունն այն է, որ Վերչելլի քարտեզում Երուսաղեմը պատկերված չէ աշխարհի կենտրոնում:

Քարտեզի մեծացված դետալը (Պատ. 69a) Փոքր Ասիայի տարածաշրջանն է և Միջին Արևելքը, որի վրա ավելացված թվանշանները հաջորդող տեքստում նշված են փակագծերում: Քարտեզը պարզ և ընթեռնելի դարձնելու նպատակով դետալում բոլոր գույները շեշտված ու չափազանցված են:

Այստեղ կարելի է տեսնել քառահարկ *Նոյյան տապանը* (17) նստած է երկգագաթանի լեռանը կից, որն անվանված է *Արաթ* (18), իրականում՝ Արարատը: Արարատի վերը և Նոյյան տապանին կից մեծ տառերով մակագրված է *Արմենիա* (1-Հայաստան) անունը: Նոյյան տապանի վերը կա մի պղտոր մակագրություն, որը նախքան վերջին «վերանորոգումը» շատ ավելի լավ վիճակում էր և ընթեռնելի: Այս մակագրության մոտավոր թարգմանությունն է.

Այս Հայաստան կոչված աշխարհամասը անվանված է Հերակլեսին ընկերակցող և այստեղի թագավոր Արմենոսի անունով: Երկիրը տարածվում է մինչև Աղվանքի Դիևան քաղաքը:[113]

Կողքիսի (6) շրջանը գտնվում է Սև ծովի (15) մոտ, ուր առկա է նաև *Կողքիս* քաղաքը (5): Այստեղ կանգնած է նախշուն մի խոյ, որը ներկայացնում է Ոսկե Գեղմը (20), որն ըստ առասպելների, փախցրին Յասոնն ու արգոնավորդները: Մակագրության թարգմանությունն է.

Այս Կողքիսի թագավորությունն է:Այստեղ էր ապրում խոյը, որն ուներ ոսկյա գեղմ և որին Յասոնը փախցրեց:[114]

Տերևանման զարդարանքներով գծված կեռ ու երկար գիծը նշում է Կովկասյան լեռնաշղթան (16), որի մեջտեղում մանրանկարով պատկերված մեծ դարպասը անվանված է *Ալեքսանդրի երկաթե դուռը* (21): Սա Հայաստանից ելքի ուղին է դեպի Կասպից ծով (11) և հյուսիսային շրջաններ: Հավանաբար սա նշում է Կովկասյան լեռների միջով անցնող միակ ճանապարհը՝ Դարյալի կիրճը (տե՛ս տողատակի ծանոթագրություն 33): Կասպից ծովի արևմուտքում պատկերված լեռները կոչված են *Կասպից լեռներ* (12):

Դետալ Պատ. 69a-ի մեջ ավելացված թվերը հետևյալ տեղանուններն են նշում:

1. Հայաստան
2. Տրոֆիլիա քաղաք
3. Կապադովկիայի շրջան
4. Կեսարիա քաղաք
5. Կողքիս երկիր կամ քաղաք
6. Կողքիս շրջան [Աբխազիա]
7. Անագնե քաղաք և շրջան
8. Մակրե քաղաք
9. Կարրես քաղաք
10. Սեռապոլիս քաղաք
11. Կասպից ծով
12. Կասպից լեռներ
13. Արաքս գետ
14. *Ալիս գետ* – Փոքր Ասիայի Հալիս գետը:
15. Սև ծով
16. Կովկասյան լեռներ – տե՛ս տողատակի ծանոթագրություն 89:
17. Նոյյան տապան
18. *Արատ* Արարատները – զույգ գագաթներով:
19. Ս. Բարդուղիմեոսի գերեզմանը
20. Ոսկե գեղմով խոյը
21. *Երկաթի դուռը*, կամ Ալեքսանդր Մակեդոնացու դուռը:

8 – ԷԲՍԹՈՐՖԻ ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑԸ

Մինչև քսաներորդ դարի կեսերը մեզ հասած ամենամեծ աշխարհացույց քարտեզը էբսթորֆյան աբբայության մեջ գտնվող հսկայական քարտեզն էր, որի չափերն էին 358X356 սանտիմետր (համարյա շրջանաձև): Այս քարտեզն էլ ունի անգլիական ծագում. նրա հեղինակն է համարվում Անգլիայի Տիլբուրի քաղաքի վանական Ջերվազը: Նա որոշ ժամանակ աշխատել է Իտալիայի Բոլոնյա քաղաքում, ապա դարձել էբսթորֆի աբբահայրը: Ջերվազի կարևոր երկերից է Հռոմեական սրբազան կայսրության կայսր Օտտո IV-ի ժամանցի համար շարադրած *Otia Imperialia* գիրքը, որն աստղաբաշխության, աշխարհագրության, պատմության, ֆոլկլորի և առասպելների վերաբերյալ նյութերի մի ժողովածու է: Այս գրքում ակնարկներ կան ինչ-որ քարտեզի մասին, որի պատճեններից մեկն էլ համարվում է էբսթորֆյան աշխարհացույցը, հավանաբար պարտրաստված 1232 թվականին: Այս տեսակետն ամրապնդվում է այն իրողությամբ, որ վերոնշյալ գրքի երկրորդ գլխում տեղ գտած աշխարհի վերաբերյալ բացատրական մի շարք պարբերություններ նույնությամբ մակագրված են քարտեզի վրա:

[113] Chekin, Leonid S. – *Northern Eurasia in Medieval Cartography.*Terrarum Orbis" series No.4 – Brepols, Belgium, 2006, էջ 146:
[114] Անդ

Քարտեզը, որը բաղկացած է շուրջ 30 մագաղաթյա թերթերից, 1890 թվականներին մաս-մաս արվելով տարվեց Բեռլինի լուսանկարելու համար, ապա վերադարձվեց Հանովեր քաղաքի թանգարանին ի պահպանություն, ուր 1943 թվականին հրդեհի բաժին դարձավ դաշնակից ուժերի օդային ռմբակոծության հետևանքով:

Պատ. 70/70a – Այստեղ արտատպված պատկերը հիմնված է 1890-ական թվականներին Բեռլինում պատրաստված լուսանկարի վրա: Ինչպես նշվեց վերը, 1232 թվականից մեզ հասած այս ամենամեծ աշխարհացույց քարտեզը ոչնչացվեց 1943 թվականին, երբ դաշնակից ուժերը օդային ռմբակոծության ենթարկեցին Հյուսիսային Գերմանիայի Հանովեր քաղաքը:

Սա իրականում ընդհանրացած T-O տեսակի, զարդարուն և կրոնական հենք ունեցող քարտեզ է, ուղղորդված վերև արևելքով: Քրիստոսը պատկերված է աշխարհի սկավառակը գրկած, գլուխը վերը, երկու ձեռքերը սկավառակի եզրերին, ոտքերը՝ ներքևում: Այսպիսով աշխարհը ներկայացված է որպես Քրիստոսի մարմինը: *Երկրային Դրախտը* պատկերված է արևելքում, Ադամի, Եվայի և օձի ներկայությամբ: Չորս բիբլիական գետերն սկիզբ են առնում Դրախտում, անցնում ընդհատակ ու ապա երևան գալիս բնակելի աշխարհում: Ըստ քարտեզի՝ *Երուսաղեմը*, որ պատկերված է ոսկեզօծ, աշխարհի կենտրոնն է (Տե՛ս Պատ. 70b և 70c): *Նոյյան տապանը* (Պատ. 70a, թիվ 2) նստած է Արարատի զույգ գագաթներին, իսկ Նոյը պատկերված է տապանի մեջ՝ ձեռքերը պարզած և պատրաստ ընդունելու սպիտակ աղավնուն, որը վերադառնում է ձիթենու ճյուղը կտուցին:

Ինչպես ընդունված է T-O քարտեզներում, այստեղ ևս կարևոր դեր է խաղում Միջերկրականը, որը ներկայացված է ճոխ ու զարդարուն, բազմաթիվ ծոցերով ու խորշերով, ուր առկա են նաև բազմաթիվ կղզիներ: Սրանցից *Կրետեն*, *Կիպրոսն* ու *Սիցիլիան* ներկայացված են որպես ամենամեծ կղզիները, զարդարված ամրոցների ու շինությունների մանրապատկերներով: Քարտեզը լի է այլ պատմական, աշխարհագրական մանրամասնություններով ու տարբեր լեգենդներից ու առասպելներից վերցված վայրերի, գազանների ու այլ էակների պատկերներով, նրանց մասին տեքստերով:

Ստորև բերվող տեքստերում թարգմանաբար ներկայացված են էբսթորֆի աշխարհացույց քարտեզում Հայաստանի ու նրա հարակից շրջանների վերաբերյալ առկա տեղեկությունները:[115]

1. Արարատ:
2. *Նոյյան տապան:*
3. Հայաստանը տարածված է Կապադովկիայից մինչև Կասպից ծով:
4. *Սա Հայաստանի շրջանն է, որն անվանված է Յաստնի ընկերակից Արմենայի [կամ Արմենիոս] անունով: Այս շրջանը գտնվում է Տավրոսի և Կովկասի միջև և տարածվում է մինչև Կապադովկիա և Կասպից ծով:*[116]
5. Հայաստանի Պարտավ քաղաքը:
6. *Սուրբ Բարդուղիմեոսի շիրիմը*, [Ըստ ավանդության՝ քրիստոնեությունը Հայաստան բերող առաքյալներից մեկը]
7. *Մելիտենա քաղաքը* [Մալաթիա]:
8. *Արտաքսատա* [Արտաշատ], *Հայաստանի մայրաքաղաքը:*
9. *Արաքսը մի գետ է Հայաստանում, ելնելով նույն լեռներից, ուր ակունք է առնում Եփրատը: Գետի անունը գալիս է վայրագություն/անկաշկանդություն բառից: Երբ Ալեքսանդրը* [Մակեդոնացին] *կառուցեց մի կամուրջ՝ գետի վրայով անցնելու համար, գետն իր հուժկու հոսանքներով կամուրջը քշեց ու տարավ:*
10. Արաքսի վրա կառուցված Ալեքսանդրի կամուրջը:
11. *Եդեսիա քաղաքը* [Ուրֆա]: *Այս Եդեսիա քաղաքը Բաբելոնից հեռանալուց հետո հիմնադրել է Քուշի որդի Նեբրովթը* [բիբլիական թագավորներից մեկը, Նոյի ծոռը]: *Քաղաքն անվանվում է նաև Աննարե, տեղի տիրակալուհի Աննայի հիշատակին:*
12. *Խարրան քաղաքը, որը պարթևները հիմնեցին Եդեսիայի մոտ: Սիկատոնը* [գետ] *ակունք է առնում Կերավնյան* [հնում՝ Տավրոսն ու Կովկասյան լեռները] *լեռներից ու հոսում դեպի ծով:*
13. Կեսարիա քաղաքը:
14. *Կողքիսի երկիրը* [Աբխազիան]: *Մասնագետները Ոսկե գեղմը տեղադրում են այստեղ, հետևաբար Յասոնն եկավ այստեղ ու պատճառ դարձավ Հունաստանի և Տրոյայի պատերազմին:*
15. *Այս երկիրը, որը կոչվում է Աղվանք, բնակեցված է 26 ցեղերով, որոնք հայտնի են իրենց մաշկի շլացուցիչ սպիտակ գույնով և աշխարհ են գալիս սպիտակ մազերով: Երկիրը սկիզբ է առնում Կասպից ծովի արևմուտքից և նրա ափերով ձգվում դեպի հյուսիսային օվկիանոս, անցնելով վայրի շրջաններով ու Մեոտիսյան ճահիճներով* [Ազովի ծով]*: Այս շրջանի շներն այնքան հսկա են ու վայրագ, որ կարող են ցուլ և առյուծ խեղդել: Նրանք մյուս կենդանիներից ավելին են հասկանում: Նրանք հնազանդվում են միմիայն իրենց տիրոջը, որին նրանք հավատարիմ են և նրա տունը կպաշտպանեն մինչև մահ: Ասպատակությունների ընթացքում նրանք ընկերակցում են իրենց տերերին և նրանց կողքից չեն հեռանում, նույնիսկ եթե նրանք սպանվել են: Մարդը նրանց կյանքի աղբյուրն է: Էգ շներին կապում են անտառում, որպեսզի նրանք զուգավորվեն վագրերի հետ և ծնեն խառնուրդ ձագեր, այնքան հուժկու և վայրագ, որ կռվում կարող են առյուծներին խեղդել: Սրանց ընտրած վագրերի փոխարեն մենք կիրառում ենք գայլերի հետ զուգավորվելու տարբերակը:*[117]

---

[115] Այս տեքստերը նույնությամբ ներկա են Տիլբուրեցի Ջերվազի Օտիա Իմպերիալիա գրքում, Օքսֆորդ, 2002:
[116] Անդ, Գիրք 2, Գլուխ 3, էջ 182-183:
[117] Անդ, Գիրք 3, Գլուխ 5, էջ 230-231:

16. *Փոքր Ասիան արևելքում սահման ունի Կապադովկիան և ծովը շրջապատում է նրա մյուս երեք կողմերը: Հյուսիսումն է Պոնտոսը, արևմուտքում՝ Մարմարան, հարավում՝ Եգիպտական ծովը* [Միջերկրականը]: *Փոքր Ասիան բաժանված է հետևյալ նահանգների՝ Բյութանիա, Փռյուգիա, Գաղատիա, Լյուդիա, Կարիա, Պամփյուլիա, Իսավրիա, Լյուկիա և Կիլիկիա, Լիկաոնիա, Միգդենիա և Նիկոմիա, ինչպես նաև Բաետիկա* [՞] *և Պիսիդիա* [կամ Պերսիդա]*: Այստեղ է ապրում մահացու որդ քամելեոնը, ինչպես նաև կովի նման մի գազան՝ «բոնակոսը», որն իր կղկղանքը կարող է ուղղել ու նետել մինչև դաշտի վերջը, և որը շփման դեպքում խոր այրուցքներ է պատճառում: Այս պաշտպանողական զենքով օժտված կենդանին իրենից հեռու է պահում բոլոր թշնամիներին:*
17. Կասպից ծով:
18. *Կասպից դարպաս* [որոնցով պետք է անցնել՝ Կովկասյան լեռների մյուս կողմը հասնելու համար, տես տողատակի ծանոթագրություն 33]:
19. Միջագետք:
20. *Այս քաղաքն անվանվում է Կապադովկիա: Շրջանն էլ կրում է նույն անունը: Այստեղ ձիերը հղանում են քամուց, բայց ապրում են ոչ ավելի քան երեք տարի:*[118]
21. *Կովկասյան լեռներն սկսում են արևելքում՝ Չինական ծովից և կամարածև ձգվելով հյուսիս-արևմուտք հասնում են համարյա թե մինչև Եվրոպա:* [Այստեղ, ինչպես Օրոսիոսն է նշում, Կովկասյան լեռները միացված են Իրանի էլբուրս լեռնաշղթային, որն ինքը Աֆղանստանի տարածքով անցնելով հասնում է մինչև Հիմալայան լեռները: Քարտեզում այս բոլորը միացված են ու անվանված *Կովկասյան լեռներ*: Տե՛ս տողատակի ծանոթագրություն 89:]

Վերոհիշյալ տեքստերի և բացատրությունների մեծամասնությունը նույնությամբ առկա են Տիլբուրեցի Ջերվազի 1211 թ. *Օտիա Իմպերիալիա* ձեռագրում:

9 –ՄԱՏԹԵՈՍ ՓԱՐԻՍ

Մատթեոս Փարիսը (շուրջ 1200-1259 թթ.) բենեդիկտյան վանական էր, որն աշխատում էր Լոնդոնից հյուսիս գտնվող Ս. Ալբանի աբբայությունում, որտեղ նա 1235 թվականից մինչև իր մահը զբաղվում էր պատմական իրադարձությունների ժամանակագրության շարադրմամբ: Այս ընթացքում նա պատրաստել է պատմական ժամանակագրության մի քանի ձեռագրեր ու քարտեզներ: Նրա կարևորագույն աշխատանքը *Chronica Majora*-ն է, «Մեծ ժամանակագրությունը», աշխարհի պատմությունը, որից մեզ են հասել մի քանի քարտեզներ պարունակող ձեռագիր պատճեններ: Սա միջնադարյան Անգլիայում պատրաստված ամենակարևոր պատմական աղբյուրներից մեկն է, քանի որ հանդիսանում է նաև 13-րդ դարի Անգլիայի կյանքն ու կենցաղը նկարագրող մի մանրակրկիտ երկ, ուր գրի են առնված տեղական նշանակության դեպքեր ու բամբասանքներ, բնական աղետներ, առօրյա կյանքն իր քաղաքական խաղերով ու պատահարներով, նույնիսկ հեղինակի անձնական կարծիքը և քննադատական վերաբերմունքը դիվանագետների, թագավորի և նրանց գործունեության վերաբերյալ:

Մեծ ժամանակագրությունը պարունակում է մի շարք քարտեզներ, այդ թվում Անգլիայի և Շոտլանդիայի քարտեզը, Անգլիայից Պուլիա և Սիցիլիա տանող ճանապարհի քարտեզները, որոնց նավահանգիստներից ուխտավորները նավարկում էին դեպի Սուրբ Երկիր, ինչպես նաև բուն Սուրբ Երկրի քարտեզը:[119] Ձեռագրի երկու օրինակներն ունեն նաև աշխարհացույց քարտեզ: Բրիտանական գրադարանում և Քեմբրիջի Կորպուս Քրիստի կոլեջի գրադարանում պահված ձեռագրերի երեք օրինակները պարունակում են վերոհիշյալ քարտեզների մեծ մասը: Այս ձեռագրերում ճանապարհացույց քարտեզներին հաջորդում է Սուրբ Երկրի քարտեզը, որը պատրաստված է ուխտավորին որոշ տեղեկություններ տալու իր ուղևորության նպատակակետի վերաբերյալ: Մինչ այս ժամանակներն աշխարհացույց քարտեզները սովորաբար տեղադրվում էին ընդհանուր և հանրագիտական նյութեր պարունակող աշխատությունների մեջ, որոնցից են Լամբերտի «Ծաղկաքաղը», Բեատուսի «Ապոկալիպսը», Իզիդորի «էտիմոլոգիան», Բեդայի «Գիրք իրերի բնության մասին» և ուրիշները, բայց այստեղ քարտեզները մաս են կազմում պատմական ժամանակագրության մի երկի:

Սուրբ Ալբանի աբբայությունը մոտ գտնվելով Լոնդոնին, Մատթեոս Փարիսի ժամանակ Անգլիայի կարևորագույն կրոնական կենտրոնն էր և շատ շատերը հեռավոր երկրներից այցելում էին այս սրբավայրը: Մատթեոսն ինքը Եվրոպայից դուրս չէր ճամփորդել և իր աշխարհացույց, ինչպես և Պաղեստինի քարտեզներում պատկերված տեղեկությունները նա հավաքել է խաչակիրների ու այն այցելուների պատմածներից, ովքեր ճամփորդել էին Սուրբ Երկիր և հեռավոր այլ երկրներ: Տեղեկությունների մեկ մասն էլ Մատթեոսը վերցրել է ս Էսեքսի կոմսության Ուալթհամ աբբայությունում գտնվող և այժմ անհետ կորած մեծ աշխարհացույց քարտեզից:

Մեծ ժամանակագրության մեջ կա մի ցուցակ, ուր նշված են 1220-1259 թթ. աբբայություն այցելած անձերի անունները, որոնք ցուցակագրել են Մատթեոս Փարիսն ու Անդովերցի Ռոջերը: Արձանագրված 29 անուններից երկուսը հայ այցելուների անուններ են: 1228 թվականին հայ Անտիկենոս եպիսկոպոսն այցելել է աբբայություն և վանականներին պատմել Հովսեփ Կարտափիլիացի թափառական հրեայի մասին:[120] Պատ. 71-ը ցույց է տալիս գրքի լուսանցքը, ուր գրված տեքստը Հովսեփի ու Հայաստանի մասին է: Սրա ներքևի մանրանկարը Հովսեփն է, որը նայում է խաչը կրող Հիսուսին: Մանրանկարը վերցված է Քեմբրիջի թիվ MS 016 ձեռագրի 70բ թերթից:

[118] Անդ, Գիրք 2, Գլուխ 5, էջ 230-1:
[119] Իտալիայի ամենահարավային շրջանը:
[120] Chronica Majora, խմբագիր Հ Ռ Լուարդ, 7 հատոր, 1872-1884, հատոր 3, էջ 161:

Ըստ նույն ցուցակի, 1252 թվականին մի խումբ հայեր այցելեցին Սուրբ Ալբանի աբբայություն և վանքի հայրերին փոխանցեցին տեղեկություններ Հայաստանի և Պաղեստինի վերաբերյալ: Այս տեղեկությունները կարելի է տեսնել Մատթեոս Փարիսի Սուրբ Երկրի քարտեզների մակագրություններում: 1252 թվականի այս այցի վերաբերյալ իր տեքստում Մատթեոսը շարադրում է.[121]

Այս ժամանակ մի քանի հայերի եկան Սուրբ Ալբան..... Նրանց դեմքի դժգույն մաշկը, երկար մորուսները և խստաբարո ապրելակերպը վկայում էին նրանց սրբությունն ու խիստ կարգապահությունը:[122]

Մատթեոս Փարիսի քարտեզները գեղեցիկ ու զարդարուն են, լի բազմաթիվ մանրանկարներով, պատմական ու բացատրական տեքստերով: Նրա աշխարհացույց քարտեզը սահմանափակվում է Եվրոպայով, Հյուսիսային Աֆրիկայի ծովափնյա մասով և Փոքր Ասիայի ու Սուրբ Երկրի տարածքով: Ինչպես նրա բոլոր քարտեզները, այս քարտեզը ևս մնայուն և անփոփոխ չափանիշով չի գծված: Քարտեզը միջինարևելյան շրջանում չի նշում որևէ մանրամասնություն, հետևաբար մեզ հասած սրա երկու օրինակներում Հայաստանը պատկերված չէ:

Նրա ճամփորդական քարտեզներն իրականում քարտեզային ժապավեններ են, որոնց վրա նշված են ճանապարհի վրա եղած քաղաքները, գետերն ու այլ աշխարհագրական մանրամասնությունները՝ ուղիղ շարված մեկ գծի վրա: Դրանք սկիզբ են առնում Անգլիայից և Եվրոպայի միջով գնալով հասնում են մինչև Հարավային Իտալիայի և Սիցիլիայի նավահանգիստները, որտեղից ուխտագնացները նավարկում էին դեպի Սուրբ Երկիր: Այս քարտեզները պատրաստված էին ուխտավորներին ուղղություն տալու համար, հետևաբար ներկա աշխատությունում չեն քննարկված: Այստեղ միայն քննարկված են Մատթեոս Փարիսի Սուրբ Երկրի քարտեզները, քանի որ դրանք ընդգրկում են Սուրբ Երկրից և Պաղեստինից մինչև Հայաստան գտնվող տարածքը:

Փարիսի Սուրբ Երկրի քարտեզներից Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում եղածը պատճեններից հնագույնն է և համեմատաբար պարզը: Սրա մանրապատկերները սահմանափակվում են ամրոցներով ու քաղաքներով, մինչդեռ մյուս օրինակներն ավելի զարդարուն են ու պարունակում են գունագեղ մանրապատկերներ և բոլորին կից առկա են տեղանվան վերաբերյալ բացատրական և պատմական նյութերի մակագրություններ: Հաջորդ էջերում քննարկված են ավելի ուշ թվականներին պատրաստված Սուրբ Երկրի երեք քարտեզներ:

Ըստ ընդունված կարգի, բոլոր քարտեզներն ուղղորդված են վերն արևելքով, բայց քանի որ քարտեզները գծված են առանց չափանիշի և նույն քարտեզի վրա գործածված չափանիշերը փոփոխական են ու անկանոն, Հայաստանը՝ փոխանակ ցույց տրվի Սուրբ Երկրից բավականին հեռու և դեպի հյուսիս, պատկերված է նրա հյուսիս-արևելքում ու բավականին մոտ: Փարիսի Սուրբ Երկրի ու Պաղեստինի քարտեզները սկսում են հյուսիս-արևելքում Կովկասյան լեռնաշղթայից ու հարավում տարածվում մինչև Ալեքսանդրիա և Կահիրե: Անհավասար չափանիշի պատճառով խաչակիրների հիմնած Ակկա քաղաքը հաճախ զբաղեցնում է քարտեզի անհամեմատ մեծ մի տարածք, մինչդեռ Կովկասյան լեռների և Սուրբ Երկրի միջև եղած հսկայական տարածքը զբաղեցնում է հազիվ էջի քառորդը: Քարտեզում քաղաքներն՝ իրենց պարիսպներով, դարպասներով ու կարևոր շինությունների մանրապատկերներով ցուցադրված են անհամեմատ ավելի մեծ, քան նրանց իրական չափերը, մինչդեռ տարբեր նահանգների միջև եղած տարածությունները խտացված են ու նշված անհամեմատ փոքր:

Փարիսի Սուրբ երկրի քարտեզը հյուսիսում սկսում է Կովկասյան լեռների հարավից: Քարտեզները պատրաստելիս Աղվանքն արդեն գոյություն չուներ, բայց Հայաստանն ու Վրաստանը քրիստոնյա պետություններ էին: Այսուհանդերձ, Մատթեոսն իր քարտեզների մեջ տեղ է տալիս միայն Կովկասյան լեռներին, Հայաստանին, Արարատին ու Նոյյան տապանին, առանց նշելու այլ Կովկասյան երկրներ ու վայրեր:

Մատթեոս Փարիսի քարտեզները ավելի շուտ կարելի է համարել արվեստի աշխատանքներ և հանրագիտական տեղեկատուներ, քան քարտեզագրական լուրջ նպատակ հետապնդող փաստաթղթեր: Սրանք ընդհանրապես պատկերված են երկու էջի վրա և իրենց մեջ պարունակում են Աստվածաշնչի ու պատմական դեպքերի գրավոր տեղեկություններ, ինչպես նաև կենդանիների ու քաղաքների մանրապատկերներ: Այս ձեռագիր քարտեզները, բացառաբար Օքսֆորդի օրինակի, հավանաբար պատրաստվել են 1252-53 թվականներին, քանի որ Ակկան, որը կառուցվեց 1250 թվականին, սրանց մեջ կարևոր տեղ է զբաղեցնում:

Փարիսի քարտեզները զննելով կարելի է տեսնել, թե դրանք որքան են տարբեր իրենց ժամանակակից մյուս քարտեզներից: Եթե նրա քարտեզների շարքից հանենք «Անգլիայի և Շոտլանդիայի» քարտեզը, ապա մյուսները կարելի է դիտարկել որպես Սուրբ Երկիր ճամփորդի համար մի ուղեցույց: Առաջինը՝ աշխարհացույցը ցույց է տալիս Սուրբ Երկրի տեղադրությունը, համեմատ Անգլիայի և Եվրոպայի, երկրորդը, ճանապարհացույց ժապավենային քարտեզը Անգլիայից դեպի Հարավային Իտալիա հասնելու ուղեցույցն է, որտեղից կարելի էր նավարկել դեպի Արևելյան Միջերկրական ու Սուրբ Երկիր, իսկ վերջինն արդեն Սուրբ երկրի տեղանքի մանրակրկիտ քարտեզն է, նման այսօրվա զբոսաշրջիկների համար պատրաստված քարտեզներին:

Հաջորդ էջերում պատկերված ու քննարկված են Մատթեոս Փարիսի Սուրբ Երկրի քարտեզներից երեք օրինակ:

Պատ. 71 – Այս մանրապատկերը Քեմբրիջի Կորպուս Քրիստի կոլեջի թիվ MS.016 ձեռագրից է: Այստեղ ցուցադրված է Հիսուսը՝ խաչն ուսին, մինչ թափառական հրեան՝ Հովսեփ Կարտափիլիացին կանգնած նայում է ու ցանկություն իսկ չունի նրան օգնելու: Խաչի վերը եղած տեքստի վերջին տողը նշում է Հովսեփ Կարտափիլիացուն, որը իբր բնակվում էր Հայաստանում:

[121] Անդ, հատոր 5, էջ 340-341:

[122] Lewis, Suzanne – The Art of Matthew of Paris in the Chronica Majora – Scholar Press, Corpus Christi College, Cambridge, 1987, էջ. 302:

Ուշադրություն դարձրեք երկու անձանց ասած խոսքերին, որոնք այսօրվա արևմտյան կոմիքսի գրքերի պես շրջանակված են:

Պատ. 72 – Այստեղ ցուցադրվածը Մատթեոս Փարիսի *Մեծ ժամանակագրության* Քեմբրիջում գտնվող ձեռագրի Պաղեստինի քարտեզի կեսն է: Երուսաղեմը և նրա հարակից շրջանները՝ մինչև Եգիպտոս, ցուցադրված են քարտեզի բացակայող կեսում: Քարտեզի գրությունները նորմանդական ֆրանսերենով են: Քարտեզը հատուկ պատրաստված է ձեռագրի համար, քանի որ նրա մակագրությունները վերցված են ձեռագրի տեքստերից և կարող են դիտվել ոչ թե որպես ուղեցույց, այլ որպես մի հանրագիտարան և տեղեկատու Սուրբ Երկիրն այցելող ուխտավորների համար:

Քարտեզում պատկերված է Նոյյան տապանը, նստած երկու գագաթանոց մի լեռան վրա, որը գտնվում է Հայաստանում (*Ermenie*) և որը միայն կարող է լինել Արարատը: Լեռան վերի մակագրության տեքստի թարգմանությունը հետևյալն է.

> *Այս շրջաններում, այսինքն հյուսիսում, Երուսաղեմից քսան օր հեռավորության վրա է Հայաստանը, որը քրիստոնյա է, ուր ջրհեղեղից հետո իջավ և մինչև հիմա այս անսանձ լեռան վրա նստած մնում է Նոյյան տապանը: Շրջակա անապատի և վայրագ գազանների պատճառով մարդն անկարող է նրան մոտենալ, և հանրահայտ է, որ այս երկիրը տարածվում է մինչև Հնդկաստան:*

Այստեղ պատկերված է Արարատը, ստորոտում գտնվող երեք վիշապներով, որոնք պաշտպանում են Տապանը: Ըստ ժամանակի ընդունված կարգի, Հնդկաստան անվանումն ընդհանրապես տրվում էր ոչ միայն բուն Հնդկաստանին, այլ նաև նրան հարակից մյուս հեռավոր երկրներին:

Քարտեզի անկյունում և Հայաստանից ձախ՝ կա մի շրջան, որը պարփակված է կամարաձև մի լեռնաշղթայով: Այստեղ առկա մակագրության թարգմանությունը հետևյալն է.

> *Կասպից լեռների շրջափակը: Այստեղ են բնակվում այն հրեաները, որոնց Աստված բանտարկեց Ալեքսանդր թագավորի [Մակեդոնացու] խնդրանքով: Վերջին Դատաստանի օրը սրանք դուրս կգան փականքներից ու կկոտորեն ամեն տեսակի մարդկանց: Նրանք շրջափակված են բարձր ու հսկա լեռներով [Կովկասով] և անկարող են այնտեղից դուրս գալ:*

Նույն քարտեզի տարբեր օրինակներում այստեղ բանտարկված ցեղերը կոչված են Գոգ և Մագոգ (տե՛ս Պատ. 74): Վերոհիշյալ տեղեկությունները հավանաբար հիմնված են 1252 թ. Սուրբ Ալբանի աբբայություն այցելած հայ կղերականների պատմածների վրա, ինչպես որ հաստատում է *Մեծ ժամանակագրության* տեքստը:

Քարտեզում ամենամեծ տարածքը՝ էջի կեսը, հատկացված է *Ակկա* (*Acre*) խաչակրական պարսպապատ քաղաքին, որից հետո՝ մեծության ու կարևորության տեսակետից հաջորդը քարտեզի վերի աջ մասում նշված *Դամասկոսն* է: Ակկան օգտագործվում էր որպես խաչակիրների հենարան և, բնականաբար, քրիստոնեական արևմուտքի տեսակետից շատ կարևոր քաղաք էր, դրա համար էլ պատկերված է մեծ չափերով: Քաղաքը մեկ ուրիշ հեռավոր կապ էլ ունի Հայաստանի հետ, քանի որ մ.թ.ա. 83 թվականին Տիգրան Մեծը (140-55 թթ. մ.թ.ա.) գրավեց Պտղոմայիս քաղաքը, որը նույն Ակկայի հին անվանումն է: Քարտեզում այս քաղաքի մեջ կարելի է տեսնել տաճարների, շինությունների ու աշտարակների, ինչպես նաև դարպասների մանրապատկերներ և հավելյալ տեղեկություններ քաղաքի հիմնադրության մասին:

Քարտեզը պարունակում է ոչ ավելի քան 28 տեղանուններ, որոնց շարքում են *Անտիոքը*, *Դամասկոսը*, *Ակկա քաղաքը*, *Նազարեթը*, *Բեթղեհեմը*, *Եգիպտոս երկիրը*, *Բաբելոնի Սուլթանի երկիրը*, *Կահիրեն* և *Ալեքսանդրիան:*

Պատ. 73 – Այս քարտեզն էլ Քեմբրիջում պահված *Մեծ ժամանակագրություն* մեկ ուրիշ ձեռագրի ընդօրինակությունից է, որի մեկ մասը կտրված է ու կորած: Քարտեզը շատ բաներով (ի բացառություն էապես տարբերվող մակագրությունների) նման է Պատ. 72-ի քարտեզին: Արարատը պատկերված է էջի վերի մասում վրան նստած Նոյյան տապանով, բայց քանի որ քարտեզին ավելացված մագաղաթի պատառիկը բացակա է, մակագրությունն անկատար է և Նոյյան տապանից միայն չորս տառեր են մնացել: Արարատի ներքևում մակագրված է *Հայաստանի ամենաբարձր լեռները*: Տապանն ունի խաչաձև պատուհան և երկու վիշապները լեռան ստորոտում նրան պաշտպան են կանգնած:

Այստեղ առկա է նաև քարտեզի հարավային մասը, որը նույնպես մի հատվածում պատռված է: Այստեղ են *Պաղեստինն* ու *Եգիպտոսը*, որոնց տարածքում գերիշխում է *Երուսաղեմն* իր մանրամասն բացատրական տեքստերով: Նշված են նաև մեծ թվով ծովափնյա և այլ քաղաքներ ու շրջաններ, սրանց շարքում *Նազարեթը* քարտեզի վերի սահմանում, *Բեթղեհեմը*, *Ասկալոնը* և *Երիքովը*: Նեղոսը նույնպես նշված է, ուր առկա է կոկորդիլոսի մանրապատկերը:

Այստեղ էլ, մյուս քարտեզների նման *Ակկան* պատկերված է անհամեմատ մեծ, իր շինություններով ու մանրամասնություններով, սակայն քարտեզի այդ հատվածի միայն մեկ մասն է անվնաս մնացել:

Պատ. 74 – Այստեղ պատկերված Սուրբ Երկրի երրորդ քարտեզը քաղված է Բրիտանական գրադարանում պահվող մեկ այլ ձեռագրից: Ձեռագիրը պարունակում է Մատթեոսի համառոտ *Անգլիայի պատմությունը* և *Մեծ ժամանակագրության* վերջին գլուխը: Ապահով պահպանելու նպատակով այս ձեռագրի քարտեզները հետագայում առանձնացվել են ու տեղադրվել ապակյա շրջանակների մեջ: Այստեղ պատկերված քարտեզը շատ զարդարուն է ու գեղեցիկ, իսկ գույները նման են Պատ. 72-ում օգտագործված գույներին, սակայն, ինչպես լինում է ձեռագրի ընդօրինակություններում, մանրանկարները, զարդարանքներն ու մակագրությունները միմյանցից տարբերվում են:

Ձեռագրի բոլոր քարտեզներն առատորեն պատկերազարդված են ու գեղեցիկ ներկված: *Ի տարբերություն քարտեզի մյուս օրինակների՝ Սուրբ Երկրի քարտեզը չունի Արարատի և տապանի մանրապատկերը, չնայած որ մակագրության*

մեջ հիշվում են Արարատը և Նոյյան Տապանը: էջի վերը՝ ձախում, մագաղաթի եզրին և էջին ավելացված մագաղաթի պատառիկի ծալքից ներքև (այս պատկերում ցուցադրված չէ) կա մի նորմանդական ֆրանսերենով հետևյալ մակագրությունը,

Նոյի տապանը Հայաստանում է գտնվում:

Դրա ներքևում և էջի վերը՝ մեջտեղում, կարմիր թանաքով գրված մակագրությունն ընդգծում է.

Հայաստանը, որը քրիստոնյա երկիր է, դեպի այս ուղղություն, այսինքն հյուսիս և Երուսաղեմից քսան օրվա հեռավորության վրա է գտնվում, ուր մինչև այսօր նստած է Նոյյան տապանը: Այնտեղ էր ապրում Հովսեփ Կարտափիլիացին, որը վկա էր, երբ Տիրոջը տանում էին խաչելու: Նրան կնքել էր նույն Անանիան, որը նաև կնքեց Ս. Պողոսին:

Նույն էջի ձախում պատկերված են Ալեքսանդր Մակեդոնացու կառուցած պարիսպները, որոնք բնակելի աշխարհից անջատում են *Գոգ և Մագոգ* վայրագ ցեղերին:

Խաչակրաց *Ակկա* քաղաքն իր պարիսպներով, դարպասներով, շինություններով ու տաճարներով շատ գեղեցիկ ու անհամեմատ մեծ չափերով պատկերված է մանրամասնորեն: Ակկայից վեր, նույն էջի ծայրում է գտնվում *Դամասկոսը*, որի երկու կողմերից հոսում են *Ֆարֆար* և *Ալբանա* գետերը: Դիմացի էջում պատկերված է *Երուսաղեմը՝ Սուրբ Գերեզմանով* ու տաճարներով:

Քարտեզի մյուս կողմում գծված քարտեզի գծերն ու գույները բարակ մագաղաթի միջով թափանցել և տեսանելի են այս էջի վրա և խառնվել են քարտեզի էջի պարունակությանը: Սրանց շարքում է՝ ձախում, Հայաստանի վերաբերյալ տեքստի տակից թափանցած Իտալիայի Պուլիա (*POILLA*) շրջանը, որը մյուս էջի վրայի ճանապարհային քարտեզի մեջ նշված՝ ուխտագնացների ցամաքային ճանապարհի ամենահարավային հանգրվանն է: Աջ էջի հետևում Մատթեոսը գծել է Անգլիայի և Շոտլանդիայի քարտեզը, որոնց կանաչ ներկված ափերը թափանցել ու տեսանելի են նաև այս էջում:

Քարտեզի հարավային (աջ) մասում պատկերված են Պաղեստինի և Եգիպտոսի քաղաքների ու գետերի մանրապատկերներն ու գրված են նրանց անվանումները: *Հորդանան գետն* ու *Մեռյալ ծովը* գտնվում են քարտեզի վերը, իսկ այդտեղից դեպի ներքև ցուցադրված քաղաքներից կարելի է թվել *Նազարեթը*, *Բեթղեհեմը*, *Կահիրեն* (տեղադրված Նեղոսի երկու ափերին), *Միլոեն*, Երուսաղեմը (*Civitas Ierusalem*)՝ պատկերված որպես մի պարսպապատ քաղաք, իր մեջ ունենալով *Սողոմոնի տաճարն* ու *Սուրբ Գերեզմանը*: Քարտեզի եզրին գծված է Ալեքսանդրիայի մանրապատկերը, որը մի աշտարակի է նմանում և նշում է հանրահայտ Փարոսը, սակայն այստեղ գտնվում է ծովափից հեռու՝ ցամաքում: Ափերին պատկերված են մի շարք ծովափնյա քաղաքներ, ներառյալ *Հայֆան* ու *Ասկալոնը*, իսկ ծովերում լողում են նավակներ ու առագաստանավեր:

10 – ՍԱՂՄՈՍԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Պատ. 75/75a – Այս փոքր տրամագծով քարտեզը միջնադարյան հանրաճանաչ քարտեզներից է և սաղմոսարանի մեջ տեղադրված լինելու պատճառով, կոչվում է Սաղմոսային քարտեզ: Որոշ հայերեն տեքստերում T-O քարտեզներին տրված է «վանական» քարտեզ անվանումը, որը սակայն ճիշտ չէ, քանի որ կարելի է առանց չափազանցնելու ասել, որ միջնադարում քարտեզների մեծամասնությունը պատրաստվում էին վանականների ձեռքով, հետևաբար դրանց մեծ մասը կարող են «վանական» քարտեզներ կոչվել: Այս աշխարհացույց T-O տեսակի քարտեզը գտնվում է 1265 թ. պատրաստված Ուեստմինստեր աբբայության մի սաղմոսարանում, որն այժմ պահվում է Բրիտանական գրադարանում: Քարտեզը փոքրածավալ է և ունի 90 մմ տրամագիծ, բայց պարունակում է բազմաթիվ կրոնական, պատմական և առասպելական տեղեկություններ:

Ըստ երևույթին, դիտարկվող քարտեզը փոքրացրած նմուշն է մի մեծ քարտեզի՝ որը պարունակել է շատ ավելի բազմաքանակ տեղեկություններ նույն նյութերի վերաբերյալ: Նկատելի է, որ փոքրադիր քարտեզի մեջ տեղավորվելու համար եղած տեղեկություններն ու պատկերները խտացված են ու համառոտված: Քարտեզն ուղղորդված է վերն արևելքով, ուր առաջին հերթն պատկերված է Երկրային դրախտը Ադամով, Եվայով և Դրախտից արտահոսող չորս գետերով: Քրիստոսը՝ շրջապատված երկու խնկարկող հրեշտակներով, կանգնած է երկրագնդի վերը, ձախ ձեռքում բռնած մեկ այլ T-O տեսակի երկրագունդ: Սա հաստատում է, որ եկեղեցին պետք է արդեն երկրի գնդաձև տեսության հետ համաձայնված լիներ: Նույն ձեռագրի մեկ այլ քարտեզի մեջ, որն ավելի պարզ տեսակի է, Հիսուսի գլուխը երևում է երկրագնդի վերը, իսկ ոտքերն ու ձեռքերը՝ դրա ներքևում և երկու կողմերում, ստեղծելով այն տպավորությունը, որ երկրագունդը Հիսուսի մարմինն է:

Քարտեզը քրիստոնեական T-O տեսակի է, բայց զարգանալով, իր պարզ վիճակից դուրս է եկել ու Հերեֆորդի տաճարի քարտեզնի նման դարձել է կրոնական և առասպելական տեղեկությունների մի աղբյուր: Չնայած այն հանգամանքին, որ քարտեզը պատրաստելիս Արևմուտքում արդեն իսկ կային բավական ճշգրիտ քարտեզագրական տեղեկություններ և նույնիսկ գոյություն ունեին Միջերկրականի մոտավորապես ճշգրիտ ծովային քարտեզներ, դիտարկվող քարտեզի հեղինակը որոշել է հետևել ժամանակի քրիստոնեական քարտեզագրության հիմունքներին և մերժել է բոլոր գիտական նորույթները: Այստեղ Միջերկրականը ցույց է տրված կանաչ գույնի "T" տառին նմանող կերպարանքով, որի թևերը հյուսիսում Տանայիս գետն է (Դոնը), իսկ հարավում՝ Նեղոսը, ծռված դեպի վեր:

Մայրցամաքները շրջապատող օվկիանոսը բռնել է ամբողջ աշխարհի շուրջբոլորը, ուր առկա են նաև 12 հողմերը և բազմաթիվ կղզիներ: Քարտեզի ներքևի աջ մասում, Աֆրիկայից հարավ՝ 14 շրջանակների մեջ պատկերված են մարդակերպ առասպելական արարածներ, որոնք իբր ապրում են հեռավոր երկրներում: Սրանց թվումն են մեկ ոտք ունեցող արագավազ մարդը՝ «սկիապոդը», հսկայական ականջներով մարդը, «պանոտիան», որը ցրտից պաշտպանվելու համար փաթաթվում էր իր իսկ ականջնե: Առկա է նաև «բլեմմայ» կոչված անգլուխ մարդը, որի աչքերը, քիթն ու բերանը տեղադրված են կրծքին: Կարմիր ծովը գտնվում է քարտեզի վերևի՝ աջ հատվածում, ներկված է կարմիր և ներքևի մասում ունի մի բացվածք, որի միջով, ըստ բիբլիական ավանդության, Մովսեսն իր ժողովրդին եգիպտոսից վերադարձրեց Պաղեստին:

Երուսաղեմը պատկերված է որպես քարտեզի և աշխարհի կենտրոնը: Սրա ձախումն է երկու կատարներով Արարատը, վրան նստած կիսալուսնի նմանող Նոյյան տապանով և երկուսն էլ գտնվում են մի դարպասի պատկերի մոտ, որը, հավանաբար, Հայկական լեռնաշխարհը Կովկասյան լեռների հյուսիսին միացնող Կասպից դարպասն է: Կովկասյան լեռները պատկերված են որպես Կասպից ծովը շրջապատող կիսաշրջանաձև մի լեռնաշղթա, որի մյուս կողմում, ըստ Աստվածաշնչի, արգելափակված են Գոգ և Մագոգ վայրագ ցեղերը, իսկ Կասպից ծովը պատկերված է որպես Հյուսիսային օվկիանոսին միացած մի ծովածոց: Տապանի ձախի կարմիր մակագրությունը նշում է *Արմ-ենի-ա*: Այստեղ առկա են նաև բազմաթիվ քաղաքների ու երկրների անուններ և այլ տեղեկություններ:

Պատկեր 75a-ում հետևյալ կարգով պատկերված են Հայաստանն ու նրա հարակից շրջանները և դրանց տեղանունները:

1. *Հայաստան*
2. *Նոյյան տապան*
3. *Արաքս գետ*
4. *Եփրատ գետ*
5. *Տիգրիս գետ*
6. *Փոքր Ասիա*
7. *Երուսաղեմ*
8. *Հիրկանիա*
9. *Վերին Աղվանք*
10. *Ամազոնուհիներ*
11. Կասպից ծով
12. *Կասպից դարպաս* – դեպի հյուսիս տանող ճանապարհը: Տես տողատակի ծանոթագրություն 33:
13. *Ներքին Աղվանք*
14. Կասպից լեռնաշղթան, որն ըստ Օրոսիոսի Կասպից ծովի արևմուտքից ծավալվում է մինչև Հնդկաստան: Տես տողատակի ծանոթագրություն 89:

11 – ԲԱՐՀԵԲՐԵՈՍԻ ԱՍՈՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ

Ասորական գրականության ամենամեծ դեմքերից է բանաստեղծ, պատմաբան, բժշկապետ և բանասեր Գրիգորիս կամ Յուհաննա Բար-Էբրոյոն կամ Բարհեբրեոսը, որը ճանաչված է նաև «Աբու-Ֆարաջ» անունով: Նա ծնվել է 1226 թվականին Մալաթիայում (Հայաստան) և մահացել 1286 թվականին Մարաղայում (Պարսկաստան): Նրա հայրը՝ Ահարոնը, կրոնափոխ հրեա էր և երբ որդին ծնվեց, նրան անվանեց Յուհաննա (հայերեն համարժեքը՝ Հովհաննես): Երբ Հովհաննեսը ձեռնադրվեց քահանա, նա ընդունեց կղերական Գրիգորիս անունը: Ըստ որոշ աղբյուրների, նրա մայրը հայ էր. իր իսկ բանաստեղծություններից մեկում նա գրում է, որ իր անունը՝ էբրոյոն, նշում է Եփրատ գետը և ոչ թե հրեական ծագումը: [123] Ըստ ուրիշ աղբյուրների, նրա մայրը արաբ էր:[124] Անտիոքում նա սովորել է բժշկություն, լեզուներ և տարբեր գիտություններ: Նա տիրապետում էր ասորերեն, արաբերեն, պարսկերեն ու հայերեն լեզուներին: Երբեմն նրան սխալմամբ նշում են որպես կրոնափոխ հրեա՝ ինչպիսին որ հայրն էր, հակառակ այն պարագային, որ նա ծնվել ու մկրտվել է որպես քրիստոնյա:

1246 թ. նա ձեռնադրվեց եպիսկոպոս և 1253-ին նշանակվեց Հալեպի հակոբիկյան համայնքի եպիսկոպոս: Նրա համբավն այնքան տարածված էր, որ 1264 թ. պատրիարք Մար Իգնատիոսը նրան նշանակեց Արևելյան հակոբիկյանների կաթողիկոսը (մաֆրիան): Նրա ձեռնադրության արարողությունը տեղի ունեցավ Հայկական Կիլիկիայի մայրաքաղաք Սիսի մայր տաճարում, հեթում Ա թագավորի, նրա ասպետների ու եպիսկոպոսների, ինչպես նաև բազմաթիվ և տարբեր կրոնական պետերի ներկայությամբ:[125] Նրան մեծարում էին բոլոր քրիստոնյաներն ու մահմեդականները և նրա առաջին մուտքը Բաղդադ տեղի ունեցավ աննախընթաց շուքով:[126]

1286 թ. Բարհեբրեոսն այցելեց Պարսկաստանի Ատրպատական նահանգի Թավրիզ քաղաքը, ուր սկսեց իր *Աշխարհի քաղաքական պատմությունը* աշխատության արաբերեն թարգմանությունը: Այստեղ նա հիվանդացավ և, ինչպես ինքն էլ կանխատեսել էր, չապաքինվեց ու նույն տարվա ընթացքում մահացավ մոտակա Մարաղա քաղաքում: Հետագայում նրա աճյունը փոխադրվեց Իրաքի Մար-Մաթայ վանք:

Նրա գրչին են պատկանում բազմաթիվ աշխատություններ ու հավաքածուներ, որոնցից կարևորներն են *Քիթաբիա դե-Բհաբհաթա* տրամաբանական երկը, *Հեուաթ Հեքմաթա* արիստոտելյան երկը, *Սուլարաթ հաունանիյա* աստղագիտական ու աստղաբաշխական երկը, *Մուխթասար թարիխ ուլ-Դուվալ* պատմության գիրքը, *Մինարեթ Ղուդշե* աշխատությունը և բազմաթիվ բանաստեղծական ու այլ երկեր: Նրա *Մինարեթ Ղուդշե* (Սրբավայրի լույսը) աշխատությունը պարունակում է բնակելի աշխարհի մի աշխարհացույց քարտեզ, որը քննարկված է հաջորդ էջերում: Նրա կարևորագույն աշխատանքներից է իր նախորդների գործերը հավաքելը, ցուցակագրելն ու դասավորելը:

[123] *Wikipedia* կայք:

[124] Wallis-Budge, Sir Ernest – *The Chronology of Bar-Hebraeus* – Original text and translation in two volumes, Oxford University Press, 1932., էջ i-iii:

[125] Ter-Minassiantz, Erwand – *Die Armenische Kirche und ihrer Beziehungen zu den Syriachen Kirchen* – Leipzig, 1904 էջ 135 և Wright, William – *A Short History of Syriac Literature* – Amsterdam, Philo Press, 1966., էջ 265-281:

Պատ. 76/76a – Այս քարտեզը տեղադրված է Բարհեբրեոսի *Միևարեթ Ղուդշե* (Սրբավայրի լույսը) աշխատության մեջ, որից մեզ են հասել երեք օրինակ: Սրանցից երկուսը գտնվում են Փարիզում, իսկ երրորդը՝ Բեռլինում: Այստեղ պատկերված օրինակը Փարիզի քարտեզներից մեկի ճշգրիտ ընդօրինակությունն է, որը տեղադրված է Քեմբրիջի համալսարանի գրադարանում պահվող Բար-Ալիի 15-րդ դարի *Բառարանի* մեջ: Քարտեզն ունի 210 մմ տրամագիծ և բնագրի 14-րդ դարի ընդօրինակություն է:

Քարտեզում պատկերված է արևելյան կիսագնդի հյուսիսային կեսը, ուղղորդված վերը հարավով, որտեղ հասարակածի գծի վրա գրված է.

Աշխարհի բնակեցված մասը այստեղից հյուսիսն է:

Քարտեզը շատ նմանություններ ունի ժամանակակից պարսիկ աշխարհագրագետ ալ-Ղազվինիի քարտեզներին (տե՛ս Գլուխ 3, պատ. 50) և դրանց նման բաժանված է կլիմայական գոտիների: Այստեղ դրանք նշված են զուգահեռ բարակ կարմիր գծերով, մինչդեռ ցամաքի և ծովի սահմանները նշված են ավելի հաստ գծերով, քարտեզի մակերեսի մեծ մասը թողնելով առանց աշխարհագրական տեղեկությունների, նշելով միայն տեղանուններ:

Պատ. 76a քարտեզի վրա կարելի է տեսնել բոլոր քաղաքների ու շրջանների տեղանունները լատինատառի փոխադրված Կոնրադ Միլլերի կողմից:[127] Քարտեզի որոշ տեղանունների վրա ավելացված են թվեր, որոնք փակագծերի մեջ նշված են այս պարբերության մեջ: Բացի կարևոր տեղանուններից, հեղինակը քարտեզում նշել է բոլոր այն քաղաքները, որոնք կարևոր դեր են ունեցել իր կյանքում: Սրանցից են *Մելիտինի*-Մալաթիան (գոտի V, թիվ 6)՝ ուր նա ծնվել է, *Անտիոքը* (գոտի III, թիվ 4)՝ ուր նա սովորել է, *Հալեպը* (գոտի IV, թիվ 7)՝ ուր եղել է եպիսկոպոս, Կիլիկիայի մայրաքաղաք *Սիսը* (գոտի V, թիվ 4)՝ ուր նա ձեռնադրվել է կաթողիկոս, *Թավրիզը* (գոտի IV, թիվ 5)՝ ուր նա աշխատել է և, վերջապես, *Մարաղան* (գոտի IV, թիվ 4)՝ ուր նա աշխատեց կյանքի վերջում և կնքեց իր մահկանացուն: Քարտեզում նաև առկա են *Մեծ* և *Փոքր Հայքերը* (գոտի V, թիվ 11 և 5), *Խլաթը*՝ Մեծ Հայքի մայրաքաղաքը (գոտի V, թիվ 7), *Մայֆերկաթը*[128] կամ Տիգրանակերտը՝ միևչքրիստոնեական Հայաստանի մայրաքաղաքներից մեկը (գոտի V, թիվ 9) և *Վանա* լիճը (գոտի V, թիվ 10): *Վանի* (գոտի V, թիվ 10), *Կովկասի* (գոտի VI, թիվ 8) և *Ալանների* (գոտի VI, թիվ 4) միջև, *Կասպից ծովից* (գոտի V, թիվ 13) արևմուտք առկա է *Երկաթե դուռը* (գոտի V, թիվ 15), որը Դերբենդի կամ Կասպից դարպասն է: Անցումը նշված է Կասպից ծովից արևմուտք և Կովկասյան լեռներից արևելք, որով հարավային շրջանները միանում են Ալանների երկրի հետ:[129]

Քարտեզի շուրջը մակագրված տեքստերից մի մասի թարգմանությունները տրված են ստորև:

A – *Հասարակածը, որը տաք շրջանն է, բնակելի շրջանները սրանից հյուսիս են, իսկ* հարավում բնակելի շրջաններ չկան:

B – *Անանցանելի օվկիանոս*

C – *Յոթ եղանակային գոտիները* (գրված գլխիվայր)

Կարևոր տեղանուններից մի քանիսի ասորերենից թարգմանությունները տրված են կից ցուցակում, որոնք համապատասխանում են քարտեզում 76a-ի վրա կարմիրով ավելացված թվերին:

Գոտի I
1- Եթովպիա
2- Նուբիա
3- Նեղոս գետ
4- Սուդան
5- Հնդկական ծով
6- Ցեյլոն կղզին

Գոտի II
1- Աֆրիկա
2- Եգիպտոս երկիր
3- Կարմիր ծով
4- Սինայի լեռ
5- Պարսից ծոց
6- Հնդիկների երկիր

Գոտի III
1- Ալեքսանդրիա
2- Եգիպտոս
3- Կեսարիա
4- Անտիոք
5- Երուսաղեմ
6- Դամասկոս

Գոտի IV
1- Սլավներ
2- Կիպրոս
3- Ադրիատիկ ծով
4- Մարաղա [ուր մահացավ հեղինակը]
5- Թավրիզ
6- Սամարղանդ
7- Հալեպ

Գոտի V
1- Իսպանիա
2- Հռոմ
3- Անատոլիա
4- Սիս [Կիլիկիայի] մայրաքաղաքը ուր նա ձեռնադրվեց կաթողիկոս, այժմ Կոզան քաղաքը]
5- Փոքր Հայք
6- Մելիտենի [Մալաթիա, հեղինակի ծննդավայրը]
7- Խլաթ [Մեծ Հայքի մայրաքաղաքը]
8- Արզան
9- Մաիֆերկաթ [Տիգրանակերտ]
10- Վանա լիճ
11- Մեծ Հայք
12- Ատրպատական
13- Կասպից ծով
14- Վիրք
15- Երկաթե դուռ

Գոտի VI
1- Ֆրանսիա
2- Սև ծով
3- Շիրվան
4- Ալանների երկիրը
5- Գորգանի [Կասպից] ծով
6- Հոների և թուրքերի երկիրը, որոնք մոնղոլ են
7- Ամազոնուհիներ, որոնք իրենց կուրծքը կտրում են
8- Կովկասյան լեռներ

Գոտի VII
1- Սկյութացիք
2- Բուլղարացիք
3- Բալթիական կամ Հյուսիսային ծով
4- Թրքական լեռներ որտեղ ապրում են բարբարոս հոները
5- Գոգ և Մագոգ ցեղեր
6- Բորիսթենես [Դնեպր գետը]

Այս լատինատառ շարադրանքում կարելի է տեսնել բազմաթիվ ծանոթ տեղանուններ, քանի որ սրանցից շատերը նման են նրանց այսօրվա անվանումներին:

---

[126] Անդ, Ter-Minassiantz:

[127] Miller, Dr. Konrad – Mappae Arabicae –Vol. I-VI, Stuttgart, 1926-1931, հատոր 5:

[128] Տես տողատակի ծանոթագրություն 59

[129] Ալանները իրանական ցեղեր էին, որոնք հաստատվել էին Կովկասյան լեռներից հյուսիս:

Քարտեզում տեղ գտած տեղանուններից կարելի է եզրակացնել որ հեղինակը սերտ կապեր է ունեցել Հայաստանի ու հայկական շրջանակների հետ, որն ավելի հասկանալի է դարձնում Հայկական Կիլիկիայի մայրաքաղաք Սիսում Բարհեբրեոսի Արևելյան եկեղեցու կաթողիկոս ձեռնադրությունը Կիլիկիո Հեթում Ա թագավորի և նրա շքախմբի ներկայությամբ: Պետք է նաև նշել, որ այդ տարիներին հայոց և ասորական հակոբիկյան եկեղեցին միմյանց հետ շատ սերտ կապերի մեջ էին:

12 – ՀԵՐԵՖՈՐԴԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑ ՔԱՐՏԵԶԸ

Ամենակարևոր միջնադարյան մեծադիր աշխարհացույց քարտեզը Անգլիայի Հերեֆորդ քաղաքի Մայր տաճարում գտնվող օրինակն է, որը հիմնված է օրոսյան T-O տեսակի քարտեզների վրա: Սրա արտաքին չափերն են 162x135 սմ, իսկ քարտեզի բոլորակի տրամագիծը 132 սմ է: Շնորհիվ իր մեծության, աշխարհագրական մանրամասնություններից բացի, քարտեզի վրա հնարավոր է եղել գրել նաև տեքստեր վերցված Աստվածաշնչից և հնագույն առասպելներից, ինչպես նաև նկարել հեռավոր երկրներում ապրող տարբեր գազանների և զարմանահրաշ կենդանիների մանրապատկերները: Սա միակ միջնադարյան մեծադիր քարտեզն է, որը մեզ հասել է ամբողջությամբ և լավ վիճակում:

Քարտեզը ստորագրված է հեղինակի կողմից, որն իրեն անվանում է Հալդինգհամցի և Սլիֆորդցի (այժմ՝ Հոլդինգհամ և Լաֆֆորդ) Ռիչարդը, ճանաչված նաև որպես Ռիչարդ դե Բելլո, կամ Բաթթլի Ռիչարդ:[130] Նա Հերեֆորդի տաճարում ծառայում էր մինչև իր մահը (1326 թ.) և այս քարտեզը կտակեց Մայր տաճարին, որտեղ այն պահվում է մինչև օրս:[131]

Պատ. 77/77a – Մեծադիր այս աշխարհացույց քարտեզը գծված է մագաղաթի վրա 1280-89 թթ. Լինկոլնի մայր տաճարում և 1290 թվականին բերվել է Հերեֆորդ: Սա այդ ժամանակաշրջանի կարևոր, ամենամեծ և ամենամանրակրկիտ քարտեզներից է, մի ժամանակահատված, երբ նման մի քանի այլ T-O տեսակի քարտեզներ էլ էին պատրաստվել, բայց որոնցից միայն այս մեկն է մեզ հասել:

Հիմնականում սա ճոխ զարդարված կրոնական մի քարտեզ է, ուղղորդված վերև արևելքով: Քարտեզի կենտրոնում է Երուսաղեմը, իսկ արևելքում՝ Եդեմը՝ Երկրային դրախտը: Քարտեզի բոլորակից դուրս, վերնամասում ներկայացված է Վերջին Դատաստանի տեսարանը: Ինչպես բոլոր T-O քարտեզներում, Միջերկրականը՝ քարտեզի հիմնական «դերակատարը», աշխարհը բաժանում է երեք մայրցամաքների՝ Աֆրիկա, Ասիա և Եվրոպա: Այս ծովը լի է տարբեր կղզիներով, որոնցից ամեն մեկին ուղեկցում է համապատասխան մակագրություն: Ասիան քարտեզի վերն է՝ արևելքում, Եվրոպան ներքևի ձախ մասում, իսկ Աֆրիկան՝ աջում: Աշխարհը շրջապատված է օվկիանոսով, որտեղ Կարմիր ծովը ներկված է կարմիր: Քաղաքները նշված են շենքերի, ամրոցների ու աշտարակների մանրապատկերներով, բացառությամբ Երուսաղեմի, որը պատկերված է քաղաքի հատակագծով: Այս հատակագիծը նմանություններ ունի Պատ. 65 և 67-ում ցույց տրված հայերեն քարտեզների հատակագծերին:

Աշխարհագրական տեղեկություններից զատ, քարտեզում առկա են մանրապատկերներ տվյալ շրջանների բնաշխարհի ու պատմական դեպքերի մասին: Պատկերված են նաև հեռավոր վայրերում բնակվող երևակայական արարածներ, ինչպիսիք են մեկ մեծ ոտքով մարդը, որը հանգստանում է իր ստվերի տակ և ցատկոտելով արագ վազում, ապա մարդ մեծ ականջներով, որոնցով նա փաթաթվում է, պաշտպանվելով ցրտից, ներկա են բազմաթիվ այլ արարածներ ևս: Այս բոլորը վերցված են Աստվածաշնչից ու առասպելներից, որոնից մեկ մասը նույնպես ներկա են էբսթորֆի և Սաղմոսային քարտեզներում (Պատ. 70 և 75): Հնդկաստանի շրջանը լի է բազմաթիվ ֆանտաստիկ արարածներով ու բույսերով և նշված է, որ այստեղ կան ավելի քան 5000 քաղաքներ: Հերեֆորդի Աշխարհացույցը պարունակում է գրեթե բոլոր տեղեկությունները, որոնք առկա են մինչ այդ պատրաստված բոլոր քարտեզներում, հետևաբար իր ժամանակի համար ամենակատարյալ աշխարհացույցն է: Սրա աղբյուրներից կարելի է նշել Սոլինիոսի, Պլինիոս Ավագի, Օրոսիոսի, Իզիդորի, Ս. Հերոնիմոսի, Կապելլայի և ուրիշների գործերը:

Քարտեզի 77a դետալում կարելի է տեսնել Կովկասի հարավային շրջանը: Այստեղ *Հայաստանը* պատկերի մեջտեղի աջում է՝ նշված 1-ով: *Նոյյան տապանը* նշված է 4-ով և մակագրված է. *Նոյյան տապանը նստած Հայաստանի լեռների վրա:* Դրա ներքևում, տապանի աջումն է *Փոքր Հայքը*, գրված կարմիրով և նշված 3-ով: *Մեծ Հայքը* գտնվում է տապանի և հորիզոնական աշտարակի միջև, նշված 2-ով:

Այստեղ *Աղվանքը* (20) տեղադրված է քարտեզի եզրում, աշխարհը շրջապատող Օվկիանոսի հյուսիսային հատվածի մոտ՝ Կասպից ծովից արևմուտք, ուր նա միանում է օվկիանոսին, որը գտնվում է քարտեզ 77a-ում ցուցադրված մասի եզրում: Աղվանքի իրական տեղում նշված է Հիրկանիան (16):

Պետք է նշել, որ քարտեզը պատրաստելու ժամանակ Անգլիայում արդեն տեղյակ էին այդ շրջանում հաստատված Վրաստանի թագավորության մասին: Դրա մասին իրենց ուղեգրություններում հիշատակել էին Ջոն դե Պլանոն (1246 թ.)[132] և Վիլլեմ դե Ռուբրուքը (1253 թ.)[133]: Բայց այս քարտեզը նույն տարածաշրջանում նշում է *Կողքիսը* կամ Աբխազիան (18) և *Ոսկե Գեղմը* (19), խոյի փռված մորթու մանրապատկերով:

[130] Հոլդինգհամը և Լաֆֆորդը գտնվում են Անգլիայի Լինկոլնշիրի կոմսությունում :

[131] Քարտեզի հեղինակի մասին Հարվին ու Ուեստրեմը կասկած են հայտնում ասելով, որ երկու Ռիչարդները տարբեր անձնավորություններ էին և քարտեզը նրան(ց) վերագրելը անհիմն է ու անվավեր: Տե՛ս Ուեստրեմ Հերեֆորդի քարտեզը, 2001, էջ xxi-xxiii:

[132] Hakluyt, Richard, Editor – The Principal Navigations, Voyages, Traffiques and Discoveries of the English Nation – in 12 volumes, James MacLehouse, Glasgow, 1903. Հատ. 1 էջ 166:

[133] Անդ, էջ 230:

Պատ. 77a քարտեզի մեջ կարելի է տեսնել հետևյալ տեղանուններն ու մակագրությունները, որոնք նշված են քարտեզի վրա ավելացված թվերով:

1. *Հայաստան* – Հնագույն Հայաստանի սահմաններն էին արևմուտքում Եփրատը, հարավում Տավրոսյան լեռները և հյուսիսում՝ Վիրքը:
2. *Վերին Հայք* – կամ Մեծ Հայք (Այստեղ անունը սխալ է գրված):
3. *Ներքին Հայք* – կամ Փոքր Հայք:
4. *Archa noe sedit in montibus armenie* – (Նոյյան տապանը նստած Հայաստանի լեռների վրա). Այս մակագրությունը գտնվում է տապանի ձախում:
5. *Thiberia* – կամ Վիրք, որպես հարակից մի երկիր:
6. *Samosata civitas* – Արշամաշատ քաղաքը:
7. *Montes Parcoatras* – կամ Փոքր Կովկասյան լեռները. այստեղից է սկիզբ առնում Եփրատը:
8. *Montes Acrocerauni* – կամ Դաղստանի լեռները, Հայաստանը Վիրքից բաժանող մի լեռնաշղթա:[134]
9. *Տավրոսյան լեռներ* – Հայաստանի տարածքի արևմտյան սահմանը:
10. *Միջագետք* – Եփրատի և Տիգրիսի միջև գտնվող շրջանը:
11. *Տիգրիս գետ* – որի ակունքը նույնպես Փոքր Կովկասն է: Ըստ Սոլինոսի, Եփրատն ու Տիգրիսը երկուսն էլ այստեղից են սկիզբ առնում:
12. *Euxinum mare* – Սև ծով:
13. *Կասպից դարպաս: Կասպից դարպասով անցնող ճանապարհը ութ մղոն երկարություն ունի, բայց այնքան նեղ է, որ հազիվ մեկ սայլ կարող է նրանով անցնել:* Սրա անվանումը վերաբերում է Կասպից ծովի և Կովկասյան լեռնաշղթայի արևելյան ծայրամասի «Ճորա պահակ» անցումին, բայց Կասպից ծովից հեռու լինելու պարագան և հատկապես անցումի նկարագրությունը միմիայն կարող են վերաբերել Դարյալի կիրճին:
14. *Կասպից ծով*:
15. *Կասպից քաղաք*:
16. Հիրկանիա:
17. *Այստեղ են ապրում հիրկանացիք*:
18. *Կողքիսի տարածքը*:
19. *Ոսկե գեղմը, որը հափշտակելու համար Պրիամոսը ուղարկեց Յասոնին*:
20. *Աղվաններն ունեն վառ դեղին աչքեր և գիշերով ավելի լավ են տեսնում, քան ցերեկով*:

13 – ՊԻԵՏՐՈ ՎԵՍՔՈՆԹԵԻ ՔԱՐՏԵԶՆԵՐԸ

Տասնչորսերորդ դարի առաջին կեսերի իտալացի քարտեզագետ Պիետրո Վեսքոնթեն հիմնականում ճանաչված է իր ծովային քարտեզների և պորտոլանների ատլասներով: Սրանք մեզ հասած հնագույն պորտոլաններից են, որոնցից գոյություն ունի մի քանի օրինակ: Իր գործունեության սկզբնական շրջանում Պիետրոն իրեն կոչում էր «Պեռռինո»[135] և առաջին քարտեզագետներից էր, որ իր պատրաստած քարտեզներն ստորագրում էր, նույնիսկ որոշների անկյունում գծելով իրեն՝ քարտեզի վրա աշխատելիս:

Վեսքոնթեի գրչին են պատկանում քրիստոնյա աշխարհի առաջին ճշգրիտ քարտեզները կամ պորտոլանները: Ատլասներից բացի, նրա մյուս կարևոր գործերն են Մարինո Սանուդոյի գրքի համար 1306-1321 թթ. միջև պատրաստված քարտեզները. այս գիրքը հիմնականում նպատակաուղղված էր հրահրելու Հռոմի պապին սկսելու մի նոր արշավանք դեպի Սուրբ Երկիր՝ մահմեդականների դեմ: Ձեռագրի խորագիրն է *Liber secretorum fidelum Crucis, sive de Recuperatio Terrae Sanctae* որը նշանակում է «Խաչին հավատարմության գաղտնի գիրք կամ Սուրբ Երկրի վերանվաճումը»: Ասվում է, որ Սանուդոն 1321 թ. իր գիրքը հանձնել է Հռոմի պապին և ձեռագրի քարտեզներն էլ հավանաբար հենց նույն թվականին են պատկանում:

Գիրքը կրոնական քարոզչության մի աշխատություն է, գրված է մագաղաթի վրա և պարունակում է խաչակիրների ու նրանց մղած պատերազմների բազմաթիվ մանրանկարներ: Մանրանկարներից մեկը, որը գտնվում է 7-րդ թերթի ներքևում, պատկերում է Հայոց (Կիլիկիայի) թագավորին, որն ընդունում է բանտարկյալներին (**տե՛ս Պատ.78**): Այստեղ Լևոն Ա Մեծագործ թագավորը շրջապատված է չորս գազաններով, հյուսիսում մոնղոլական առյուծն է, արևմուտքում թրքական գայլը, հարավում ծովահենների վիշապն ու արևմուտքում՝ հովազը: Մանրանկարը վերցված է Բրիտանական գրադարանում գտնվող ձեռագրից: Հեղինակն այստեղ ցուցադրում է, որ քրիստոնյա Լևոն թագավորի երկիրը շրջապատված է արյունախում թշնամիներով:

Ակնառու է, որ Վեսքոնթեն այստեղ պատկերված աշխարհացույց քարտեզը պատրաստելիս օգտվել է իր ունեցած աշխարհագրական տեղեկություններից, որոնք նա հավաքել էր պորտոլաններ պատրաստելու նպատակով: Այստեղ նա նույնիսկ ավելացրել է պորտոլանների և ծովային քարտեզների մեջ օգտագործվող փնջագիրը (ռոզետ), որոնց սակայն այլ միջնադարյան քարտեզներում չենք հանդիպում: Միջերկրականի շրջանը, որի ճշգրիտ պորտոլան քարտեզներն

[134] Սա Կովկասյան լեռների մասն է, որն ինքը հաճախ անվանվում է Mons Cerauni. Տե՛ս նաև Orosius, Paulus – Seven books of history against the Pagans – Translated by Irving W. Raymond. Records of Civilizations" series. Columbia University Press, New York, 1936, էջ 38:
[135] Հարլի և Վուդուարդ, 1987, հատոր 1, էջ 406-407:

արդեն իսկ գոյություն ունեին, այստեղ էլ պատկերված է իրականին շատ նման, մինչդեռ մյուս աշխարհամասերը պատկերված են միայն մոտավոր կերպով և ո՛չ ճշգրիտ:

Վեսքոնթեի ամենակարևոր պորտոլան ատլասները պատրաստվել են 1313, 1318, 1321 և 1322 թվականներին և պահպանվում են Ֆրանսիայի ազգային գրադարանում, Res Ge DD687, Լիոնում Ref. Ms.175, Վատիկանի գրադարանում Ref. Pal. Lat. 1362A և 2972, Վենետիկի Կոռռեր թանգարանում Ref. Port. 28, Վիեննայում և Ցյուրիխում:

Պատ. 79/79a – Այստեղ ներկայացված աշխարհացույց քարտեզը Վեսքոնթեն պատրաստել է Սանուդոյի *Խաչին հավատարմության գաղտնի գիրք կամ Սուրբ Երկրի վերանվաճումը* ձեռագրի համար:[136] Հավանաբար, սրա պատրաստելու թվականն է 1321-ը, այսինքն նույն տարին, երբ ավարտվել է ձեռագիրը:

Ինչպես վերը նշվեց, Վեսքոնթեն այս քարտեզը պատրաստելիս օգտվել է Միջերկրականի իր ունեցած պորտոլաններից ու նրանց դետալներից: Այստեղ Միջերկրականն այնքան ճշգրիտ է գծագրված, որ նույնիսկ մինչև 18-րդ դարը հազիվ հնարավոր եղավ բարելավել այստեղ պատկերված ծովի քարտեզը: Կասպից ծովը, չնայած արդեն իսկ ներկայացված է որպես մի մեծ լիճ, դեռևս իր իսկական տեսքը չունի: Սանուդոյի համար պատրաստած Վեսքոնթեի աշխարհացույց քարտեզները շրջանաձև են, ուղղորդված վերև արևելքով: Քարտեզի մի այլ կապը պորտոլանների հետ նրա վրա առկա 16 փնջագրերն են, որոնք տեղադրված են քարտեզի շրջագծի վրա:[137]

Քարտեզի դրվածքն ընտրված է տիպիկ միջնադարյան քարտեզի նմանողությամբ: Ծովերն ու գետերը ներկված են կանաչ, լեռնաշղթաները պատկերված են լեռների շարաններով, կարևոր քաղաքներն ու ամրոցները նշված են կարմիրով: Բայց և այնպես այս քարտեզը T-O տեսակին չի պատկանում: Սա ավելի նման է Պտղոմեոսի քարտեզներին, որոնք 90 աստիճան պտտվելով ուղղորդված են վերև արևելքով: Հակառակ այն պարագային, որ քարտեզը պատրաստվել էր Եվրոպայի իշխանություններին հրահրելու կազմակերպել մի նոր խաչակրաց արշավանք, այստեղ զարմանալիորեն պահպանում են քրիստոնեական հիմունքները և առանձնահատկությունները, ինչպիսին են Եդեմը, Դրախտի չորս գետերը և Երուսաղեմը, իսկ *Կարմիր ծովը*, միջնադարի քարտեզների մեջ առաջին անգամ լինելով, կարմիր գույնով չի ներկված: Իրականում քարտեզն ունի համեմատաբար ավելի շատ իսլամական, քան թե քրիստոնեական հիմունքներ. այստեղ կարելի է գտնել, օրինակ, *Արաբիան* (Պատ. 79a-ի վրա նշված 38-ով), իսլամի կրոնական կենտրոնը՝ *Մեքքան* (39) և Բաղդադը (40, այստեղ գրված *Բալդաք*), բոլորը նշված կարմիր գույնով, որպես կարևոր քաղաքներ:

Քարտեզում Հյուսիսային Եվրոպան ունի խիտ բնակչություն և լի է բազմաթիվ քաղաքներով ու շրջաններով: *Նորվեգիան* պատկերված է որպես մի թերակղզի, *Անգլիան*, *Շոտլանդիան* և *Իռլանդիան*՝ որպես *Հյուսիսային ծովի* կղզիներ: Միայն *Ֆրանսիան*, *Գերմանիան* և *Իսպանիան* են կարմիրով նշված: *Տանայիս* գետը (Դոնը) սկսվում է հյուսիսային լեռներից ու գալիս թափվում *Ազովի ծով*: *Սև ծովի* պատկերը ստեղծված է համեմատաբար ճշգրիտ:

Այս և հաջորդ պարբերություններում փակագծերի մեջ նշված թվերը վերաբերում են Պատ. 79a-ի Միջին Արևելքի և Արևմտյան Ասիայի դետալ քարտեզի վրա կապույտով ավելացված թվերին:

Տափակ կողմով և լեռներով շրջապատված շրջանաձև ծովը անվանված է *Կասպից ծով* (1): Սրա և Սև ծովի (*Mare Pontus*, 2) միջև առկա է մեկ ուրիշ սլաքաձև ծով ևս, որն անվանված է պարզապես *Ծով* (3), բայց քանի որ սրա հարավում նշված են *Կասպիան* (20) և *Հիրկանիան* (21), որոնք Կասպից ծովի հարավային շրջաններն են, ապա իրականում Կասպից ծովը ա՛յս պետք է լինի, իսկ դրա վերի տափակ կողմով ծովը՝ 1-ը, պետք է լինի Արալյան լիճը, որը տեղադրված է Կասպից ծովից արևելք՝ Կենտրոնական Ասիայի արևմուտքում, *Բակտրիային* (19) կից:

Սև ծովի (2) և սլաքաձև Կասպից ծովի (3) միջև առկա է մի անանուն լեռնաշղթա, որը միայն կարող է Կովկասյանը (15) լինել: Այս լեռնաշղթայի և մեկ ուրիշի հատման կետում գծված է մի դարպաս, անվանված *Երկաթե դարպաս* (16):[138] Պետք է նշել, որ արևմտյան միջնադարյան քարտեզներում առաջին անգամ լինելով այս դարպասը, որը նույն «Կասպից դարպասն» է, նշված է իր ճշգրիտ տեղում, Կասպից ծովի արևմտյան ափին:

Կարմիր տառերով գրված *Ասիա* (25) անվան ձախում գծված է մի ուղղահայաց քառանկյունի, որը նստած է լեռների վրա և որի մակագրությունն ասում է Նոյյան Տապան (18 – *Archa Noe*): Այս երկարածիգ լեռնաշղթայի արևելյան ծայրը կոչվում է Կասպից լեռներ (14 – *Montes Caspii*), մինչդեռ դրա արևմտյան մասը կոչվում է *Տաուրիսիոս* (17, Տավրոս): *Ասիայի* (25) և *Տավրոսիոսի* (17) մակագրությունների ներքևում է Մեծն Հայաստան (22 – *Armenia Magna*) անվանումը, իսկ դրա հյուսիսում է *Կոլխիդան* (24, Կողքիսը կամ Աբխազիան): Միջնադարյան քարտեզներում առաջին անգամ լինելով, այստեղ առկա է Վրաստան անվանումը (23 – *Georgia*): *Աղվանքի* շրջանը (44), որը պետք է լիներ Վրաստանի մոտ, քշված է դեպի քարտեզի ձախ ծայրամասը, շրջապատող օվկիանոսի մոտակայքը, որը քարտեզի այս հատվածից դուրս է (տե՛ս Պատ. 79):

Հայաստանից (22) արևելք և *Սև ծովից* (3) հարավ գտնվող տարածաշրջանը բաժանված է մի քանի մասերի, որոնցից են *Պերսիդան* (26), *Փոքր Ասիան* (27), *Բյութանիան* (28), *Քաղկեդոնը* (29), *Լիկաոնիան* (30), *Գաղատիան*, *Լյուդիան* և *Փոքր Փռյուգիան*: *Կիլիկիան* (31) գտնվում է սրանցից հարավ, լեռների մյուս կողմում, երկու ամրոցների մանրապատկերների միջև: Դեպի ավելի հարավ, *Տավրոսյան* լեռների փեշերին է պատկերված *Կապադովկիան* (32):

Աֆրիկան զբաղեցնում է հարավային կիսագնդի մեծ մասը և կրում է իր աշխարհագրական հիմնական բայց մոտավոր պատկերը, ինչպիսին են Գվինեական ծոցը և Բարեհուսո հրվանդանը, որոնք սակայն չունեն իրենց ճշգրիտ կերպարանքը: *Նեղոսը* (10) սկիզբ է առնում ինչ-որ լեռներից ու հոսելով հյուսիս՝ անցնում է *Եգիպտոսով* (33), իր ափերին ունենալով

[136] Ձեռագիրը պարունակում է նաև մի քանի ուրիշ քարտեզներ և պորտոլաններ:

[137] Պորտոլանների վրա ընդհանրապես կան թվով 16 փնջագրեր, ռոզետներ:

[138] Կասպից դարպասին տրված այս անվանումը գործածում էին պարսիկները, արաբները, թուրքերը , հայերը և ուրիշներ:

բազմաթիվ ամրոցակուռ քաղաքներ: Աֆրիկայի մյուս տարածքներից են *Լիբիան* (34), *Պենտապոլիսը* (35), *Սարմատիան* (36) և *Մեծ Սիրտեսը* (43): Հարավ-Արևմտյան Ասիայում ակնառու են հետևյալ տեղանունները. *Արաբիա* (38, կարմիրով), *Մեքքա* (39, կարմիրով), Բաղդադ (40, կարմիրով՝ *Բալդաք*), *Պարթևաստան* (41) և *Մեծ Հնդկաստան* (42): *Աղվանքը* տեղադրված է քարտեզի հյուսիսային եզրին՝ օվկիանոսի մոտ: Կարմիրով գրված են քարտեզագրի կողմից կարևոր դիտվող տեղանունները:

Քարտեզին շրջապատող տեքստը պարունակում է տեղեկություններ ու բացատրություններ տարբեր երկրների ու տարածաշրջանների վերաբերյալ: Աջ մասի վերևում առկա մակագրության 2-ից 5-րդ և 12-ից 14-րդ տողերը տալիս են բացատրություններ Հայաստանի և հայ ժողովրդի մասին: Առաջինի ազատ թարգմանությունն է հետևյալը.

Հայաստանն անվանված է Յասոնի հետ Կոլխիդա ճամփորդած Արմենիոսի անունով: Այս երկիրը գտնվում է Կովկասյան և Տավրոս լեռնաշղթաների միջև և կազմված է երկու մասից՝ Մեծ Հայք և Փոքր Հայք:

12-14-րդ տողերի ազատ թարգմանությունը հետևյալն է.

Հայաստանի թագավորությունը գտնվում է Խորեզմի թագավորությունից արևմուտք: Նրա հյուսիսում է Նիսիայի թագավորությունը, որի ամենամեծ քաղաքն է Սարայը:[139]

Դրանից երկու տող ներքև մակագրված է.

Վրաստանի թագավորության արևելյան հատվածում կա մի մեծ սպիտակ լեռ և սրա հարավումն է Հայաստանը.....

Քարտեզի ձախ կողմի մակագրության 27-րդ տողից սկսում է Աղվանքի վերաբերյալ տեքստը, որի ազատ թարգմանությունն հետևյալն է.

... տեղի մարդիկ սպիտակ են և նրա արևելքումն է Կասպից ծովը, որը միացած է Հյուսիսային օվկիանոսին. [Աղվանքը] տարածվում է մինչև Ազովյան ճահիճները և անապատը:

Արևմտյան քարտեզներում առաջին անգամ լինելով այստեղ նշված է Վրաստանի անունը որպես “Georgia”, բայց այստեղ առկա է նաև Կոլխիդան կամ Աբխազիան, որի հավանական պատճառն այն է, որ այդ տարածաշրջանը դեռևս Վրաստանին մաս չէր կազմում: Աղվանքի անունն ընդհանրապես տարածաշրջանից հեռացված է:

Ներքևի ցուցակում ներկայացված տեղանունները Պատ. 79a-ում կապույտ թվերով նշված անվանումների թարգմանություններն են:

Ա – ԾՈՎԵՐ

1. *Կասպից ծով*
2. *Ծով* (Կասպիա)
3. *Սև ծով*
4. Միջերկրական ծով
5. Եգեյան ծով
6. Պարսից ծոց
7. *Կարմիր ծով*

Բ – ԳԵՏԵՐ

8. *Տիգրիս*
9. *Եփրատ*
10. Նեղոս
11. Տանայիս
12. Դանուբ
13. *Ինդոս*

Գ – ԼԵՌՆԵՐ և այլն

14. *Կասպից լեռներ*, Տավրոսյան լեռների շարունակությունը:
15. Կովկասյան լեռներ (անանուն)
16. *Երկաթե դարպաս* – Կասպից դարպաս:
17. *Տաուրիսիոս* – Տավրոս (2 անգամ)
18. *Նոյյան տապան* – նստած Կովկասյան լեռների վրա, արևմտյան ծայրամասում:

Դ – ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ և ՔԱՂԱՔՆԵՐ

19. *Բակտրիա*
20. *Կասպիա*
21. *Հիրկանիա*
22. *Մեծ Հայք*
23. *Վրաստան* (առաջին անգամ)
24. *Կոլխիդա* կամ Աբխազիա
25. *Ասիա*
26. *Պերսիդա*
27. *Փոքր Ասիա*
28. *Բյութանիա*
29. *Քաղկեդոն*
30. *Լիկաոնիա*
31. *Կիլիկիա*
32. *Կապադովկիա*
33. *Եգիպտոս*
34. *Լիբիա*
35. *Պենտապոլիս*
36. *Սարմատիա*
37. *Եթովպիա*
38. *Արաբիա* (կարմիր)
39. *Մեքքա* (կարմիր)
40. *Բաղդադ* (կարմիր)
41. *Պարթևաստան*
42. *Մեծ Հնդկաստան*
43. *Մեծ Սիրտես*
44. *Աղվանք* – քարտեզի եզրում

14 – ՌԱՆՈՒԼՖ ՀԻԳԴԵՆ

Մատթեոս Փարիզի օրոք անգլիական միջնադարյան պատմագրությունը հասավ իր գագաթնակետին, որը շարունակեց մեկ ուրիշ անգլիացի բենեդիկտյան վանական և պատմագիր Ռանուլֆ Հիգդենը (շուրջ 1282 – 1363 թթ.): Ռանուլֆը 1299 թվականից մինչև իր մահն աշխատում էր Անգլիայի Չեսթեր քաղաքի Ուարբուրգի աբբայությունում: Նրա պատմական աշխատությունը, *Պոլիքրոնիկոնը*, ունի երեք տարբերակ, գրված 1327, 1340, իսկ վերջինը՝ 1360 թվականին: Ձեռագիրը բազմաթիվ անգամներ ընդօրինակվել է և բաժանվել Անգլիայի տարբեր վանքերում, ինչպես նաև Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարաններում: Այդ ընդօրինակություններից մեզ են հասել ավելի քան 100 օրինակ:

Ռանուլֆն անհագուրդ կարդացող էր և նրա *Պոլիքրոնիկոնը* հիմնված է Սալլուստիոսի, Սոլինոսի, Պլինիոս Ավագի, Իզիդորի և իրեն նախորդող այլ պատմաբանների աշխատությունների վրա: Գրքի բնագիրը լատիներեն է և այն ավելի հանրամատչելի դարձնելու համար 1380 թվականին Ջոն Տրեվիզան կատարեց դրա անգլերեն թարգմանությունը, որը

[139] Սա վերաբերում է Ոսկե Հորդայի Սարայ-Բերքե մայրաքաղաքին, որը 14-րդ դարում իր հզորության գագաթնակետում էր:

հրատարակվեց 1480 և 1482 թվականներին:[140] Հետագայում գիրքը ևս մեկ անգամ, 1527 թվականին, վերահրատարակել է Փիթըր Տրեվիսը: Այն բաղկացած է 7 գրքերից, որոնք ունեն հետևյալ վերնագրերը.

Գիրք առաջին – Ամբողջ աշխարհի բացատրությունը
Գիրք երկրորդ – Մեր Հոր արարումից մինչև հրեաների Տաճարը
Գիրք երրորդ – Աքսորից մինչև Քրիստոսի վերադարձը
Գիրք չորրորդից՝ յոթերորդ – Սաքսոնների, դանիացիների ու նորմանների պատմությունը մինչև [1357 թվականը]

Գիրք առաջինում նա գրում է երկրագնդի չափերի, մայրցամաքների, օվկիանոսների ու ծովերի մասին: Այստեղ նա տալիս է տեղեկություններ Հայաստանի, Վիրքի, Աղվանքի, Կովկասյան լեռնաշղթայի ու Կասպից ծովի վերաբերյալ:

Վիրքի (Hiberia) վերաբերյալ նա գրում է.

Վիրքը Տավրոսի լեռների ներքևի մի տարածաշրջան է, որը միանում է Հայաստանին [հիշեցում՝ «ներքև» կարող է լինել նաև հյուսիսը]:[141]

Աղվանքի վերաբերյալ նա ասում է.

Աղվանքի արևելքումն է Կասպից ծովը, և նա իջնում է մինչև Ազովի ճահիճները, Շրջանի մարդիկ ունեն դեղին ներկած մազեր և գիշերով ավելի լավ են տեսնում, քան ցերեկով: Այստեղի շներն այնքան վայրագ են ու կատաղի, որ ցուլերին հաղթում են ու առյուծներին սպանում:[142]

Հայաստանի մասին նա նաև գրում է.

Հայաստանն այլ կերպ նաև անվանվում է Արարատի երկիր: Անունը վերցված է Յասոնի ասպետ Արմենիոսից, որը գրավելով Հայաստանի տարածքը՝ Տավրոսից մինչև Կովկաս և Կասպից ծովից մինչև Կապադովկիա, հաստատվեց այնտեղ: Այստեղ է կանգնած Արարատ լեռը, որտեղ ջրհեղեղից հետո նստեց Նոյյան տապանը և կան երկու Հայաստաններ՝ Մեծ և Փոքր:[143]

Վերի բացատրությունները շատ նման են Օրոսիոսի, Պլինիոսի և ուրիշների տեքստերին, որոնցից հաճախ օգտվել են միջնադարյան պատմիչներն ու քարտեզագետները, ինչպիսին են Իզիդորը, Բեատուսը, Ջերվազը և Ռիչարդ դե Բելլոն (Պատ. 28, 70 և 77): Ձեռագիրը նաև պարունակում է տարբեր քաղաքների՝ այդ թվում Երուսաղեմի և Հռոմի, և այնտեղ գտնվող հուշարձանների մասին տեղեկություններ ու բացատրություններ:

Այդ ժամանակներում արդեն իսկ առկա էին Միջերկրականի մանրակրկիտ և ճշգրիտ պորտոլան՝ ծովային քարտեզները և դրանցից սկսել էին օգտվել ճանապարհորդներն ու նավագնացները, իսկ իտալացի մոլեռանդ հավատացյալ Օպիչինո դե Կանիստրիսը (1296 – շուրջ 1354 թթ.) պորտոլաններն օգտագործում էր կրոնական քարոզչության համար՝ դրանց վրա ավելացնելով սրբերի պատկերներ և ծովափնյա գծերը նմանեցնելով սրբերի դեմքերի: Իսկ Հիգդենն արհամարելով քարտեզագրական վերջին ձեռքբերումները, շարունակեց առաջնորդվել քարտեզագրության կրոնական և ավանդական ուղղությամբ և իր քարտեզները գծագրում էր հիմնականում հետևելով եկեղեցու և կրոնի գաղափարական սկբունքներին:

Հիգդենի ձեռագրերից մեզ հասածների մեջ կան աշխարհացույց քարտեզներ պարունակող 21 ընդօրինակություններ, որոնք գծված են տարբեր ձևերով, բայց բոլորն էլ պատկանում են քարտեզների T-O ընտանիքին:[144] Սրանցից որոշները շրջանաձև են, շատերը ձգված-ձվաձև են, իսկ մի քանիսը սրածայր են (նշաձև կամ ոսպնյակի նմանող) և այլն: Այստեղ ցուցադրված երեք քարտեզները ձվաձև են, բայց Բրիտանական գրադարանում առկա է մեկ ուրիշը (ref. Royal 14.C.XII, f. 9v), որը նշաձև է և պարունակում է միայն տեղանուններ, սրանց շարքում նաև Հայատանին վերաբերող, որոնք անկանոն ցրված են երկրի դատարկ տարածքում, իսկ քարտեզն ընդհանրապես որևէ տեղագրական տեղեկություն չի պարունակում: Քարտեզները պատրաստելիս Հիգդենն իր աշխատանքը հիմնել է հին հունական և հռոմեական քարտեզագրական ավանդույթների վրա, դրանց վրա ավելացնելով քրիստոնեական հոգևոր տեղագրությունը, ինչպիսիք են Երուսաղեմը, Հռոմը, Կարմիր ծովը, Երկրային դրախտը և այլն:

Հիգդենի քարտեզներից երեքը պատկերված ու քննարկված են սույն աշխատության վերջին էջերում:

Պատ. 80/80a – Ռանուլֆ Հիգդենի պատրաստած ամենամեծ քարտեզն այստեղ արտատպվածն է: Սա գտնվում է Բրիտանական գրադարանում պահվող *Պոլիքրոնիկոնի* 1342 թ. օրինակներից մեկի մեջ: Քարտեզը պատրաստվել է Ռամզի աբբայությունում և այդ պատճառով էլ երբեմն կոչվում է այդ անվանումով (Ռամզի աբբայության քարտեզ): Քարտեզը ձվաձև է և T-O տեսակի, քանի որ ունի այս ընտանիքի բոլոր տվյալները և, ըստ ընդունված կարգի, ուղղորդված է վերև արևելքով:

Սա համեմատաբար մեծադիր քարտեզ է և պարունակում է 346 տեղանուն, և Հիգդենի մյուս քարտեզներից հիմնա-

[140] Taylor, John – Universal Chronicle of Ranulf Higden – Clarendon Press, Oxford, 1966, էջ 3:
[141] Higden, Ranulf – Polychronicon – translated by John Trevisia in 1387. Facsimile reproduction of the book printed in 1527. Edited by Churchill Babington, London, 1865, Book I, Chapter IX, էջ 142-146:
[142] Անդ.
[143] Անդ.
[144] Destombes, Marcel – Mappemondes A.D. 1200-1500 – Imago Mundi, Amsterdam, N. Israel, 1964.

կանում բավական տարբեր է: Այստեղ նշված են 39 մեծ քաղաքներ՝ պատկերված ամրոցների մանրապատկերներով, որոնցից 14-ը Անգլիայում են և միայն չորսն Աֆրիկայում: Հանրածանոթ կրոնական կենտրոններից Երուսաղեմը, Հռոմը և Սանտիագո դե Կոմպոստելլան պատկերված են տաճարի մեծադիր մանրապատկերներով: Երկիրը շրջապատված է 12 հողմերի պատկերներով, իսկ արևելքում նշված է Երկրային դրախտը: Ըստ երևույթին, քարտեզն ընդօրինակողը աշխատանքը թողել է անավարտ, քանի որ Դրախտում որևէ տեքստ կամ պատկեր չկա, միայն չորս գետերն են գծված ու այն էլ թողնված են անկատար: Շրջաններն ու երկրները բաժանված են կարմիր գծերով, իսկ մի քանի լեռներ, որոնք նշված են՝ ներկված են կանաչով, այն նույն գույներով, որով ներկված են ծովերը: Քարտեզը գծողը գործածել է միայն երկու գույն՝ կարմիր և կանաչ:

Հայաստանը և նրա հարակից շրջանները ցուցադրված են Պատ.80a քարտեզի դետալի մեջ և ներկա պարբերության մեջ փակագծերում տրված թվերը վերաբերում են այդ քարտեզի վրա կապույտով ավելացված թվերին: *Նոյյան տապանը* (1), որը քարտեզի կենտրոնում է գտնվում, մակագրված է *Տապանը նստած է Հայաստանի լեռների վրա* (2): Տապանի մեջ նստած է Նոյը, ուսին մի կացին և մոտը կանգնած են խոյը, առյուծը և եղջերուն: Լեռների ներքևում մակագրված է *Կապադովկիա* (5), իսկ Տապանի վերը՝ ձախում, կարմիրով ընդգծված նշված է *Հայաստան* (3): Հայաստանի ներքևում առկա է կանաչ մի շրջան, որոնք *Տավրոսյան լեռներն* են (4), իսկ Հայաստանից աջ (հարավում)՝ մակագրությունը տալիս է բացատրություններ Բաբելոնին վերաբերող տարբեր անվանումների և դրանց մեկնաբանությունների մասին, որոնք հետևյալն են:

Բաբիլոնը շրջանն է, Բաբելոնը քաղաքը (6), իսկ Բաբելը՝ աշտարակն է (7):

Բաբելոն (6) քաղաքը քարտեզի մեջ գտնվում է այս մակագրության մոտ, բայց *Բաբելի աշտարակը* (7) քաղաքի աջում է և առանձին է նշված: Տապանից վեր գտնվող երկու կանաչ գետերը *Եփրատն* (8) ու *Տիգրիսն* (9) են, իսկ *Միջագետք* (10) անունը նշված է Բաբելոնին կից: *Դամասկոսը* (11) գտնվում է Հայաստանից աջ, իսկ *Երուսաղեմը* (12) պատկերված է տաճարի խոշոր մանրապատկերով:

Աֆրիկայում *Նեղոսը* սկսվում ու վերջանում է ցամաքում, անցնելով արևելքից արևմուտք, և անհետանում է առանց ծովին հասնելու: *Հերակլեսի սյուները* նշված են Միջերկրական ծովի արևմտյան ծայրամասում, օվկիանոսին միացնող նեղուցի մեջ, իսկ Աֆրիկայի տարածքում պատկերված են *Ալեքսանդրիան* իր Փարոսով, *Սիյենեն*, *Եգիպտոսը*, *Եթովպիան*, *Լիբիան* և ուրիշ երկրներ: Եվրոպայում *Անգլիան* պատկերված է անհամեմատ մեծ և պարունակում է 14 քաղաքների մանրանկարներ: Անգլիան ավելի ցայտուն ցուցադրելու համար այս աշխարհամասը ներկված է կարմիրով: Անգլիայից դուրս ցուցադրված երկու մեծ քաղաքներն են *Հռոմն* ու *Կոմպոստելլան*: Միջերկրականը պատկերված է իր տարբեր ձևի ու չափի 22 կղզիներով, որոնցից ամեն մեկն ունի պատկան մակագրություն:

Պատ. 81/81a – Հիգդենի այս երկրորդ աշխարհացույց քարտեզը վերցված է նույն ձեռագրից, ինչ որ Պատ. 80-ի քարտեզը: Ըստ երևույթին, քարտեզագիրն առաջին քարտեզը գծելուց հետո որոշել է մեկ այլ, ավելի պարզ քարտեզ ևս ավելացնել ձեռագրում, և մեծ քարտեզի էջի հետևում գծագրել է այս պարզեցված աշխարհացույցը: Այս քարտեզն էլ պատրաստված է մեծ աճապարանքով, քանի որ գունավորումները կիսատ են և արված են անուշադիր ու հապճեպ կերպով: Քարտեզը 1350 թվականին է պատկանում:

Այս քարտեզն էլ ուղղորդված է վերև արևելքով, ուր որ առկա է Երկրային դրախտը Ադամով ու Եվայով, որոնք ճաշակում են արգելված պտուղը, բայց այստեղ էլ պակասում են մանրապատկերի շրջանակն ու այլ մանրամասնություններ: Սա էլ T-O տեսակի քարտեզ է, պարտադիր կարևոր դեր ունեցող Միջերկրական ծովով, որի մեջ կան տաս կղզիներ, ներառյալ *Գադեսը* (Իսպանիայի Կադիս քաղաքը), *Սարդինիան*, *Կիպրոսը*, *Հռոդոսը* և *Կրետեն:*

Քարտեզի մեծացված մասում, Պատ. 81a-ում, պատկերված են Հայաստանը և նրա հարակից շրջանները՝ Միջին Արևելքից մինչև Կովկաս, որի վրա ավելացված թվերը վերաբերում են այս պարբերության մեջ չակերտներում նշված թվերին: Միջերկրականի հյուսիս-արևելքում կան հինգ մատնանձև թերակղզիներ, որոնք Փոքր Ասիայի տարբեր երկրներն են ներկայացնում: Սրանցից վեր՝ Անատոլիայից հարավ, առկա են հինգ երկար շերտերի բաժանված շրջաններ, որոնք անվանված են *Կապադովկիա* (1), *Հայաստան* (2), *Միջագետք* (3), *Եփրատ* (4, գետ, կանաչով) և *Բաբելոն* (5): *Կապադովկիայի* (1) մոտ տերևի կերպարանքով ներկայացված երկրամասը մակագրված է *Լյուդիա* (6) և *Փոքր Ասիա* (7), իսկ դրանցից վեր, երկու մեջք-մեջքի տված ձվաձև մասսաները *Տավրոսյան* (8) և *Կովկասյան* (9) լեռներն են: Հայաստանին մոտակա այլ տարածաշրջաններից քարտեզում պատկերված են *Հիբերիան* (10, Վիրքը), *Հիրկանիան* (11) և *Ասորեստանը* (12):

Աֆրիկայում Արաբական և Կարմիր ծովերը ներկված են կարմիրով: *Կարմիր ծովը*, որն Արաբական ծովին միացած ծոցերից է, նշված է բացվածքով, որտեղից՝ ըստ ավանդության անցել են Իսրայելի որդիները, երբ վերադառնում էին Եգիպտոսից Իսրայել: Նեղոսը պատկերված է իր ակունքն ունենալով շրջապատի Օվկիանոսում և ամբողջ Աֆրիկայի երկայնքով ու լայնքով ոլորապտույտ անցնելուց հետո վերջում Միջերկրականի փոխարեն թափվում է Կարմիր ծով: Արաբական ծովին միացող երկրորդ ծոցն է Պարսից ծոցը, որն այնտեղից է սկիզբ է առնում և շարունակվում դեպի Ասորեստան, Պարսկաստան ու Միջին Ասիա:

Պատ. 82 – Այստեղ քննարկվող Հիգդենի երրորդ քարտեզը վերցված է *Պոլիքրոնիկոնի* 14-րդ դարի վերջին քառորդի ընդօրինակություններից մեկից, որը գտնվում է Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում: Քարտեզը ձգված ձվաձև է և T-O տեսակի, շատ նման նախկին օրինակին: Իրականության մեջ սա հենց Պատ. 81 քարտեզի ընդօրինակությունն է, այն տարբերությամբ, որ այս մեկը պատրաստված է ուշադրությամբ ու խնամքով և ավարտված քարտեզ է: Երկու քարտեզ-

ների հիմնական տարբերությունները նրանց ներկայացման ձևի և մանրամասնություններից մի քանիսի մեջ են: Այստեղ *Երուսաղեմը*, *Իտալիան* և *Ֆրանսիան* պատկերված են շինությունների մանրապատկերներով, իսկ Երկրային դրախտի մեջ պատկերված են Ադամը, Եվան, օձը և խնձորի ծառը: Ընդօրինակողն այստեղ գործածել է հավելյալ գույներ՝ քարտեզը դարձնելով ավելի գեղեցիկ: Ծովերը, բացառությամբ *Կարմիր ծովի* ու Պարսից ծոցի, ներկված են կապույտ, իսկ առաջին երկուսն, ըստ ընդհանրացած ավանդույթի, ներկված են կարմիրով: Գետերը նշված են կարմիր գծերով կամ կանաչ ժապավեններով, իսկ լեռները՝ կանաչ գնդածև կերպարանքով:

Քանի որ քարտեզն ավարտված է ու ամբողջովին ներկված, նրա հիմնական պարունակությունը, ինչպիսին են օրինակ լեռները, գետերը, քաղաքները և այլն, չնայած նախորդի հետ նույնը լինելուն, այստեղ տարբեր է երևում: Ասիայում *Տավրոսյան* ու *Կովկասյան* լեռները, որոնցից վերջինը *Տիգրիսի* և *Եփրատի* ակունքն է, նույն կերպ իրար միացած և կանաչով ներկված տերևների տեսքն ունեն: *Հիրկանիայի* մոտ, *Ամազոնիայի* և *Ալբանիայի* (Աղվանքի) միջև առկա է մեկ ուրիշ լեռան պատկեր (*Montes plot?)*, որն ըստ Միլլերի Արարատն է, բայց այս քարտեզի մեջ պատկերի մակագրությունը անծանոթ է:[145] Նույն քարտեզի երկու այլ ընդօրինակություններում այս լեռն անվանված է *Mons Hyperborei* (էդինբուրգի օրինակում) և *Mons Armenie* (Հայաստանի լեռները, Քեմբրիջի Կորպուս Քրիստի կոլեջի օրինակում): Ասիայում առկա մյուս լեռներն անվանված են *Ռիփեյան*[146], *Սինայի* և *Լիբանանի* լեռներ, որոնցից վերջինում գտնվում է *Հորդանան* գետի ակունքը:

Աֆրիկայում միակ լեռն Ատլասն է: Այստեղ էլ նախորդ քարտեզի նման *Նեղոսը* սկիզբ է առնում շրջապատի Օվկիանոսից և անցնում իր ոլորապտույտ հունով, բայց ընդօրինակողը նախորդի սխալը չի կրկնել և վերջում Նեղոսը հասցրել է Միջերկրական, որի մեջ նա թափվում է *Ալեքսանդրիայի* և *Լիբիայի* միջնամասում: Եվրոպայում *Օլիմպոս* լեռը պատկերված է *Հունաստանում* և *Ալպյան* լեռներից ակունք են առնում *Դանուբ*, *Հռենոս* և *Ռոն* գետերը, որոնք շատ պարզ տեսանելի են, մինչդեռ նախորդ քարտեզում նույն առանձնահատկություններն առկա են, բայց ո՛չ պարզորոշ տեսանելի: Այստեղ էլ Միջերկրականի մեջ կան 10 կղզիներ, բայց *Կադիսը* տեղադրված է *Հերակլեսի սյուների* միջև, որոնք կանգնած են Միջերկրականը Օվկիանոսին միացնող նեղուցի մեջ: Շրջապատի օվկիանոսի մեջ կան բազմաթիվ կղզիներ, որոնցից են *Անգլիան*, *Ուելսը*, *Իռլանդիան* և *Շոտլանդիան*, ինչպես նաև *Թիլեն* և *Իսլանդիան*, որոնք երկուսն էլ նույն կղզու տարբեր անվանումներն են:

Հայաստանի անունը նշված է *Փոքր Ասիայի* տարածաշրջանի մի մասի վրա: Այս երկրամասը սկսվում է Միջերկրականի հյուսիս-արևելքի *Տավրոսյան* լեռներից և երկու կողմից շրջապատված է *Կապադովկիայով* ու *Միջագետքով*, ինչը նույնն է, ինչպես որ է նախորդ քարտեզում: Քարտեզի շուրջն առկա են հավելյալ չորս հողմերը՝ պատկերված ցամաքամասերը շրջապատող օվկիանոսի տարածքում: Մյուս բոլոր տեսակետներից նախորդ քարտեզի բացատրությունները կարելի է օգտագործել նաև այս քարտեզի համար:

[145] Miller, Dr. Konrad – Die ժltesten Weltkarte – Stuttgart, 1898, Volumes I-VI, հատոր 3, էջ 101-102:

[146] Այս անվանումը անցյալում Արևելյան Եվրոպայի և Ռուսաստանի լեռներին էր տրվում, այստեղ հավանաբար Կարպատյան լեռները:

ՎԵՐՋԱԲԱՆ

Միջնադարյան աշխարհագրագետների ու քարտեզագետների աշխատանքները և դրանց կից բացատրական տեքստերը քննարկելով, կարելի է հանգել հետևյալ ընդհանրական բնույթի եզրակացությունների:

Միջնադարում՝ պետությունների, ռազմա-քաղաքական կազմավորումների, երկրների ու շրջանների ճշգրիտ սահմանների մասին պարբերաբար թարմացվող տեղեկատվության ոչ-լիարժեքության, ինչպես նաև ստույգ աշխարհագրական ու քարտեզագրական տվյալների բացակայության պայմաններում, իրականությանը համապատասխանող սահմաններ գծելը գրեթե անհնար էր: Այդ պատճառով է, որ միջնադարյան քարտեզների մեծամասնության մեջ բացակա են սահմանագծերը, իսկ երկրների ու շրջանների անվանումները նշված են նրանց պատկան տարածքների վրա: Այդպիսով, միջնադարյան քարտեզները չեն կարող համարվել խիստ ճշգրիտ քարտեզագրական փաստաթղթեր: Միջնադարյան քարտեզագիրն, որպես կանոն, բավարարվում էր քարտեզի վրա երկրի անունը նշող մակագրությունը տեղադրելով քարտեզում նրա մոտավոր գտնվելու վայրում, ինչը 21-րդ դարի նորագույն գիտա-տեխնիկական սարքավորումներով օժտված քարտեզագետի համար կարող է թվալ նույնիսկ անհեթեթ:

Նշված հանգամանքների հետևանքով է, որ Կովկասի հարավում առկա երկրները, չնայած գտնվում էին ծանոթ աշխարհի համարյա ծայրամասում, բայց և այնպես միշտ ինչ-որ կերպով ներկա էին միջնադարյան քարտեզներում: Հայաստանն առկա է համարյա բոլոր քարտեզներում, իսկ որտեղ որ նշված են երկրների անունները՝ Հայաստանը ներկայացված է հաճախ «Մեծ Հայք» և «Փոքր Հայք» անվանումներով: Կողքիսն ու Վիրքը, որոնք այսօրվա Վրաստանի Հանրապետության բաղադրիչ երկրամասերից են, ինչպես նաև Աղվանքը՝ Ադրբեջանի Հանրապետությանը նախորդող քաղաքական կազմավորումներից վաղագույնը, նույնպես նշվում են քարտեզներում, բայց ոչ նման հաճախականությամբ, որպիսին առկա է Հայաստանի պարագայում:

Հավանական է, որ Հայաստանին առաջնություն տալը պայմանավորված է նրա՝ իր ժամանակին հզոր տերություն լինելու, ինչպես նաև Աստվածաշնչական Երկրային դրախտի վայրը, նաև «Արարատյան լեռների» Նոյյան տապանի հանգրվանը, ամենաարևելյան քրիստոնյա երկիրը լինելու հանգամանքով, որը դեռևս չորրորդ դարի սկզբին քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն: Այս հարցում թերևս էական է եղել նաև Կիլիկիայի հայկական թագավորության գոյության ընթացքում հայ առևտրականների աշխույժ ներկայությունը Ռավեննայում, Վենետիկում, Ջենովայում և այլուր: Կիլիկիայի թագավորական ընտանիքները սերտ կապեր էին պահպանում Ֆրանսիայի հետ և օժանդակում էին խաչակիրներին նրանց առաքելության մեջ: Թերևս թվարկված հանգամանքների շնորհիվ է, որ անգամ երբ Հայաստանը կորցրեց իր անկախությունը և գտնվում էր օտար լծի տակ, եվրոպացի քարտեզագիրները շարունակում էին իրենց քարտեզներում նշել այն՝ իբրև մեկը տարածաշրջանի կարևոր երկրներից:

Կովկասի հարավային երկրները ներկա են նաև մեր նախորդ աշխատանքում դիտարկված պտղոմեոսյան քարտեզներում: Դրանցում Կողքիսը, Աղվանքը, Մեծ և Փոքր Հայքերը ակնառու տեղ են գրավում, և նույնիսկ ունեն գծված սահմաններ: Սակայն չպետք է մոռանալ, որ այդ քարտեզները գծագրվել են միայն 13-16-րդ դարերում՝ հենվելով Պտղոմեոսի երկրորդ դարի «Աշխարհագրություն» երկին, հետևաբար այստեղ գծագրված սահմանները հետագայում են ավելացվել և չեն պատկանում երկրորդ դարին: Ինչ վերաբերում է երկու այլ կարևոր աշխատանքներին՝ «Պևտինգերյան աղյուսակ»ին (աղբյուրը 4-րդ դարից) և Խորենացու-Անանիա Շիրակացու «Աշխարհացույցին», ապա սրանց մեջ էլ ներկա են Կողքիսը, Վիրքը, Աղվանքը և Մեծ ու Փոքր Հայքերը, ինչպես նաև Արաքսից հարավ գտնվող Պարսկաստանի Ատրպատական նահանգը:

Իսլամական քարտեզագրության մեջ Կովկասի հարավում գտնվող երկրները ցուցադրվում են այլ կերպ: Բալխի քարտեզագրական դպրոցի քարտեզներում, շրջանների քարտեզներից մեկը հատկացված է Աղվանքին, Հայաստանին ու [Պարսկաստանի նահանգ] Ատրպատականին: Վրաստանի քաղաքներն ընդհանրապես նշվում են Աղվանքի տարածքում, իսկ Աղվանքից հյուսիս-արևմուտք և արևմուտք ընկած տարածաշրջաններն անվանվում են «Ալանների երկիր»:

Ասորական ծագում ունեցող 13-րդ դարի միակ քարտեզը, որը պատրաստել է Բարհեբրեոսը, պարունակում է Մեծ և Փոքր Հայքերի [Կիլիկիայի] բազմաթիվ տեղանուններ, որոնց հարևանության մեջ են հարավում՝ Պարսկաստանի նահանգ Ատրպատականը [պարսկերենով՝ Ազերբայջան], հյուսիսում՝ ալանները և բուլղարները: Աղվանքը, որն արդեն իսկ գոյություն չուներ, չի նշվում: Նշված չէ նաև Վրաստանը, որն այդ օրերին անկախ և միավորված թագավորություն էր:

Անդրադառնալով Կովկասի հարավում գտնվող երկրների այսօրվա սահմաններին, կարելի է եզրակացնել հետևյալը.

1- Վրաստանի տարածքը կազմող երկրամասերը՝ Կողքիս-Իմերեթիա-Աբխազիան, Քարթլի-Վիրքը և Մեգրելիան, որպես առանձին միավորներ, քարտեզներում առկա են ինչպես նախքան մեր թվարկությունը, նույնպես և միջնադարում: 11-12-րդ դարերում այդ տարածքները միացան և հիմնեցին Վրաստանը: Նկատենք, որ **տասներեքերորդ դարի Վրաստանի սահմանները համարյա թե նույնն են, ինչ որ այսօրվա Վրաստանի Հանրապետության միջազգայնորեն ընդունված սահմանները:** Նշենք նաև մերօրյա այն իրողությունը, որ Խորհրդային Միության փլուզումից հետո, Վրաստանի երկու տարածքները՝ Հարավային Օսիան և Աբխազիան, ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի հիմամբ ներկայումս կերտում են անկախ պետականություն:

2- Այն տարածաշրջանը, որն այսօր կոչվում է Ադրբեջանի Հանրապետություն, միջնադարյան ժամանակներում ճանաչված էր որպես քրիստոնյա Աղվանք երկիրը: Իննից մինչև տասներորդ դարերում այս պետությունն ան-

հետացավ, և նրա տեղում երևան եկան տարբեր մահմեդական խանություններ ու ինքնավար շրջաններ, որոնցից են Շամախը, Դերբենդը, Շիրվանը, Գյանջան (Գանձակ), Թալիշը և այլն: 1918 թվականին, քաղաքական նկատառումներից ելնելով, Արաքսի հարավում գտնվող և ավելի քան երկու հազարամյակ Պարսկաստանի հյուսիս-արևմտյան նահանգի «Ադրբեջան» անվանումը տրվեց նաև վերոհիշյալ խանությունների զբաղեցրած տարածքներին և, այսպիսով, ծնվեց Ադրբեջանի Հանրապետությունը: **Այսօրվա Ադրբեջանի Հանրապետությունը զբաղեցնում է միջնադարյան Աղվանքի տարածքի մեկ մասը, դրան նաև ավելացել են հարևան՝ պատմականորեն հայաբնակ շրջանները:** Սրանցից մեկը՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը, օգտվելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքից, 1991 թվականին հայտարարեց անկախություն և այսօր առկա է որպես անկախ պետականություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

3- Քարտեզներում Հայաստանի տարածքը միշտ նշվում է Վիրքից և Աղվանքից հարավ և Արաքսից անցնելով՝ հասնում է մինչև Վանից արևմուտք, մինչև Արևմտյան Եփրատ, այդպիսով, ներառում է Հայկական լեռնաշխարհի երկրամասը: Մինչև 1915 թվականը՝ շուրջ երեք հազարամյակ, այս շրջանում էին կենտրոնացած լեռնաշխարհի բնիկները՝ հայերը: Հայաստանն իր անկախությունը կորցրեց 11-րդ դարում, սակայն դրան հաջորդեց Կիլիկիայի Հայկական թագավորությունը, որը գոյատևեց ավելի քան երեք դար: Երկրորդ հազարամյակի առաջին դարերից սկսած հերթականորեն Հայաստան են ներխուժել ու այնտեղ տիրել սելջուկները, մոնղոլները, ապա օսման-թուրքերը, որոնք էլ 19-րդ դարի վերջերից սկսեցին Արևմտյան Հայաստանը «մաքրել» բնիկներից՝ հայերից: Խորհրդային Միության օրոք համայնավար ղեկավարության «բարի կամքով» Հայաստանին պատկանող տարածքներից մի քանի մաս նվիրվեց հարևաններին. Կարսն ու Արդահանը զիջվեցին Թուրքիային, Նախիջևանն ու Ղարաբաղը (Արցախը)՝ Ադրբեջանին, իսկ հիմնականում հայաբնակ Ջավախքը ներառվեց Վրաստանի տարածքում: **Արդյունքում Հայաստանը, որը դարեր շարունակ զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքը, այսօր մի փոքրիկ երկիր է, որի սահմաններն ընդգրկում են իր պատմական տարածքների միայն շուրջ մեկ տասներորդը:**

Ռուբեն Գալչյան
Լոնդոն - Երևան, 2007

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Աբասգիա - 9
Աբիխ, Հերման Վիլհելմ - 10, 18
Աբխազեթի - 8
Աբխազիա - 9, 10, 18, 26, 27, 64, 73, 74, 81, 83, 84, 85, 88
Ագրիպպա, Մարկուս Վիսպանիոս - 36, 63
Ադամ և Եվա - 14, 23, 24, 39, 40, 43, 74, 78, 86, 87
Աղեն - 59
Ադիաբենե - 27
Ադրբեջան - 5, 9, 10, 11, 18, 19, 44, 45, 88, 89
Ադրիանոսի - 72
Ադրիատիկ - 29, 32, 40, 41, 43, 58, 81
Ազախ - 69, 71
Ազովի ծով կամ ճահիճ - 9, 32, 33, 35, 38, 40, 42, 66, 69, 70, 72, 74, 84, 85
Աթաթյուրքը, Մուստաֆա Քեմալ - 10
Աթաչին - 57
Աթենքն - 34
Ալամանք - 69
Ալան - 16, 17, 18, 41, 50, 53, 80
Ս. Ալբան - 75, 76, 78, 87
Ալբանիա - տես Աղվանք
Ալբի - 15, 28, 29, 62
Ալեքսանդր Մակեդոնացի - 17, 20, 21, 26, 54, 58, 63, 73, 77, 78
Ալեքսանդրիա - 21, 24, 27, 29, 33, 34, 42, 43, 57, 59, 64, 65, 66, 69, 72, 76, 77, 78, 80
Ալիս - 34, 73
Ալմանիա - 72
Ալպեր - 9, 72, 87
Ալջազիրա - 49, 50, 52
Ակկա - 72, 76-78
Ակրոկերավնյան - 35
Ահար - 49-53
Աղեքսանդրիա - 25 (նաև տես Ալեքսանդրիա)
Աղվանք - 5, 9, 10, 17-19, 26-29, 33, 34,-36, 38, 39, 42, 43, 45, 46-53, 55, 56, 61, 63-66, 70, 73, 74, 76, 79, 82-85, 87-89
Ամադիա - 49
Ամբրոզիոս - 14, 23, 39
Ամերիկա - 11, 23, 57, 67
Ամիդ - 49, 51, 54, 56
Ամիեն - 21
Ամու Դարյա - 42, 43, 45, 54
Ամստերդամ - 10
Անանիա Շիրակացի - 68, 78, 88
Անատոլիա - 10, 18, 19, 32, 80, 86
Անգլիա - 11, 34, 36, 38, 40, 43, 63, 65, 67, 71, 72, 75-78, 83, 84, 86, 87
Անդալուզիա - 45, 48, 57, 58, 59
Անդրկովկաս - 18
Անթակիա - 59, 61
Աննաբա - 34, 38
Անտարկտիկան - 15
Անտիոք - 13, 21, 25, 27, 29-31, 34, 37, 43, 64, 66, 72, 77, 79, 80
Աշնե - 49
Ապուլիա - 72
Ապպիանոս, Պետրուս - 24
Ասիա - 9, 10, 14, 18, 22-24, 29, 32-34, 36-44, 46, 48, 54-58, 60, 65,66, 69, 70, 72, 73, 75, 76, 79, 81, 83, 84, 86, 87
Ասկալոն - 21, 37, 43, 59, 77, 78
Ասորեստան - 21, 27, 34, 36-38, 42, 43, 67, 70, 72, 86
Ասուան - 25, 34, 38, 59
Աստուրիա - 42, 43
Ատլանտյան - 23, 58
Ատլաս - 21, 34, 36, 37, 43, 82, 87
Ատրպատեն - 9
Ատրպատական - 9, 10, 18, 44,56, 59, 60, 79, 80, 88
Արաբական ծով - 25, 27, 32, 34, 35, 38, 39, 41-43, 45, 47, 48, 54, 57, 58, 60, 63, 86
Արաբիա - 10, 21, 29, 36, 37, 39, 41, 54, 65, 72, 83, 84
Արազ - 48, 49
Արալյան ծով կամ լիճ - 45, 47, 48, 57, 58, 83
Արարատ - 11, 15, 18, 27, 34, 35, 46,-51, 54, 55, 59, 63, 64, 71, 73, 74, 76-78, 85, 87, 88
Արաքս - 9, 18, 26, 35, 38, 40, 41, 45, 46-52, 54,-56, 58, 66, 73, 74, 79, 88, 89
Արդաբիլ - 46, 47, 49, 51-53, 61
Արդահան - 87
Արզան (տես Արծն) - 46-49, 51, 52, 56, 79
Արիստոտել - 14, 32
Արծն - 48, 49, 51
Արծեշ - 47-53, 56, 61
Արմենա - 74
Արմենիա - 64, 73
Արմենիոս - 74, 84, 85
Արմինիյյե - 46, 48-50
Արրան - 45, 48, 50, 52, 56, 61
Արցախ - 89
Արքահան - 38, 42
Աֆղանստան - 46, 75
Աֆրիկա - 9, 14, 15, 20-24, 28, 29, 33, 34, 36, 37-43, 45, 47, 48, 54, 57-60, 63-67, 69, 72,73, 76, 79, 80, 81, 83, 84, 86, 87
Աֆրիկացի - 23, 39

Բաբ ուլ-Աբուաբ - 46-49, 51, 52, 54,-56, 58
Բաբել, Բաբելոն - 15, 18, , 1, 24, 27, 29, 36, 41, 42, 63, 65-68, 70, 72, 74, 77, 86
Բադախշան - 57
Բադիոս - 24
Բաետիկա - 75
Իբն-Բաթութա - 44, 69, 70
Բալղաք - 83
Բալթիական ծով - 80
Բալխ - 44, 46
Բալխի, Աբու Զահիդ - 44,46, 48, 53-55, 59, 60, 88
Բալտիմոր - 57
Բակտրիա - 37, 83, 84
Բահրի Խազար - 45,
Բահրի Խուլզում - 57, 60, 61
Բահրեյն - 44, 59, 72
Բաղդադ - 46, 59, 79, 82, 83, 84
Բաղեշ - 49
Բամիան - 57
Բայլական - 48-51, 56
Բասրա - 59
Բար Ալի - 80
Բարհեբրեոս - 17, 62, 79-81, 88
Բարդա - 46, 48, 49, 50, 52
Բարդահե - 46
Բարդուղիմեոս առ. - 73, 74
Բարզանդ - 50, 51, 53
Բաքու - 46, 49-51, 54, 61
Բեատուս Լիբենացի - 9, 14-16, 35, 39-41, 75, 85
Բեդա Երանելի - 36, 37, 64, 75
Բեթղեհեմ - 25, 34, 65, 66, 77, 78
Բելառուս - 24
Բելգիա - 33, 41
Բենգալի ծոց - 57
Բեյթ ուլ Մուղադդաս - 57, 61
Բեռլին - 52, 74, 80
Բերինգի նեղուց - 70
Բերկրի - 47-53
Բեք, Հարրի - 51
Բիթլիս - 46-54, 56
Բիրունի, Աբու Ռեյհան - 44, 60
Բյուզանդիա - 10, 57, 59
Բյուքանիա - 21, 37, 41, 75, 83, 84
Բոեսիա - 21
Բոլոնյա - 73
Բոսֆոր - 40, 41, 58, 69
Բորիսթենես - 25, 80
Բրետանյ - 36
Բրիտանիա - 24, 27, 29, 37, 38, 40, 41, 43, 63, 72
Բուլղարիա - 45, 57, 60
Բուխարա - 61
Բուհայրի Արմինիյյե - 53
Բուհայրի Քաբութան - 55
Բուրգո դի Օզմա - 42
Բուրգունդիա - 38

Գադես - 22, 86
Գալիլեա - 21, 26, 27, 36, 37, 67, 68
Գալիցիա - 33, 41, 43
Գալչյան, Ռուբեն - 5, 10-13, 16, 18, 19, 89
Գաղատիա - 21, 75, 83
Գաղղիա - 23, 33, 34, 36, 43, 67
Գանգես- 22, 27, 29, 32, 35
Գանձակ - 46, 48, 49, 52, 88
Գասկոնիա - 40
Գարդաբանի - 47-50
Գոթիե դե Շաթիյոնի - 21, 22
Գեթուլիա - 42, 72
Գեհոն - 32,39, 41, 43
Գերմանիա - 43, 57, 65, 67, 72, 74, 83
Գիլան - 46-50, 53 , 58
Գյանջա - 46, 89 (տես Գանձակ)
Գյուրջիստան - 18
Գորգան - 59, 80
Գռանադա - 58
Գվինեական ծոց - 60, 83
Գրիգորիս - 79

Դաթիա - 38
Դալմատիա - 25, 33, 41
Դախերղան - 47, 49, 51, 53
Դակիա - 25, 36
Դահխառական - 49
Դաղստան - 18, 35, 82
Դամասկոս - 27, 34, 42, 58, 61, 66, 70, 77, 78, 80, 86
Դան - 36
Դանուբ - 21, 38, 40, 42, 43, 84, 87
Դաջերման - 46, 49, 50, 51, 53
Դարբանդ - 17 (տես Դերբենդ)
Դարդանել - 40, 41, 58, 69
Դարդանիան - 38
Դարյալի կիրճ - 16-18, 26,27, 35, 66, 73, 82
Դեբիլ - 46, 50 (տես Դվին)
Դելիի - 44
Դելոս - 66, 72
Դեյլամ - 45-50, 53-56, 58, 59
Դեջլե - 45 (տես Տիգրիս)
Դերբենդ - 16-18, 26, 27, 29, 36, 46, 47, 49-52, 58, 80, 89
Դիարբեքիր - 57
Դինաև - 73
Դինավար - 49, 51, 53
Դիոնիսոս - 63
Դմըշխ - 70 (տես Դամասկոս)
Դնեպր - 25, 69, 70, 80
Դոն - 9, 21, 26, 29, 33, 37, 40, 42, 43, 64, 66, 69, 70, 72, 78, 83
Դվին - 46-54, 56
Դուվալ, Ֆիլիպ - 79

Եգեյան - 10, 15, 29, 32, 40, 42, 43, 47, 54, 69, 71, 84
Եգիպտոս - 21, 22, 27, 29, 33-36, 39, 42, 43, 47, 57, 58, 61, 63-67, 69, 72, 77-80, 84, 86
Եդեսիա - 26, 34, 74
Եզեկիել - 45
Եթովպիա - 13, 23-25, 29, 33, 42, 43, 48, 57, 67, 69, 72, 80, 84, 86
Եկատերինա - 13
Եմեն - 57
Եվսեբիոս, Կեսարիայի եպ. - 25
Եվրամիություն - 5
Եվրոպա - 9, 10, 13, 14, 16, 18, 20-25, 28, 29, 32, 34, 36-43, 48, 54, 55,57, 58, 64-57, 69, 70, 72, 75, 76, 81, 83, 86, 87
Եվքսինյան ծով - 26 (տես Սև ծով)
Երզնկա - 61
Երիքով - 34, 77
Երկաթ դապաս կամ դուռ - 17, 18, 80, 83, 84
Երուսաղեմ - 15, 21, 22, 24, 27, 29, 34, 36, 37, 40-43, 57, 59, 61, 62, 65,-69, 72, 73, 74, 77-80, 81, 83, 85, 86, 87
Եփեսոս - 37
Եփրատ - 25-29, 32, 35, 37, 38, 41-43, 45, 54, 55, 56, 58, 59, 64-67, 74, 79, 82, 84, 86, 87, 89
Երևան - 5, 11, 17, 22, 24, 36, 68, 71, 89

Զաբ, Մեծ և Փոքր - 46, 47, 55
Զագրոս - 18
Զալթիերի, Օպիչինո - 69, 70
Զայթուն - 69, 70
Զանգեբար կամ Զանզիբար - 48
Զանջան - 46, 47, 49-53
Զինջ - 57, 59
Զիպպանգու - 70

Էբսթորֆ - 16, 17, 62, 63, 65, 73, 74, 81
Էդինբուրգ - 87
Էլբուրս - 48-50, 54, 75
Էսեքս - 75
Էտնա - 37
Էրամ - 49-51
Էրատոսթենես - 14, 23,
Էրզրում - 46, 48, 50, 52, 53, 56, 58
Էքո, Ումբերտո - 63

Ըռուզք - 69

Թաբարիստան - 45, 50, 54, 59
Թաբլա - 52
Թալիշ - 18, 89
Թավրիզ - 46, 47, 49, 51, 53, 55, 58, 61, 79, 80
Թարսուս - 59
Թբիլիսի - 16 (տես Թիֆլիս)
Թեբե - 34,39
Թեհրան - 48, 49, 69
Թեոդոսիա - 68, 69, 71
Թեսսալիա - 38

Թեսսալոնիկա - 41, 43
Թիլե - 24, 67, 87
Թիֆլիս - 46-52, 56, 61
Թրակիա - 38, 72
Թրիաթելի - 10
Թուրքեստան - 54
Թուրքիա - 5, 9, 10, 87

Իբերիա - 9, 29, 34, 38, 64, 65, 72 (նաև տես Վիրք)
ալ-Իդրիսի - 15, 45, 55, 56, 58
Իզիդոր Սևիլիացի - 9, 13, 17, 28, 32-35. 37-39, 63-66, 75, 81. 84, 85
Իլլիրիա - 38
Իմերեթի - 9, 10, 17, 18, 88
Ինդոս - 25, 27, 35, 43, 84
Իոնական - 29
Իռլանդիա - 34, 37, 38, 40, 42, 43, 67, 72, 83, 87
ալ-Իսթախրի - 45, 46-53
Իսլանդիա - 67, 87
Իսպանիա - 14, 20-24, 32-34, 36, 37-40, 42, 54, 63, 67, 72, 80, 83, 86
Իսսիրիա կամ Իսավրիա - 68
Իտալիա - 9, 21, 22, 24, 29, 33, 37, 38, 41, 54, 63, 67, 72, 85
Իրան - 5, 8, 48, 49, 75
Իրաք - 45, 47, 57, 60, 79

Լևոն - 82
Լազիկա - 9
Լամբերտ - 62, 67, 77
Լայպցիգ - 21
Լաջան - 50
Լաֆֆորդ - 81
Լեյդեն - 47
Լիբանան - 41, 43, 87
Լիբանանյան լեռներ - 27, 65
Լիբենայցի Բեատուս - 9, 14-16, 35, 39-41, 75, 85
Լիբիա - 65, 67, 84, 86, 87
Լիկաոնիա - 75, 83, 84
Լինկոլն - 81
Լինչ - 10
Լիոն - 83
Լյուկիա - 72, 75
Լոնդոն - 5, 11, 47, 51, 75, 89
Լոռի - 10
Լուկան - 41

Խազար - 45, 47, 48, 56, 57
Խաղաղ Օվկիանոս - 47, 50, 57 58-60
Խայթայք - 69
Խանսա - 70
Խաչատրյան, Մկրտիչ - 47, 68-70
Խարրան - 26, 59, 74
Խլաթ - 46-53, 56, 61, 80
Խոյ - 46, 47, 49-53, 56, 57
Խորասան - 47, 57, 59, 60
Խորեզմ - 47, 48, 54, 57, 59, 69-71, 84
Խուզիստան - 46, 49-52
Խուլզում - 57, 59-61
Խունան - 46, 47, 51, 52
Խունջ - 49, 53

Կադիս - 22, 23, 27, 40, 43, 72, 86, 87
Կազբեկ - 16
Կալաբրիա - 41
Կալիկլա - 46, 48, 49, 51, 53, 56 (նաև տես Էրզրում)
Կալպե - 21, 34, 36
Կախեթ - 18
Կահիրե - 76-78
Կանդահար - 57
Կանիստրիս, Օպիչինո - 85
Կանսայ - 69, 70
Կապադովկիա - 10, 26, 28, 34, 36, 40-43, 65, 67, 68, 72-75, 83-87
Կապաղակ - 48, 52
Կապելլա, Մարտիանոս - 67, 81
Կապուտան - 55, 56
Կասպիա - 38, 47, 83, 84
Կասպից ծով - 9, 17, 18, 24-30, 32, 33-35, 38, 39, 40, 42, 44-52, 54-56, 59-61, 64, 66, 70, 73-75, 79, 80-85
Կատաբաթմոն - 23
Կարապետ Բաղիշեցի - 68
Կարդաման - 48-50
Կարթագեն - 13, 21-23, 29, 33, 34, 37, 38, 65
Կարիա - 75
Կարին - 46, 48, 49, 50, 52, 53, 58
Կարմել լեռ - 43
Կարմիր ծով - 22, 24, 25, 27, 29, 30, 32, 34, 35, 38, 39, 41, 42, 54, 56, 59-61, 64, 65-67, 69, 72, 80, 81, 83-87
Կարպատյան լեռներ - 24, 25, 41, 87
Կաֆա - 69-71
Կենտրոնական Ասիա - 18, 44, 55, 58, 60, 61, 83
Կեսարիա - 25,37, 61, 73, 74, 80
Կեստորիոս - 38
Կերավնյան լեռներ - 27, 40, 74,
Կիզիլիրմաք գետ - 34
Կիլիկիա - 75, 79, 80, 81, 83, 84, 88, 89
Կիկերոն - 23
Կիպրոս - 24, 37-39, 42, 43, 48, 66, 69, 72, 74, 80, 86
Կիտայ - 70
Կծեքեն - 17
Կոզմա - 13, 15, 23, 24, 29-32
Կոլխիդա - 9, 83, 84 (նաև տես Կողքիս)
Կողքիս - 5, 9, 10, 15, 18, 19, 25-29, 38, 39, 40, 45, 64, 66, 67, 73, 74, 81-83, 88
Կոմագենե - 65
Կոմագենե - 29
Կոռներ - 83
Կոստանդին Անտիոքցի - 31 (տես Կոզմա)
Կոստանդնուպոլիս - 27, 33, 34, 37, 38, 40-43, 54, 57-60, 65, 66, 69
Կովկաս - 9, 10, 85
Կովկասյան լեռներ - 26, 27, 33-35, 36, 38, 40-43, 45, 46, 48, 50, 58, 59, 60, 64-68, 72-76, 79, 80, 82, 84-87
Կորդովա - 34, 55
Կորյուն - 13
Կորսիկա - 29, 39, 66
Կրեսկ, Աբրահամ - 70
Կրետե - 24, 34, 38, 39, 42, 43, 48, 66, 72, 74, 86
Կուր գետ - 10, 38, 42, 43, 45, 46, 48, 49, 50, 52, 54-56, 58, 66, 72

Հաբաշ, Հապաշ - 48, 69 (նաև տես Հաբեշիստան)
Հաբեշիստան - 48, 57
Հաբեթը - 9, 33, 37
Հալեպ - 79, 80
Հալիս - 13 (տես Կիզիլիրմաք)
Համադան - 58, 59
Հայաստան - բոլոր էջերում
Հայդելբերգ - 35
Հայկական դարպասներ - 17
Հայկական լեռներ - 27, 28, 35, 64, 66
Հայկական լեռնաշխարհ - 18, 58, 59, 79, 89
Հայկականկ բարձրավանդակ - 18, 19, 26
Հայկական պար - 26-28, 35
Հայֆա - 78
Հանովեր - 74
իբն-Հաուքալ - 45-47
Հապաշ - 69
Հարավային բևեռ - 57, 59
ալ-Հարիթ - 47, 48, 50, 63
Հարրան - 21
Հեբրոն - 65
Հեթում Ա - 79, 81
Հելիոպոլիսը - 34
Հելլեսպոնտ - 66
Հերակլես - 20, 21, 34, 73, 86, 87
Հերեֆորդ - 17, 62, 63, 65, 72, 73, 78, 81
Հերիքով - 66
Հերոնիմոս - 16, 17, 25, 27, 28, 39, 62, 63, 65, 81
Հիբերիա - 26, 64, 86
Հիբերնիա- 67, 72
Հիգդեն, Ռանուլֆ - 62, 84-86
Հիմալայա - 75
Հինդ- 45
Հիպոն - 13, 28, 34, 38
Հիջազ - 57, 59
Հիսպանիա - 22 (տես Իսպանիա)
Հիրկանիա - 27, 29, 34, 35, 36, 38, 42, 43, 65, 66-68, 72, 79, 81-84, 86, 87
Հյուսիսային բևեռ - 56, 57, 60
Հյուսիսային ծով - 40, 54, 57, 58, 81, 83
Հնդկաչին - 58
Հնդկաստան - 10, 12, 13, 21, 22, 24, 28, 29, 30, 34, 36, 37, 40, 42-44, 45, 54, 57, 58, 60, 63, 65, 69, 72, 77, 79, 81, 84
Հոլանդիա - 48
Հոլդինգհամ - 81
Հովհաննիսյան, Հովհաննես - 68, 70
Հովսեփ Կարտափիլացի - 75, 76, 78
Հորդանան - 37, 43, 78, 87
Հռենոս - 66, 87
Հռոդոս - 25, 66, 72, 86
Հռոմ - 11, 15, 20, 21-23, 25, 29, 32-34, 36-38, 40-43, 45, 48, 57, 66, 67, 72, 73, 80, 82, 85, 86
ալ- Հուայրիթ - 47, 48, 53
Հուդա - 21, 29, 37, 42, 43, 67, 68, 72
Հուլիոս Կեսար - 13, 20, 22, 36, 63
Հունաստան - 29, 36, 38, 41-43, 54, 64, 67, 72, 74, 87
Հունգարիա - 21, 36, 38

Ղաբլա - 48, 52
Ղազվին - 56
ալ-Ղազվինի Մուհամմեդ - 15, 44, 56, 57, 59, 80
Ղալ՛ահ - 50
Ղայմալի - 57
Ղարաբաղ - 9, 10, 89
Ղաֆի լեռներ- 45
Ղոդս - 59

Մագութիա - 66
Մաիֆերկաթ - տես Միաֆարկին
Մալաթիա - 10, 61, 74, 79, 80
Մալայա - 58
Մակեդոնացի, Ալեքսանդր - 17, 20, 21, 26, 54, 58, 63, 73, 77, 78
Մակեդոնիա - 33, 37, 38, 41, 43
Մակրոբիոս, Ամբրոզիոս Թեոդոսիոս - 13, 14, 15, 23-25, 37, 39, 41, 57, 63-65, 67
Մայմուն, Խալիֆա - 44
Մայնց - 65
Մայորկա - 39, 43, 66
Մայֆերկաթ - 80 (տես Միաֆարկին)
Մանազկերտ - 48, 49, 50, 52, 61
Մանչեստեր - 40
Մեսրոպ Մաշտոց - 13
Մաչին - 57
Մասիս - 49, 50, 51
Մավրիտանիա - 29, 36, 42, 43, 67, 72
Մատթեոս Փարիզ - 42, 62, 75-77, 84
Մար Իգնատիոսը - 79
Մարաղա - 79, 80
Մարանդ - 46, 49-52, 61
Մարաստան - 9, 10, 18, 21, 29, 34, 36-38, 63, 72
Մարինուս Տյուրոսացի - 14
Մարկո Պոլո - 69, 70
Մարմարա - 32, 38, 40, 41, 69, 75
Մարոկկո - 55
Մարո, Վիրգիլիոս - 14
Մարտիանուս, Կապելլա - 67
Մեգրելիա - 5, 9, 18, 80
Մեժան - 33
Մելա, Պոմպոնիուս - 13-15, 17, 23
Մելիտենա - 74
Մեմֆիս - 34
Մեյմանդ - 47, 49, 50, 52, 53
Մեոտիսյան ճահիճ - 35, 74 (տես Ազով)
Մեռյալ ծով - 78
Մեսիա - 33, 72
Մերդին - 70
Մերոե - 39, 66
Մերվ - 59
Մեքքա - 54, 55, 85, 86, 87
Մըսըր - 61
Միանե - 47, 49-51, 53
Միաֆարկին - 46- 49, 51, 52, 56
Միլլեր, Կոնրադ - 28, 38, 40, 42, 43, 55, 56, 80, 87
Միկեա - 38
Մինորկա - 39, 66
Միջագետք - 9, 21, 26, 27, 29, 34, 36-38, 41, 42, 43, 45, 47, 49, 50, 52, 53, 59, 61, 64, 66-68, 72, 75, 82, 83, 86, 87
Միջերկրական - 9, 10, 12, 20-23, 26-29, 31, 33-45, 48, 53, 54, 56, 57, 58, 60, 61, 63, 64-67, 69-71, 74-76, 78, 81-87
Միսր - 45, 48, 58
Մողան - 43, 55, 57, 70
Մոսթուֆի, Համդուլլա - 15, 44, 59, 60
Մոսկվա - 51
Մոսուլ - 59
Մովսես - 30, 65, 69, 79
Մովսես Խորենացի - 13, 30, 67
Մոքրան - 57
Մսր - 69
Մցխեթ - 18
ալ-Մուղադդասի, Մուհամմեդ - 45, 52, 53

Յասոն - 33, 73, 74, 82, 84, 85
Յորքշիր - 67
Յուպիտեր - 66
Յուքսիս - 34

Նազարեթ - 37, 77, 78
Նախիջևան - 47, 49, 50, 55, 56, 61, 68, 89
Նահր ուլ Ռաս - 52 (տես Արաքս)
Նահր ուլ Ռուս (Վոլգա) - 55
Նաշուի (Նախիջևան)- 47, 49, 50, 56
Նեբրովթ - 74
Նեղոս - 9, 21, 22, 27-28, 32-37, 39, 40-43, 45, 47, 48, 54, 57, 63-66, 69, 72, 77, 78, 80, 83, 86, 87
Ներիզ -47
Նիլ - 21, 69
Նիկոնիա - 75
Նիշաբուր - 59

Նիսիա - 84
Նոյ - 11, 15, 24, 26, 27, 29, 31, 33-35, 37, 62-64, 71, 73, 74, 76, 77-79, 81-86, 88
Նորմանդիան - 72
Նորվեգիա - 83
Նուբիա - 57, 59, 80
Նումիդիա - 20, 21, 23, 29,43, 67
Նուրիկ - 53

Շաբարանը - 49-52
Շահի - 50, 55
Շահիեզուր - 49, 50
Շամ - 45
Շամախի- 46, 47, 50, 51, 55, 56
Շամխոր - 18, 46, 48, 50-52, 56, 61
Շամգոռ - 50, 52, 61
Շաքի - 46, 48, 49
Շիրազ - 57
Շիրվան - 18, 46-52, 58, 80, 89
Շոշ - 36
Շոտլանդիա - 34, 38, 41, 43, 72, 75, 76, 78, 83, 87
Շվեյցարիա - 9
Շտուտգարտ - 56
Շրի Լանկա - 30

Չամչեան - 17
Չեսթեր - 84
Չին - 48
Չինաստան - 44, 45, 57, 58, 60, 69, 70

Պաղեստին - 21, 25, 27-29, 35 37, 42, 43, 65, 68, 72, 75-79
Պամփյուլիա - 21, 38, 40, 75
Պաննոնիա - 33, 72
Պարթևաստան - 9, 18, 21, 24, 27, 29, 34, 36- 38, 42, 43, 65, 67, 68, 72, 84
Պարսից ծոց - 25, 29, 32, 44, 45, 47, 48, 54, 55, 57-61, 64, 65, 67, 68, 80, 84, 86, 85
Պարսկաստան - 45-51, 53, 54-56, 59, 61, 69, 71
Պարտավ - 46, 48-50, 52, 55, 59, 61,74
Պենտապոլիս - 84
Պերսեպոլիս - 66
Պերսիդա - 75, 83, 84
Պիզա - 66
Պիսիդիա - 75
Պիրենեյան թերակղզի - 58
Պլանո, Ջոն դե - 81
Պլինիոս Ավագ - 13, 14, 17, 29, 32, 33, 63-65, 81, 84, 85
Պոմպեոս - 22
Պոմպոնիոս, Մելա - 13-15, 17, 23
Պոնտիկա - 68
Պոնտոս - 26, 33, 38, 67, 68, 75
Պոսեյդոնիոս - 14
Պորտուգալիա - 28
Պտղոմայիս - 77
Պտղոմեոս, Կլավդիոս - 12-15, 17, 23, 24, 30, 38, 44, 53, 55, 58, 60, 63, 68, 83, 88
Պրիամոս - 82
Պրոպոնտիս - 38
Պրովանս - 33
Պուլիա - 33, 75, 78
Պուլղարք - 69

Ջաբալ - 47, 50
Ջաբերվանը - 53
Ջազիրա - 45, 59
Ջանզա - 46, 48-52 (տես Գանձակ)
Ջավախք - 89
Ջեյհուն - 54, 58
Ջենովա - 10, 71, 88
Ջիբալ - 57
Ջիբրալթար - 21, 34, 35-37, 72

Ռանուլֆ Հիգդեն - 62, 84-86
Ռասբա - 53
Ռավեննա - 17, 38
Ռավեննացի - 10, 29, 88
աբու-Ռեյհան - 44
Ռիոն - 10
Ռիչարդ դե Բելլո - 81, 85
Ռիփեյան լեռներ - 24, 25, 35, 42, 43, 64, 87
Ռոժե II - 45, 55, 56
Ռոջեր Անդովերցի - 75
Ռում - 50, 52, 53, 57, 59-61
Ռույան - 60
Ռուս - 41, 55, 61
Ռուսաստան - 9, 18, 35, 40, 45, 57, 69

Սաբալան - 49-51 (տես Սավալան)
Սալինոս - 33
Սալլուստիոս - 14, 20-23 34, 38, 62, 84
Սալմաստ - 47, 49, 51, 53, 61
Սակալիբա - 47, 48, 57, 59
Սահանդ - 51
Սաղալիա - 48 (տես Սիցիլիա)
Սամարիա - 21, 37
Սամարղանդ - 59, 61, 81
Սամոսատա - 26
Սանա - 50, 59
Սանկտ Պետերբուրգ - 18, 24
Սանուդո - 83
Սանջան - 53 (տես Զանջան)
Սանտիագո դի Կոմպոստելլա - 86
Սան Սևեր - 39, 40
Սավալան - 47, 49, 50, 59
Սարաբ - 47, 49-51, 53
Սարագոսա - 32
Սարայ Բաթու - 69-71, 83
Սարայ Բերքե - 69-71, 83
Սարդինիա - 29, 39, 66, 86
Սարմատիա - 38, 41, 84
Սաքսոն - 63, 85
Սելիս - 50
Սեհիե - 48
Սեյեներ - 34, 38
Սեյհուն - 54, 58
Սեուտա - 55
Սեռապոլիս - 73
Սեֆիդ Ռուդ - 48-50
Սթիքս - 14
Սիբիր - 15, 58
Սիդոն - 22
Սինական լեռ - 27, 29, 30, 36, 41, 43, 65, 66, 69, 80, 87
Սինդ - 49, 57
Սիոն - 37
Սիս - 79, 80
Սիստան - 45, 47
Սիտերա - 72
Սիրիա - 5, 21, 29, 34, 36-38, 43-45, 65, 67, 68, 72
Սիրտես - 84
Սիցիլիա - 24, 34, 37-39, 48, 53, 55, 66, 67, 74-76
Սիփան - 52, 59
Սկիպիո - 23, 24
Սկյութիա - 26, 33, 36, 40, 72
Սոլինիոս - 81
Սողոմոն - 68, 78
Սոմխեթի - 10
Սպահան - 59
Սպանիա - 69
Ստամբուլ - 46
Ստռեստռո դի Անյան - 70
Ստրաբոն - 13, 17, 26
Սքանդարիա - 68 (տես Ալեքսանդրիա)
Ս. Ալբան - 75
Ս. Հերոնիմոս - 16, 17, 25, 27, 28, 39, 62, 65, 81
Ս. Հովհաննես Խրիսոստոմ կամ Ոսկեբերան - 13
Ս. Ղազար - 17
Ս. Օգոստինոս - 13, 15, 28, 34, 39, 63
Ս. Օմեր - 66
Սուդան - 25, 80
Սև ծով - 9, 10, 25, 26-29, 33-35, 38, 40-42, 45, 47, 48, 54, 56, 58, 61, 64, 66, 69, 73, 81-84
Սևիլիա - 13, 28, 32, 34

Վազկան - 46, 47, 52, 53
Վալդայի Բլուրներ - 24, 25
Վան - 52
Վանա լիճ - 46-51, 53, 56, 80
Վասպուրական - 26
Վատիկան - 30, 31, 83
Վարանգ - 57
Վարդան Արևելցի - 68
Վարդանակերտ - 49, 50, 51
Վարզական - 46, 47, 52, 53
Վարզան - 46
Վարթան - 51
Վարսական - 50, 51, 56
Վենետիկ - 10, 17, 22, 67, 69, 83, 88
Վեսպասիանոս - 63
Վեսքոնթե, Պիետրո - 17, 82, 83
Վերչելլի - 17, 63, 65, 72, 73
Վիեննա - 83
Վիլլեմ դե Ռուբրուք - 70, 81
Վիրք - 5, 9, 10, 15, 18, 19, 26, 27, 29, 33-36, 38, 45, 64, 65, 72, 80, 82, 85, 86, 87, 89
Վլադիկավկազ - 16
Վոլգա - 54
Վոլֆենբյութել - 67
Վրաստան - 5, 9, 10, 18, 19, 71, 76, 81, 83, 84, 88, 89

Տանայիս - 21, 22, 28, 33, 35, 37-40, 43, 64, 66, 69, 77, 78, 83, 84
Տանժեր - 57, 59
Տաուրիսիոս - 84
Տապրոբանա - 29, 30, 43, 63, 72
Տավրոս - 16, 18, 26-28, 33-35, 38, 40, 42, 43, 46, 54, 55, 58, 64-68, 74, 82, 83-87
Տիբեթ - 57
Տիբեր - 34, 37
Տիգրան Մեծ - 77, 80
Տիգրանակերտ - 46, 80
Տիգրիս - 25-28, 32, 33,59, 35, 38, 40-43, 45, 46, 47, 54-56, 58, 64-68, 79, 82, 86, 87
Տիլբուրի - 73
Տիլբուրեցի Ջերվազ - 75
Տիլոս - 72
Տիկոնիոս - 39
Տոլեդո - 41-43
Տոսկանա - 33, 36, 37
Տրապիզոն - 54
Տրեվիզա, Ջոն - 87
Տրեվիս, Փիթըր - 87
Տրիպոլի - 43
Տրոյա - 36, 37, 42, 66, 74
Տուման - 69

Րոդոս - 25 (տես Հռոդոս)

Ցեյլոն - 29, 30, 43, 63, 72, 80
Ցյուրիխ - 83

Ուարբուրգ - 84
Ուելս - 72, 87
Ուեստմինստեր - 78
Ուերմութ - 36
Ուշնե - 46, 51, 53
Ուրալ - 24, 25, 54
Ուրմիա - 15, 45, 47, 49-51, 53, 54, 61
Ուրմիո լիճ - 47, 50, 51, 53, 54, 56
Ուրֆա - 26, 34, 74


Փարիզ - 24, 33, 43, 56, 66, 72, 80, 84
Փասիս - 10
Փիսոն - 22, 27, 32, 41
Փյունիկիա - 18, 21-23, 36, 42
Փոքր Ասիա - 5, 10, 27, 29, 32, 34, 36, 37, 40, 42, 56, 65, 73, 75, 76, 79, 83, 84, 86, 87
Փոքրը Հայք - 26, 56, 59, 60, 80-83, 88
Փռյուգիա - 21, 33, 37, 40, 42, 43, 70, 75, 83

Քաբութան - 55, 56 (տես Կապուտան)
Քաբուլ - 59
Քաթաթաթմոս - 20
Քաթքաթմոն - 34, 66
Քաղդեա - 15, 21, 26, 27, 37, 38, 43, 65-68, 72
Քաղկեդոն - 40, 83, 84
Քաշմիր - 44
Քարթլի - 9, 10, 18, 88
Քեմբրիջ - 65, 71, 75-77, 80, 84, 87

Քիրման - 45, 47, 57, 59, 60
Քյոլն - 66
Քոթթոն, Սըր Ռոբերտ - 62-65
Քուանժոու - 70

Օգոստինոս - 13, 15, 28, 34, 39, 63
Օգոստոս Օկտավիանոս - 67
Օզվալդ - 10
Օլիմպոս - 87
Օմման - 57, 59-61
Օշնավիյե - 46, 49, 51, 53
Օտտո IV - 73
Օրկնեյան Կղզիներ - 43, 72
Օրոսիոս, Պաուլոս - 17, 28, 29, 38, 62, 63, 65, 72, 75, 79, 81, 85
Օքսիանա - 47, 57
Օքսուս - 54, 58
Օքսֆորդ - 21, 22, 51, 53, 58, 76, 84, 86

Ֆարանգ - 48, 60
Ֆարս - 22, 45, 47, 58-60
Ֆարֆար - 78
Ֆիսոն - 27 (տես նաև Փիսոն)
Ֆլորենցիա - 30
Ֆորաթ - 45 (տես Եփրատ)
Ֆորմոզա - 70
Ֆուջիան - 70
Ֆռանքս - 69
Ֆրա Մաուրո - 70
Ֆրանսիա - 71, 72, 83, 87, 88



ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ռուբեն Գալչյանը ծնվել է Թավրիզում, Մեծ Եղեռնին Վանից տարագիր գաղթականների ընտանիքում, որոնք Թավրիզ էին հասել Հայաստանի, Վրաստանի և Ֆրանսիայի ճանապարհով: Թեհրանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա կրթաթոշակ է ստացել սովորելու Բրիտանիայի Բիրմինգհամ քաղաքի Աստոն համալսարանում, ուր ուսանել է ճարտարագիտություն: Փոքր տարիքից հետաքրքրված լինելով աշխարհագրությամբ և քարտեզագրությամբ՝ 1970-ականներին նա լրջորեն սկսել է իր աշխարհագրական հետազոտությունները որպես զբաղմունք (հոբբի): 1981-ին Լոնդոն տեղափոխվելով, նա առիթ է ունեցել օգտվելու Բրիտանիայի և Եվրոպայի այլ գրադարաններում եղած քարտեզագրական նյութերից ու լայն տեղեկություններից:

Նրա առաջին քարտեզագրական աշխատությունը «Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ» մեծածավալ հատորն է, հրատարակված անգլերենով 2004 թվականին, իսկ հայերենով ու ռուսերենով՝ 2005-ին: Ներկա հատորը Կովկասի հարավում գտնվող երկրների մասին նրա կատարած երկարամյա հետազոտությունների հերթական արդյունքն է:

ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Քսանմեկերորդ դարի առաջին տասնամյակում Եվրոմիությունը ձեռնարկել է «Եվրոպական հարևանության քաղաքականություն» կոչվող ընդհանուր մի ծրագրի կենսագործմանը, որի նպատակն է բարելավել հարևան երկրների քաղաքական ու տնտեսական իրավիճակը և ունենալ այսպես ասած՝ վստահելի «Բարեկամ երկրների» մի շրջանակ:

Այս աշխատանքի նպատակն է ընթերցողին ծանոթացնել Կովկասյան լեռների հարավում գտնվող երեք երկրների միջնադարյան պատմական աշխարհագրությանը: Հատորում քննարկված են 350ից մինչև շուրջ 1350 թվականներին պատրաստված քարտեզներ, որոնց միջոցով կարելի է տեսնել միջնադարյան պատմական, քաղաքական և աշխարհագրական իրականությունը:

Գրքում պատկերված և մանրամասն քննարկված են լատինական, քրիստոնեական, իսլամական, ասորական և հայկական աղբյուրներից հավաքված շուրջ 82 եզակի քարտեզ, որոնք կազմում են մարդկության միջնադարյան քարտեզագրական մշակույթի հիմնական մասը: Լինելով ձեռագիր՝ սրանք յուրահատուկ և հազվագյուտ քարտեզներ են, որոնք ներկայացնում են ժամանակի իրողությունն ու աշխարհահայացքը:
Այս քարտեզները մեկ հատորի մեջ համատեղումն ինքը հազվագյուտ երևույթ է, քարտեզներ՝ որոնցից շատերը կարող են դիտվել որպես գեղարվեստական աշխատանքի նմուշներ:

Կազմի պատկերը. *Ամանուն Ռավեննացու քարտեզը,* *տե՛ս տեքստի Պատ. 27-ը:*